



Happy birthday



# Մ Ա Յ Ր Ը

Մայրերի մասին կարելի է գրել անվերջ, մանավանդ պատերազմի օրերին, երբ յուրաքանչյուր մայր մի հերոս է, հավատի, հուշսի և տոկունության մի ամբողջ աշխարհ՝ անմեկնելի ու հուզիչ, անասելի բարդ և միևնույն ժամանակ պարզ:

Ահա մեր հարևանուհի Մարգարիտ մոքիրը, որ մի նիհար, վտիտ ու կորացած պառավ է՝ պատկառելի տարիքով: Մինչև պատերազմը տարվա մեծ մասը նա հիվանդ էր լինում և տնից դուրս էր գալիս շատ սակավ, ծայր անհրաժեշտության դեպքում: Տանն էլ, ասենք, շատ բան չէր անում, տնտեսությունը թողած լինելով հարսին...

Երբեմն, գլխավորապես գարնանն ու աշնանը, բրդե շալն ուսերին դուրս էր գալիս տնից, նստում պատի տակ և արևկող անում հիվանդ հավի նման. թվում էր աշխարհից ու կյանքից ձեռնթափ. թվում էր կյանքում այլևս ոչ մի բան չի հետաքրքրում նրան: Բայց այդ միայն թվում էր:

Տանը, ճիշտ է, նա ոչ մի բանի չէր խառնվում, սակայն նրա մեջ անմարելի էր մնացել մի հոգս ու մի մտածություն — դա իր միակ որդին էր՝ Ավագը, որ շնայած ամուսնացած էր և երկու երեխայի տեր, բայց Մարգարիտ մոքիրը նրան համարում էր երեխա. եթե, օրինակ, աշխատանքի վայրից գալիս ուշանում էր երկու յոպե — պառավն անհանգրստանում էր անմիջապես.

— Երեխաս ուշացավ, — ասում էր, կանգնում լուսամուտի առջև ու սպասում անհամբեր. կամ, երբեմն, գլուխը լուսամուտից հանելով, հարցնում էր որևէ ծանոթ անցորդի, թե ճամփին չի՞ տեսել արդյոք Ավագին: Բայց երբ Ավագը գալիս էր՝ նրա դեմքի կնճիռները գոհունակ տեսք էին ընդունում, և նա իր փորձ հայացքով շափում էր նրան ոտից գլուխ, ասես ատուգելու, թե արդյոք մի բան չի՞ պատահել նրան: Եվ եթե լինում էր մի բան — ուրախ թե տխուր — Մարգարիտ մոքիրն իսկուչն հասկանում էր այդ նրա աչքերից, շուրթերի դիրքից և ձեռների արագ կամ դանդաղ շարժումից. այնպես նա գիտեր որդու յուրաքանչյուր նայվածքը, քայլվածքն ու շարժումը, որ միշտ, առանց խոսքի, կարող էր կռահել նրա տրամադրությունը: Ու չէր հանգստանում մինչև Ավագը կարգին չէր ճաշում: Առավոտները հո չէր թողնի տնից դուրս գա առանց բան ուտելու: Տրտին՝ հետևում էր, որ Ավագը տաք հագնվի, իսկ հեռու տեղ մեկնելիս՝ չէր հանգրստանում մինչև հետը պաշար շղներ, մինչև շիմանար ո՛ւմ հետ է գնում, ո՛րքան է մնալու, ե՛րբ է վերադառնալու... Չնայած ինքը հիվանդ կին էր, որ շաբաթը մի օր, երկու օր անկողին էր ընկնում (գուցե դա հիվանդություն էլ չէր, այլ պարզապես ծերություն տկարություն), բայց և այնպես, Մարգարիտ մոքիրն այդ ժամանակ էլ անկողնում մտածում էր, թե տեսնես Ավագը կարգին թեյե՞ց, ճաշե՞ց կամ մի բանի կարիք չունե՞ր արդյոք: Հիվանդության այդ օրերին նա միաժամանակ մտածում էր և այն, թե շուտով երևի ինքը կմեռնի՝ Ավագը կմնա որք. ու որոշում էր՝ հարսին ներշնչել, որ Ավագին լավ պահի, ամեն բան նրա համար կարգին անի և ժամանակին: Ու վերջնական մի փափագ ուներ, որ Ավագը «մի բուռ հող գցի իր երեսին», և ինքը հանգիստ կլիներ:

— Միայն թե արժանանամ այդ օրին...

Բայց ահա եկավ պատերազմը. շատերի հետ բանակ գնաց նաև Ավագը: Ու կարծում եք՝ դրանից խորտակվե՞ց հիվանդոտ Մարգարիտ մոքիրը կամ իրեն կորցրե՞ց: Ամենևին:

Նա որդու գնալու լուրն առնելուն պես՝ շգիտես գերբնա-  
կան ի՛նչ ուժով կերպարանափոխվեց հանկարծ, ինչպես երևի,  
հիվանդ մայր արծիվը կլինի՝ ձագերին սպառնացող վտանգը  
տեսնելով: Նախ, իրեն բուրբուլին շկորցնելով, զգաստացավ,  
կարծես մի ծանր թմրությունից. ապա, իմանալով վաղը  
մեկնելու են, սկսեց եռանդով ճամփի պաշար պատրաստել  
Ավագի համար. ու ինչե՛ր ասես շորեց նրա պայուսակի մեջ  
— էլ հավ, էլ ձու, էլ մրգեր, խաշած միս. շմոռացավ անդամ  
աղ ու պղպեղը: Այդ բուրբ գործերի մեջ լվաց և նրա սպի-  
տակեղենը, պակասավոր տեղերը կարգի բերեց. դրանք էլ  
դրեց պայուսակի մեջ, ավելացնելով թե՛լ ու ասեղ, որ մի  
բան, մի տեղ քանդվելու դեպքում Ավագը հնարավորություն  
ունենա կարելու:

Այս բուրբը նա արեց գիշերը, իսկ լույսը բացվելուն  
պես, որ երբեք փողոց չէր ելնում, հարսի հետ գնաց կայա-  
րան՝ Ավագին ճանապարհ դնելու... Եվ այնուհետև Մարգա-  
րիտ մոքիրը կարծում էք հանգստացա՞վ կամ շարունակե՞ց  
իր նախկին հիվանդոտ, անկար, անտարբեր կյանքը: Ամե-  
նեին: Երբ մի քանի օր հետո հարսը գնաց աշխատանքի,  
Մարգարիտ մոքիրը տունը նորից իր ձեռն առավ ու սկսեց  
եփել, հավաքել, մաքրել, թոռների համար նախաճաշ պատ-  
րաստել, որ դպրոցից գալուն պես մի բան ուտեն... Հետո  
պետք էր լինում եկող-գնացողի պատասխան տալ, պետք էր  
գնալ շուկա, խանութները: Եվ Մարգարիտ մոքիրն այդ  
ամենը կարողանում էր կատարել մի զարմանալի աշխույ-  
ժով: Առաջները, որ դժվարանում էր փողոց դուրս գալ, մա-  
սամբ էլ ավտոների ու տրամվայի երկյուղից, հիմա գնում-  
ների պայուսակը ձեռին, մանր ու շտապ քայլերով գնում էր  
շուկա՝ միշտ ինքնամփոփ ու հոգածու դեմքով: Իսկ մնացած  
ժամանակը նա շարունակ գնդնում էր ինչ-որ, որ դժվար  
չէր գուշակել, թե ո՛ւմ է վերաբերում. իր Ավագին, որ առ-  
այժմ շգիտեր ո՛ւր է, ո՛ր քաղաքում, ե՛րբ պիտի նամակ գրի,  
որ հանգստանա իր ծեր, անհանգիստ սիրտը:

— Մի նամակ ստանամ՝ էլ բան չեմ ուզում, — ասում էր  
նա: — Թեկուզ լոթը սարի, յոթը ծովի ետևն ըլնի... ոչի՛նչ...

Վերջապես, երբ այդ նամակն ստացվեց և Մարգարիտ մոքիրն իմացավ՝ ո՛ւր է գտնվում իր Ավագը,— նախ, սիրտը թեթևացնելու համար, մի կուշտ լաց եղավ, ապա նստեց մտածեց, թե ինչ ուղարկի որդուն, ինչ մի այնպիսի բան, որի կարոտը գուցե շատ է քաշում: Եվ գտավ: Երևանի շոր մրգեր...

Ու այնուհետև, մրգի առաջին ծանրոցն ուղարկելուց հետո, նրա համար կարծես գործ բացվեց. Ավագի հասցեն իմանալով՝ աշխատում էր շուտ-շուտ և լավ, իր ասելով՝ «կարոտ բաներ» ուղարկել նրան: Հարևանները զարմանում էին Մարգարիտ մոքիրի այդ աշխույժ եռանդի վրա, որ գնալով շատանում էր այնպես՝ մեջքն այլևս կոր չէր երևում, ու հետաքրքրվում էին իմանալու, թե ինչ է ուղարկում Ավագին, որ այդպես շուտ-շուտ փոստն է դնում:

— Հե՛ղ, երեխիս համար մի քիչ միրգ, բան:

— Բա էդքան շատ, Մարգարիտ մոքիր:

— Մի քիչ շատ ևմ ուղարկում, որ, ասում եմ, ընկեր տղերք կունենա, լավ չի, որ ինքն ստանա ուտի, նրանք մտիկ անեն...

Հետո, երբ ձմեռը մոտեցավ, Մարգարիտ մոքիրն սկսեց ձմեռվա բաներ պատրաստել Ավագի համար՝ բրդե ջեմպո, բրդե գուլպաներ ու ձեռնոցներ: Եվ այս աշխատանքի ժամանակ Մարգարիտ մոքիրն ավելի էր զգում, թե իր Ավագը մենակ չէ, թե բանակում բոլորն էլ իր Ավագի նման տղաներ են, բոլորն էլ մոր որդի, բոլորն էլ նույն ձմռան ցրտերի առաջ... ուրեմն՝ բոլորն էլ տաք հագուստի-կապուստի կարիք կունենան: Ու այդ ժամանակից Մարգարիտ մոքիրի հոգածության առարկան դարձան Ավագի հետ միասին և նրա ընկերները:

Եվ ահա, երբ եկավ ծանրոցը պատրաստելու օրը, Մարգարիտ մոքիրը, Ավագի տաք հագուստները տեղավորելուց հետո, արկղի մեջ դրեց էլի գուլպաներ ու ձեռնոցներ, իր ֆուֆայկան և վաղուց իր համար պահած բումազե մի կտորից կարած «մեկդակած» տաք հագուստ, որ հարևաններն անվանում էին մասոնաքաշ, երկու «ֆայկա», որ Ավագը տա ընկեր տղաների, «էնպեսների, որ տաք բան չեն ունենա»...

Ու այդպես էլ գրեւ տվեց հարսին և նամակը դրեց ծանրոցի մեջ:

Իսկ երբ ծանրոցը, այս անգամ արդեն մի մեծ արկղ, հանձնեց փոստին, Մարգարիտ մոքիրը ոչ միայն հանգստացավ, այլև իրեն զգում էր ծանր հոգսից թեթևացած, հոգով բավարարված: Երբեմն միայն ցավում էր, որ շատ բան շուներ, որ շատերի համար ուղարկեր:

Այդ գիշեր նա մտքով ուղեկցում էր ծանրոցին, հաշվելով, թե քանի օրում Ավագը կստանա այն, որ իրենը վերցնի և մյուսները բաժանի ընկերներին: Բայց միաժամանակ մտածում էր, թե տեսնես, կհավանե՞ն իր ուղարկած բաները կամ հարմար կգա՞ նրանց վրա:

Մտածելով որդու և ճանապարհ ընկած ծանրոցի մասին՝ Մարգարիտ մոքիրը միևնույն ժամանակ պատկերացնում էր ճակատը՝ մի մեծ, ընդարձակ ու ամաչի դաշտ, ուր կա՛մ հրաձգություն էր, ղենքերի շաշյուն, վիրավոր ձիերի խըրխինջ, կա՛մ խավա՛ր-խավա՛ր գիշեր, ուր և ոչ մի աստղ չէր փայլում, և ուր ամեն ինչ թվում էր շար ու դավադիր, վտանգ ու թշնամի...

Եվ առհասարակ Մարգարիտ մոքիրի գիշերները լի էին տեսիլներով, տազնապով ու հուշներով... Եվ նա հաճախ, իր երևակայած ռազմադաշտի մռայլ պատկերներից սարսափած, մտածում էր. — Ա՛խ, ի՞նչ լավ կլինեիր ինքն էլ այնտեղ լիներ, կանգներ թշնամու առաջ և շթողներ, որ նրանց գնդակը դիպչեր իր Ավագին կամ խորհուրդ տար նրան ու ընկերներին, որ զգույշ մնան, չկանգնեն թշնամու գնդակի առաջ, և իրենց լավ պահեն...

Մտածելով Մարգարիտ մոքիրը մտքով տեղափոխվում էր ռազմադաշտ, տեսնում էր, թե ինչպես բոլոր բանակայիները, դրանց մեջ և իր Ավագը, ցերեկվա կովից հոգնած՝ գիշերը հանգստանում են դիրքերում... ու ինքը՝ սևազգեստ, սև շաչն ուսերին, շրջում էր այդ դիրքերի երկարությամբ և հսկում նրանց հանգիստն ու քունը: Մութ, ակնակիր խավար գիշեր է. ու այդ խավարի մեջ ոչի՞նչ չի երևում... Բայց լարված, ուշադիր նայում է նա... ոչ թե նայում, այլ իր հոգնած

ու հանգած աշքերով ազահորեն խուզարկում է խավարը,  
թշնամու հնարավոր հանապարհները, որ եթե մարդկային մի  
սովեր, մի շարժում, մի առաջացում տեսնի այն կողմից՝ ճշա  
ռե կանչի. «Չարթեցե՛ք, որդիներս, ելե՛ք... թշնամին գալի՛ս.  
է»։ Իսկ առայժմ ղգույշ, մանր ու թեթև քայլերով, թեթև,  
որ քնածները շգարթնեն, անցնում է նա դիրքերի երկարոս՝  
թշամբ և հսկում հոգնած բանակայինների քունը...

Եվ այսպես երկա՛ր, ժամերո՛վ...

Այս լինում էր, իհարկե, մտքով, երևակայությամբ. լի  
նում էր և՛ գիշերը, և՛ ցերեկը, երբ Մարգարիտ մոքիրը մտա  
ծում էր Ավագի մասին։ Իսկ մնացած ժամանակը նա տալս  
վում էր տան, երեխաների հոգսով կամ գնում շուկա, խո  
հանոց, բակ, հարևանների մոտ, և միշտ մանր, շտապ, հո  
գածո քայլերով։

— Զահելացել ես, Մարգարիտ մոքիր,— ասում էին հա  
րևանները։— Մի քանի ամիս առաջ ասում էիր թե՛ մեռնում  
ես։ Տեսա՞ր, որ շմեռար...

— Ու շեմ էլ մեռնի՛... Մինչև Ավագս շգա, երեսը տես  
նեմ, շեմ մեռնի։

Եվ այդ ասում էր այնպես, կարծես մեռնելն ու ապրելն  
իր ձեռին էր. ասես ինքն էր որոշելու իր մահվան օրն ու  
ժամը։

Ասում էր խորին հավատով...

# ԿԱՂ ԿԱՐՈՆ

Ես չգիտեմ, Կարոն կաղ էր ի ծնե, թե նրա այդ արատը հետևանք էր մի դժբախտ պատահարի. համենայն դեպս դա մեծ վիշտ էր պատճառում խեղճին, որովհետև կաղում էր աջ ոտքից և այնպես, որ յուրաքանչյուր քայլն անելիս՝ բավական ծռվում էր մարմնով և նրան թվում էր, թե շատ ծիծաղելի տեսք է ընդունում: Երեխա ժամանակ, երբ գյուղի տղաները՝ ընկերակիցները, խաղի միջոցին, նրա անճարակ շարժումների կամ ծուռ վազքի համար «այ դու կաղլիկ» էին ասում, Կարոն զգում էր վիրավորանքը, բայց շուտով էլ մոռանում էր. շէր վշտանում, շէր տխրում ու ամաչում, ինչպես պատանուիթյան օրերին, երբ մարդ սկսում է հետամուտ լինել իր գեղեցկուիթյան, և մանավանդ երիտասարդ հասակում, երբ աշխատում է ցուցադրել իր բարեմասնուիթյունները: Այդ տարիքում ահա Կարոն շատ զգայուն էր իր արատի նկատմամբ. այսինքն՝ կաղ ոտը նրան դարձրել էր զարմանալի դյուրազգաց. ուստի և ամեն մի ակնարկ դրա մասին՝ երկար ժամանակ տխրեցնում էր Կարոյին:

Երիտասարդի իր արժանապատվուիթյունը վիրավորող արատը նա զգաց մանավանդ զինվորակոչուիթյան օրերին, երբ բժշկական քննուիթյունը նրան գտավ «ոչ պիտանի», հեղնաբանների ասելով, անպետք: Կարոն դրան սպասում էր: Սա-



կայն այդ հանդամանքն առիթ դարձավ, որ ընկերները նորոգեն հին կատակները նոր ուժով.

— Պե՛տք շեկար, Կարո. քեզ տղամարդ ասողին,— ասում էր մեկը:

— Պրծար, Կարո. էլ ոչ մի աղջիկ քեզ չի առնի,— ավերացնում էր մյուսը:

Ու այսպես երրորդը, չորրորդը, հինգերորդը:

Հսում էր Կարոն ըսկերների և հանաքի ազարտի մեջ ընկած համագյուղացիների կատակները և ժպտում անշար սըրտով: Հանաքով, ծիծաղով խփում էին նրա ուսերին, հրում էին կողերը՝ դարձյալ ժպտում էր ներողամտաբար կամ երբեմն վրա բերում.

— Թող կարգին ոտ ունենայի՝ ինձ էլ տանեին ձեզ հետ...

Կարոն անկեղծ, սրտանց էր ասում. ոտը նրա համար մեծ վիշտ էր այդ ժամանակ, որովհետև համոզված էր, թե կաղուժյունը մեծ պակասություն է, մանավանդ աղջիկների աչքում, և մտածում էր, թե կարող է պատահել իսկապես ոչ մի աղջիկ էլ չցանկանա իր կինը լինել... Բայց այդ կասկածն իզուր էր. շուտով նա սիրահարվեց ջրաղացպան Մարգարի աղջկա վրա և, շահնդիպելով ոչ մի դժվարության, ամուսնացավ հետը: Առաջին անգամ այստեղ միայն Կարոն զգաց, որ կաղուժյունը շխանգարեց իրեն մյուսներին հավասար մարդ լինելու. ուրեմն իր արատը, որքան էլ անցանկալի ու տխուր, այնքան էլ հուսահատական չէր:

Եվ քանի տարիներն անցնում ու Կարոն հասակ էր առնում՝ այնքան քիչ էր նշանակություն տալիս իր կաղուժյանը, այլևս սրտի մոտ չէր ընդունում դրա մասին եղած ակնարկները, մանավանդ որ հատակակիցները, գինվորական ծառայությունից վաղուց վերադարձած և ընտանիք կազմած, թողել էին նախկին կատակները: Մեկ-մեկ միայն լսում էր, որ ետևից խոսելիս՝ «կաղ Կարո» են ասում, իսկ երեսին՝ ոչ ոք, ոչինչ:

Սակայն պատերազմի հենց առաջին օրերին, երբ ընկերները և հասակակից համագյուղացիները նորից բանակ

կանչվեցին՝ հին կատակներն ու ականարկները կարծես հարութուն առան նորից:

— Էլի բանի պետք չեկար, Կարո ջան:

— Էլի ետ մնացիր, Կարո... Էլի մարդամիջից ընկար, — ավելացնում էին մյուսները:

Եվ դարձյալ հանաքներ, ծիծաղ, ուսերին ու կողքերին խփել:

Իսկ Կարոն, ինչպես զինվորակոչության օրերին, ընկերներից բնավ չնեղանալով, ժպտում էր նորից, բայց այս անգամ ավելի ներողամտաբար: Ժպտում էր ու հետև էլ ասում սրտանց.

— Տղերք ջան, հիմա ճակատ, թիկունք մեկ է: Ես էլ հալթաթ մի բան կանեմ...

Ընկերները և առհասարակ բանակ գնացող համագյուղացիները լսում էին Կարոյին քմծիծաղ, մտածելով, թե ի՞նչ աշխատանք կարող է անել Կարոն թիկունքում, որ հավասար լինի ճակատին: Այնինչ Կարոն այդ իսկ միջոցին, ընկերներից չնեղանալով հանդերձ, մտածում էր, թե մի՞թե իրոք այնքան անպետք է, որ պատերազմի այս դժվար օրերին չի կարող անել մի այնպիսի բան, որ օգտակար լինի մեկին, հարևաններին, մարդկանց... Կարոն այդ վայրկյանին շատ էր զգացվել — այնքա՛ն հուզիչ էր բանակ գնացող ընկերների և նրանց ընտանիքների բաժանման տեսարանը, երբ մեկնողները սիրտ էին տալիս մնացողներին, իսկ սրանք բարեմաղթութուններ էին անում գնացողներին, որ լավ կենան և հաղթությամբ վերադառնան:

— Հաղթությա՛մբ, տղերք, հաղթությա՛մբ...

Կարոն ինքն էլ ոգևորվեց և մի երկու անգամ բացականչեց.

— Տան մասին շմտածեք, տղերք: Հաղթությամբ վերադարձեք, հաղթությամբ:

Բայց նրան կարծես ոչ ոք չլսեց: Գոնե Կարոյին այդպես թվաց, սակայն ինքն իրենից դժգոհ չմնաց. նա ցուցադրվելու նպատակ չուներ. իր զգացմունքներն արտահայտեց՝ քավական էր:

Ու Կարոն այդպէս էլ երկար մնաց ինքնամփոփ, հուզ-  
ված. անգամ ընկերների մեկնելուց հետո նրա սիրտը խոռ-  
ված էր, տեղահան եղած: Հասարակ բան չէր. ընկերները,  
բարեկամները հարսանիք չէին գնում, այլ պատերազմ...  
տուն, ընտանիք, երեխաներ թողած՝ գնում էին պատերազմ,  
որտեղից բոլորը չէ որ դառնում են:

Կայարանից վերադարձավ Կարոն ընկերներից մեկի՝  
Հարութի, մոր ու կնոջ հետ, և ամբողջ ճանապարհին աշխա-  
տում էր նրանց մխիթարել, սիրտ տալ, թե ամեն բան լավ  
կլինի. տղաները կերթան էլ, կգան էլ... Խոսում էր Կարոն ու  
հետն էլ մտածում, թե կասեն՝ ինքը պատերազմ չի գնում,  
գրա համար է հեշտ խոսում, բայց շարունակում էր սիրտ  
տալ, մանավանդ Հարութի մորը: Պառավը, սակայն, իր վշտի  
մեջ կրկնում էր, թե «շատ բան ախր կիսատ մնաց». Հարու-  
թը բանջարանոցը պիտի ջրեր, հնձած խոտը պիտի հավաքեր  
ու բերեր, և ուրիշ բաներ:

— Դարդ մի անի, Մովի նան, — ասում էր Կարոն՝ կա-  
յարանի տեսարաններից տակավին հուզված: — Կոլխոզը քեզ  
առանց օգնության չի թողնի, իսկ բոստանը էգուց ես կգամ  
կջրեմ, մեծ բան չի:

— Բոստանը ջրեցիր, Կարո ջան, բա հնձած խոտը, որ  
մնացել է հանգում. ամեն բան հո շես անելու Չէ՞ որ դու  
էլ տան տեր ես, դու էլ գործ ունես:

— Դրա մասին էլ մի մտածի, Մովի նան: Մեծ բան չի  
խոտը շատ լինի մի սել, երկու սել:

Ամառային արևը վաղուց անցել էր սարի ետևը, և երե-  
կոն մթնում էր դանդաղորեն. կայարանից դարձող կանայք,  
տղամարդիկ, ճանապարհի երկարութեամբ ցրված, գնում էին  
խմբերով, բարձրաձայն զրուցելով:

Կարոն էլ, խոսակցելով, Մովի նանին ու հարսին ուղեկ-  
ցեց մինչև նրանց տուն և ինքը, կոլտնտեսականներին խառ-  
նըվելով, շարունակեց ճանապարհը:

Կայարանում ապրած հուզումը և այդ մտքերը նրանից  
չհեռացան և գիշերը: Սակայն նա իր մտածումները շահա-  
նեց կնոջը, շնայած նա հետաքրքրվեց և ուղեց իմանալ, թե

ինչո՞ւ է Կարոն հուղված: Նրա մտքով հերոսություններ էին անցնում, ուզում էր աչնաչիսի մի բան արած լինել, որ մարդիկ տեսնեին, թե կաղն էլ կարող է հերոսություն անել: Բայց առաջժամ շղթանելով այդ արտակարգ հերոսությունը, որը նրա վրայից պիտի ջնջեր արատավորիչ «անպետք» կոչումը, Կարոն մյուս օրն աչնուամենայնիվ գնաց Մովի նանին ուղած իր խոսքը կատարելու. այսինքն՝ ամենից առաջ սայլը լծեց և փոքր եղբոր՝ Խաչիկի, հետ գնաց նրանց հնձած խոտը հավաքեց ու բերեց դիզեց:

— Քեզ փեշքեշ, Մովի նան,— առաջ նա դեղը դնելուց հետո:

— Արեւ պարի, Կարո ջան,— օրհնեց պառավը:

— Հիմա մնաց բոստանը. էն էլ ճաշից հետո,— ավերաչրեց Կարոն:

Ու ճաշից հետո իսկապես նա բաճն առած գնաց դեպի դշուղի ծայրը՝ բանդից շուր կապելու, որ հետո բանջարանոցը գալով, Մովի նանի ցուցմունքով ջրի ի՛նչ հարկավոր է: Եվ այստեղ ահա՝ բանդում, ջուրը նոր կապած-չկապած, Կարոն հանդիպեց հենց երեկ բանակ մեկնած մյուս ընկերոջ, Սումբաթի մորը՝ Զան ազուն, որ հորթն առաջին, նրա թռիչք բռնած, վերևից գալով, կանգնեց-հետաքրքրվեց, թե ինչ է անում Կարոն:

— Էդ ձեր բոստա՞նն ես ջրում,— հարցրեց պառավը:

— Զէ, Զան ազի: Մովի նանի բոստանն եմ ջրում: Հարու՞թը երևի գնաց. աբի՛ ընկեր տղա է, ջրող չկա, պառավը մեղք է, մի քիչ հասնեմ:

— Հա՛,— տնքալով հառաչեց պառավը և հեռացավ ո՛չ հավանություն տալով, ո՛չ դժգոհելով: Անտարբեր:

Բայց Կարոն, նրա ետևից նայելով, գլուխը տարուրեքելով մտածեց, թե Զան ազին, երեխ, նեղացավ, որ Հարութենց բանին հասել եմ, իրենց որպիսությունը չեմ էլ հարցրելու: Զէ՛ որ Սումբաթն էլ Հարութի պես ընկեր տղա է: Եվ մտածելն ու ձայն տալը մեկ արավ.

— Զան ազի՛, Զա՛ն ազի, մի բոպե կանգնի...

Պատավը, որ զանդադորեն զնում էր վիզը թողնով կապած հորթի հետ, կանգ առավ՝ հարցական նայելով կառնիկադ մտանցող, ջրոտ բահն ուսին դրած Կարոյին։

— Զան ազի, էգուց տանը կլինե՞ք։

— Ի՞նչ կա որ, — հարցրեց պատավը մի տեսակ տարակուսանքով, նրա հարցումի վրա պարմացած։

— Հեշ, ասում եմ զամ տեսնեմ ի՞նչ ունեք պակաս, անելու բան։ Ի՞նչքան շինի Սումբաթն ախպեր տղա է, շէ՞։

— Շնորհակալ ենք, Կարո ջան։ Ի՞նչ էլ տան, գործի տեր ես. քու բանը պիտի թողնես, գաս մեզ համար աշխատե՞ս։ Չէ, տղա ջան, դու քո բանին կաց։ Մենք մեր հալիվորի հետ, մեր հարսի հետ յուր կտանենք։

Զնայած Զան ազու աչդ խոսքերին՝ Կարոն այնուամենայնիվ մտածեց, թե լավ կլինի մի օր անցնի Սումբաթենց տուն, նրա ծերունի հոր և Զան ազու «որպեսութիւնը» հարցնի և իմանա ինչ կարիք ունեն. գուցե կարողանա օգնել։

Գյուղում առհասարակ այն կարծիքը կար Կարոյի մասին, թե նա մի առավելություն ունի, որ ինչ մտադրում է անելու՝ չի սիրում հետաձգել։ Այս անդամ էլ այդպես։ Զան ազուն տեսնելու երկրորդ թե երրորդ օրը, իր տան-դրսի գործերից ազատ լինելով, նա դնաց իր ընկեր Սումբաթի ծնողների «որպեսութիւնը» հարցնելու։ Ամառային ջերմ, հաճելի օր էր, մեկն այն օրից, երբ մարդու սիրտը այնպես է բացվում, որ ուզում ես ամեն ինչ սիրել, ամեն բան ներել և տարվել միայն խաղաղ մտքերով։ Սումբաթենց տանը մոտենալով՝ Կարոն նրկատեց, որ ընկերոջ ծերունի ծնողները նստած են կարծես մի այդպիսի խաղաղ տրամադրության մեջ՝ իրենց բակի թթենու տակ, որ բազկատարած բարձրանում էր նրանց կտուրից վեր։ Բայց Կարոն, նախքան նրանց մոտենալը, նկատեց և մի ուրիշ բան. տեսավ բակի պատի քարերից մի քանիսը — սալն անզգուշաբար քշելո՞ւց, թե այլ բանից — թափվել էին դռան երկու կողմը։

«Ինչպես երևում է՝ հալիվորը ուժ չունի վերցնի տեղը դնի», — մտածեց նա և անմիջապես կուսցավ ու սկսեց քարերը, մեկ-մեկ վերցնելով, գնել պատի վրա, քանզիված տեղը,

հետն էլ ստուգելով, պի՞նդ նստեցին, թե ոչ: Մերունիները, շնայած շարունակ հակառակ կողմն էին նայում, հանկարծ (երևի քարի ձայնից) ետ դարձան և տեսան Կարոյին:

— Էդ ի՞նչ բանի ես, Կարո ջան,— առաջ եկավ Սոււքաթի հայրը՝ ծերունի Ազատը, որ գրեթե զառամ մարդ էր՝ բոլորովին ճերմակած, նիհար ու բարձրահասակ:— Ի՞նչ ես անում:

— Հեչ,— պատասխանեց Կարոն, աշխատանքը շրնդհատելով:— Տեսա էս քարերն ընկած, ասի՝ քեռի Ազատի ուծը շի պատի...

Ու ընկած վերջին քարն էլ ամրացնելով՝ նա հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է քեռի Ազատը, տունը ո՞նց է կառավարում, Սոււքաթից դեռ գիր-նամակ չե՞ն ստացել արդյոք: Մերունին շնորհակալություն հայտնեց Կարոյի հոգատարութեան համար և, խոսքի մեջ, ասաց, թե այսօր առավոտից նորոգում է գոմի մարդակները:

— Հնացել, փշացել են,— ասաց նա տխրութեամբ,— նոր մարդակացու էլ չկա, որ տեղը դնեմ: Պակասում են:

Կարոն հետաքրքրվեց:

— Ինչքա՞ն է պակաս: Մի տասը, քսան հա՞տ...

Չէ, այդքան չէ: Քեռի Ազատը կարծում է, որ մի հինգ-վեց մարդակով բանը կվերջանա. բայց, ափսոս, չկա:

— Գնանք մի տեսնենք,— կաղաչով առաջ շարժվեց Կարոն:

Գնացին: Կարոն տեսավ իսկապես գոմի կտուրի մի մասը, մի շատ հարթ մասը՝ բաց, որտեղից արևն ընկել էր ներս, և այդ բաց տեղի մոտ՝ դերանից-գերան մի մետր տարածութեամբ շարված էին նոր տաշած, թարմ մարդակներ, ինչպես նոր կտորից կարկատանը հին լաթի վրա: Ներսից նայելուց հետո՝ Կարոն բարձրացավ կտուրը և, աչքով ու ճիպոտով մարդակների երկարությունն ու հաստությունը չափելով, հեռացավ անխոս, Ազատ քեռուն թողնելով կես զարմանքի, կես տարակուսանքի մեջ. — Ինչո՞ւ եկավ այս մարդը, ինչո՞ւ չափեց ու գնաց՝ առանց մի բան ասելու: Նա չէր հասկանում:

Սուկայն հուշորդ օրը, ամառվա արևը դեռ նոր բարձրա-

ցած, Կարոն նորից եկավ մի շալակ մարդակացուներ բերելով, որ նրա խնդրանքով տվել էր կոլխոզի նախագահը:

— Բերի, Ազատ քեռի,— ասաց Կարոն,— էսօր կարող ենք շինել:

Աշխատանքը երկար շտեկցւ: Մինչև ճաշ նրանք երկուսով մարդակացուները տաշեցին և, իրար հավասարեցնելով, շաբեցին գերանների արանքում, ապա վրաները կոճոն խոտ լցնելով՝ ծածկեցին հողով ու սկսեցին տրորել, որ պնդանատ

— Հիմա էլ շի կաթի,— ասաց նա, աշխատանքը վերջացնելով և պատրաստվելով գնալ:

Որքան էլ ծերունիները հրավիրեցին նրան ճաշի՝ Կարոն շմնաց, բայց խնդրեց, որ եթե մի բան պատահի կամ պակասութչուն լինի — թող իրեն խմացնեն:

Այսպես երկու ընկերոջ ընտանիքների «որպեսութիւնը» հարցնելուց հետո, մի քանի օր, թե մի շաբաթ անց, Կարոն իր երրորդ ընկերոջ, Շեկ Վասիլի տան առջևից անցնելիս, հիշեց, որ, Վասիլի բանակ գնալուց հետո, դեռ ոչ մի անգամ չի հետաքրքրվել, թե նրա կինն ու քույրերն ինչպես են ապրում:

«Էս էլ մի բան չի,— մտածեց,— էսքան ժամանակ սրանց շղնացի խմանամ ո՞նց են, ի՞նչ են: Ճիշտ է, իրենք տունը կառավարում են, բայց տղամարդու բան կունենան տանը»...

Ու հավատարիմ իր սովորութչան, որ մտադրածը չէր հետաձգում, Կարոն մեկ-երկու օր հետո գնաց Շեկ Վասիլի տուն, հետաքրքրվեց, թե ինչպես են ապրում նրա կինն ու քույրերը, պատահեց և տղամարդու մի գործ. բախում ընկած մի հաստ ու պինդ կոճղ, որ ուզում էր ջարդել Վասիլի կիներ և չէր կարողանում — Կարոն կացինն առավ և, կոճը ճղատելով, օճախի փայտ արավ, որի համար և արժանացավ կանանց շնորհակալութչան:

Եվ այնուհետև Կարոն այսպես՝ ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ շարունակ հետաքրքրվում էր պատերազմ գնացած մոտ ընկերների ընտանիքների գործերով կամ, ինչպես

ինքն էր ասում, «որպեսութիւնով» — նրանց տները գնալով կամ ճամփին, կամ որևէ տեղ նրանց հանդիպելիս:

Ու հետզհետե Կարոն այնպես ընտելացավ այդ ընտանիքներին, որ հետաքրքրվում էր անգամ նրանց անասունների կերով, կովերի կաթով: Երբեմն ազատ ժամերին կամ գիշերները կնոջ հետ խոսում էր ընկերների ծնողների, կանանց, նրանց մոտ եղած անախորժությունների և ուրախությունների մասին. «Գիտե՞ս, Սալբի, Վասիլը գրել է թե՛ երկու գերմանացի է սպանել խշտիկով: Ա՛յ տղեն»... կամ՝ «Հսե՛լ ես, Սալբի, Ծովի նանը շեմքում վեր է ընկել՝ ձեռք վնասել: Ասում եմ՝ գնա բժշկի մոտ: Չի ուղում... — Մեր հեքիմ Ավետն ավելի լավ է, — ասում է»...

Կարոյի կինը՝ Սալբին, ընդհատում էր նրան թեթև հանդիմանքով:

— Լավ, այ մարդ, թող դրանց, մեր բան ու գործի մասին մտածի:

— Ո՛նց թե, — զարմանում էր Կարոն: — Մարդիկ հարամու առաջ են գնացել՝ ես նրանց մասին մտածեմ՝ մե՛ծ բան է...

Սալբին առհասարակ գոհ չէր Կարոյի այդ վարմունքից, որ շարունակ, ինչպես ինքն էր ասում, գնում էր սրա-նրատուն, հետաքրքրվում, բան անում, օր կորցնում:

— Թող, այ մարդ, դու էնքան ջան ունե՛ս, որ երկուերեք տան բան անես, — ասում էր նա հաճախ:

Կարոն հասկանում էր ակնարկը և անմիջապես վրա էր բերում նեղացած.

— Շատ էլ կարգին ոտ շունեմ, ձեռ հո ունե՛մ...

Ու շարունակում էր իրենը. այսինքն՝ շարունակում էր հետաքրքրվել ընկերների «տնեցոց որպեսութիւնով». մեկ էլ տեսար, ճաշից կամ իրիկնահացից հետո, վեր կացավ ու ասաց կնոջը.

— Սալբի, մի շաբաթ է Սումբաթենց տանը շեմ եղել, գնամ տեսնեմ հալիվորը ո՞նց է...

Ճիշտ է ասված, թե սովորությունը մեծ ուժ է. Կարոն ոչ միայն ինքն էր սովորություն դարձրել այդպես գնալ-խոսել, ընկերների ընտանիքներն էլ այնպես էին ընտելացել



նրան, որ ամեն ինչ համարյա, իրենց տներում անցած-  
դարձած քաները պատմում էին Կարոյին կամ, մի բան պա-  
տահելիս, կանչում էին նրան: Մի օր, օրինակ, Շեկ Վասիլի  
փոքր քույրը եկավ թե՛ «Քեռի Կարո, մեր կովը դատ խոտ է  
կերել, բուե՛լ է. հարաւ ասում է՝ արի մի տես՛: Գնաց Կա-  
րոն՝ կովին թան խմաչրեց, վազնցրեց, և կովը լավացավ:  
Մի ուրիշ անգամ էլ եկան թե՛ «Քեռի Աղասը թեք է ընկել,  
սխտն ուզում է աղջկանը տեսնել», — Կարոն անմիջապէս  
ճանապարհ ընկավ մտիկ Հողաբնորդ գյուղը և կրէկոյան  
դեմ դերեց ծերունու աղջկան: Վերադարձին, երբ Չան աղին  
«եքիար արե» մաղթեց նրան — Կարոն ասաց սիւսն.

— Արածս մե՛ծ բան չի. Չան աղի: Հիշանդի սրտը ու-  
ղեկի՛ց դերնը վաճճը է:

Այսպէս անցավ մի քանի ամիս, մի օր էլ մեր Կարոյին  
մի ծանր դժբախտութեան պատահեց, որի մասին խոսում են  
մինչև այսօր:

Մի ճաշի եկան հայտնեցին, թե Մովի նանի փոքրիկ  
թոռը՝ Հարութի սողան, ծանր հիվանդ է. մայրը և պառավ  
սասար չգիտեն ինչ անեն: Հինգ-վեց օր Կարոն շէր եղել նը-  
րանց մոտ: Այդ լսելով՝ ճաշն շտապ վերջացրեց ու վեր կա-  
ցավ:

— Կարգին հաց կեր, աչ մարդ, — ասաց կինը:

— Գնամ, ոչինչ: Վաղուց է շեմ եղել, պատավը կմտա-  
ծի՛ իրենց մոռացել եմ:

Ու գնաց: Գնաց տեսավ խնայպէս երեխան հիվանդ,  
բարձր տաքութեան մեջ, իսկ պառավ սասար՝ Մովի նանն ու  
հարսը՝ երեխայի մայրը, երկու կողքին նստած, տրտրվում են  
վշտահար:

— Ի՞նչ է պատահել, Մովի նան, — հարցրեց Կարոն, երե-  
խայի կարմրած երեսին նայելով:

— Երեք օր է էսպէս տաքութեան մեջ վառվում է դե-  
խն: քացախ, բան ենք դնում ճակատին՝ չի անցնում:

— Բժիշկ կանչե՞լ եք:

— Ո՞նց չէ. հենց երեկ եկավ: Շնորհակալ եմ, նախա-  
դահը կանչեց, եկավ նայեց, դնո՞ղ դրեց, բայց մենք դնո՞ւնք

բերել, Կարո ջան: Մտածում էինք, թե տաքություն է՝ կանց-  
նի էլի...

— է, բա ինչո՛ւ ինձ չէիք ասում, ա՛յ նան,— նեղացավ  
Կարոն:— Իեղը ես կբերեի:

— Քեզ ո՛նց նեղություն տանք, Կարո ջան: էս ձյու-  
նին, ցրտին դու ո՛նց գնայիր...— Պառավն ուզում էր ավե-  
լացնել, թե «սախատ (կաղ) մարդ ես», բայց շասաց, մտա-  
ծելով, թե Կարոն կվիրավորվի:— Այ, եթե քաղաք գնացող  
պատահի՝ մեզ ասա, բժշկի թուղթը տանք՝ դեղ բերի,— շա-  
րունակեց պառավը, տրորվելով նայելով թոռանը, որ, տաքու-  
թյունից նեղվելով, թուխ գլուխը բարձի վրա շրջում էր դե-  
ռու դեն:

Կարոն մի երկու րոպե նայեց տաքությունից տապակ-  
վող երեխային, նրա կարմրությունից վառվող անօգ դեմքին  
և գլուխն օրորեց:

— Բժշկի թուղթն ո՞ւր է:

— Ի՞նչ ես անում, Կարո ջան. գնացող կա՞,— հարցրեց  
պառավը:

— է, ես ինչ նմ: Տվեք գնամ... երեխան մեղք է:

Պառավը նորից դժվարացավ այդ բանը հանձնարարել  
նրան, պատճառ բունեց նորից ձյունը, ցուրտը և այն, թե  
ուշ է, շուտով կմթնի, ճանապարհին էլ, ով է իմանում, ինչ  
կպատահի: Զմեռ ժամանակ է...

— Թող մնա առավոտը, Կարո ջան:

— Ինչո՛ւ մնա, երեխան մեղք է: Մի՛նչի քաղաք հասնեմ՝  
նոր կմթնի:

Որքան էլ Մովի նանն ընդդիմացավ այդ ժամին գնալու  
մտքին, Կարոն դեղատոմսը դրեց գրպանը, մի ձեռնափայտ  
առավ ու, տնից դուրս գալով, ճանապարհ ընկավ դեպի քա-  
ղաք, առանց իր տունը գնալու. միայն ճանապարհին, դեռ  
գեղամիջին մեկին ուղարկեց կնոջն ասելու, որ ինքը գնում է  
քաղաք:

Զյուն էր, ցուրտ... շնայած դեկտեմբերը նոր էր սկսվել,  
բայց թվում էր խորին ձմեռ է արդեն. դաշտն ամբողջ ծածկը-  
ված էր ձյունի հաստ շերտով, անգամ անտառի ծառերը

ծանրաբեռնված էին փրփուր ձյունով, կարծես ճերմակ մուշ-տակների ձորձեր էին հագել ու ցրտից կքել նրանց տակ։ Քաղաք տանող խճուղին նույնպես ծածկված էր ձյունով, բայց շատ անցուղարձից տրորված, տափակած, տեղ-տեղ նույնիսկ սահնակներից հղկված, սահունացած, տեղ-տեղ էլ անասնի ճոճում էր մարդու ոտների տակ և խշրտում։

Ճանապարհն այդպես գնում-մտնում էր անտառ, ապա, դուրս գալով, թեքվում դեպի քաղաք։

Կարոն գնում էր ձեռնափայտը ձեռին և, շտապելուց, սովորականից ավելի արագ էր քայլում, ու այդ պատճառով նրա կաղուխները հեռվից էլ նկատելի էր։ Մյուս կողմից՝ չէր մրսում, թեև իրիկնաժամի ցուրտն սկսել էր արդեն։ Արագ քայլելուց, ընդհակառակը, նա տաքանում էր և հագի վերարկուն նրան ծանր էր դալիս. թվում էր մինչև իսկ խան-գարում է քայլելուն։

Այդպես գնալով՝ նա կես ժամում հասավ անտառ և անտառում հանդիպեց քաղաքից եկող համադյուղացիների, որ երևի մթերք էին տարել ծախելու և հիմա վերադառնում էին իրենց էշերով։

— Էդ ո՞ր, Կարո, էս մթնովը, — հարցրին նրանք։

Եվ լսելով ինչի է գնում՝ շտապեցրին.

— Կավ, գնա՛, գնա՛, մութը շրնկնի...

— Որ ընկնի ի՞նչ կա որ։

— Ով է իմանում... Գնա, գնա. ճամփի կեսն արդեն անցել ես։

Ու դյուղացիներն շտապեցրին իրենց էշերը, իսկ Կարոն շարունակեց առաջ գնալ։ Գյուղից քաղաք ընդամենը երկու ժամվա ճանապարհ էր, բայց առողջ ոտների համար, և թեև ճանապարհը դեռ կես չէր եղել, բայց դյուղացիներն այդ ասին շփտես նրան խրախուսելու համար, թե մի բան ասած լինելու. այնուամենայնիվ Կարոն քմծիծաղ տվեց նրանց անտեղի խրախուսանքի վրա, շարունակելով ճանապարհը և մրտածելով. «Չեն իմանում, որ դեռ պիտի ետ դառնամ»...

Երբ հանապարհը մտավ անտառ՝ ցուրտը կարծես մեղմացավ, և Կարոյին թվաց, թե ցրտի մեղմության հետ միա-

սին հանկարծ մթնեց, և լուսնունք խորացավ: Որ կողմը զարձնում էր աչքը՝ դարձյալ ձյուն էր և սառը լուսնունք ծառերի տակն արդեն մթնել էր, և ձյունը կասյաին էր տալիս, որից ցրտի զգացում է համակում մարդու:

«Նա դառնալիս ավելի ցարտ կլինի», — մտածեց. նա և իսկույն էլ մեխիթարեց իրեն. «Ոչինչ, ման եկող մարդը չի մքսի»...

Քանի գնում՝ մութը կամաց-կամաց թանձրանում էր անտառում և, փոքր անց, նրբ նա դուրս էկավ անտառից, մութն էր արդեն և դաշտում, որտեղից երևում էր քաղաքը մի քանի ճրագների վառած: Իսկ երբ հասավ քաղաք՝ այնտեղ արդեն կատարյալ մութն էր: Նա սուտնց դժվարության դատավ դեղատուներ, ուր ճերմակ հաղած դեղագործը այդ պահին ինչ-որ դեղ էր պատրաստում՝ իր աշխատանքի մեջ խուշասուզված:

Գեղատոմսը գրաշանից հանելով՝ Կարոն մտտեցավ նրան. — Սթե կայելի է՝ շատ պատրաստեք, ես գեղ պիտի վերագրանամ: Երեխան ձեռքից դնում է:

Գեղագործը կարգաց Կարոյի տված դեղատոմսը և տասց. — Կես ժամից հետո...

Նվ մինչ նա կպատրաստեր՝ Կարոն տեղավորվեց երկար նստարանի վրա և սկսեց նաչնլ դարակներին շարված մեծ ու փոքր սպիտակ բանկաներին, տարբեր ձևերի ու շափերի շշերին, պատերին փակցրած պլակատներին, ամենից շատ նրա ուշը դրավեց մի պատկեր, որի վրա գալարված սձր, գլուխը բարձրացնելով, լեզուն կախել էր մի ամանի մեջ: Կարոյին թվում էր, թե ամեն մի պատկեր հասկանում է, բայց այդ մեկն անըմբռնելի է իր համար... Նայում էր Կարոն և մի աստիճանից վրում, որ իերտի հաճելի տարությունը համակում է մարմինը: Ընկալարձի ցրտից հետո դա այնքան դուրեկան էր, որ նա ինչնամտացության մեջ ընկատեց, թե ինչպես դեղագործը պատրաստեց մի շիշ հեղուկ դեղ, և նա սթափվեց միայն այն ժամանակ, երբ լսեց դեղագործն ձայնը.

— Եսացիր, օրը երեք անգամ՝ ճաշի գդալով:

Սրբ Կարոն դեղատնից դուրս եկալ՝ էլ հոգնածութիւն շէր գգում. շիշը դրեց վերարկուի գրպանը, ձեռնափայտը նորից ձեռն առալ ու բռնեց գլուղի ճամփան: Շտապում էր, որ դեղը շուտ հասցնի երեխային:

«Մի բան շպատահի խեղճին, մեղք է», — մտածում էր Կարոն ու քայլում:

Նա արդեն դուրս էր եկել քաղաքից, այժմ անցնում էր կամուրջը: Եվ այստեղ նա, շգիտես ջրի հոսանքի՞ց, թե ինչից, զգաց, որ ցուրտը սաստկացել է:

«Քիշերը պարզկա է լինելու», — մտածեց, վերարկուի օձիքն ականջներին քաշելով:

Եվ այդպէս քայլում էր նա ու մտածում, որ մի երկու ժամից տանը կլինի: Վհասնի այն ժամանակ, երբ գլուղում դեռ քնած չեն լինի: Եվ հասնի թե չէ՝ դեղը կտանի Սովի, նանին, կպահանջի որ անմիջապէս խմացնեն երեխային, ապա նոր կերթա իր տուն: Քայլում էր Կարոն, և սառած ձյուները ճոճում էին նրա ոտների տակ ու շրջապատի լուսթյունը վրդովում անախորժ ճոխնչներով, որ արձագանքում էին հետունքում և մանավանդ Կարոյի ականջներում:

Այսպէս, ձյուները ճանշացնելով և հետն էլ ամենատարբեր բաներ մտածելով, Կարոն անցալ համարչա դաշտը և այն է երեացին անտառի առաջին ծառերը ճանապարհի երկու կողմը, Կարոն ձյուների վրա, հենց անտառի մոտ, մի սովեր նկատեց, որը, իրեն տեսնելուց, թե ինչից, փախալ-մտալ անտառ:

«Երևի շոբանի շուն է», — մտածեց Կարոն, հիշելով, որ մոտակայքում գոմեր կան, ուր ձմեռը ուշիար են պահում, և հիմա հովիվներից մեկը երևի այնտեղ է դնում իր շան հետ:

Այս մտքերով նա մտալ անտառ, ուր լուսթյունը հիմա այնքա՛ն խորն էր, որ լալում էր ամեն մի փոքրիկ ձայն ու շարժում, երբ նա ոտը դանդաղեցնում էր մի ակնթարթ. մերթ լալում էր, թե ինչպէս է ձյունը թափվում ծառի ճղներից, ինչպէս են ցրտից ծառերը ճաքում-տրաքում, ու էլի ինչ-որ շարժումներ. թվում էր՝ «մկծևոն» և երևի իր բույնը թռչում, մկներն էին գուցե բնից բուն անցնում, կամ նա-

պատանակներն էին վազվզում մի բանից վախեցած: Սկզբում դրանք գրավեցին Կարոյի ուշք, բայց հետո այնքան սովորական ու միօրինակ դարձան այդ ամենը, որ էլ շուտեց անկանջ դնել, մանավանդ որ պետք էր շտապել, իսկ շտապելիս ոտների ճոճոսքը խլացնում էր ամեն ինչ:

«Էնքան է սառած, որ երկու ոտը մի սելի ճոճոսք է հանում», — մտածեց Կարոն և նորից հանկարծ նկատեց այն սովերը, որ տեսավ քիչ առաջ՝ անտառի պռունկին: Այս անգամ սովերը երևաց ծառերի արանքում, մի բաց տեղ, ու նորից շքայալ աքազ, տարօրինակ արագ քայլերով, կարծես վախեցավ իրենից:

«Սա էլի է՞ն շոքանի շունն է, թե ուրիշ է», — մտածեց Կարոն, բայց իսկույն էլ նրա մտքով անցան գյուղում լսածները, թե գիշերները մեկ-մեկ գայլեր են երևում: Մովի նանն էլ, քաղաքից դարձող գեղացիներն էլ կարծես նույն բանն էին ակնարկում:

«Ուրեմն գել է», — մտածեց նա, դեղի շիշը դրպանում շոշափելով, և ճանապարհը շարունակեց մի տեսակ դժաստացած, իրեն հավաքած՝ ձեռնափայտը ամուր բռնած և ուշադիր շուրջը նայելով:

Մի փոքր տեղ էլ գնալով՝ նույն սովերը դարձյալ երեկվաց ծառերի արանքում, որ շուտով ճանապարհը կտրեց նրա առջևից ու անցավ՝ աչքերը փայլեցնելով:

«Իսկական գել է», — ասաց Կարոն կամացուկ, առանց շուրթերը շարժելու, բայց և առանց մեծ երկչուլի, մտածելով, որ դա այն կատաղի գայլերից չէ, որ մարդ է վնասում. ավելի շուտ՝ դա աչքը վախեցած գայլ է, որ փախչում է:

«Առաջ, երևի, կարծեց ձեռքս բան չկա, բայց ձեռնափայտս տեսավ-վախեցավ», ասաց էլի Կարոն ինքն իրեն և իր միակ զենքը՝ ձեռնափայտն ավելի պինդ բռնեց ու թրրիկացնելով առաջ գնաց. ապա, գայլին ավելի վախեցնելու համար, սուլեց այնպես, կարծես շներ էր հիս անում նրա ետևից: Կարոյին թվում էր, թե իր այդ սուլոցներից և փայտի թրիկոցից գայլը յոթ վերստ հեռու կփախչի իրենից:

Այդ ամենի հետ միասին նա քայլերն արագացրեց, որ

շուտ դուրս գա անտառից, ով է իմանում, այդ մեկի փոխարեն կարող են մի քանիսը երևալ հանկարծ, պետք է շտապել: Ուրիշ բան է մեկի դեմ կռվել, ուրիշ է՝ շատվորի...

«Ահա ինչու Սովի նանը ասաց գել-գազան կոլաստահի, — նորից հիշեց կարոն: — Իշավորներն էլ, երեխ, բան գիտեին, որ ասին՝ շտապի»...

Սվ ձյունների ճոճուցն այժմ նրա մեջ առաջ էր բերում երկու տեսակ զգացում, մեկ թմբում էր, թե դա լավ է, եթե մոտիկ գայլեր լինեն՝ կկարծեն շատ մարդ է անցնում, չեն մոտենա. մեկ էլ մտածում էր, թե, ընդհակառակը, այդ ճրոտը կարող է գրավել և հեռվում գանձող ուրիշ գայլերի ուշադրութունը: Բայց ինչ էլ լիներ, կարոն գտնում էր, որ ամենից լավը, ամենից կարևորը՝ շտապելն է: Շտապելով միայն կարող է ազատվել վտանգից և դեղը ժամանակին հասցնել հիվանդ երեխային: Ափսոսում էր, որ իգուր լուցկի չի վերցրել, որովհետև լսել էր, որ այսպես ժամանակ լուցկին մեծ գործ է տեսնում: Բայց ոչինչ, փաշտը ձեռին է, մի փաշտ, որ տաք գայլի դուրիս կարող է ջարդել...

Սվ երբեք ձեռնափաշտը կարոյին այնքան անհրաժեշտ ու կարևոր չէր թվացել, ինչպես այդ ժամին:

— Մոտեցիր մի՛ դուրսդ ջարդեմ, — ասաց նա լսելի ձայնով, գայլի հասցեին, որ էլ չէր երևում:

«Ով գիտի, հենց վախեցավ-փախավ», — մտածեց նա, հիշելով, որ մենակ գայլը վախենում է հարձակվել մարդու վրա:

Բայց, պատկերացրեք նրա զարմանքը, երբ հանկարծ, ճանապարհի ուղղությամբ նայելիս, նկատեց, որ գայլը ետին ոտների վրա նստած է ճանապարհի մեջտեղը և զուգահեռադի պես վառ աչքերով նայում է իր կողմը:

Այստեղ կարոյի սիրտը ահ ընկավ:

— Ինչպես երևում է՝ սրա դուրիս ցավում է, — ասաց նա նորից լսելի ձայնով և, մի ձյան կոշտ վերցնելով, նետեց դեպի գայլը, մտածելով փախչնել նրան:

Բայց այս անգամ գայլը չփախավ, նստած տեղից վեր կացավ, ետ-ետ գնաց մի քիչ՝ աչքերը միշտ կարոյի վրա, և նորից կկռից ճանապարհի մեջտեղը:

Կարոն նորից ձյունակոշտ նետեց:

Գայլը նույնն արավ:

Եվ այս բանը կրկնվեց մի քանի անգամ:

Գայլը համառում էր:

Տեսնելով այդ՝ Կարոն, վախից ձեռնափայտը բարձրացրած, գնաց դեպի գայլը՝ նրան վախեցնելու և փախցնելու:

Եվ փայտն իրոք ազդեց:

Այս անգամ գայլը ճանապարհից դուրս եկավ դանդաղ, կարծես անամա, ու մտալ անտառ: Եվ Կարոյին թվաց, թե նա բոլորովին փախավ, ու ինքը ճանապարհը շարունակեց խրոխտացած, որ, վերջապես, քշեց նրան, բայց մի տասրփսան քայլի վրա հանկարծ ետևից թեթև ոտնաձայն լսեց. ետ նայելով՝ տեսավ նորից գայլը գալիս է դդուլը ցատկումներով: Կարոյի շրջվելուն պես՝ նա կանգ առավ բավական հեռավորության վրա:

— Չէ, մինչև քու գլուխը չջարդեմ՝ դու չես հանգստանա, — խոսեց Կարոն ինքն իրեն ու նորից մի ձյունակոշտ նետեց դեպի գայլը: Սա, աչքերը փայլեցնելով, մնաց համարյա նույն տեղը կանգնած. շփախավ:

Այդ զարմացրեց Կարոյին և նա դարձյալ կոացավ նոր, ավելի խոշոր ձյունակոշտեր վերցնելու, բայց հանկարծ զգաց, ավելի շուտ ականջին հասավ էլի մոտիկ քայլերի ձայն, և մինչև գլուխը կբարձրացնեն նայելու, տեսավ գայլը ատամները բաց գալիս է դեպի իրեն: Գայլը, երևի, նկատեց՝ մարդը ազդող զենք չունի, համարձակութուն ստացավ:

Բայց Կարոն էլ ժամանակ չկորցրեց. ձեռի ձյունակոշտը խփեց ուղիղ գայլի ճակատին...

Գայլը վնգաց, ատամները շրխկացրեց ու նորից գնաց դեպի Կարոն:

Սակայն այս անգամ էլ Կարոն իրեն չկորցրեց. ձեռնափայտն էլ ո՞ր օրվա համար էր. նա անմիջապես վրա բերեց ձեռնափայտը, որ հարվածի գայլի ճակատին, բայց հանկարծ... շգիտես անզդուլը շարժումի՞ց, թե կաղ ոտն անսովոր դիրք ընդունեց, նա սահեց ու ընկավ մի ծունկի վրա,



իսկ գայլը բերանով բռնեց ձեռնափայտը և խնայն էլ, կարծես արհամարհանքով, գցեց գետին և նորից գնաց գետի կարոն:

Փայտից զրկված կարոյի զենքը մնացին ձեռները, նա մեկ սեղեց վեր կենալ և ձեռներով սեղմել գայլի կոկորդը, բաց ար էր.— գայլն աչքերն մտա էր, որ վեր կենալու ժամանակ շեղավ. այդ պատճառով նա հենց շոքած տեղը ձեռները բռնեց այնպես, որ գայլի մտանալուն պես՝ օղակ անի և սեղմի նրա կոկորդը...

Բաց գայլը կարծես հասկացավ նրա միտքը, թե վախեցավ նրա ձեռների այդ դիպրից, թեքվեց իսկույն, երևի, կոկորդի կամ թիկունքից հարձակվելու կարոն օգտվեց գայլի այդ շարժումից և ձեռով ձյունափռի նկատեց գայլի երեսին, աչքերին ու, առաջ ոտի ցատկիչով, գնաց դեպի ձեռնափայտը, որ ընկած էր մտիկ. բաց գայլը ձյունոտ գլուխը թափ տվեց ու նորից առաջացավ, պատշառատվելով հարձակվելու ուղիղ նրա փորին կամ կրծքին:

Այստեղ կարոն տնքաց հուսահատ՝ մոնչալու պես, և ձեռը, վերարկուի թեքով փաթաթած, վրա բերեց՝ նրա ճակատին դարկելու, բաց գայլը միայն զից առամներով բերանը բաց արավ նրա բռունցքի առաջ:

Այդ ժամանակ կատարվեց անպատելի մի բան.— կարոն կատաղած, էլ անկիթք շիմանալով, ձեռը թափելով տարավ դեպի նրա բաց բերանը և տնքաց.

— Ին՛ տո, բհր՛...:

Եվ ձեռը կոխեց գայլի բերանն ու սեղմեց առաջ, էլ շիտածելով, թե ինչ է տեսնու նրա վերարկուի քիչ թեքը ձեռի հետ միասին մտավ գայլի բերանը:

Գայլը, այդ անսկանկալից կարծես դարմացած, ետ ընկրկեց, որ բերանն ազատի, բաց կարոն էլ շիտեց նրան, ինքը գնաց գայլի հետ և աջիատեց ձեռը, թեքի հետ միասին, ավելի խորք խրել նրա բերանը, սրտալով, որ դա արդեն նեղում է նրան: Գայլը շարունակում էր կկզած կտ-կտ գնալ, և կարոն գնում էր նրա հետ միասին, այժմ միայն զիտակցում էր, որ եթե ձեռքը հանի, դայլն այս անգամ կատաղած պու-

տառ-պատար կանի իրեն... Ու այս մտքերով նա շարունակում էր ձեռն էլի մղել գաջի կոկորդը, շարունակաբար էլ արտաքին գնայու տեղ չկար:

Եվ միտածով ստանալ կարոն առ գաջը անձաջն, բայց կատարի ստեղծումը ու հետևյալ մեծամասնաբան էին ձյունների վրա, ետ ու սուտը գնարում կամ արտադրանք միևնույն տեղը՝ ստանալ ձյունները քանգեղով: Գաջն այլևս չէր կարողանում ո՛չ բերան բանալ, ո՛չ ձայն հանել. երբեմն միայն ջանալով էր ծառա լինելով, արագին տաներով խփել կարող լինե: Ասկայն կարոն շարունակում էր նույնը. աշխատում էր ձեռն արագ մղել նրա կողորդում, և նրան թվում էր, թե ձեռն էլի սուտը է գնում...

Կարոն շտերջն այլևս ոչինչ չէր տեսնում. մանավանդ չէր զգում ջուրսը: Ընդհանրապես, վերաբերուն թվում էր նեղում է, քրտնեցնում:

Որքան տեղի մարդու և քաղաքի այս պայթույթ — կարոն չէր կարող սսել — մեկ էլ նա զգաց, որ գաջն ընկած խեղճացած: Կարոն ձեռք շտանեց նրա բերանից, նրան թվաց՝ գաջը խորտականկրթյուն է անում. գիտեմամբ ընկնում է, որ ձեռք դուրս գա բերանից:

«Ներագրեթյուն կտեսնե», — ասաց կարոն մտքում և ինքն էլ կուսցավ գաջի հետ միասին, այս անգամ ձախ ձեռքով դրսուից սեղմելով նրա վիզը:

Գաջն ընկած ալ մտածեց մի կողքի. կարոն ավելի կուսացավ, նորից ուժ տալով ձեռքին, բայց հիմա զգում էր, որ ձեռն այլևս սուտը չէր գնում: Գաջը խոխոտում էր, և կարոյին նորից թվում էր, թե գազանը կեղծում է Մի երկու անգամ նա ցնցվեց ու ստաներ ձգեց, բայց կարային դարձյալ թվաց, թե «սուտ է անում»:

Ու միտածով գաջը ո՛չ շարժվում էր, ո՛չ խոխոտացնում, և կարոն ձեռք նրա բերանի մեջ, կուսել էր նրա վրա այնպես, որ հեղից տեսնողը կարող էր կարծել, թե գաջի բերանից բան է հանում...

Այդ գիրքում, նույն մի րուպե, նա հիշեց իր սուներ, և

պա դեղատունը, հիվանդ երեխային և առողջ ձեռքով փորձեց  
շոշափել դեղի շիշն ու... կորցրեց ուշքը:

Առավոտը քաղաք գնացող կոլտնտեսականները գտան  
նրան գյուղից երկու կիլոմետր հեռու. նախ, հեռվից նկատեցին մի տարօրինակ տեսարան. — ճանապարհի վրա ընկած էր սև վերարկու հագած մի մարդ, ձեռք գալլի բերանում: Դա շատ զարմացրեց նրանց: Բայց նրանք ավելի զարմացան, երբ ճանաչեցին Կարոյին: Գալլը սատկած էր, իսկ Կարոյի մարմինը դեռ տաք էր: Գաղանի կարկամած ծնոտները ետ տանելով՝ գալլի բերանից հանեցին նրա ձեռքը, որ արյունոտ էր, և սկսեցին ստուգել՝ կենդանի՞ է Կարոն, թե ոչ: Մեկը ձեռք դրեց նրա բերանին: Շունը կար: Այդ ժամանակ աշխատեցին ուշքի բերել նրան՝ ճակատին, քունքերին ու կրծքին ձյուն քսելով:

Երկար աշխատելուց հետո, վերջապես, նրան ուշքի բերին. երբ նա տնքաց հանկարծ ու աչքերը բաց արավ, նրա առաջին խոսքը եղավ.

— Դեղը հո չի՞ կոտրել, — և թույլ, սառած առողջ ձեռք տարավ դեպի գրպանը ու ասավ, շիշը հազիվ շոշափելով: — էս տվեք Մովի նանին, Հարութի երեխի համար է...

Բայց քաղաք գնացողները Կարոյին է՛լ գյուղ չբերին. սալլ նստեցրին ու հետները տարան քաղաք՝ վիրավոր ձեռք բժշկին ցույց տալու:

Գալլի ատամները երկու տեղ քերծել էին նրա ձեռի երեսը և մի երկու տեղ խրվել դաստակը:

Երբ երեկոյան դեմ նա տուն վերադարձավ ձեռք կրծքին կապած, կինը՝ Սալբին, գլուխն օրորեց.

— Ոտդ քիչ էր, այ մարդ, գնացիր ձեռքդ էլ սախատեցի՞ր...

Կարոն կնոջ խոսքերի մեջ զգաց և՛ վիշտ, և՛ հանդիմանություն, ու կարծես նրան հանգստացնելու թե մխիթարելու համար նկատեց.

— Ոչինչ, այ կնիկ, կպատահի. մարդիկ հարամու առաջ կոխվ են գնացել, գելն ինձ կծի մե՞ծ բան է...

## ԱՆԻԿԸ

Նա տասը-տասներկու տարեկան մի թուխ աղջիկ է՝ խոշոր խավ աչքերով, որոնք աշխարհին ու մարդկանց նայում են մերթ զարմացած, մերթ մտախոհ, բայց միշտ հետաքրքիր:

Այդ փոքրիկ աղջիկն իմ հարևանուհին է. ավելի ճիշտը՝ ապրում է իմ դիմացի միհարկանի տանը, որ երկար պատուղզամ ունի և փոքրիկ պարտեզ, ուր վտիտ դեղձենիներին և գանգուր ծիրանիներին նախագահում է մի բազկատարած վիթխարի ընկուզենի, որի տակ փոխած կանաչների վրա նա հաճախ սովորում է իր դասերը կամ զբաղեցնում իր փոքրիկ եղբորն ու քրոջը:

Սկզբում, պետք է ասեմ, .ես նրան ծանոթ չէի, բայց գիտեի, որ նրա անունն Անիկ է և գրեթե ամեն օր իմ բնակարանի լուսամուտից կամ պատշգամից տեսնում էի նրան, նրա զբաղմունքները, թե ինչպես առավոտը վաղ գնում է դպրոց, ինչպես է ճաշում ծնողների և փոքր եղբոր ու քրոջ հետ, ապա ինչպես առանձնանալով խորասուզվում դասերի մեջ՝ պատշգամում կամ ընկուզենու տակ, ուր ինքը կամ մայրը փռում էին մի փոքրիկ, վառ ծաղկավոր գորգ: Տեսնում էի նույնպես, թե ինչպես իրիկնադեմին գալիս էին նրա մի քանի ընկերուհիները՝ թիթեռների պես թեթև աղջիկներ: Եվ Անիկը, հագնելով կարճ, ծնկներին հասնող մի զգեստ,

գնում էր նրանց հետ զբոսանքի, գուցե կինո կամ կրկես։  
Ու նա այդ անում էր մեծ սիրով, անհող ու խնդուն, ինչպես  
լինում է միայն ծնողներից սիրված ու փայփայված նրա  
հասակի աղջիկը։

Եվ Անիկի ծնողներն իրոք սիրում ու փայփայում էին  
նրան։ Հայրը, որ երեսունն անց բանվոր էր գործարանում,  
և մայրը, որ միայն սան տնտեսությամբ էր զբաղվում օրն  
ի բուն, անում էին ամեն ինչ, որ նա ուրախ լինի, զբաղ-  
վի միայն իր դասերով և հաշմանա ընկերուհիներից թե՛ հագ-  
նելու և թե՛ զբոսանքի ու զվարճության մեջ։ Այդ երևում  
էր մանավանդ կիրակի օրերը, երբ Անիկի ծնողները երե-  
խաներին, հագցրած ու դուգած, տանում էին զբոսանքի, և  
այդ ժամանակ ամենից ավելի աչքի էր ընկնում Անիկը,  
նա թուխ խոսողներով ուսերը ծեծող մազերին կատում էր  
կապույտ կամ կարմիր ժապավեն և կարճ ու թեթև շրջա-  
զգեստով, ամառային վերարկուն անփութորեն թեխն՝ քայ-  
լում էր ծնողների առջևից, փոքր եղբոր կամ քրոջ թաթից  
բռնած կամ նրանց հետ կատակ անելով, և այդ ժամանակ  
թվում էր Անիկից ավելի անհող աղջիկ չկա աշխարհում, այն-  
քան թավաուն ու խնդուն էր։

Բայց ահա պատերազմը միանգամից, մի օրվա մեջ  
փոխեց նրա կյանքը։

Պատերազմի երրորդ թե չորրորդ օրը, երբ բազաբում  
դորահավաք էր, ես նկատեցի, որ Անիկը հասարակ հագնված,  
գլխին մառլյայից մի գլխաշոր կապած, հոգածությամբ ու  
եռանդով սրբում է իրենց պատշգամբը, առաջնամեններն ու  
բակը, մի բան, որ անում էր միայն մայրը։

Այդ նույնը նկատեցի և հետևյալ օրերը։ Բացի պատըշ-  
գամն ու բակը մաքրելուց, նա գլուխը դարձյալ մի ճերմակ  
գլխաշոր կապած, մի լաթ ձեռին սրբում էր սեղանի, աթոռ-  
ների և առհասարակ տան իրերի փոշին, ճիշտ այնպես,  
ինչպես մայրն էր անում՝ ուշադիր, խնամքով։ Թեև տասը-  
տասներկու տարեկան, բայց Անիկն իրեն ձևացնում էր մի  
տեղակ տարեց տանտիկին, փոխել էր անգամ քայլվածքը,  
ման էր գալիս մեծավորի, յայն ու հաստատուն քայլերով,

Քակ երեխաներին՝ եղբորն ու քրոջը՝ կարգադրութիւն կամ  
գիտողութիւն անելիս՝ խոսում էր մոր ձեռք. պինդ ու թափ  
ձայնով, երբեմն աչքերը նեղացած ուղղելով.

— Հրապա բան շտեմնե՞մ...

Եվ երեխաները նրա ձայնի մեջ փոփոխութիւն, թերևս  
և ուրիշ նշաններ նկատելով, սթափվում էին, զուցե և զգում,  
որ քույրն իրավունք ունի իրենց վրա, սրովհետև ահա քանի  
օր էր առավտից իրիկուն նա՛ էր խնամում նրանց: Երբ  
զարթնում էին՝ Անիկը մեկ-մեկ դրկած բերում էր նրանց  
պատշգամ՝ թախտի վրա հազցնում, ապա լվանում նրանց  
նրեաներն ու ձեռները: Բայց ամենից հետաքրքրականն սկըս-  
վում էր թեչի ժամանակ: Անիկը ուշադիր հետևում էր վեց տա-  
րեկան եղբոր և հազիվ շորս տարեկան քրոջ ուտելուն. թեչն  
զգուշութեամբ, որ ոչ մի կաթիլ շիտի սփռոցին կամ թերևս  
վախենալով ձեռք վառել, լցնում էր ափսեների մեջ, հովաց-  
նում փշելով, ապա նուշնալիս զգուշութեամբ խմացնում  
երեխաներին, մեջընդմեջ պանդուխտ պատաններ պատրաստում  
յուրաքանչյուրի համար և տալիս նրանց, խնդրելով ու սպառ-  
նալով, որ ուտեն, սրովհետև երեխաները գծկամութեամբ էին  
ուտում:

— Այ, եթե շուտեք՝ ես ձեզ հետ շեմ խաղա, — զգուշաց-  
նում, սպառնում էր նա:

Երեխաները հնազանդում էին՝ խաղի հեռանկարով հրա-  
պուրված և աշխատում շուտ վերջացնել թեչը:

Թեչից հետո Անիկը նրանց առջև դնում էր հին ու նոր  
խաղալիքներ կամ ավելի շուտ՝ թղթից նազակներ ու աղաղ-  
նիներ էր շինում, տալիս նրանց և ինքը նորից գրադվում  
տան գործով:

Այս անգամ այդ տասը-տասներկու տարեկան աղջիկը կա-  
պում էր մոր աշխատանքի զոգնոցը, որ հասնում էր մինչև  
նրա տաների երեսը ու սկսում էր ճաշի պատրաստութիւն  
տեսնել. — նախ, մեծ վախով ու զգուշութեամբ վառում էր  
նսովթափառը, կմալե կաթնալով ջուրը դնում վրան, միւսը  
զդում մեջը և զարծչալ զարմանալիորեն մորը նմանեցնելով,  
նրա տղա դածրիկ պիտի վրա նստած, ձեռները մինչև ար-

մունկները քշտած: Երբեմն Անիկն իր այդ աշխատանքի մի մասն անում էր ընկուղեկու տակ, երեխաներին գորգի վրա նստեցնելով, որոնք նրա շուրջը թղթե աղավնիներ էին թռցնում կամ թղթե նավաղներ քշում առվի ջրում:

Մի քանի օր փոքրիկ Անիկին այդ աշխատանքների մեջ տեսնելով՝ ինձ շարունակ զբաղեցնում էր մի միտք, թե ո՞ւր է արդյոք նրա մայրը, ի՞նչ է պատահել նրան. հիվանդ է, թե՞ տեղ է գնացել: Բայց չէր երևում և հայրը...

Ու ամբողջ տան հոգսը կարծես մնացել էր այդ նիհար, նուրբ աղջկա վրա, որ, սակայն, թվում էր ոչ մի ծանրություն ու դժվարություն չէր դրում, ամեն քան անում էր այնպես սիրով ու ինամբրով և նույնիսկ կարծես մի տեսակ հպարտ, որ տան դործը, մեծի գործը ինքն է անում:

Բայց և այնպես ինձ անհանդուստացնելու շափ հետաքրքրում էր, թե ո՞ւր են Անիկի ծնողները, ի՞նչ է պատահել այդ համեստ ընտանիքին, որ այդ փոքրիկ, փխրուն աղջիկն է կատարում տան ամբողջ դործը, անդամ ջրում է պարտեզը, մի բան, որ հայրն էր անում միշտ: Չլինի՞ երկուան էլ հիվանդ են կամ մի աղետ է պատահել:

Եվ ահա մի օր, իմ այս անհանդիստ հետաքրքրությունից մղված, գնացի-մտա Անիկենց բակը, նրբ նա երկար ավելը ձեռին սրբում էր այն: Թեև անծանոթ՝ ես իր անունով դիմեցի նրան և հետաքրքրվեցի, թե ո՞ւր են ծնողները և ինչո՞ւ տան բանն ինքն է անում:

Անիկն սկզբում շատ զարմացավ, չգիտես իմ հարցերի՞ վրա, թե ինձ իրենց բակում տեսնելով. նրա խած աչքերն ուղղակի շավեցին, բայց խկույն էլ իրեն հավաքեց:

— Ինչո՞ւ եմ տան բանը ես անում, — կրկնեց նա նորից շփոթվելով ու կարմրելով: — Հապա ի՞նչպես, ո՞վ անի: Չէ՞ որ հայրս գնացել է բանակ... մայրս աշխատում է նրա տեղը՝ գործարանում: Ես էլ պահում եմ տունը, երեխաներին, — ասաց նա մեծի պես լուրջ և, մի փոքր լռելով, ավելացրեց: — Չէ՞ որ պատերազմ է...

Ու այս խոսքերը նա ասաց մի այնպիսի եղանակով, որ կարծես զարմանում էր, թե ինչպես ես մինչև հիմա չեմ

հասկացել թի այդպիսի հայտնի բան, ու նորից, ամեն ժամանակ շկորցնելու համար, շարունակեց ընդհատված աշխատանքը՝ բարակ, նիհար թևերը քշտած:

Այդ օրվանից մենք ծանոթացանք, և ամեն օր դարձյալ տեսնում եմ, թե ինչպես է Անիկը մենակ անում ամբողջ տան գործը՝ եփում, հավաքում, երեխաներին պահում-կերակրում կամ տանում գրոսանքի, մինչև մայրը գալիս է գործարանից: Իմանալով, որ մայրը գործարանում հոգնած կլինի և հունգարի կարիք կունենա, նա ճաշը պատրաստում է ինքը՝ դասագիրքը միշտ ձեռին Կերակրի կաթսան գնելով նավթավառի վրա՝ նա, դասը կարդալով, մերթ կերակրին է նայում, մերթ խաղալիքներով զբաղված երեխաներին, որ երբեմն խանդօտում են նրան, բայց միշտ էլ ենթարկվում, երբ սաստում է:

Ինձ զարմացնում է այդ փոքրիկ աղջկա հանդիստ ու զուսպ բնավորությունը, նրա հավաք, զգույշ լրջությունը, հավաք աշխատանքը, և ես այլևս չեմ կարողանում մնալ անտարբեր հետաքրքրվողի դերում. ընդհակառակը, համակրանք եմ զգում դեպի այդ մանկահասակ աղջիկը և ուզում եմ պարզապես հանդիպել նրան, խոսել հետը և դովել... այս և դովել նրան, խրախուսել, գուցե և օգնել, եթե նա դեմ չլինի...

Եվ բունի որ հիմա ծանոթ ենք, ես, ամեն անգամ Անիկին հանդիպելիս՝ հետաքրքրվում եմ, թե ինչպես է նա, ինչպես է հասցնում դասերը: Ու Անիկը միշտ պատասխանում է թեթևակի շատագուննելով, որ ինքը լավ է, դասերն էլ՝ սշինչ, հասցնում է. չէ՞ որ հիմա երեկոներն է գնում դպրոց, որովհետև մայրը ցերեկն աշխատում է գործարանում:

— Իսկ հայրիկդ ինչպես է: Ինչ է գրում:

— Հայրիկս լավ է. թնդանոթաձիգ է ճակատում, — ասում է Անիկն ուրախ-ուրախ: — Այն օրը նորից նամակ ստացանք, գրում է, որ մեզ լավ պահենք, ամեն բան լավ կլինի...

Լսելով նրան՝ ես միևնույն ժամանակ նկատում եմ, որ Անիկը զարմանալի հետաքրքրվում է պատերազմով, լրագրեր



է կարդում, ուղիտ է լսում, և ամեն պատահելիս-խոսելիս՝ հարցնում է.

— Իմացա՞ք, քեռի, որ մերոնք քշել են գերմանացիներին. քանհինգ ինքնաթիռ են գցել, թնդանոթներ են խլել, գնդացիք... Եթե ամեն օր այդքան բան խլեն՝ պատերազմը շուտ կվերջանա, չէ՞...

— Իհարկե,— ասում եմ,— իհարկե...

Եվ մեր հանգիպումներն անցնում էին միշտ այսպիսի կարճ հարց ու պատասխանով, մի քանի խոսքերի փոխանակութեամբ, որոնց ընթացքում Անիկը կա՛մ շիկնում էր, կա՛մ ծպտում աշխույժ ու դվարթ, ինչպես կարող է լինել միայն տասը-տասներկու տարեկան աղջիկը:

Բայց մի օր էլ (մեր ծանոթութեանից կարճեմ երեք-չորս ամիս հետո) հանգիպեցի Անիկին փողոցում. նա շա՛տ տխուր էր. խաժ աչքերը լիքն էին ինձ համար անբացատրելի թախիժով ու տխրութեամբ: Ինձ տեսնելով՝ նրա աչքերն ավելի մթազնեցին:

— Հը, Անիկ, ի՞նչպես ես, ի՞նչ է գրում հայրիկդ:

Այս անգամ նա իր սովորական աշխույժ պատասխանի փոխարեն՝ բարակ շուրթերը հպեց իրար, նրա բկի ոսկորը մի երկու անգամ խաղաց ջղաձիգ նուրբ մաշկի տակ, և նա աչքերը խոնարհեց դետին:

Ինձ համակեց մի վատ նախազգացում:

— Գիտեք,— ասաց նա մի պահ հապաղումից հետո պուխը նորից բարձրացնելով,— ասում են... ասում են, որ... հայրիկս... սպանվել է...

Սպանվե՛լ... Նա հաղիվ է արտաբերում այս խոսքը, և ես ինքնաբեր բռնում եմ նրա ձեռքը, նրա փոքրիկ ձեռքը և ուզում եմ սիրտ տալ նրան, մխիթարել. վերջապես, սսել մի այնպիսի բան, որ նա շտխրի, շքնկճվի:

— Ո՞վ է ասում,— հարցնում եմ ես առերևույթ թերուհավատ ու փոքր-ինչ բարկացած, կամենալով ներշնչել նրան այն միտքը, որ կարևորություն չտա այդպիսի լուրերի, որոնք շատ հաճախ սուտ են լինում:

Բայց նա կարճես հատկացավ միտքս և վրա բերավ.

— Աչ, ինձ դպրոցում ասին... Բայց ճաշրիկս չգիտի...  
Ես նրան չեմ ասում... չեմ կարող ասել... լաց կլինի շատ  
ու... չի կարող...

Անիկը շվերջացրեց. նա երեխայի նման բռունցքով սրբ-  
բեց աչքերը լցված արցունքները և խկուչն էլ նորից սթափ-  
վեց, արիացավ, շուրջը նայելով:

— Չէ՛, չեմ ասի... նա չի կարող... լաց կլինի...

Եվ մինչև ես կարողանայի մի խոսք ասել՝ նա պաշու-  
սակն ուղղեց թևի տակ և շտապեց դպրոց, որ շուշանա...

Ո՞վ էր դրեյ աչդ վաթրիկ աղջկա մեջ աչքքան կորով ու  
գիտակցութչուն...

# ՈՐԴԻՆ

Երբ պատերազմի ասպին օրերէն անկին Վարդուհու միակ որդին՝ Աշուտը, զնաց լանակ, նա, ասպին ճանապարհ դնելիս, խնդրեց միայն մի բան՝ շուտ-շուտ նամակ գրել, որ ինքը հանդիստ լինի Եմ որդին ասպին ամիսները մոր պատվերը կատարում էր ամենայն ճշտութեամբ, կանոնապահութեա շարժիչ մի անգամ մի բացիկ էր ուղարկում, թե լավ է, համբարում է, կամ թե՛ թշնաման արարան զիտ հասցրին, ջարկում և աստղաթիշուն է ցանկանում մայրիկին, Արամայիս քնուն և բայտ բարեկամներին՝ Վարդուհին այդ նամակները ստացած օրն իսկ սրախ-սրախ սալիս էր կարդալու եղբորը՝ Արամայիսին, որ ամեն օր հաշից հետո անցնում էր բնոցը, որ նա իրեն մենակ շղատ և թե իմանա՛ ինչ լուր կա Աշուտից:

— Մի տես, Արամայիս, ինչ է գրած Աշուտը, — և նվիրական նամակը եղբորը մեկնելով՝ հրճագին նայում էր նրա դեմքին, տեսնելու, թե ինչ տպավորութեան կթողնի սրտու նամակը եղբոր վրա: — Քեզ էլ է բարե ուղարկեց, — շէր համբերում նա: — Լավ է, չէ՞: Երևում է՝ լավ է: Ելը նամակին ստանում եմ՝ կարծես մտա է, խոսում է հետա:

Իսկ ծանոթներին, բարեկամներին հանդիպելիս՝ ասում էր.

— Աշուտից նամակ ստացա: Լավ է: Բարեամ է բոլորին:

Ու պատահում էր, երբեմն, նամակը խանդաղատանքով հանում էր մաշված պայուսակից և ցույց տալիս մոտ բարեկամների, ապա հպարտ ու երջանիկ տեսքով և մեծ խնամքով պահում նորից։

Բայց հետո նամակները կտրվեցին հանկարծ։ Եվ Վարդուհին՝ հիսուն տարեկան այդ փոքրամարմին ու ակնոցով ուսուցչուհին, ընկավ խոր մտատանջության մեջ. ի՞նչը կարող էր խանգարել Աշոտին նամակ գրելու. հիվա՞նդ է արդյոք, վիրավո՞ր, հեռու տե՞ղ է գնացել, թե՞... մայրական սերը թույլ չէր տալիս ուրիշ մտքեր։ Եվ նա դարձացած հարցնում էր եղբորը.

— Ի՞նչ կարող է լինել, Արամայիս... Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ չի գրում։

Եղբայրը, որ տարիքով ու փորձ մարդ էր, հուսադրում, մխիթարում էր քրոջը, թե լինում են հանդամանքներ, աշխատանքներ, երբ մարդ մամանակ չի գտնում նամակ գրելու և, վերջապես, նամակ չլինելը դեռ չի նշանակում՝ նրան մի բան է պատահել։ Պատերազմ է, ով է իմանում, ճանապարհը կարող է փակվել։ Կամ գուցե գրել է, փոստն ուշացնում է...

Սակայն անցավ մեկ-երկու շաբաթ՝ դարձյալ ոչինչ. ոչ մի նամակ։ Փաստաբեր կինը փողոցով անցնելիս, երբ տեսնում էր Վարդուհին նամակի ակնկալությամբ նայում է իրեն, միշտ ասում էր միևնույնը.

— Այսօր էլ չկա, մորաքույր։ Բայց շուտով, երևի, կլինի։

— Ես էլ, ես էլ կարծում եմ, — ասում էր Վարդուհին հավատով, թույլ շտալով, որ հուսահատությունն ընկճի իրեն։

Եվ մի օր, արդեն երկու ամիս անց, ցրիչն իրոք նրան հանձնեց մի նամակ, որ Վարդուհին սունելն ու տուն վազելը մեկ արավ։ Դողդոզ ձեռներով պատռեց ծրարը՝ անմիջապես կարդալու, բայց կանգ առավ դարձացած...

Չեռագիրն Աշոտինը չէր։

Նա թեև դարձանալի էր, բայց և այնպես կարդաց առաջին տողերը.

«Մեր սիրելի և թանկագին մայրիկ»...

Նամակի այս ձևը նրան տարօրինակ թվաց: Ո՞ւմն էր, ո՞վքեր էին գրում. նա նորից նայեց հասցեն՝ իրենն էր, բայց ձեռագիրն ուրիշի:

Սա ի՞նչ է նշանակում: Ովքե՞ր են գրում իրեն... Նրա հետաքրքրութունն այնպես գրգռվեց, որ նա ոչ միայն զարմացած, այլև հուզված շարունակեց ընթերցումը.

«Քո սիրով լի նամակն ստացանք և կարգացինք»...

Գարձյալ տարօրինակ էր: Ուստի մի բան հասկանալու համար, վերջապես, նա շարունակեց.

«Քո հարազատ որդուն և մեր սիրելի եղբայր Աշոտին սպանեց գերմանական զինակը...»:

Վարդուհին էլ շկարդացավ կարդալ. նրա աչքերը մըթնեցին, և նամակը նրա ձեռքերից սահելով՝ ընկավ հատակին, ինչպես և ինքը՝ թախտին:

Որքա՞ն ժամանակ անցավ՝ նա չէր կարող իմանալ. սուր վիշտը կամաց-կամաց փոխվեց մի օտարոտի թմրության, թմրությունը մի բուխ ցավի, մինչև նրա մեջ նորից ցանկություն դարձնեց ստուգելու կարդացածը. գուցե ինքը ճիշտ չկարդաց, գուցե հետո բացատրություն կա, գուցե լավ չի հասկացել... Վերջապես, նա ուզեց իմանալ, թե ովքե՞ր են այդ նամակն ուղարկողները, որ գրում են «մեր սիրելի և թանկագին մայրիկ»... Գուցե և դա ուրիշի նամակ է, սխալմամբ դրվել է իրենց ծրարի մեջ:

Եվ Վարդուհին նամակը վերցրեց հատակից ու, լարելով իր ամբողջ կամքն ու գիտակցությունը, սկսեց կարդալ մի տեսակ ինքն իրենից դժգոհ, թե ինչպես անուշադիր եղավ և լավ չկարդաց, գուցե դա ուրիշի նամակ էր խկասպես:

Սակայն նորից կարդալով այն տողերը, ինչ կարդացել էր քիչ առաջ, նա դարձյալ կանգ առավ, ասես մի սուր հարվածից, որ մթազնում է մարդու միտքն ու աչքերը... Բայց փոքր անց նա, ատամները սեղմած և աշխատելով աչքերը շոր պահել, որ լավ տեսնի, շարունակեց ընթերցումը մի տեսակ ազահորեն, ամեն ինչ կտրծեա միանգամից իմանալու... Լինում է վայրկյան, երբ մարդ ուղում է դիտել Եկած դրժ-

բախտութիւնն իմանալ իր ամբողջ խորութեամբ: Ահա մի  
աչդպիսի սրտաբեկ, բայց վճռական տրամադրութեամբ նա  
շարունակեց նամակի ընթերցումը:

«Աշոտը, որպէս գնդացրի զինվոր, երեք անգամ ետ մղեց  
թշնամու հարձակումը և մեր կշանքը փրկեց մահից: Չեր  
խիզախ որդին, մեր նրկրի քաջ զինվորը և մեր հազատարիմ  
ընկերը: Մենք ետ մղեցինք թշնամուն, բայց Երեկոյան դեմ  
գնդակը գիպավ մեր և ձեր Աշոտին, և նա մեռավ, սիրելի մայ-  
րիկ, թեթև մահով, անգամ չիմացավ, որ մեռնում է: Մենք  
նրան խաղցեցինք ընկերներով միասին և խոսք տվինք, որ  
մինչև մեր մահը կհիշենք նրան և նրա մորը»...

Այնուհետև նրանք դրում էին, որ նրա անունը գրել են  
գնդացրի վրա, որը միշտ իրենց հետ է և միշտ պիտի հի-  
շուցնի Աշոտին: «Եւ կրկնելով «մեր սիրելի մայրիկ» բառերը՝  
հազատեցանք ինն, թե երբ թշնամուն վտարեն և հաղթա-  
կան դառնան՝ արձան պիտի կանգնեն Աշոտի գերեզմանի  
վրա, որ մարտիկ շնորհանան նրան, հիշեն, թե ինչ է արել  
հայրենիքի համար, և ապա կդռնեն նրա մոտ, մայրիկի մոտ,  
որ միասին հիշեն «մեր Աշոտին»:

Նամակը վերջանում էր այսպէս.

«Իսկ մինչ այդ, եթե դուք, սիրելի մայրիկ, ծանր զղաք  
ձեզ կամ մի որևէ բանի դժվարութեան ունենաք, գրեցեք,  
և մենք կանենք՝ ինչ կարող ենք, որովհետև այսօրվանից  
խոսք նեք առիտ՝ լինել ձեր հազատարիմ և անկեղծ որդի-  
ները»:

Նամակն ստորագրել էին յոթ հոգի:

Վերջացնելով Վարդուհին նամակը գրեց աչքերին ու  
լունց, ընկնելով մի անզգա գրութեան մեջ, երբ մարդ չի հաս-  
կանում ո՛ր է գտնվում, ի՛նչ է ցանկանում... Սուր կակիծի  
հետ միասին, արցունքների հետ միասին, խառն, անորոշ  
մտքեր ու հիշողութեաններ էին անցնում նրա գլխով ու սրը-  
տով: Մերթ հիշում էր իր Աշոտին, երբ նա նրեխա էր, երբ  
պայտապան առած գողտց էր դիտում... Մերթ ամեն ինչ շրա-  
նում էր, և նա հիշում էր միայն այն պահը, երբ դաշարանում  
նախապահ էր գրեց Աշոտին, և նա առաջ վերջին ազամ. «Մա-

Մա ջան, քեզ լավ պահիր... երբ վերադառնամ՝ հարս կբերեմ քեզ համար, որ մենակ չմնաս և շատ շարշարվես»...:

Հարս կբերեմ քեզ համար... Վարդուհին զգաց, որ որդին կատակով մխիթարում է իրեն.— Հարս կբերեմ քեզ համար, որ մենակ չմնաս...:

Իր այս մտքերի ու կսկիծի մեջ Վարդուհին լալիս, տանջվում էր մենակ, երբ սովորական ժամին, ճաշից հետո, եկավ եղբայրը՝ Արամայիսը: Որպես փորձ մարդ՝ նա մի ակնարկից հասկացավ ամեն ինչ ու նստեց անխոս: Սակայն, նրան տեսնելով, Վարդուհու կսկիծը նորոգվեց, և նա իր լացի մեջ այնուամենայնիվ նամակը ավեց եղբորը, որ նա էլ իմանա, թե ի՛նչ դժբախտություն է եկել իրենց զլխին: Եվ երբ եղբայրը նամակը կարդաց ու լռեց, Վարդուհին հարցրեց արցունքի միջից.

— Տեսա՞ր, Արամայիս. գրում են թե՛ Աշոտս փրկել է նրանց մահից... Աշոտս...:

Ու էլի ինչ-որ հարցեր, որոնց Արամայիսը պատասխանում էր զլխով անելով կամ աշխատում էր հանգստացնել քրոջը, մեղմել նրա վիշտը, թեև զգում էր, որ ինքն անզոր է փարատել նրա կսկիծը:

Բայց այն, ինչ շկարողացավ անել եղբայրը, արավ կարծես ժամանակը, արին մարդիկ, շրջապատը: Իմանալով Վարդուհուն հասած դժբախտությունը՝ նրան մխիթարելու եկան ընկեր ուսուցիչները, հարևանները, անգամ մեծահասակ աշակերտները: Սրանցից յուրաքանչյուրի սրտանց մի խոսքը ասես ամրացնում է նրա վիրավոր, բեկված սիրտը, և նա իրեն մենակ, ծանր չէր զգում: Մանավանդ, երբ երկու շաբաթ հետո սկսեց գնալ դպրոց, աշակերտների աշխույժ հասարակության մեջ, նրանց հարգալիք ու սիրող հայացքների տակ՝ Վարդուհին զգում էր, որ ինքը դեռ պե՛տք է մարդկանց, հենց այդ աշակերտներին: Բայց Վարդուհու վիշտը մեղմելու գործում ավելի շատ բան արավ այն նամակը... այն նամակը, որ գրել էին Աշոտի ընկերները: Իր

կակիծի մեջ Վարդուհին օրը մեկ-երկու անգամ պահարանի դարակից վերցնում-կարդում էր այդ նամակը և ամեն անգամ ասես մի նոր սփոփիչ բան էր գտնում նրա մեջ.— Ուրեմն Աշոտն իսկապես նրանց փրկել էր մահից, որ անունը գրել են դնդացրի վրա... Ուրեմն Աշոտն այնպիսի բաներ է արել, որ ուզում են արձան կանգնել նրան... Ուրեմն Աշոտը լավ ընկեր է եղել, որ անտեր չեն թողել նրան... թաղել են բոլորը միասին... Ուրեմն այնքան մտա են եղել՝ Աշոտը պատմել է նրանց իր մասին, թե ինչպիսի մայր է ինքը, որ այդպես հիշել են իրեն և ուզում են գալ իր մոտ...

Եվ նամակի ամեն մի սողը նոր միտք, նոր մի հույսով էր առաջացնում նրա մեջ, ու նա նամակը կարդում էր նորից-նոր, աշխատելով թափանցել նրա տողերի խորքը, գտնել դարձյալ նոր սփոփիչ բաներ... ու՞րքեմն այնքան էր նայում առդերին, որ թվում էր նույնիսկ, թե ուզում է տեսնել իր Աշոտի և ընկերների դեմքը... Այդ ժամանակ նամակը թվում էր միակ իրը, միակ բանը, որ կապում էր նրան աշխարհի և իր որդու հետ... Ու ամեն անգամ նրա սիրտը լցվում էր առանձին մի ջերմությամբ, երբ կարդում էր նամակի վերջը, որ Աշոտի ընկերները գրում էին, թե՛ «խոսք ենք տալիս՝ լինել ձեր հավատարիմ ու հարազատ որդիները...»:

Հավատարիմ որդիները... Վարդուհու սիրտը ջերմանում էր այդ խոսքերից և նամակը կարդում ու խորհում էր երկար. կարդում ու մտածում էր, թե տեսնես ինչ տեսակ տղաներ են Աշոտի այդ ընկերները, որ այդպիսի ջերմ խոսքեր են գրել իրեն... Եվ նա մի տեսակ ցանկություն ան ասես, թե փափագ էր ունենում տեսնել նրանց, խոսել հետները...

Ու մի օր էլ, երբ բավական ժամանակ էր անցել և նրա սուր կակիծը մեղմացել էր մի փոքր, նա հարցրեց հղբորը, թե ի՞նչ խորհուրդ կտա Արամայիսը՝ Աշոտի ընկերներին պատասխան պիտի գրե՞լ, թե ոչ... Ու էլ եղբորը պատասխանի ժամանակ շտալով՝ ինքն ավելացրեց.

— Ես կարծում եմ, Արամայիս, պետք է մի բան գրել նրանք օր...

Եղբույրը հավանություն տվեց.



— Իհարկե,— ասաց,— չոթ հոգի միասին նամակ են գրել, ի՞նչպես կարելի է անպատասխան թողնել:

— Բայց մենակ նամակ... Ես, ասում եմ, մի բան էլ ուղարկեմ նամակի հետ,— շարունակեց Վարդուհին, ինչ-որ մտքերով տարված:

Եղբայրը հետաքրքրվեց.

— Ուղարկե՛լ... ի՞նչ կարող ես ուղարկել:

— Մի քիչ միրզ, բան, ասում եմ... էն, ինչ որ ուղարկում էի Աշոտին:

— Վատ չի լինի, այո, վատ չի լինի, եթե ունես:

— Ունեմ, շունեմ... Նրանք որ իմ Աշոտին այդպես սիրում են... որ ինձ չեն մոռացել...

Եղբայրը նորից հավանություն տվեց քոջ ասածներին. նա գտավ, որ քույրը լավ բան է մտածել և խորհուրդ տվեց ուղարկել այն ամենը, ինչ մտադրել է:

Եվ հետևյալ օրը, երբ նորից եկավ քոջն այցելության— իմացավ, որ Վարդուհին արդեն մրգի ու ծխախոտի մի ծանրոց է ուղարկել Աշոտի ընկերներին և մի նամակ, թե շնորհակալ է այն բոլորի համար, ինչ արել են իր Աշոտի սիրույն ու պատվին... Նամակում գրել էր նաև, թե ուղարկում է այսինչ բաները և եթե որեէ կարիք ունեն — ծխախոտի կամ այլ բաների — խնդրում է գրեն: Վերջում խնդրել էր նույնպես, որ նրանք ուղարկեն իրենց լուսանկարները, որ կարողանա տեսնել և ծանոթանալ իր Աշոտի ընկերներին... Այդ բանը նա շատ էր ցանկանում...

Աւ դրանից հետո սպասում էր շարունակ, անգամ գիշերը զարթնելով՝ մտածում էր, թե ե՛րբ կգա նրանց՝ Աշոտի ընկերների նամակը, որ իմանա՝ ստացե՞լ են արդյոք իր ուղարկածները, կամ մտածում էր, թե հասցեն ճի՞շտ է գրել արդյոք և տեսնես տեղափոխված չե՞ն լինի մի այլ տեղ... Սպասում էր նամակի հետ և նրանց պատկերներին, որ իր աչքով տեսնի, թե ինչ կերպի, ինչ շենքի-շնորհքի տղաներ են որդու ընկերները...

Նա այդ նամակին ու լուսանկարներին սպասում էր այնպես, ինչպես կուպատեր իր Աշոտի նամակին:

Եվ շանցամբ մի քսան-քսանհինգ օր՝ Վարդուհին, վերջապես, ստացավ և՛ նամակ, և՛ լուսանկար: Ու հենց նույն օրը, ուրախությունից, երկուսն էլ խնամքով պայուսակի մեջ դրած, շտապեց եղբոր մոտ:

— Աշոտիս ընկերներն են, Արամայիս, — ասաց նա, լուսանկարը եղբորը մեկնելով:

Եղբայրն այդ փոքրիկ լուսանկարը (որ հանված էր ձեռի թեթև ապարատով) նայեց ուշադիր. յոթ երիտասարդ բանակային զվարթ հայացքներով նայում էին նրան, և թվում էր յոթն էլ տոգորված են միևնույն մտքերով ու տրամագրությամբ և նույնիսկ, իրենց միատեսակ հագուստների մեջ, յոթն էլ նման են իրար:

— Հավ տղաներ են, — ասաց նա, նկարը քրոջը վերադարձնելով և հատուկ ուրախ մի շեշտով, որ մասնակցած լինի քրոջ ուրախ տրամագրության:

Տիկին Վարդուհին, լուսանկարն անելով և նորից «Աշոտիս ընկերներն» են ասելով՝ նայեց նրանց խանդաղուտանքով, ապա, պայուսակը դնելով, շտապեց սուս աչնալիսի փութկոտ քայլերով, կարծես վաղուց կորած մի բան էր դառնում:

Տանը լուսանկարը նա խնամքով ամրացրեց պատին՝ Աշոտի պատկերների մոտ: Եվ այնուհետև ժամերով նայում էր նրանց ու Աշոտի պատկերներին, մտածելով, թե նրանց դեմքին կա՞ արդյոք Աշոտին հիշեցնող մի բան՝ մի դիմ, մի նայվածք...

Նայում էր և նրանց աչքերի մեջ կարծես ուզում էր տեսնել իր Աշոտի հայացքը, վերջին հայացքը... Նայում էր և համեմատում նրանց Աշոտի հետ, Աշոտին նրանց հետ... Նայում էր աչնալիս, որ նրանք լուսանկարի վրա կարծես կորցնում էին իրենց առանձնահատուկ գծերը և կամաց-կամաց Աշոտի կերպարանքն էին առնում... Երբեմն էլ թվում էր՝ դրանք բոլորը հաճախ նայում են իրեն, իր արած յուրաքանչյուր գործին և հասկանում են իր բոլոր մտքերը — աչնալիս մտերիմ ու զվարթ էին թվում այդ երիտասարդների նայվածքները... Թվում էր՝ այդ փոքրիկ լուսանկարը, իր Աշոտի պատկերի հետ միտ էին լցնում է նրա մեկնալիսը բնակարանը...

«Տեսնես կյանքում էլ միշտ այդպես ուրախ-զվարթ եմ», — մտածում էր երբեմն Վարդուհին լուսանկարից նայող այդ երիտասարդների՝ Աշոտի ընկերների մասին, և նրա մեջ դարձյալ ցանկություն էր դառնում տեսնել նրանց, խոսել հետները...

Իսկ երբ ցուրտ գիշեր էր լինում կամ անձրև՝ նա, էր փոքրիկ մաքրման անկողնում կուշ եկած-կծկված, շարունակ մտածում էր հեռվում գտնվող այդ երիտասարդների մասին. տեսնես ի՞նչպես են հագնված, շե՞ն մրսում արգյսք, շե՞ն թրջվել անձրևից... Գպրոցում, աշակերտների և ընկեր ուսուցիչների մոտ, Վարդուհին իրեն մի տեսակ թեթև էր զգում. ասես մոռանում էր վիշտը, մոռանում էր այդ տղաներին... բայց երբ վերադառնում էր տուն՝ ինքնաբեր կանգնում էր տղաների խմբանկարի առաջ և, թվում էր, իր Աշոտի կարտոն ուզում էր տեսնել նրանցից, այդ խմբանկարի տղաներից:

Մակուշի ամեն բան փես դրանով շնք վերջումում. և աշուտ-աշուտ նամակ էր գրում, պատասխան ստանում... Եվ ամեն անգամ պատասխան-նամակ ստանալիս, եղբորը թե ծանոթ-բարեկամի հանդիպելիս՝ ասում էր միշտ, ճիշտ այնպես, ինչպես Աշոտից նամակ ստացած օրերին:

— Այսօր տղաներից նամակ ստացաւ կամ են... Գրում են, որ ամեն բան լավ կլինի...

Եվ սրտանց ուզում էր, որ նրանցից մեկն ու մեկը գար մի օր, թեկուզ մի օրով և ինքը խոսեր նրա հետ, հարցներ իր Աշոտի մասին, նրա ընկերների մասին, ամենքի մասին, որ Աշոտի նման կովում են ու մեռնում բուռի համար...

# ՏԱԳՆԱՊԻ ՕՐԵՐԻՆՆ

Քաղաքը ումբակոծվում էր:

Շարժից ավելի էր գերմանական ումբակոծիչները երևում էին նրա գլխին և, ռումբեր նետելով այս-այն տան, այս-այն թաղի վրա, շքանում էին վայրենի ազմուկով:

Բնօժեներ Անտոնի բնակարանում ամեն ինչ խառնված էր իրար, և առնչ թվում էր սահնուվրա եղած, բազմոցի ու աթոռների վրա թափված էին սպիտակեղեն, շրջազդեստներ, կոշիկներ, անկողինների վրա՝ երնխանների հագուստներ, դլխարկներ, իսկ պարկեա-հատակին բերանբաց ընկած դուշո ճամպրուկների շուրջը՝ դարձյալ զդեստներ և ամեն տեսակ մանր իրեր: Բնօժեների կինը՝ բժշկուհի Աննան, որ հազիվ երեսունհինգն անց, ոչ այնքան լեցուն, բարեկազմ կին էր, նշարդային հուզումի մեջ, պահարաններից ու սրնդուկներից փռվելուտ հանում-հավաքում էր նորանոր իրեր ու հագուստներ և բերում պսում կա՛մ ճամպրուկների մոտ, կա՛մ նորից բազմոցի ու աթոռների վրա: Նրա հետ սենյակներում շրջում և նրա այդ աշխատանքներին մասնակցում էր սև դլխաշոր կապած աղախիներ, որ ձեռները քշտած, ախ ու վախ անելով, տնքանքալով կատարում էր տիրուհու կարգադրութունները կամ սրտացավ խորհուրդներ տալիս նրան, թե էլ ինչ կարելի է վերցնել...

Նրանց ետևից սենյակից սենյակ էին անցնում բժշկուհու ութ տարեկան աղջիկը և վեց տարեկան ժիր տղան, որն ավելի աղմկում էր, քան խոսում. երեխաներին մեծ ուրախություն էին պատճառում պահարաններից հանվող իրերը և առհասարակ կատարվող պատրաստությունը: Աչնինչ բժշկուհին շատ էր հուզված. նա կանգ էր առնում երբեմն և, անելիքը կարծես շիմանալով կամ մոռանալով, ընկնում էր մտածումների մեջ: Նա շտապում էր, բայց միևնույն ժամանակ դժվարանում ընտրություն կատարել. շգիտեր ի՞նչ վեցրեներ, ի՞նչ թողներ, շգիտեր ի՞նչ անհրաժեշտ կլինի այնտեղ...

«Աչնտե՞ղ»... բժշկուհին ինքն էլ շգիտեր, թե ո՞րն է այնտեղը, ուր պիտի գնար, բայց մտածում էր մի ցավագին ուրախությամբ, որ կարող է շուտով երեխաներին հանել վտանգի մեջ գտնվող քաղաքից... Այդպես էլ կարգադրված էր, թե որովհետև քաղաքը ուժակոծվում է՝ երեխաներին հանել քաղաքից և տանել իազադ, հանգիստ վայրեր:

Երեխաների հետ պիտի գնացին և մայրերը: Դրա համար բժշկուհին մի օր առաջ արձակուրդ էր ստացել հիվանդանոցից, որ այսօր մեկնի երեխաների հետ: Եվ այդ պատճառով ահա հուզված էր: Մյուս կողմից հեշտ շէր հեռանալ հայրենի քաղաքից, ուր թողնելու էր երեք սենյակից իր հարմարավոր բնակարանը և գնալու էր՝ ինքն էլ շգիտեր ո՞ւր և ո՞րքան ժամանակով:

Բժշկուհին մտահոգված էր և ամուսնու վիճակով, որ գտնվում էր բանակում՝ որպես ինժեներ. բայց նրա առաջին հոգսը երեխաներն էին. նրանց պետք էր որքան կարելի է շուտ հանել քաղաքից, որի դիտին հաճախ երևացող ինքնաթիռներն իրենց ահարկու հոնդյուններով սարսափ էին բերում երեխաներին, և նրանք ուրուր տեսած հավի ճտերի պես թաքնվում էին իսկույն, սենյակում մտնում էին մահճակալի տակ կամ պահարանը ու ծածկվում մոր ձմեռային վերարկուի ետև: Հիմա արդեն շատ ուրախ էին, որ դնում են լավ, ապահով տեղ և մայրն իրենց հետ:

Այդ էր պատճառը, որ աշխույժով անցնում էին մոր ու

աղախնի հետ սենյակից սենյակ և իրենք էլ, իրենց հերթին, իրենց համար կարևոր իրեր՝ խաղալիքներ կամ պատկերազարդ դրքեր էին բերում-դնում ճամպրուկների մեջ. և մայրը սիրտ չէր անում ասելու, որ դրանք ավելորդ են, իզուր տեղ են բռնելու, որ ավելի կարևոր է հագուստներ վերցնել և ուրիշ անհրաժեշտ բաներ: Ու երեխաներն էլ, դրանից սիրտ առած, ավելի էին ոգևորվում իրենց իրերով:

— Մամա, էս արջն էլ տանենք, էնտեղ կխաղանք, հա՛, — ասում էր վեց տարեկան Պետիկը, բումազեից ու հարդից շինած կատուի շափ արջը գրկած:

— Իմ էս գիրքն էլ, մամա, — ևղբորը հետևում էր ութ տարեկան Մերին, մի քիչ ավելի լուրջ ու ծանրախոհ ձայնով, քան եղբայրը, բերելով իր սիրած դրքերից մեկը:

— Էա՛վ, լա՛վ, — ասում էր բժշկուհին մտահոգ: — Թող մնա, ես կտեղափոխեմ:

Եվ նորից հուզված, հոգնած, շրջում էր սենյակներում՝ տեսնելու, թե էլ ի՞նչ կա անհրաժեշտ, որ շմուռանա... ու ամեն բան նրան թվում էր անհրաժեշտ:

Վերջապես, պառավ և փորձ աղախնի խորհրդով, նա վերցրեց երեխաների համարյա բոլոր հագուստները, կոշիկները, ձմեռային վերադրուկները և շատ ուրիշ մանր բաներ, որոնց կարևորությունն ու արժեքը միայն կանայք են իմանում: Ի դեպ, այդ պառավ աղախինն այսօր շատ տարօրինակ էր. խոսելիս թե բան անելիս՝ նա շարունակ տնքտնքում էր, հոդոցներ արձակում, շգիտես շտապ աշխատանքի հետեփանքո՞վ, թե նրա համար, որ բժշկուհին արդեն արձակել էր նրան, ոտճիկի հետ տալով և նվերներ, բայց նա այսօր հատկապես եկել էր տիրուհուն օգնելու և ճանապարհ դրելու: Նրա խորհրդով՝ բժշկուհին վերցրեց նաև մեծ քանակությամբ իր հագուստներից: Ու այդ բոլորն սկսեց դասավորել նույն փուլիկոտ, հուզումից դողացող ձեռներով: Նա շտապում էր շուտ վերջացնել, որ գնա հիվանդանոց՝ տեղեկանք վերցնելու ճամպրուկներից մեկը լցնելով՝ փակեց, ապա ձեռք առավ մյուսը... 'Իրա համար էլ հարկ եղավ նորից անցնել սենյակից սենյակ: Նորից ջոկեց-վերցրեց, ինչ ավելորդ էր

համարել, ինչ թվացել էր ծանր... Վերցրեց մինչև իսկ երե-  
խաների վերմակներն ու բարձերը, որ մոռացել էր:

Երեխաներն ուրախացան, որ իրենց բարձերն ու վեր-  
մակները նույնպես տանում են. նրանց մեկ այնպես էր  
թվում, թե գնում են ամառանոց, բայց երբեմն էլ ահով հարց-  
նում էին.

— Մամա, իսկ այնտեղ, ուր գնում ենք, չեն ամբա-  
կոծի՞...

— Չէ՛, չէ՛. այնտեղ հանգիստ է, — պատասխանում էր  
բժշկուհին մտահոգ:

— Իսկ տազնապ կլինի՞:

— Չէ, իհարկե, չէ: Այնտեղ դուք ցերեկը կխաղաք բուլ-  
վարում, դիշերը հանգիստ կքնեք:

— Հետո պապան կգա՞ մեզ մոտ, — հարցրեց փոքրը՝  
տղան, երեսը մոտեցնելով մոր երեսին:

— Իհարկե, իհարկե...

Բժշկուհին երեխաներին պատասխանում էր մեքենայու-  
րեն, մտածելով շարունակ գնալիք ճանապարհի մասին, ին-  
ժեներ ամուսնու մասին, որին հեռապրել էր մեկնելու իր որո-  
շումը, և այն մասին, թե ո՞վ պիտի պահեր իր բնակարանի  
իրերը, որոնց յուրաքանչյուրի հետ կապված էր ոչ միայն տա-  
րիների համակեցությամբ, այլև լավ հուշերով: Կան մարդիկ,  
որ իրենց տանն այնպես են ընտելանում, որ նրանից բաժան-  
վելը հավասար է լինում հարազատներից անջատվելուն:  
Բժշկուհին էլ, թեպետ, իր աշխատանքի բերումով, քիչ էր լի-  
նում տանը, այնուամենայնիվ կապված էր իր պահարանների  
հետ, պատերին կախված նկարների, լուսամուսանների գոգին  
շարված ծաղկի թաղարների հետ, իր բազկաթոռների հետ,  
որոնք, դեռ ճերմակ պատյանների մեջ, որբերի նման տխուր  
նայում էին իրենց տիրուհուն, զգալով կարճես, որ շուտով  
իրենք մնալու են մենակ:

«Միայն թե երեխաներիս հասցնեմ ապահով մի տեղ», —  
մտածում էր նա, զգալով իր մեջ մայրական զգացմունքների  
մի արտակարգ հորդում, որ ողողում էր նրա ողջ էությունը,  
զարձնելով նրան զարմանալի զգայուն: Այդ բոլորին նրա

մտորումները նորից խանգարեցին երեխաները, որ կից սենյակից վազելով, եկան կանգնեցին նրա առաջ՝ ուրախ, հարցասեր ու հետաքրքիր.

— Մամա, ավտոն շուտով կգա՞ :

— Շուտո՛վ, շուտո՛վ, — մեքենայորեն վրա բերավ բժշկուհին, երկրորդ ճամպրուկի բերանը փակելով և հիշելով, որ քիչ ժամանակ է մնացել կայարան դնալու: Իսկ այն րուպեին, երբ պառավ աղախինը անքտնջալով ու հոգոցներ արձակելով՝ երեխաների բարձերը կապոց էր անում՝ բժշկուհին հիշեց, որ տեղեկանք պետք է վերցնեք հիվանդանոցից, թե ինքը պաշտոնավարել է այնտեղ սասներկու տարի:

Տասներկու տարի՛... և հիմա թողնում է ու գնում շնորհիվ դաժան թշնամու... և բժշկուհին կատաղի ատելություն էր զգում դեպի դերման գորքերը, որ պատճառ են դառնում թողնելու իր քաղաքը, իր տունը, իր աշխատանքը... Ինչպես իր տանն ու իրերին էր կապված բժշկուհին, այնպես էլ հիվանդանոցին, որ կարծես նրա երկրորդ ընտանիքն էր:

«Այս լավ է, — փոքր հանգստանալով՝ մտածեց նա հիվանդանոցի մասին, — կերթամ, տեղեկանքը կվերցնեմ և մերոնց մնաս բա՞րե կասեմ»...

Բժշկուհու այս մտածումներն էլ ընդհատեց ավտոյի փողի ձայնը, որ հնչեց յուսամուտների տակից. հավանորեն հիվանդանոցի ավտոն էր, որ խոստացել էին ուղարկել՝ կայարան դնալու:

Քիչ հետո խկասպես ներս մտավ ծանոթ շոֆերը՝ մի կարճ ու կլոր, արևից այրված տղա՝ հազին դեղին մայկա, որը նրան, կեռ, սուր քթի հետ միասին, տալիս էր դեղին թուշունի կերպարանք:

— Բժշկուհի, պատրա՞ստ եք, — հարցրեց նա՝ աչքը ճամպրուկներին ու կապոցներին, կարծես ծանր ու թեթև անելով, թե ավտոյում կտեղավորվե՞ն արդյոք այդ բոլորը:

— Այո՛, այո՛, — դարձյալ մեքենայորեն կրկնեց բժշկուհին, կրնկի վրա շուռ գալով և շուրջն աչք ածելով, տեսնելու համար, թե բան չի՞ մոռացել արդյոք կամ շկամի այնպիսի իր, որ հարկ լինի վերցնել: — Կա՞վ, — ձեռք թափ տվեց նա,



մտածելով, որ չկա երեխաներից ավելի լավ ու կարևոր բան: Բավական է, որ նրանց տանում է, փրկում:— Կարող ենք դնալ, Սերգեյ:

Երբ, երկու րոպե հետո, երեխաներն ուրախ-ուրախ ուղտ չին նստում աղախնի օգնութեամբ, բժշկուհին մի անգամ էլ նայեց տանը, երկրորդ հարկում դանձոց իր բնակարանի լուսամուտներից, մտքում մնաւ բաւն տակելով կարծես իր սենյակներին ու նրանց մեջ թողած իրերին:

Ու ավտոն սլացավ ասֆալտած փողոցներով գետի կայարան:

Մի փոքր տեղ զնալուց հետո, սակայն, բժշկուհին հանկարծ թեքվեց դեպի շոֆերը:

— Կարող եմ, Սերգեյ, կհասնեն մ մտնել հիվանդանոց մի բան վերցնել և մերոնց մնաւ բարե տանը:

— Կարելի է, դեռ ժամանակ կա, — ասելուցրեց շոֆերը, երեսն առանց խոսակցին դարձնելու և, ավտոն թեքելով մեկ-երկու կարճ փողոց, կանգնեց եռահարկ մի տան առաջ:

Բժշկուհին, երեխաներին ու աղախնին թողնելով ավտոյի մեջ, ռեզիկլուր ձեռքին արագորեն իջավ սած և արագորեն էլ ծանոթ սանդուղքներով բարձրացավ հիվանդանոց, ուր այդ միջոցին նախաճաշ էին տալիս հիվանդ և վիրավոր բանակայիններին. հավաքարարներն ու քույրերը թեյ և լիքը կամ դատարկ ափսեներ էին տանում-քերում միջանցքով:

Բացի սեղեկանք վերցնելուց՝ բժշկուհին, քաղաքից մեկ-նելուց առաջ ուզում էր մնաւ բաւն տակ պաշտոնակից բժիշկներին և հիվանդանոցի աշխատողներին, որոնց հետ նա աշխատել էր տասներկու տարի: Ուրիշ ժամանակ նա այդ հաշիվը չէր էլ տեսնում, բայց հիմա, երբ շփուտ ո'րքան պիտի բացակայեր պաշտոնակիցներից, որոնց մեջ ունէր մտերիմներ, նրա մեջ ջանկութեամբ զարկեց՝ հրաձեռա տալ երկար տարիների իր ընկերներին, որ պիտի մնային վտանգի առաջ, թշնամու սուճքերի և կրակի տակ:

Մտնելով նորս՝ բժշկուհին երկար, արևով ողողված միջանցքի հենց սկզբում հանդիպեց պատավ հավաքարարուհի Մանյային, որ սլալաափց դատարկ ափսեներ էր տանում:

պառաւմն անմիջապէս շճանաշեց հագուածները փոխած բժշկուհուն, որին սովոր էր տեսնել ճերմակ խալաթով, գլխին ճերմակ գլխօսչոր կապած և ձեռները մինչև արմունկները քրշտած. մինչդեռ նրա առջև կանգնած էր կապույտ բերետով և աշնան կարճ վերարկու հագած մի կին՝ ձեռնոցներով: Բժշկուհին նկատելով, որ պառաւքը շճանաշեց իրեն, բռնեց նրա ազատ ձեռը.

— Մնաս բարով, Մանյա, սիրելիս: Ես այսօր մեկնում եմ:

— Ահ, բժշկուհի, շճանաշեցի,— զարմացաւ պառաւ հավաքարարուհին, որի խորշոմած դեմքից ասես բարություն էր կաթում:— Գնո՞ւմ եք, հա՛: Գնացե՛ք, գնացե՛ք, երեխաները մեզք են, բժշկուհի... գնացեք... Իսկ մենք...

Բժշկուհին ուզում էր ինչ-որ բան հարցնել պառաւից, բայց այդ վայրկյանին միջանցք ելաւ երիտասարդ բուժակուհի Վիկտորիան՝ նույնպէս ճերմակ հագած, գլխին ճերմակ գլխօսչոր կապած մի աղջիկ, որ բժշկուհու ամենօրյա օգնականն էր վերջին երեք-չորս տարում և, ի դեպ ասած, մոտիկներ ու հարազատներ շունենալով, շատ էր կապված բժշկուհու հետ:

Նրան տեսնելով՝ բժշկուհին ձեռն անմիջապէս մեկնեց մնաս բարևի, բայց ջահել բուժակուհին, հազիվ ինքն էլ ձեռ տված, թաշկինակը խալաթի գրպանից հանելով՝ տարաւ դիպի աչքերը:

— Արդեն մեկնո՞ւմ եք... — ասաց նա բեկված, գրեթե կերկերուն ձայնով:

— Այո, երեխաներին տանում եմ, Վիկտորիա. հույս ունեմ՝ շուտով տեսնվենք:

Բայց ճերմակ հագած, նիհար Վիկտորիան կարծես չէր լսում իր բժշկուհուն. նա թաշկինակն աչքերին դրած՝ թվում էր ուզում է խեղդել արցունքները. ու հեկեկում էր անձայն. բժշկուհին սկսեց մխիթարել նրան փաղաքուշ, բայց բարձր ձայնով, մոռանալով որ հիվանդանոցումն է գտնվում, ուր բարձր խոսել չէր կարելի:

— Վիկտորիա, սիրելիս, մի՛... Երեխաների խնդիրը չիներ՝ ես չէի գնա: Ես էլ կմնայի: Հավատացիր: Ես միայն

Երեխաների համար: Սեղք են այս տագնապի մեջ: Ուրիշների պես ևս էլ ուղում եմ տանել նրանց հանդիստ մի տեղ, միև- շև որ... Հույս ունեմ՝ շուտով վերագտնամ: Իե, արիացի՛ր...

Մինչ բժշկուհին խոսում-մխիթարում էր իր բարեկամուհուն, մոտիկ սլալատից հանկարծ լսվեց մի ծանոթ ձայն, որը կանչում էր իրեն.

— Աննա Արսենևնա, Աննա Արսենևնա... Ո՞վ կա այդ տեղ. եթե կարելի է՝ Աննա Արսենևնային կանչեցեք մի րոպե...

Ձայնն այնպես ծանոթ էր, ընկճված և աղերսագին, որ բժշկուհին ահամա թողեց սիրելի օղնականուհուն և հետաքրքրված մտավ պալատ, մտաճնարով, որ հազին խալաթ չկա առանց որի նա երբեք ոչ պալատ էր մտնում, ոչ հիվանդի մոտենում:

Պայատն ընդարձակ, լուսավոր մի սենյակ էր՝ տասը սահ- ճակալով, որոնց վրա պառկած կամ նստած էին վիրավոր բանակայինները՝ մի քանիսը նախաճաշով զբաղված, մի քանիսը հայեցության մեջ:

Երբ բժշկուհին ոտը դրեց սլալատի շեմքը՝ նկատեց, որ վիրավոր բանակայիններից մեկը, երեսը թավիշ աղվամագով ծածկված մի երիտասարդ, իր սնկողնի մեջ նստած և թեք կրծքին կապած՝ տենդալառ աչքերով նայում է դեպի դուռը, սպասողական ու անհամբեր մի նայվածքով:

Սակայն նա էլ, ինչպես պառավ հաջաքարարուհին, ան- միջապես չճանաչեց բժշկուհուն, որովհետև առանց խալաթի և ճերմակ գլխանոցի չէր տեսել նրան. նա բժշկուհուն ընդու- նեց սովորական այցելուի տեղ և շփոթվեց, երբ բժշկուհին, առաջանալով, ժպտաց և հոգատար հարցրեց, թե ի՞նչ է կա- մենում. և այն ժամանակ միայն, երբ բժշկուհին, մոտենա- լով նրան, նորից խոսեց, վիրավոր բանակայինը կենդանա- ցավ. նրա տենդալառ աչքերը փայլեցին ուրախությունից, և նա նորից շփոթվեց:

— Ներողություն, բժշկուհի: Չճանաչեցի... Լսեցի մնաս բարով եք ասում՝ կարծեցի գնում եք ուրիշ տեղ: Ուզեցի իմանալ՝ մեզ էսօր չե՞ք նայելու...

Այդ երիտասարդ բանակաչիւնը մի ամիս էր ինչ գտնվում էր Տիվանդանոցում: Ինչպես պաշտօնի բոլոր վերավորներին, այնպես էլ դրան նաչում-խնամում էր բժշկուհին, և երիտասարդն ընտելացել էր նրան:

— Այսօր շնորհ, կարծես... ինձ այնպես թվաց թե՛ ուզում եք քաղաքից հեռանալ, բժշկուհի,— շարունակեց նա:

Վերավորները, որ երիտասարդ բանակաչիւնի ձայնից շարժվել էին իրենց մահճակալների վրա և ուշադրութուն դարձրել, այժմ, ոմանք տեղնեւում նստած, հետաքրքիր ու տենդրոս հաշարքներով նայում էին բժշկուհուն, որ զգեստավորված ու սեփեկայր ձեռին՝ դրեթե անձանաչիւի էր թվում նրանց: Նրանք նույնպես կարծես ուզում էին իմանալ, թե ո՛ր է դնում բժշկուհին: Ինչպես նրեում է՝ երիտասարդ բանակաչիւնի անհանգստութիւնն անցել էր և նրանց:

— Ի՞նչպես. բժշկուհին մեզ թողնում է՝ դնա՛,— ասաց մեկը զարմացած ու տեղից վեր կենալով:

Իսկ մյուսները, նույնպես հետաքրքրված, կամացուկ ձայնով ու հաշարքներով հարցնում էին իրար.

— Ո՛ր, ո՛ր է դնում բժշկուհին:

— Այ մի տեղ. ո՛ր պիտի դնա,— բժշկուհու փոխարեն պատասխաննր վերավորներից մեկը, շգիտես ընկերներին հանգստացնելի՛ւ, թե իրազնկութիւնն ջուլց տալու:

Մի երկու րոպեում բժշկուհին իրեն շրջադառնալով տեսավ բանակաչիւնների հետաքրքիր հաշարքներով. նրանցից մի քանիսը, որ թեթե վերքեր ունեին և ասուղ ստներ, տեղներից ելել, մտակցել էին նրան, կարծես ինչ-որ վտանգի հետ կապելով նրա հազուտուներն ու դնալու լուրը: Այդ տպավորութիւնը նպաստում էր գուցե և բուժակուհի Վրկտորիայի արտաբնականաբար աչքերը, որ բժշկուհու ետևից մտել էր պալատ և կանդնել դռան մաս:

Բժշկուհին դժվարին կացութիւն մեջ էր. կանգնել էր նա իրեն վրա հատած հետաքրքիր հաշարքների առջև ու շէր իմանում ի՛նչ պատասխաներ նրանց հարցասեր նայվածքներին. անխոս լռում էր նրանց կամացուկ փոխանակած խոսքերը և անխոս, ուշադիր նայում իրեն կանչող, մահճակալին նըս-

տած, թևը կրծքին կապած երիտասարդ վիրավորին, որի դեմքը տարօրինակ կարմրած էր: Բժշկուհին փորձ աչքերով նկատեց, որ նրա տաքությունը բարձրացել է. այդ երևում էր նաև նրա թև՝ բորբոքված աչքերից և թև՝ ծանրացած շնչառությունից:

«Մի՛ թե վերքը վատացել է», — մտածեց բժշկուհին, պատկերացնելով նրա թևը. ումբի բեկորը, մսի մեջ խրվելով, ծակել էր թևի ոսկորը:

— Քեղ ի՞նչպես ես զգում, — հարցրեց բժշկուհին, նրա զարկերակը բռնելով:

— Ոչինչ, բժշկուհի: Կարծեմ վատ չեմ: Միայն թև՝ որ լսեցի գնում եր... Մտածեցի՝ տեսնենք ո՛ւր է գնում բժշկուհին: Մտածեցի, որ... գուցե վտանգ կա...

Բժշկուհին նայեց իր առջև նստած երիտասարդին, նայեց թևթևակի մյուս վիրավորներին և կարծես հասկացավ նրանց անհանգստության պատճառը, և միաժամանակ նրա սիրտը հանկարծ ողողեց մայրական մի գորով, որ առանձնապես զգում էր այն ժամանակ, երբ երեխաները հիվանդ էին լինում. մի գորով գեպի երիտասարդ այդ վիրավորները, որ կապված են իր հետ և իրենից, միայն իրենից են սպասում իրենց ապաքինումը... Շատերի վերքը դեռ բաց էր, մի քանիսինը նոր միայն հավաքվում էր, և միայն մեկ-երկուսն էին, որ լավանայու վրա էին:

Նա նորից մի ընդհանուր հաշացք նետեց սրահում պառկած վիրավորներին և դարձավ երիտասարդ բանակաչինին.

— Վտանգ, — ասաց նա հանդիստ զարմանքով: — Ոչ մի վտանգ, սիրելիս: Ընդհակառակը, մերօնք քշում են թրշնամուն: Արդեն բավական ետ են շարտել... ընդհակառակը, ո՛չ մի վտանգ... Գու իզուր մի անհանգստանա, — շեշտեց բժշկուհին, նրա զարկերակը թողնելով և գլուխն ակամա օրորելով. հիվանդի սիրտը գործում էր անկանոն. դա էլ նշան էր, որ նրա ջերմաստիճանը բարձր էր: — Ես ոչ մի տեղ էլ չեմ գնում, բարեկամս, — շարունակեց բժշկուհին, խոսքերն ուղղելով ոչ միայն իր առջև նստած երիտասարդ բանակաչինին, այլև կարծես սլատասխանելով հետաքրքրությամբ, հա-

վատով ու հուշով իրեն նայող հայացքներին:— Ես միայն  
պորժով եմ դուրս եկել, ես ոչ մի տեղ էլ չեմ գնում:

— Դուք ասիք՝ «Երևի շուտով կտեսնվենք», կարծեցի  
հետև տեղ էք գնում, — կրկնեց երիտասարդ բանակայինը,  
— երեխաների հետ...

— Ո՛չ, ո՛չ, սխալ է: Կավ շեռ լսել, սիրելիս: Կավ շեռ  
լսել... Ես ոչ մի տեղ չեմ գնում... Ոչ մի վտանգ էլ չկա...  
Տեսնեմ վերքդ... Վիկտորիա, խալաթս, — դարձավ բժշկուհին  
դռան մոտ կանգնած իր օգնականուհուն:

Փոքր անց, երբ պալատի դռան մեջ երևաց դեղին մայկա  
հագած շոֆերը, նա դարձանքով նկատեց, որ բժշկուհին՝ խա-  
լաթ հագած, բուժակուհի Վիկտորիայի օգնությամբ, նայում  
է վիրավոր բանակայինների վերքերը:

— Բժշկուհի, ուշանում ենք, — ասաց նա անհամբեր:

— Սպասի՛ր, — մեքենայորեն պատասխանեց բժշկուհին  
ու շարունակեց իր աշխատանքը:

Մի ժամ հետո բժշկուհին ավտո նստած վերադառնում  
էր տուն: Երեխաների, աղախնի զարմացած հարցին, թե ին-  
չո՛ւ տուն և ոչ կայարան — նա պատասխանեց միայն.

— Առայժմս տուն: Այսօր չենք գնում:

— Իսկ ե՞րբ կերթանք, մամա, — հետաքրքրվեցին երե-  
խաները:

— Հետո, մի քանի օր հետո, երեխաներ...

Եվ այդ օրվանից բժշկուհին, երեխաներին տանը մեծուկ  
չթողնելու համար, որ վտանգի դեպքում նրանց մտ լինի և  
նրանց հսկի, հետք տանում էր հիվանդանոց, աշխատանքի  
վերջում բերում տուն: Նրանց հետ էր լինում, իհարկե, և  
պառավ աղախինը: Եվ երեխաների ամենօրյա այն հարցին,  
թե հապա ե՞րբ են գնալու — նա տալիս էր միշտ միևնույն  
պատասխանը.

— Հետո, մի քանի օր հետո, երեխաներ...

Բայց ո՛չ երեխաները, ո՛չ էլ պառավ աղախինը չէին հաս-  
կանում, թե ի՞նչն է ստիպում նրան հետաձգել մեկնումը,  
երբ վտանգը քանի գնում մեծանում է քաղաքում...

## ԳՈՂԱՐԸ

Նա կոնսերվատորիան նոր ավարտած փխրուն աղջիկ էր, այնքա՛ն ամաչկոտ, որ երբ կողքով տղամարդ էր անցնում՝ շփոթվում էր կամ շիկնում: Նա ուզում էր շարունակել երաժշտական կրթութ՜յունը՝ ավելի կատարելագործվելու, բայց պատերազմը խանգարեց նրա այդ մտադրութ՜յունը, և նա առաջժամ մնաց կոնսերվատորիայում՝ դաշնամուրի իր դասերը կրկնելու, իսկ երբ ջաղուքը վիրավորներ եկան, գնաց հիվանդանոց՝ վիրավորներին ինձամեղս:

Եվ դա եղավ բուրբովին անապատելի: Երբ նրանց կաշեկտիվը պարտավորութ՜յուն հանձն առավ պարբերաբար այցելել վիրավորներին և երբ կանանց առաջարկվեց, որ նրանք սրտը շափով գթութ՜յան քրոջ պարտականութ՜յուն կատարեն նրանց համար, Գոհարն ավելի վախով ու վարանումով ընդունեց այդ նախաձեռնութ՜յունը, մտածելով, թե ի՞նչպես պետք է պահի իրեն այնտեղ — այնպես ամաչկոտ էր: Կամ ի՞նչ պետք է աներ այդ հիվանդ ու վիրավոր գինձարականների մոտ — նա պատկերացնել չէր կարողանում. մյուս կողմից՝ պարզապես վախենում էր վերք, հիվանդ տեսնելուց: Բայց շփուլ էլ չէր կարող. անհարմար էր, երբ բուրբը գիտավիր:

Սակայն առաջին այդ այցելութ՜յունն այնքան ծանր չվ՛աց

նրան: Երբ նրանց խումբը, ծաղիկներով ու ծխախոտի տուփերով մտավ ընդարձակ պալատը, Գոհարը, տեսնելով, թե ինչպես իր ընկերուհիները և իրենից մեծերը ծաղիկներն ու տուփերը հանձնում են վիրավորներին, յուրաքանչյուրը մեկ վիրավորի, ինքն էլ ձեռի մեխակները հանձնեց մի երիտասարդ գինվորականի, որ, աջ թևը կրծքին կապած, կիսով շափ նստած էր անկողնում, գլուխը մահճակալի ճաղերին հենած:

— Ենթահակալ եմ, — ասաց երիտասարդ վիրավորը ձախ ձեռով Գոհարի բարակ աջը բռնելով և խոշոր կապույտ ու թափանցող աչքերով նրան նայելով: — Դուք շատ բարի եք... Նստեցեք, խնդրեմ, — և վիրավորի աչքերը հրավիրեցին նրան նստել:

Վիրավորն այդ ասաց շատ հանդիստ ու մեղմ ձայնով, այնպես, ասես խոսում էր վաղուց ծանոթ, մտերիմ մեկի հետ, և Գոհարը, ինչ անելը չիմանալով, ըստ սովորույթյան, շիկնեց մինչև ականջները, ապա նկատելով, որ իր հետ եկածներից յուրաքանչյուրը նստել է մի վիրավորի մոտ, ինքն էլ, երիտասարդի ցանկությունը շկատարելը համարելով անքաղաքավարություն, նստեց աթոռի կիսին, ծնկներն իրար սեղմած, ինչպես անում է մարդ մրսելիս: Իսկ երբ վիրավորն սկսեց հետաքրքրվել, հարցեր տալ, Գոհարը նրան պատասխանում էր կարճ, երբեմն մի հատիկ բառով.

— Դուք ո՞ր հիմնարկից եք:

— Կոնսերվատորիայից:

— Դուք աշխատո՞ւմ եք այնտեղ, թե...

— Այո, աշխատում եմ:

Իմանալով դաշնակահարուհի է՝ երիտասարդն ուրախացավ.

— Այդ լավ է: Հույս ունեմ՝ մեզ համար կնվազեք մի օր, — ժպտաց նա: — Այնպես չէ՞:

Պատասխանի փոխարեն Գոհարը նորից շիկնեց. նա երբեք այդքան մոտիկ չէր նստած մի օտար մարդու կողքի: Ամաչելով հանդերձ՝ նա նկատեց, որ վիրավորներն իրենց տեսքով ու դիրքով այնքան էլ սարսափելի չեն, ինչպես կարծել էր, այլ, ընդհակառակը, ավելի շուտ խղճալի են և օգնու-



թչան կարոտ, ինչպէս, օրինակ, իր առջև նստած երիտասարդը, որ կապած ձեռք չէր կարողանում կրծքից հեռացնել և անզգուշ մի շարժում անելիս, սաստիկ ցավ էր զգում, այնպէս, որ ատամները սեղմում էր և աչքերը փակում:

«Ահա՛ թե ինչպէս են լինում պատերազմի վիրավորները», — մտածում էր Գոհարը խղճահարված:

Ու խղճահարութչունը հաղթեց նրա վախը:

Եվ գրանից հետո Գոհարը հիվանդանոց գնում էր սկզբում խղճահարութչունից ու կարեկցութչունից մղված՝ մեկին օգնելու երեսը լվանալիս, մյուսին՝ վնասը կապելիս, կրքոցդին, եթե անհրաժեշտ էր լինում, կերակրելու: Կային և այնպիսի վիրավորներ, որոնք, ինչպէս, օրինակ, ձեռք կրծքին կապած երիտասարդը, խնդրում էին նամակներ գրել իրենց հարազատներին... Եվ Գոհարը, դդալով որ վիրավորների հետ պետք է լինել սիրալիր և նրանց ցանկութչունների հանդեպ զգայուն, սիրով նամակներ էր գրում նրանց թելադրութչամբ, նրանց փոխարեն... Ճիշտ է, դարձյալ քաշվում էր ու շիկնում, բայց իր այդ օգնութչունը համարում էր անհրաժեշտ, կարևոր: Միայն թե նրան դուր չէր գալիս, որ այդ «մազովմորուքով» մարդիկ իրեն «քույր» էին ասում:

Դա անհարմար էր թվում Գոհարին, նախ, որ ինքը բոլորից փոքր էր, երկրորդ՝ այդ բառի մեջ զգում էր ինչ-որ պաշտոնականութչուն: Նա կցանկանար, որ բոլորն իրեն Գոհար ասեին:

Բայց ամաշելուց իհարկե ոչինչ չէր ասում, ինչպէս և ամաշելուց չէր հարցնում վիրավորների անուն-ազգանունը, այլ մտքում կամ տանը նրանց կոչում էր իրենց վերքի անունով. — «Սունկից վիրավորը», «Հենակով մարդը», «Թեր կապածը»... և ամեն անգամ հիվանդանոցից դառնալիս, երբ իր ապավորութչունները պատմում էր մութը, վիրավորների մասին խոսելիս՝ ասում էր. «Էսօր Սնկից վիրավորը տաքութչուն աներ, մամա, իրեն լավ չէր զգում, իսկ Թեր կապածի համար նամակ գրեցի»...

«Թեր կապածը» այն երիտասարդն էր, որին Գոհարը, առաջին այցելութչան միջոցին, տվել էր մեխակների իր փուն:

չր. մայրը գիտեր այդ գիտեր և մշուաների մասին Գոհարի պատմածներից, այնպես որ նրանք իրար հասեանում էին:

Իր հերթապահութեան երկրորդ, թե երրորդ օրը Գոհարը թեր կապածի համար գրեց մի նամակ, մի երկա՛ր նամակ, որից երիտասարդը շատ գոհ մնաց:

— Դուք հիանալի ձեռագիր ունեք, քույր, և լավ գրեցիք: Ներեցեք, որ ձեզ շարշարեցի:

Գոհարը շփոթվեց, կարմրեց, բայց անմիջապես էլ՝

— Խնդրեմ, — ասաց: — Երբ նորից նամակ գրել ցանկա- նաք՝ ես սիրով...

— Ուրեմն՝ պայման ենք կապում, — ծիծաղեց երիտա- սարդը իր խոշոր աչքերը պցելով Գոհարի երեսը: — Երբ նամա- կի կարիք ունենամ՝ դուք պիտի գրեք: Համաձա՛յն եք:

— Այո, — շիկնեց Գոհարը, այս անգամ աչքերը խոնար- հելով:

— Բայց իմացեք, որ ես նամակներ պիտի թելադրեմ շուտ-շուտ և սրա նման երկար: Չե՛ք ձանձրանա:

— Խնդրեմ, — նորից շիկնեց Գոհարը:

\* \* \*

Եվ այնուհետև Գոհարը, իր հերթապահութեան օրերին, ոչ միայն նամակներ էր գրում վիրավորների համար, այլև կա- տարում էր բժիշկների այս-այն հանձնարարութեանը, հետե- վում էր յուրաքանչյուր վիրավորի ասածին, հայտնած ցան- կութեան: Եթե մեկն, ասենք, ցանկութեան էր հայտնում որևէ ուտելիքի՝ Գոհարն այդ ցանկութեանը տանում էր խոհանոց: Իսկ եթե նրանց ուղածը լինում էր հազվագյուտ մի բան կամ քիչ պատահող մի բան՝ նա այդ մասին հայտնում էր իրենց կո- լեկտիվին կամ մորը: Կոլեկտիվն իսկույն կատարում էր նրա խնդիրը: Մայրն էլ ոչինչ չէր մերժում, բայց միշտ նախա- զգուշացնում էր, որ լավ կանի բժշկի խորհրդով վարվի. մի գուցե այդ մի բանը օգտակար չէ վիրավորին:

Գոհարի մայրն առհասարակ զգուշ Ն ուշադիր կին էր: Երբ Գոհարը, հոսպիտալից գալով, պատմում էր իր տպավո-

բությունը վիրավորներից՝ ամենից շատ հիշում էր թեք կապած երիտասարդին: . . .

— Թեք կապածը... Գու նրա մասին ավելի շատ ես խոսում, Գոհար, քան մյուս վիրավորների,— նկատեց մայրը մի օր, շեշտ նայելով աղջկան:

Գոհարն իհարկե շփոթվեց, շիկնեց, բայց անմիջապես հավարեց իրեն և արդարացա՛վ, թե այդ նրանից է գուցե, որ թեք կապածը նախ իր ծանոթն է, հետո... ինքը նրա համար նամակներ է դրում:

— Եվ այնպես նամակներ է թելադրում, մամա, շեք կարող երևակայել,— խոսակցութեան նյութը փոխեց նա,— ու հետն էլ շատ հետաքրքիր պատմություններ է անում:

Գոհարը ճիշտ էր ասում. հիվանդանոցի այն պալատում, ուր հերթապահություն էր անում նա, վիրավորներից ոչ մեկն այնքան նամակներ չէր գրել տալիս՝ որքան այդ թեք կրծքին կապած, խոշոր կապույտ աչքերով երիտասարդը, որ ինչպես ինքն էր հայտնել մի օր, լեյտենանտ էր: Նա սիրով լի, քրնքուշ նամակներ էր թելադրում մորը, որ գտնվում էր հայրենի գյուղում՝ Լոռի քույրերին, որ ապրում էին տարբեր քաղաքներում. ընկերներին, որ կա՛մ բանակումն էին, կա՛մ զանազան տեղեր: Ու նրա այդ նամակները զարմացնում էին Գոհարին. նման չէին բնավ վիրավորի նամակների — այնքա՛ն ուրախ-զվարթ էին լինում, շնայած խոսքը վերաբերում էր պատերազմին, թե ի՛նչպես են զավել, ի՛նչպես են նեղել թշնամուն, ի՛նչպես է ինքը վիրավորվել... Ու բոլոր նամակների վերջում էլ սիրտ էր տալիս մորը, քույրերին, ընկերներին, թե «լավ կացեք, ամեն ինչ լավ կլինի»...

Կարծես վիրավոր չլիներ, և այդ զարմացնում էր Գոհարին ու մի տեսակ հարգանք թե համակրանք էր ներշնչում նրան:

«Սա երևի հերոս է, իսկական հերոս, որ այսպես նամակներ է դրում», — մտածում էր Գոհարը, շամարձակվելով հարցնել այդ մասին երիտասարդից, բայց ավելի համակրելով նրան:

Հապա որքա՛ն հետաքրքրական միջանկյալ պատմություն-

ներ էր անում նա նամակներ գրելու միջոցին, զարմանալի՛...  
և բոլորը պատերազմից, իր հետ պատահած դեպքեր: Եվ մի-  
այն իրեն՝ Գոհարին շէր պատմում գրանք... Գոհարը հաճախ  
տեսնում էր, թե ինչպես նա պալատի ընկերներին կամ պա-  
լատից դուրս, միջանցքում, թեք կրծքին կապած զբոսնելիս,  
նույնպես պատմութիւններ էր անում այլ վիրավորների և  
միշտ զվարթ ու ժպտերես... Ու ինչ-որ անանձնահատուկ մի  
բան կար այդ երիտասարդ վիրավորի մէջ. — Կենսուրախու-  
թյուն էր դա, թե անվախութիւն՝ Գոհարը դժվարանում էր  
որոշել: Եվ դրանից էր գուցե, որ նա պալատ մտնելիս մի ան-  
դիմադրելի ցանկութիւն էր ունենում մոտենալ նրան: Տղա-  
յի աչքերը կարծես քաշում էին, և Գոհարը, ինչպես մյուսնե-  
րին, այնպես էլ նրան մոտենում էր ու հարցնում.

— Այսօր ի՞նչպես եք:

Մտնւմ էր և զգում, որ նրա մոտ ավելի է կանգնում, քան  
մյուսների մոտ. զգում էր և մի ներքին ցանկութիւն, որ նա  
խոսի կամ առաջարկի՝ «նստեցեք»...

Եվ երիտասարդը նրան սպասել չէր տալիս. անգլպես էլ  
անում էր անմիջապես. նախ հարցնում էր, թե «քույր Գոհա-  
րը» տեղ չի՞ շատարւմ արդյոք, ապա առաջարկում էր նրա-  
տեղ «մի երկու ըսպե», կամ առաջարկում էր գրել նոր նա-  
մակ...

Այդ նամակները՝... Գոհարի հերթապահութեան օրերին  
նա միշտ նամակ էր թելադրում, և այդ նամակները լինում  
էին՝ թեև երկար, բայց հետաքրքրական ու սրամիտ, ուստի  
և Գոհարը սերախութեամբ էր գրում դրանք և միևնույն ժա-  
մանակ զգում, թե տղան երևի դիտմամբ է երկարեցնում նա-  
մակը, որ ինքը՝ Գոհարը երկար մնա մտքը, ինչ ցանկանում  
էր կարծես և Գոհարն ինքը: Նամակ գրելիս նա երբեմն հան-  
կարծ ընդհատում էր թելադրութիւնը.

— Գիտեք, քույր, ես այստեղ հիշեցի մի էպիզոդ մեր կրո-  
վից, եթե չեք ձանձրանա՝ կարող եմ պատմել...

Ու պատմում էր պատերազմի՝ իր իմացած, գուցե և ապ-  
րած բազմաթիւ դեպքերից մեկը. պատմում էր ձայնի փա-  
փուկ, թավիշ տեմբրով: Հուշերի հորձանքը նրան տանում էր

հետու կամ ստիպուած միանգամից շատ բան պատմել իրար  
ետեից, և նա մերթ պատմում էր, թէ ինչպես են դերմանա-  
ցիները հանկարծակիի եկել իրենց հարձակումից ու փախել  
գրաված գլուղից, թողնելով կողոպտված իրերի կուլտեր,  
որոնց մեջ եղել են նույնիսկ կանացի զգեստներ: Մերթ նկա-  
րագրում էր թշնամու թողած մի այլ գլուղ, ուր գտել էին ըս-  
պանված ծերունիներ, աղջիկներ ու երեխաներ:

— Նույնիսկ երեխաներ ու աղջիկներ,— զարմանքի ճիշը  
հաղիվ զսպած՝ ասում էր Գոհարը, հետևելով երիտասարդ  
լեյտենանտի մեկը մյուսից զարմանալի ու ցնցող պատմած-  
ներին, որոնք երբեմն սարսուռ էին աղղում Գոհարին:

Երիտասարդ հրամանատարն այդպես պատմում, նկարա-  
գրում էր ուղմի տեսարաններ, և դեռատի աղջիկը դրանցից  
երևակայությամբ ստեղծում էր իր համար ահավոր պատկեր-  
ներ, այնպիսի պատկերներ, որից նրա շունչը բռնվում էր.  
ուեսնում էր, թէ ինչպես են մարդիկ վիրավորվում, ընկնում և  
մնում անօգ, մոռացված՝ ամայի, բայց վտանգալից զաշ-  
տում...

«Այ եթե ես այնտեղ լինեի, կարող էի օգնել գուցե»,—  
մտածում էր Գոհարը: Երբեմն էլ, հուզվելով մարդկային  
վայրագ արարքներից, նրա սիրտը լցվում էր ատելության  
զգացումներով, նրա շուրթերը սեղմվում էին իրար, նրա փոք-  
րիկ աջը բռունցք էր դառնում ինքնաբեր, և նա քիչ էր մնում  
լաց լինի. բայց նորից զսպում էր իրեն, շուգելով կողիտ երե-  
վալ երիտասարդի մոտ:

Սակայն, տուն գալով, մորը պատմում էր լսածները և,  
երբեմն կեսից ընդհատելով, նորից հուզվում էր պարզ, կեն-  
դանի պատկերացնելով այն, ինչ պատմել էր տղան. գնդա-  
կահարված մայրեր, որոնց կողքին լալիս են ծծկեր կամ ոչ  
ծծկեր երեխաներ՝ մոր հագուստը ձիգ տալով. սպանված աղ-  
ջիկներ, որոնց խարտչաշ մազերը լերդացած արյունով կպել  
են հողին, և վիրավորներ, գիակներ ու դիակներ, որոնց  
հաճախ տեսնում էր երազում:

Այս ամենը Գոհարը վերապրում էր դեռատի աղջկա անա-  
րատ, մաքուր հոգու ամբողջ խորությամբ. ու պատահում էր

երբեմն արտասպում էր հուզումից, ատելությունից, որ մարդը՝ թշնամին, վայրագ ու դաժան է այդքան:

— Մարդ էլ այդքան դազան լինի,— երբեմն ասում էր նա մորը՝ լսածները վերապատմելուց հետո:

— Իսկ դու այդ պատմությունները մի՛ լսի,— ասում էր մայրը, աղջկա հուզումը տեսնելով:

— Ի՛նչպես շսեմ... Չէ՛ որ այդ բոլորը նա և մյուս վիրավորները պատմում կամ թելադրում են նամակ գրելիս:

— Իսկ դու նամակ մի՛ գրի... Թո՛ղ ուրիշը գրի:

Ուրիշը՝... Ինչպե՛ս մայրիկը չի հասկանում, որ այդ բանը հնարավոր չէ Ինչպե՛ս կարելի է հրաժարվել նամակ գրելուց:

— Ախր հերթապահը, մայրիկս, իր օրը ամե՛ն ինչ պիտի անի: Ի՛նչպես կարելի է հրաժարվել,— նեղանում էր Գոհարը մոր վրա:

— Իսկ քու այդ Թևը կապածը, ինչպես երևում է, անհասկացող շատախոսի մեկն է, որ չի հասկանում, թե ամեն բան չի կարելի պատմել ջահել աղջկան:

— Չէ՛, մամա. դու սխալվում ես: Նա ոչ շատախոս է, ոչ էլ անհասկացող,— վիրավորվեց Գոհարը:— Նա հիանալի հասկանում է ամեն բան: Եթե՛ տեսնեիր կամ հետք խոսեիր՝ կհամոզվեիր, որ...

Մայրը հոնքի տակից խեթ նայեց աղջկան:

— Դու, ինչպես տեսնում եմ, քո այդ Թևով շատ ես ողեվորված:

Գոհարը շիկնեց, բայց իսկույն էլ ղգաստացավ:

Չէ, մայրիկը պարզապես չի հասկանում ի՛նչ է ասում: Ինչպե՛ս կարելի է շսել նրա և մյուս վիրավորների պատմությունները, որ այնքան հետաքրքիր են և միաժամանակ... սարսափելի:

Ոչ, մայրն իրոք չէր հասկանում, որ Գոհարը, հերթապահության դնալիս, մտածում էր, թե Թևը կապածը այսօր էլ երևի, նամակ թելադրելիս, մի բան կպատմի... Եվ այդ պատումները նորից պիտի հուզեն իրեն: Այո, Գոհարը հուզվում էր, թե՛ նրա և թե՛ մյուս վիրավորների պատումներից և պատերազմը հետզհետե նրան ներկայանում էր որպես մի ահա-

վոր շարիք, մարդկանց արլան ծարավի հազարգլխանի հրեշ,  
որին ուզում են ոչնչացնել մեր դինվորները, հրամանատար-  
ները պատերազմի դաշտում, ճակատներում... Դրանից հե-  
տո, թեք կապածի ասելով, պիտի լիներ մշտական խաղաղու-  
թյուն ու արդարություն:

Ամեն անգամ այդ խոսքերը լսելիս՝ Գոհարը մտածում  
էր. — Ախ, ի՞նչ լավ կլիներ շուտ դառնալ այդ օրը, որ մարդիկ,  
երեխաները, մայրերը էլ վիշա, գծրախտություն շտեմնեին:

Գոհարին թվում էր, որ այդ շարիքի, հրեշի վերացումից  
հետո էլ չէր լինի քաղաքների կործանում, գյուղերի ավերում,  
մարդկանց, երեխաների կոտորած և... վիրավորներ՝ ը, վիրա-  
վորներ՝ ը, վիրավորներ՝ ը...

Այս մտքերի հետ միասին Գոհարին թվում էր, թե երիտա-  
սարդ լեյտենանտը մի շատ խիզախ մարդ է. ինչ մտազրի՝  
այն էլ կարող է գլուխ բերել... Մյուս վիրավորներն էլ երեխ-  
ացդպես մարդիկ էին, բայց նրանք այնպես չէին բացվում և  
այնպես պարզ չէին խոսում, ինչպես թեք կապածը: Խոսելիս  
սրա աչքերը բոցավառվում էին կարծես:

— Դուք որ առուջանաք և հիվանդանոցից դուրս դաք՝  
նորի՞ց պիտի գնաք կսիվ, — հարցրեց Գոհարը մի անգամ,  
երբ երիտասարդ դինվորականը խոսում էր ֆաշիստներին  
վերացնելու և խաղաղություն բերելու մասին:

— Իհարկե, — եղավ տղայի պատասխանը, որը, ինչպես  
Գոհարին թվաց, լի էր մի զարմանալի վճռականությամբ:

«Ուրեմն նա ուզում է նորից գնալ», — զարմացավ Գո-  
հարը: — «Ուրեմն նրա ատելությունն այնքան մեծ է թշնամու-  
ղեմ, որ ուզում է նորից գնալ»:

«Ինչ խիզախ տղա է», — մտածում էր Գոհարը:

\* \* \*

Բայց մի օր էլ, երբ Գոհարը գնաց հերթապահության՝ տե-  
սավ թեից վիրավորը բարձր ջերմության մեջ պառկած: Նրան  
տեղափոխել էին մի փոքր սենյակ, ուր պառկած էր և մի  
ուրիշ վիրավոր: Քույրը, որին նա պիտի փոխարիներ, հայտ-

նեց, թե երիտասարդի վերքը բացվել է, բժիշկը կարգադրել է մոտից շնուանալ, որովհետև այդ բարձր տաքության մեջ կարող է վեր կենալ և... ո՞վ է իմանում, ինչ պատահի:

— Եթե մի բան լինի՝ պետք է հերթապահ բժշկին հայտնել, — ասաց նա շշուկով, սենյակից դուրս գալիս:

Գոհարը սարաափեց, որ հիվանդը հանկարծ կարող է վեր կենալ տաքության մեջ: Եթե իսկապես այդպիսի բան լինի, ի՞նչ կարող է անել ինքը. մի՞թե իր ուժը կպատի նրան պառկեցնելու...

Ու Գոհարը, նախորդ հերթապահ կնոջ ամեն ինչ նստելով, տնից բերած վեպը բացեց և սկսեց կարգալ փոքրիկ պահարանի վրա դրված գիշերալամպի լույսով, որը երեք կողմից քողարկված էր կապույտ թղթով: Կարգում էր ու շուտ-շուտ նայում հիվանդին: Ճիշտն ասած, կարգալ չէր կարողանում, գրջին նայելով՝ սպասում էր, թե ի՞նչ կարող է լինել: Փոքրիկ սենյակում դռնվող մյուս վիրավորը քնած էր հանգիստ, իսկ թևը կապածը անվերջ տնքում էր ջերմի մեջ...

Անցավ մի ժամ և ավելի՝ հիվանդը տեղից վեր շկացավ, ինչպես ենթադրում էր հերթապահ քույրը: Բայց եղավ մի ուրիշ բան. նա սկսեց հանկարծ զսուանցել, ասելով հատուկ կենտ բառեր, որոնց մեջ հաճախ կրկնվում էր «մայրիկ... մայրիկ»... Մի ուրիշ անգամ խոսեց ավելի երկար.

— Մայրիկ, համբուրիր ինձ, որ դու էլ հանգստանաս, ես էլ:

Գոհարը դիրքը փակեց և զարմացավ հիվանդի խոսքերի վրա. մի՞թե մոր համբույրը հանգստացնում է հիվանդին, թե՛ նա կարծառել է մորը կամ գուցե՝ երազում նրան է տեսնում: Բայց հիվանդը չէր հանգստանում. շրջվում էր այս-այն կողմի վրա և նորից ասում.

«Մայրիկ, դե համբուրիր, որ դու էլ հանգստանաս, ես էլ»...

Այս բառերը ասում էր մի օւեսակ հեղնախառն ձայնով:

Գոհարը դարձյալ մտածեց այդ խոսքերի վրա և հիշեց, որ, այո, մոր համբույրն իրոք հանգստացնում էր իրեն հիվանդ ժամանակ: Բայց հիմա ո՞րտեղ գտնել վիրավորի մորը...



Ծվ նա անհանգստացավ. ի՞նչ անել. գնալ այդ մասին հայտնե՞լ հերթապահ բժշկին, թե սպասել: Բայց ի՞նչպես սպասել... Չէ՞ որ հիվանդը տանջվում է... Մայրը շեղ, ի՞նչպես անել, որ նա հանգստանա... Եթե մոր համբույրը հանգստացնում է՝ ուրեմն...

Եվս մի բոպե և... Գոհարը, տեղից ելնելով, համբուրեց տաքության մեջ անքնորդ վիրավորի ճակատը... համբուրեց դգույշ, բայց այնպես, որ նա զգա այդ համբույրը և կարծի, թե մայրն է համբուրում իրեն:

Ու զարմանք բան. հիվանդն աչքերը բացեց մեկեն, նայեց Գոհարին և նորից փակեց հանգիստ: Գոհարին այնպես թվաց, թե նրա դեմքը խաղաղվեց, և դա ուրախացրեց նրան այնքան, որ նա ձեռն անմիջապես դրեց հիվանդի ճակատին. տաքությունը շէր անցել, բայց հանգիստ էր...

«Ուրեմն զգաց, որ մայրը համբուրեց իրեն», — մտածեց Գոհարը և նրան համակեց մի ներքին ուրախություն, որ ինքը կարողացավ մոր փոխարեն հանգստացնել նրան:

Առավոտյան դեմ վիրավորի տաքությունն իջավ մի քիչ, իսկ բժշկի նոր սրսկումից՝ նա իրեն ավելի լավ զգաց:

— Գիշերը երեի շատ անկարգ եմ պահել ինձ, այո՞, — հարցրեց նա իր մահճակալի մոտ կանդնած Գոհարին տեսնելով:

Գոհարն առանձին գորովով նայեց նրա դունատ դեմքին և ուրախացավ, որ նրա ջերմությունն անցել է, և նա կարողանում է խոսել:

Ու այդ օրվանից Գոհարն իր հերթապահությանը դալիս էր ժամանակից շուտ. հաճախ թվում էր նրան, որ եթե ուշանա՝ մի վատ բան կպատահի... թվում էր, թե բոլոր վիրավորներն էլ օգնության կարիք ունեն այնպես, ինչպես երեխան՝ մոր խնամքի... Ու զարմանում էր, որ քաղաքի կանաչք, աղջիկները դեռ չեն հասկանում այդ ու... քույր չեն դառնում, չեն այցելում վիրավորներին... Նա նույնիսկ մտածում էր, որ եթե շատ կանաչք լինեն ուղմաճակատներում՝ վիրավորներն ավելի շուտ կլավանան... նրանք բոլորն էլ երեի վիրավոր ժամանակ մայրական համբույրի կարիք են զգում, որ իրենց

լավ զգան... Ինչպես երևում է՝ մայրական համբույրը բուժիչ է:

Անցավ հազիվ մի շաբաթ, երբ մի օր էլ Գոհարը, հերթապահության գնալիս, հոսպիտալի երկրորդ հարկում տեսավ թեթև ու նոր առողջացող հիվանդները մոխրագույն, կապույտ խալաթներով պալատներից գնում են դեպի սեղանատուն, որը գտնվում էր հոսպիտալի մի ընդարձակ սրահում... Բարձրանալով՝ Գոհարը հենց միջանցքում հանդիպեց և թեր կապածին, որ նույնպես գնում էր ճաշարան:

— Ա՛, քույր, ուշացել եք այսօր, — ժպտաց տղան լայն ու սլացածու: — Գուք ձեր պարտքը լավ շեք կատարում:

Գոհարն, ըստ սովորության, շիկնեց, բայց խկույն էլ պատասխան գտավ.

— Փոխարենը ձեզ համար մի նամակ ավելի կգրեմ:

— Նամակ: Շնորհակա՛լ եմ: Բայց, գիտե՞ք, բժիշկն այսօր ինձ իրավունք է տվել ձեռիս կապը արձակելու: Այնպես որ մի քանի օրից նամակ կգրեմ ինքս: Այո, ես ինքս:

Այդ լուրը Գոհարին թե՛ ուրախացրեց և թե՛ տխրեցրեց, ուրախացրեց, որ իր հերոսն առողջանում է, տխրեցրեց, որ ինքն էլ նրա համար նամակ չի գրելու, ուրեմն նրա հետ առաջվա պես չի զրուցելու, նրա հետաքրքիր պատմությունները չի լսելու, և գուցե նա գնա՞...

Վերջին ենթադրությունից նա իրեն վատ զգաց: Ուրեմն կարո՞ղ է պատահել, որ նա շուտով գնա՞...

Գոհարը կարմրեց, շփոթվեց մի վայրկյան, բայց և ասաց.

— Շատ ուրախ եմ: Շնորհավորում եմ: Նշանակում է՝ ձեզ շուտով դուրս կգրեն, այո՞:

— Իհարկե:

— Եվ հետո ո՞ւր...

— Նորից ճակատ, իհարկե:

— Այո՞, — շփոթվեց Գոհարը, և էլ ոչինչ չկարողացավ ասել:

Եվ, իրոք, մի ամիս շանցած, երիտասարդը «դուրս գրվեց» հոսպիտալից. հազավ հրամանատարական իր մոռա-

գույն զգեստները և երկարածիտ սև կոշիկները, որ փայլեցրել էին հատկապես այդ օրվա համար. ու, գլխարկը ձեռին, մտավ պալատները՝ մնացող ընկերներին հրաժեշտ տալու և մասնաձորապես «մնաս բարով» ասելու «բույր» Գոհարին, որ հերթապահ էր այդ օրը:

Ակզրում Գոհարը շիմացավ նրա ս'վ լինելը, որեց նրան հիվանդի այցելության եկած զինվորականի տեղ, բայց երբ ճանաչեց՝ սիրտը թունդ ելավ, և նրա մեջ մի անգիմադրելի ցանկություն առաջացավ՝ փարվել նրան քրոջական բնքշանքով, որ նա այդպես լավ, զնգեցիկ ու առողջ աղամարդ էր դարձել: Բայց նույն վայրկյանին էր տխրեց, մտածելով, թե երևի նա արդեն ճանաչու է գնում... Եվ ինքն այլևս նրան չի տեսնի: Մի՞ թե այսպես շատ անցավ բաժնակ... Այն Գոհարը, հազարակ իր կամքի, արևաճաշակայ այն, ինչ մտածում էր, գուցե և նրա համար, որ մի բան ասած լինի՝ հուզումը ծածկելու:

— Նորից ճանաչա՞տ, — արտասանեց նա շիկնելով:

— Առաջ՞մ ոչ, — ժպտաց երիտասարդը: — Հիմա անմիջապես շեն թողնում: Կերթամ երևի մի ամիս հեռու:

— Մի ամիս հեռու՞, — կրկնեց Գոհարը նրա խոսքը, և կարծես հանգստացավ: Այդպես էլ ասել էր նա օրնը առաջ, թե երբ հիվանդանոցից դուրս գա՝ իրեն նրեի շեն թողնի անմիջապես ճանաչու մեկնելու, ու ինքը կերթա հարազատներին այցելելու:

Գոհարը թեև հանգստացավ այս մտքից, բայց երբ երիտասարդը իր զինվորական լրիվ հանդերձածքի մեջ հրաժեշտ տվեց նրան ու դուրս եկավ, նրան այնպես թվաց, թե հեռացավ երկար տարիների մի բարեկամ. ավելին՝ մի հարազատ: Ընդուն ասած՝ այդպես էր զգում Գոհարը ամեն անգամ, երբ իր ծանոթ, իր խնամած վերաժորեերը, ապաքինվելով, հրաժեշտ էին տալիս ու գնում. Գոհարն արանձանում էր, որ նրանք առողջացան, գնում են նորից, գնում են շարիքը ոչընչացնելու. սակայն տխրում էր, ինչպես հարազատից, բարեկամից բաժանվող մեզը, ու իրեն զգում էր մենակ, ահաբեկված մարդ վիճակում: Եվ քանիսը՝ գնացին այդպես... Հիմա էլ սա,

որին, թվում էր, ինքն էր. առողջացրել... նրա մոր փոխարին  
համբուրելով:

Երբ Գոհարն այդ օրը, հերթապահությունը ավարտելով,  
տուն եկավ, մայրը հարցրեց դարմացած.

— Այսօր ի՞նչ է պատահել քեզ: էլի հուզվա՞ծ ես:

— Ե՛ս... — և Գոհարը, պատասխանի փոխարեն, հան-  
կարծ լաց եղավ՝ բարակ, ճերմակ ձևոն աչքերին դնելով:

— Գոհա՛ր, — ավելի դարմացավ մայրը: — Ի՞նչ պատա-  
հեց քեզ, աղջի... — Եվ նա ուզեց իմանալ դատեր լացի պատ-  
ճառը: — Քեզ էլի սարսափելի բաներ են պատահ՞ել:

Գոհարը, պատասխանելու փոխարեն, փորրիկ ձեռք նորից  
աչքերին դրեց, ինչպես անում էր, երբ տանը գաշնամուրի  
նվազն իրեն չէր աջողվում:

Նրան թվում էր, թե միևնույն է, մայրն իրեն չի հասկանա,  
եթե ասի անգամ, թե ինչո՛ւ համար է անհանդիստ... Մայրը  
չի հասկանա, որ նա գնում է հազարդիսանի հրեշի դեմ և  
գուցե նորից վիրավորվի, և մոտը գուցե շիճի մեկը, որ  
նրան զգուշացնի վտանգից, իսկ վիրավորվելու, ջերմություն  
ունենալու դեպքում՝ պահի, խնամի... Չէ՞ որ ինքը հազիվ  
փրկեց նրան...

Չէ, մայրն իրեն չէր հասկանա, եթե անգամ բացատրեր, —  
մտածում էր Գոհարը և լռում:

Սակայն մայրն էլ շպնդեց, թողնելով որ հանգստանա իր  
համառ, քմահաճ աղջիկը, որին նա վերջերս չէր կարողանում  
հասկանալ և իդուր հարցումներ էր անում և ենթադրություն-  
ների մեջ ընկնում:

Բայց նա աղջկա անհանգստությունը հասկացավ մի ա-  
միս հետո միայն, երբ ձմռան մի օր զարթնելով՝ ճաշի սեղա-  
նի վրա գտավ մի նամակ, որով Գոհարը հայտնում էր, թե  
ինքը գնում է ճակատ, ուր այնքան վտանգներ ու շարիքներ  
կան և օղնության այնքան կարիք...

## ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Սուրիկն այսօր շատ տարօրինակ է պահում իրեն ճաշի սեղանի մոտ: Նրա դեմքն արտահայտում է մերթ ուրախ հուզմունք՝ կարմրում է և աչքերը քնքշանում են ու ժպտում, մերթ էլ ծանր մի մտահոգություն է պատում նրան, և նա գլուխը կախում է ու հոնքերի տակից նայում սեղանի գլխին նստած հորը, որ, ըստ սովորության, անձեռոցիկը կրծքին, արգանակ է ուտում, նայում է մորը, քրոջն ու եղբորը, որ սեղանի աջ և ձախ կողմը նստած նույնն են անում: Նայում է և հանկարծ ձախ ձեռք թաքցնում սեղանի ետև:

Այդպես է անում նա այն պահերին, երբ ճաշողներից մեկն ու մեկը՝ հայրը, մայրը, քույրը կամ եղբայրը, հանկարծ նայում են իր կողմը:

Ճիշտն ասած, երկու օր է նա այդպես օտարոտի է պահում իրեն, շարունակ խուսափում է ծնողներից և ամեն բան անում է զգույշ, շուրջը նայելով. աշխատում է ձախ ձեռք թաքցնել անգամ դաս պարապելիս կամ թեկուղ սենյակից սենյակ անցնելիս:

Ամեն անգամ, երբ տեսնում է մեկը նայում է իրեն, նա կարմրում է, անհանգստանում, երբեմն ժպտում և հանկարծ քարձրացրած ձախ ձեռքը մեկեն իջեցնում ու դնում ծնկների վրա:

Ի՞նչ է պատահել սակայն. ինչո՞ւ է Սուրիկն այդպես ա-  
նում: Ի՞նչ կար: Գուցե ուներ մի դադտնիք...

Գադտնի՞ք... Առանձին գադտնիք չկար: Նա կատարել էր  
մի փոքրիկ բան և հիմա ընկել էր դժվար կացության մեջ:  
Ավելի ճիշտը՝ շգիտեր ինչպես հայտնել ծնողներին իր վար-  
մունքը, շգիտեր, նրանք ինչպես կվերաբերվեն դրան:

Բանն սկսվել էր դպրոցից: Երեք օր առաջ դպրոցում, գրա-  
կանության ուսուցիչը, խոսելով նոր պատերազմի մասին,  
ասել էր, թե գերմանական ֆաշիստները հարձակվել են մեր  
երկրի վրա, որ խլեն մեր ազատությունը և մեր կյանքը. «ուս-  
տի և, ասել էր, ամենքս պիտի օգնենք մեր պետությանը, մեր  
բանակայիններին, որ նրանք կարողանան ավելի լավ պաշտ-  
պանել մեր ազատությունն ու կյանքը...»:

Ու այնպես էր խոսել, որ աշակերտները հուզվել էին և մեկ-  
երկուսը հայտնել էին, թե ինչո՞վ կարող են օգնել իրենք՝  
աշակերտները...

Այդ հարցին ուսուցիչը պատասխանել էր.

— Ով ի՞նչով կարող է... Սովետական յուրաքանչյուր  
մարդու՝ մեծի թե փոքրի, պարտքն է որևէ բանով օգնել մեր  
բանակայիններին:

Եվ աշակերտները որոշեցին՝ նախ նվերներ հավաքել, ու  
ցուցակ կազմեցին, թե ո՞վ ինչ կարող է տալ Կարմիր Բանա-  
կի ֆոնդին:

Շատերը խոստացան վաղը տնից մի նվեր բերել, իսկ  
ոմանք պարզապես տվին, ինչ ունեին իրենց մաս: Ամենից  
առաջ իր նվերը տվեց Ալիսյան Արամը, որի եղբայրն արդեն  
բանակումն էր. նա նվիրեց մտառ եղած մի տասը սուրճիա-  
նոց: Նրա հետևից Բաբկեն Բարենցը նվիրեց իր ինքնահոսք,  
ասելով, թե բանակայինը պրանով նամակ կգրի իր ծնողներին  
ու ընկերներին...

Նվերներ տվին մյուսներն էլ. ով ինչ կարող էր դրեց ու-  
սուցչի սեղանի վրա:

Այդ տեսնելով Սուրիկը, շատ անհարմար զգաց, որ բա-  
նակում եղբայր ունեցող Արամը նվեր տվեց, բանակում հայր

ունեցող Բարկենը նվեր տվեց, իսկ ինքը... ինքը, որ բանա-  
կում ո՛չ հայր ունի, ո՛չ եղբայր — ձայն չի հանում... Դա լավ  
չէր. Սուրիկն դգում էր, որ այդպես չէր կարելի... անհարմար  
էր:

Եվ Սուրիկն սկսեց մտածել, թե ի՞նչ կարող է տալ ինքը:  
Տեսորակներ, որ եռանկյունի ծրարներ շինեն մարտիկ-  
ների համար... Դա քիչ էր: Մատի՞տ, ռետի՞ն... Չէ, նույն-  
պես լավ չէր... Տա իր պայուսա՞կը... Բայց դա պատերազ-  
մում ո՞ւմ է պետք:

— Ինչքա՞ն է մնացել մինչև դասի վերջը, — շշուկով  
հարցրեց նրա ընկերը ետևի նստարանից:

Սուրիկը ցրված նայեց թեին կապած գեղեցիկ ժամա-  
ցույցին:

— Վեց րոպե, — ասաց նա մտախոհ, իսկ երբ հնչեց դա-  
սամիջոցի զանգը՝ նա մոտեցավ ուսուցչին: — Ընկեր Արոյան,  
կարելի՞ է արդյոք...

Նա կարմրեց, շփոթվեց ու լռեց:

— Հը՞, ի՞նչ կա, պաա՛, — խրախուսեց ուսուցիչը և քնքը-  
շանքով ձեռք դրեց նրա ուսին:

— ... կարելի՞ է առհասարակ նվիրել ուրիշի... այսինքն՝  
այն, ինչ նվեր ենք ստացել, կարելի՞ է նվիրել...

Դասատուն ուշադիր նայեց Սուրիկի աչքերին:

— «Առհասարակ» խորհուրդ չի տրվում: Նվիրը՝ դա հի-  
շատակ է, հասկանո՞ւմ ես: Եվ չպետք է դրանից հրաժարվել:  
Բայց նայած ո՛ւմ և ինչի՞ համար ես ուզում նվիրել քո այդ  
հիշատակ-նվերը: Եթե քեզ այդ բանին մոզում է մի շատ կա-  
րևոր, ասենք հասարակական, ընկերական զգացմունք, այդ  
ժամանակ, իբրև բացառություն, կարելի է:

Սուրիկը «շնորհակալություն» ասաց և հեռացավ:

Վերջին դասը թվաբանություն էր: Սուրիկը շարունակ  
նշարդային շարժումներ էր անում նստարանի վրա, շարունակ  
նայում էր ժամացույցին և անհամբեր սպասում զանգին: Իսկ  
երբ զանգի ձայնը լսեց՝ նա մի կերպ արագ հավաքեց դա-  
սագրքերը և նետվեց դեպի ուսուցչանոց... Տեսնելով դրակա-

նության ուսուցչին այդտեղ նստած՝ նա ուրախ-ուրախ մոտեցավ և իր ժամացույցը դրեց նրա սուաջ:

— Էս էլ իմ կողմից...

Ուսուցիչը դոճունակ նայեց նրան և գլխով արավ:

— Շնորհակալ եմ, սիրելիս,— ասաց և Սուրիկի անունը գրեց ցուցակում:

Իրանից հետո Սուրիկն իրեն այնպես գոհ ու թեթև զգաց, որ երբեք չէր զգացել: Ուրախ, ժպտերես հեռացավ դպրոցից և փողոցի անկյունում դվարթ հրաժեշտ տվեց ընկերներին: Շուտով, շինարի ծառի այն կողմը, երևաց իրենց տունը, և ահա այստեղ առաջին անգամ նրան պաշարեց այն ծանր մտահոգությունը, ինչ երկու-երեք օր էր նկատվում էր նրա դեմքին... Իսկոցում այդ չէր երևում, բայց տուն գալիս՝ իսկույն նա դառնում էր մտահոգ, անհանգիստ: Ինչո՞ւ... Սուրիկը մտածելով տանջվում էր, թե ի՞նչ պիտի անի հիմա: Արածը հայտնի՞ ծնողներին, թե չհայտնի: Հանկարծ հայրն ու մայրը բարկանա՞ն... Իսկ չհայտնել՝ չէր կարելի... Ինչպե՞ս անել... Եթե հայրն ու մայրը նկատեն՝ ժամացույցը մոտը չի, ինչպե՞ս անի... ասի՞ կորցրե՞լ է, թե...

Այդ էր պատճառը ահա, որ Սուրիկը շարունակ թաքցնում էր ձախ ձեռը հարադատներից:

Բայց, ինչպես և նա սպասում էր, առաջինը մայրը նկատեց Սուրիկի տարօրինակությունը: Այդ օրը՝ ճաշից հետո, նա, Սուրիկի խուսափումներն ու զգուշացումները նկատելով, հարցրեց զարմացած.

— Ի՞նչ է պատահել, այ տղա: Ինչո՞ւ ես այդպես շփոթված:

Սուրիկը կարմրատակեց, գլուխն իջեցրեց մի պահ, ապա պատասխանեց սնտարբեր.

— Ոչի՛նչ, ոչինչ էլ չի պատահել:

Այդ ժամանակ մոտեցավ հայրը:

— Իսկապես, Սուրիկ. հո հիվա՞նդ չես: Եվ ինչո՞ւ ես շարունակ ձախ ձեռդ դնում գրպանդ: Հապա մի հանիր:

Սուրիկը բուլոբուլին շփոթվեց: նա դանդաղ ձեռը հանեց



գրպանից, և այդ ժամանակ մայրը — դարձյալ առաջինը — հարցրեց.

— Ժամացույցդ ո՞ւր է: Ինչո՞ւ չես կապել թևիդ:

Սուրիկը լռեց և միայն քրտնած մատներով տրորեց կաշվե գոտու ծայրը:

— Երևի կորցրե՞լ ես, հա՞...

Սուրիկը դարձյալ շպատասխանեց և գլուխն ավելի իջեցրեց:

Հայրը նորից միջամտեց.

— Ասա, տղան ծնողներից բան չի թաքցնի: Ինչո՞ւ կարմրեցիր:

Սուրիկն ուղղակի շփտեր ինչ անի. խոստովանե՞լ, թե ոչ:

Հայրը շարունակեց մի քիչ խիստ ձևով.

— Իե, ապա, վերջապես: Կարդին տղան ծնողներից բան չի թաքցնի: Ժամացույցդ կորցրե՞լ ես, հա՞:

Սուրիկը գլուխն օրորեց բացասաբար:

— Կտարե՞լ ես:

— Ոչ:

— Հապա ո՞ւր է: Ինչո՞ւ չես կապել թևիդ:

Սուրիկը դարձյալ լուռ մնաց:

— Երևի ընկել-փչացել է, տարել ես վարպետի մոտ, հա՞, — քնքշանքով հարցրեց մայրը, որ մինչ այդ անխոս հետևում էր որդուն:

— Ոչ, — կրկնեց Սուրիկը դարձյալ գլուխը կախ:

Ծնողներն իրար նայեցին. նրանք բան չէին հասկանում:

Հայրը գրկեց նրա սուր: Սուրիկն իսկույն ոգի առավ, հոնքի տակից նայեց նրան, նայեց մորը և գլուխը բարձրացրեց.

— Տվել եմ... տվել եմ... պաշտպանության ֆունդին:

Ու երբ գծվարը ասել էր, այնուհետև շարունակեց արագ-արագ.

— Թեև, դիտեմ, նվերը չի կարելի նվիրել ուրիշի, բայց... ես ուրիշ բան չունեի... Երբ ընկերներս մի-մի բան նվիրեցին, ես էլ որոշեցի... Չէ՞ որ ժամացույցը բանակայիններին ավելի պետք է... նրանք պահակություն են անում... նրանք պետք

է ճիշտ իմանան, թե երբ պետք է հարձակվին թշնամու վրա,  
իսկ ես ռադիոյից էլ կարող եմ ժամն իմանալ...

Հայրն էլ ոչինչ շատաց, մայրը անխոս համբուրեց որդու  
ճակատը:

Իսկ Սուրիկը, դրանից ասես ոգևորված, ավելացրեց հուզ-  
ված.

— Ես որ մեծանամ, տապա, նորից մեկը կառնեմ:

Մնողներն իրար նայեցին դարձյալ ու այս անգամ շկարո-  
ղացան իրենց ժպիտը պահել:

## ԱՂԱՎՆԻՆԵՐ

Գրանք երկու հաս էին, երկուսն էլ ճեպ-ճերմակ, երկուսն էլ, ինչպես ասում էին թաղի երեխաները, «շալվարով էին և շլյապայով»։ Երանց ստների փեսուրները թանձր շերտով հասնում-ծածկում էին մինչև սրունքները և կախվում ցած, իսկ դուխները զարդարում էր ճերմակ փեսուրների մի ամբողջ փունջ, որ կարծես արհեստական լիներ։

Փոքրիկ Գարասը մի տաշի էր, ինչ ձեռք էր բերել դրանց և ամեն օր, նույնիսկ օրը մի քանի անգամ, դրադում էր նրանցով։ Գարսցից գարուն և իս նա սլաշուսակը դնում էր ցած ու անմիջապես վազում խոհանոց կամ պատշտամ, որ նրանք վանդակի մեջ, կուտն ու ջուրը ստաչներին, կղզցով սպասում էին նրան՝ իրենց փոքրիկ տիրոջը, որ տանի դուրս, մարտը օդը և թռչնի դեպի երկինք, դեպի լալուպր։

Եվ Գարասը նրանց երկար սպասել չէր տալիս. ստուգելով՝ կեղե՛լ են աված կերը կամ ծարավ չե՛ն արդյոք, և հանում էր նրանց վանդակից և յուրաքանչյուրին մի ուսին դրած, դուրս էր դալիս բակ կամ փողոց։ Այդտեղ նա սալոցի նման ձայներ էր հանում, ինչպես ձիապանն է տնում ձին ջրելիս. — Ու-ո՛ւ-ո՛ւ... Ու այդ ձայնի վրա՝ աղաղնու մեկը հանկարծ պոկվում էր Գարասի ուսից ու թը՛ռու... մետաքսածայն թևաբախումներով բարձրանում օդը, բարձր, դեպի ջինջ

կտարույտը... Մի վայրկյան կամ մի երկվայրկյան հետո՝ նույն մետաքսաաշրջունն թևերը թափահարելով՝ մյուսն էր հետևում ընկերոջը, որ հետզհետե փոքրանում էր օդում, ինչպես քամուց տարվող թղթի մի կտոր կամ բամբակի մալանչ:

Փոքր հետո երկուսը միանում, հավասարվում էին իրար և պտտվում զուգահեռ թևածելով, ապա ընդհատում էին իրենց պտույտը և դառնում գլխի վրա կամ, ինչպես մեր աղավնի թռչնողներն են ասում, «թախլա տալիս», այսինքն՝ սկսում այն խաղը, որ այնքան դուր էր գալիս Գարասին, պատճառելով նրան հրճվագին հաճույքներ: Բարձրից, շատ բարձրից նրանք, կարծես իրար հետ մրցելու համար, ինչպես օդանավից նետված ճերմակ թղթեր կամ երկնքից իջնող ձյունի խոշոր փաթիլներ, անվերջ սպիտակին էին տալիս ու դառնում, սպիտակին էին տալիս ու դառնում:

Ինչպես ասացի, Գարասի մեծագույն հաճույքն այդ դարձերն էին, որ նա հաշվում էր մատները ծալելով, գլուխը միշտ դեպի մեջքը թեքած, աչքը շեռացնելով աղավնիներից, որոնք, ասես մրցության մեջ, աշխատում էին ավելի շատ և շուտ դառնալ գլխի վրա և այդպիսով ավելի հաճույք պատճառել իրենց փոքրիկ տիրոջը:

Իսկ Գարասն արդեն, հաճույքից ոտները բարձր ու ցած անելով ու նրանց դարձերը հաշվելով, այնպիսի դոհունակ ձայներ էր հանում, որ անցորդներն ակամա կանգ էին առնում մայթի վրա և նրա հետ նայում վեր, թե ի՛նչն է արդյոք այդ փոքրիկ տղայի արտակարգ ուրախության պատճառը:

— Ա՛, աղավնիներ, — ասում էին նրանք ժպտալով և շարունակում իրենց ճանապարհը:

Բայց Գարասը տակավին մնում էր մայթին, գլուխը շարունակ վեր, աչքն աղավնիներին՝ ետ ու առաջ անելով և շնկատելով, որ դիպչում է անցորդներին և խանգարում անցուդարձը: Մնում էր այդպես մինչև որ աղավնիներն իրենց խաղն ավարտելով և կամաց-կամաց ցածանալով, թեթև պտույտներ էին կատարում իր դլխավերևն ու ապա, երկուսն էլ համարյա միաժամանակ, իջնում-կանգնում էին նրա աջ ու ձախ ուսերին՝ մի խուլ, հազիվ լսելի կղզոցով, — դո՛ւ... դո՛ւ...

Գարասին թվում էր, թե հոգնածությունից էն այդ ձայ-  
ները հանում կամ ինչ-որ բան էն հասկացնում աղավնային  
լեզվով: Ինչ էլ լիներ սակայն, Գարասը նրանց թռչքից ու  
խաղից գոհ, մեկ-մեկ վերցնում էր նրանց իր ուսերից և շո-  
յում նրանց ցցունադարդ գլուխներն ու մետաքսի շրշյուն հա-  
նող թևերը, գրանով կարծես իր գոհունակությունը հայտնե-  
լով նրանց:

Ապա, մի փոքր դադարից հետո, կամ նորից բաց էր թող-  
նում նրանց երկինք՝ նոր խաղեր կատարելու կամ երկուսն  
էլ ուսերին, ինչպես հաղթությունից դարձող հերոս կամ մրցա-  
նակ շահած թռչնաբույծ, գնում էր տուն և, դեռ շեմքից, գո-  
հունակությունից փայլող դեմքով հայտարարում մորը.

— Մա՛, այսօր երկուսն էլ յոթ անգամ դարձան օդում...  
էգուց երևի կդառնան ութ անգամ... Իսկ մի ամիս հետո՝  
տասնհինգ անգամ...

Եվ Գարասին թվում էր, որ իրենց թաղում այլևս ոչ մի  
աղավնի չի կարող մրցել իր աղավնիների հետ: Եվս մի քանի  
օր՝ և ինքը... կլինի առաջինը:

Տանը արդեն նա ուսերից մեկ-մեկ վերցնում ու համբու-  
րում էր աղավնիներին և թողնում, որ մի քիչ ման գան սեն-  
յակում, իսկ ինքն գրադվում էր դասերով:

Ու մինչև Գարասը դաս էր սովորում՝ աղավնիները հան-  
դարտ, տոտիկ-տոտիկ շրջում էին սենյակներում կամ, լու-  
սամուտի գոգը բարձրացած, կղղում էին խուլ մի ձայնով, որը  
կարծես դուրս չէր գալիս նրանց բերանից, այլ մնում էր կո-  
կորդներում. — ղո՛ւ-ղո՛ւ-ղո՛ւ...

Իսկ երբ մթնում էր՝ Գարասը նրանց վերցնում-գնում էր  
վանդակը, որ հարևան կատուները, դիշերը ներս մտնելով,  
չխեղդեն, ինչպես երկու անգամ խեղդել էին իր առաջին ա-  
ղավնիներին, ծանր վիշտ պատճառելով նրան:

Այնուհետև, դասերից ու ընթրիքից հետո, Գարասը քուն  
էր մտնում՝ վաղվա խաղերի մասին երազելով, թե երբ կգա  
դպրոցից, որ նորից թոցնի նրանց և տեսնի, թե վաղը քանի  
գլխադարձ կկատարեն նրանք օդում...

Այսպես էր անցնում Գարասի կյանքը մինչև այն օրը, երբ գերմանական բանակը մտավ քաղաք:

Այդ օրը և հետագա երեք-չորս օրը նա աղավնիներին թաքցրել էր նկուղում, որ Ֆաշիստական զինվորները չգրավեն, որովհետև լսել էր, որ նրանք դրավում են առհասարակ ամեն ինչ, առանձնապես ուտելու բաներ, նաև հավեր, սագեր և ինչ պատահեր:

Իսկ աղավնիները երեխ ամենահամեղ բանը կլինեին նրանց համար: Այդ պատճառով՝ այնքան մեծ էր նրա երկյուղը, որ վանդակը նկուղը դնելուց հետո էլ շուտ-շուտ վազում էր փողոց՝ տեսնելու վտանգ չկա՞ արդյոք. շե՞ն երևում բան հափշտակող զինվորներ... Ճիշտ է, պատահում էին հաճախ գերման զինվորներ, բայց դրանք առայժմ նրանց բակը չէին մտնում, դեռ նրանց կողմը չէին գալիս... Եվ Գարասը, դրանից փոքր-ինչ հանգստացած, վազում էր նկուղը և նորից կուտ գցում աղավնիներին, նոր ջուր դնում նրանց առաջ, որ չտխրեն. կամ, նրանց փետուրները շոյելով, խոստանում էր պահել այնպիսի տեղ, որ գերմանացիները չհափշտակեն նրանց:

— Ես չեմ թողնի ձեզ տանեն, չե՛մ թողնի... Կսպանեմ՝ չեմ թողնի... հասկանո՞ւմ եք:

Աղավնիները երբեմն միայն կղղացնում էին խուլ, — դուրս, — որ չգիտես գոհունակություն էին հայտնում, թե սրբատունջ — գծվար էր որոշել:

Համենայն դեպս Գարասն ինքը դո՛հ էր, որ նրանց թաքցրել էր: Բայց երրորդ, թե չորրորդ օրը նա, տեսնելով, որ գերմանացիները շմտան իրենց բակը, և մտածելով, որ մի քանի օր մուխ նկուղում մնալով՝ աղավնիները կհիվանդանան առանց օդի ու լույսի և դուրս մոռանան բարձր թռչելն ու գրլխադարձ տալը, — Գարասը որոշեց դուրս բերել նրանց մաքուր օդը և գոնե մի անգամ բաց թողնել՝ տեսնելու շե՞ն մոռացել արդյոք սովորած խաղերը:

Եվ մտածելն ու անելը մեկ արավ: Երբ վանդակի դուռը բացեց՝ աղավնիները սովորականից ավելի աշխույժով թռան կանգնեցին նրա ուսերին. և Գարասն այդպես էլ աղավնիներն

ուսերին դուրս եկավ բակը, բայց սովորականի պես փողոց չգնաց, վախենալով գերմանացիներին:

Ու բակում մի քանի վայրկյան կանգնելուց հետո, երբ ուսումնասիրեց շրջապատը և համոզվեց, որ վտանգ չկա, նա թոցրեց նախ մարիին, ապա վարուժանին, որոնք կարծես ուրախ մի կարոտով՝ նախ մեկ-երկու պտուլտ գործեցին տան վերևը, ապա սլացան դեպի երկնքի երևար ծածկող մոխրագույն ամպերը:

— Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ,— կանչում էր Գարասը ամեն վտանգ մոռացած, հրճվանքով նայելով նրանց ետևից:

Հազիվ էին աղավնիները բարձրացել տներից վեր, երբ հանկարծ փողոցի դուռը բացվեց և գերմանացի երկու զինվոր մտան բակը:

— Դրանք ո՞ւմ աղավնիներն են, տղա,— հարցրեց մեկը տարօրինակ ուսերենով:

Վախից Գարասի սիրտը կրծքին դիպավ:

— Իմը,— առաջ եկավ նա, կարծես աղավնիները պաշտպանելու բնադրից մղված:

— Ինչո՞ւ թոցրիր,— հարցրեց նույն ուսերեն խոսող զինվորը:

— Ինչո՞ւ,— զարմացավ Գարասը այդ հարցի վրա:— Խաղում եմ... Բաց թողի, որ խաղան:

— Առտ մի խոսի. դու նամակ ուղարկեցի՞ր նրանց հետ: Գարասն ավելի զարմացավ:

— Նամակ... Ի՞նչ նամակ...

— Օ՛, միամիտ մի ձևանա, ճիշտն ասա:

Կարծելով ծաղրում են իրեն՝ Գարասը ձեռք թափ տվեց, ասելով կարծես, թե կատակի ժամանակ չէ, և աչքերն ուղղեց դեպի վեր, աղավնիներին, որ միմյանց ետևից, բավական բարձրացած, գնում էին դեպի ամպերը:

Բայց Գարասի շարժումը գերմանացիներին երևի թվաց արհամարհանք, ուստի և նրանցից մեկը ասաց բարկացած:

— Ի՞նչ. դու ուրեմն չե՞ս ուզում ասել, թե ի՞նչ աղավնիներ են դրանք: Դե՛ գնանք:

— Ո՞ւր, — հարցրեց Գարասը այս անգամ զարմանքի հետ միասին և վախեցած:

Պատասխանի փոխարեն զինվորը բռնեց նրա թևը և քաշեց դեպի դուռը:

— Գնանք:

Գարասը շհասկացավ, թե ի՞նչ է ուզում գերմանացի զինվորն իրենից և, ոտները գետնին դեմ տալով, շուզեց գնալ, ասելով թե՛ աղավնիները կկորչեն: Բայց զինվորներից մեկն ուժով քաշեց նրան... Գարասը մեկ ուզեց «մամա» կանչել, բայց հիշեց, որ մայրը տանը չէր, և աշխատեց միայն թևը խլել, որ չգնա: Բայց այս անգամ երկուսով բռնեցին նրա թեվերը և բակից հանեցին փողոց: Չիմանալով ո՞ւր են տանում իրեն՝ Գարասն այդ վիճակում էլ շարունակ նայում էր, ետ, դեպի երկինք, աղավնիներին տեսնելու... և մի անգամ նկատեց, որ նրանք ճերմակին էին տալիս բա՞րձր, բա՞րձր, գրեթե ամպերի մոտ...

Այնուհետև, որքան էլ նայեց, շտեպով իր սիրելի աղավնիներին... Այնինչ նրանք այդ պահին թռչում էին զուգահեռ թևածելով, ապա, մի երկու պտույտից հետո, մեկը մյուսի ետևից սկսեցին իրենց խաղը, սկսեցին դառնալ գլխովայր... Գառնում էին, ապա նորից հանդարտ պտտվում թևածելով ու դարձյալ իջնում դարձդարձիկ, ինչպես օդանավից նետված ճերմակ թռուցիկներ, որ մերթ իջնում են հանդարտ, մերթ տարուբերվում սպիտակին տալով... Իսկ երբ բոլորովին իջան՝ նրանք Գարասին շփտան, որ թատեն նրա ուտերին, որ նա շոշի իրենց հոգնած թևերը: Այդ պատճառով տեղավորվեցին տան քիվի վրա (կարնիզի), մի աչքով որոնելով ու սպասելով իրենց փոքրիկ տիրոջը:

Բայց նա չկար... ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ...

Ահա ինչ եղավ.— Գարասին տանելիս, փողոցում պատահեց ուսադիրներով և անսովոր նշաններով գերմանական մի սպա: Մոտենալով՝ նա զինվորներին հարցրեց, թե այդ ի՞նչ հանցագործ են տանում: Զինվորները Գարասի թևերը թողին և, պատիվ տալով, գերմաններեն (որ Գարասը չէր հասկանում) ինչ-որ բացատրեցին, որից սպան հարցրեց տարօրինակ ուսերենով.



— Գու աղավնի պահեստ թշնամուն նշան տալու համա՞ր...  
Թե՞ նամակ ուղարկելու:

Գարասը լավ շհասկացավ նրա հարցը. նրա ուշն ու միտքը դարձյալ իր աղավնիների հետ էր: Պատասխանի փոխարեն նա էտ նայեց և այս անգամ էլ աղավնիներին օդում շտեմնելով՝ սաստիկ անհանգստացավ և, մյուս կողմից, թե՛ վերն աղատ զգալով՝ ևտ վազեց վախեցած, թե չի՞նի՞ աղավնիները կոտան:

Բայց գերմանացիները, նրա ահաբեկ փախուստը տեսնելով, մտածեցին երևի իսկական հանցագործ է, և սպան գոռաց.

— Բռնեցե՛ք դրան, բռնեցե՛ք...

Զինվորները, երկուսը միասին վաղեցին նրա ետևից՝ իրենց լեզվով գոռալով.

— Հալթ!։ Հալթ!։...

Բայց փոքրիկ Գարասը չէր լսում այդ ձայները. լսեր էլ՝ չէր հասկանա. նա վազում էր աղավնիներին դանելու. նրան զբաղեցնում էր միայն այն միտքը, թե աղավնիները հանկարծ կիջնեն այնպիսի մի տեղ, որ կարող են կորչել. ֆաշիստ զինվորները կբռնեն-կտանեն կամ կատու կփախցնի-կխեղդի... Ու շտապում-վազում էր նրանց փրկելու՝ գլուխը ետ գցած, աչքերը միշտ դեպի երկինք...

Մեկ էլ ետևից լսեց մի կրակոց, ապա մի սուր ծակոց զգաց թիկունքում. նա անօգնական տարածեց փոքրիկ ձեռները, պտտվեց տեղում մի անգամ, կարծես ինչ-որ բանից խուսափելու, և ընկավ մեջքի վրա՝ աչքերը երկինք հառած...

Մեռած էլ կարծես ուզում էր տեսնել՝ աղավնիներն այնտե՞ղ են արդյոք...

Իսկ աղավնիները դեռ սպասում էին նրան տան քիվի վրա իրար սեղմված. սպասում էին, որ գա և ուսերի վրա իրենց տանի տուն:

## Ս Ե Ր Ո Ւ Ը

Երբ ինձ հայտնեցին, թե իմ բարեկամ, հետևակ վաշտի հրամանատար Իսվթյանին վերափոք բերել են Ն հիվանդանոցը՝ ես անմիջապես դնացի նրան տեսա: Մինչ այդ լսել էի, որ նա աչքի ընկնող հերոսութուն է կատարել (այդ մասին գրել էին և թերթերում), ուստի շտապեցի իմանալ թե՛ նրա վիճակը, թե՛ շնորհավորել նրան իր հերոսության առթիվ և եթե հնարավոր լինի, պատմել տալ իր հերոսության պաշառանքը: Միաժամանակ մտածում էի, թե նա երևի բոլորովին փոխված կլինի, գուցե և այնպիսի մի տրամադրության մեջ, որ չկամենա կամ չկարենա խոսել, բան պատմել:

Բայց իմ այս ենթադրությունն իզուր էր: Իմ բախտից նա պառկած էր առանձին փոքրիկ սենյակում: Երբ ներս մտա՝ նա, ինչպես միշտ, նիհար ու ջղուտ, բայց հիմա գունատ, պառկած էր երկաթե մահճակալին, մի ձեռք գլխի տակ, այն դիրքով, երբ մարդ անհանգիստ է լինում ներուտ կամ հոգնում է երկար պառկելուց: Ինձ տեսնելով՝ նրա խոհուն աչքերն աշխուժացան, և նա նույնիսկ փորձ արավ տեղից ելնելու Այդ ինձ ուրախացրեց:

«Ուրեմն գրությունն այնքան էլ ծանր չէ, — մտածեցի, — թերևս կարողանա պատմել և իր արածի մասին»:

Բայց երբ ողջագուրանքից և մի երկու հարց ու փորձից

հետո՝ ես խոսք բացի նրա հերոսութեան մասին՝ նա ձեռով  
թուլլ, անտարբեր մի շարժում արած վերմակի վրա.

— Ի՞նչ հերոսութուն... Արեւ եմ՝ ի՞նչ պետք է անել...

— Բայց այդ մասին գրված է թերթերում:

— Այո, ճիշտ է, գրված է: Սակայն... ոչ թե իմ մասին  
պետք է գրվեր, այլ այն երիտասարդի, որն ինձ փրկեց: Չլի-  
ներ նա՝ ես այսօր այստեղ չէի լինի և առհասարակ չէի լինի...

Նա այնպես սրտանց, զգացված ու երախտապիտուկությամբ  
սասց այդ, որ ես ակամա հետաքրքրվեցի.

— Այդ ի՞նչպես...

Պատասխանի փոխարեն նա բարձի տակից հանեց մի  
զինվորի լուսանկար և անխոս մեկնեց ինձ:

Լուսանկարից նայում էր ամբողջ հասակով կանգնած  
մի հաստ ու պինդ, թիկնեղ տղա, որի ոսկրոտ ուսերը չէին  
պարտկվում զինվորական նեղ հագուստի մեջ. աչքի էին ընկ-  
նում մանավանդ հաստ ու խոշոր ձեռքերը, որ բռունցք շի-  
նած կախել էր կողքերին, շգիտես նրա համար, որ սպառ-  
նալից երևա, թե այն սրառձառով, որ չէր իմացել ինչպես  
պահի դրանք... Մի խոսքով՝ զինվորական կիպ հագուստի  
տակից, իր այդ կեցվածքից և թերևս նկարվելուց շփոթված-  
քաշվող հայացքից երևում էր գյուղացին:

— Ո՞վ է սա, — հարցրի լուսանկարը դիտելուց հետո:

— Իմ վաշտի զինվորներից մեկը. նա, որ փրկեց ինձ:

— Ինչպե՞ս, — զարմացա ես նորից, շհավատալով, որ լու-  
սանկարի այդ անդյուրաթեք գյուղացին կարող էր փրկել իր  
հրամանատարին: — Սա՞, — հարցրի ես կասկածով:

— Ինչո՞ւ. քեզ տարօրինակ է թվում այդ, — նկատեց  
բարեկամս: — Ոչ, սիրելիս, պատերազմում ամեն ինչ պա-  
տահում է: Եվ եթե քեզ հետաքրքրում է՝ կարող եմ պատմել:  
Սերոբն արժանի է, որ նրա մասին շատերն իմանան:

Եվ նա սկսեց,

— Ինչպես գիտես՝ ես N ճակատումն էի. իմ վաշտը բազ-  
կացած էր ուսաներից, ուկրաինացիներից և այլ ազգերի զին-  
վորներից: Կար և մի հայ տղա... այս Սերոբը (նա ցույց տվեց  
լուսանկարը), որն իր տարօրինակութուններով ինձ, պետք

է ասեմ, բավական գլխացավանք էր պատճառում իմ վաշտը մտնելու օրից: Չնայած իր այս ծանր ու մռայլ տեսքին, նա շատ զվարթ, կարող եմ ասել՝ շարաճճի տղա էր. իրեն պահում էր շատ թեթև, նույնիսկ անհոգ, անդարդ... արդյոք բնավորութ՞յուն էր այդպէս, թե պատերազմ գնալուց հետո էր ընկել այդպիսի բարձր տրամագրութ՞յան մեջ, շգիտեմ. համենայն դեպս այնպիսի բաներ էր անում, կարծես պատերազմում, ճակատում շէր, այլ մի տեսակ խաղի, սպորտի մեջ: Հանգստի ժամերին, երբ յուրաքանչյուր դիմվոր աշխատում էր պառկել, ուժ հավաքել — այս Սերոբն իր պակասավոր, թերի ուսերենով շարունակ կատակներ էր անում տղաների հետ. իսկ երբ խոսքերը պակասում էին՝ նա մատներով էր բան հասկացնում, հայերեն խառնելով. հաճախ էլ ինքը բերանով նվագում էր՝ ինքը պարում մեր հայկական պարերը:

— Սերո՛բ, հանգստացիր: Սերո՛բ, քեզ կարգին պահիր, — սաստում էի ես:

Հանգստանում էր մի քանի րոպե և նորից սկսում մի ուրիշ բան. կատակով թաքցնում էր ընկերների իրերը, ասեմք, կոշիկ, գլխարկ կամ գոտի... թաքցնում էր ու լարված, մարտը մտած հետևում, թե ինչպէս պիտի վախենան ընկերներն ու որոնեն... Բայց երբ տղաները վեր էին կենում ու շփոթված փնտրում իրենց կորած, անհայտացած իրերը՝ Սերոբը մի երկու ընկերոջ հետ առանձին ծիծաղում էր նրանց վրա, ապա քրքիջով ցույց տալիս տեղը:

— Էյ, Սիրոպ, Սիրոպ, — հանդիմանում էին ընկերները, աղավաղելով նրա անունը, որովհետև շէին կարողանում Սերոբ ասել:

Բայց Սերոբը դրանից կարծես միայն հաճույք էր զգում և շարունակում իրենը: Թեև մարմնով խոշոր, բայց ժիր էր ու ճարպիկ: Պատահում էր բոլորը երկար ճամփից կամ կովից հոգնած հանգստանում էին, սա, փորսող տալով, գնում էր էլի կատակներ անելու:

Իսկ կովի միջոցին արդեն հանգիստ շուներ. դիրք մտած թե՛ կրակում էր և թե՛ գլուխը շարունակ բարձրացնում-նայում այս ու այն կողմ՝ տեսնի թշնամու գնդակը ընկերներից ո՛րին դիպավ, ո՛րը վիրավորվեց, ո՛րն ընկավ:

— Սերո՛ք, Սերո՛ք, գլո՛ւխդ, — զգուշացնում եմ ես ուս-  
սերեն:

— Մի վախի, ընկեր հրամանատար, — ձայն է տալիս  
նա հայերեն, ու քիչ հետո ոչ միայն գլուխն է բարձրացնում,  
այլ, մեկ էլ տեսար, շորեքթաթ կամ սողալով գնաց, ավելի  
շուտ վազեց մի կողմի վրա, ուր նկատել էր ընկերներից մեկը  
վիրավորվել է:

— Տե՛ղդ, Սերոք, — աստում եմ նորից: — Սանիտար-  
ները կգան... Ե՛տ գնա տեղդ:

Ո՛ւմ ես ասում: Միանժամ մնում է դիրքում, նորից  
գլուխը բարձրացնում, նորից նայում աջ ու ձախ: Տեսնում է  
մեկը վիրավորվեց, թե անբնական դիրք ընդունեց՝ սողում  
է դարձյալ, վերքը կապում, օգնում, պառկեցնում:

Մե՛կ-հի՛նդ-տա՛սը... Տեսնելով զգուշացումները, նկատո-  
ղությունները շեն ազդում, որոշեցի դրան պատժել. ավելի  
շուտ ահ տալ, որ զգա, թե դրանք՝ իր արածները անթույլա-  
տրելի բաներ են...

«Պատիժ, մի թեթև պատիժ... Միայն այս միջոցը, —  
մտածում էի, — կարող է նրան խելքի բերել»:

Ու ահա մի հանգստի ժամի կանչեցի դրան և ասի.

— Դու պետք է երկու օր պահակություն անես, իբրև  
տույժ...

Նա լսեց բոլորովին անտարբեր, հանգիստ նայեց երե-  
սիս և հանգիստ հարցրեց.

— Անելը կանեմ, ընկեր հրամանատար, բայց ինչո՞ւ  
տույժ... էդ տույժն ինչո՞ւ համար է:

— Ա՛յն, որ իմ կարգադրությունը շեռ կատարում և խախ-  
տում ես զինվորական կարգը:

Նա զարմացավ.

— էդ ո՞ր կարգադրությունը շեռ կատարել, ընկեր  
Դավթյան:

— Ա՛յ, երբ քեզ ասում եմ դիրքիդ մեջ մնա՛ շեռ լսում.  
կրակոցի ժամանակ ընկնում ես դեռ ու դեն:

— Ախր, ընկեր Դավթյան, — ասում է, — ընկեր հրամա-  
նատար, սիրտս չի համբերում...

— Ի՞նչ է նշանակում «սիրտս չի համբերում», — բարկանում եմ ես:

— Բա, ընկեր հրամանատար, ընկեր Դավթյան, տղերքք վիրավորվեն՝ ես ո՞նց շահանեմ-օգնեմ... Աչքովս տեսնեմ ու շղնամ. անհարմար է, չէ՞...

— Ա՛յ տղա, — ասում եմ, — զորքն իր կարողը, իր դիպիպլինան ունի. վիրավորների համար սանիտարներ կան. դու գինվոր ես՝ քո գործին կաց: Տեսնում ես ինչպե՛ս են պահում իրենց ընկերներդ, դու էլ այդպես եղիր:

Ասում եմ, բացատրում, բայց նրա համար կարծես ոչինչ. նա շարունակում է իրենը.

— Սիրտս չի համբերում, ընկեր Դավթյան:

— Բայց սիրտդ կարող է քեզ մի օր փորձանքի մեջ գըցել, — ասում եմ: — Այդպես դես ու դեն ընկնելով՝ քեզ կրվնասես:

— Ի՞նչ պտի ըլի որ, ընկեր Դավթյան, — ասում է: — Ճակատագիր է. եթե այստեղ մեռնելու եմ՝ կմեռնեմ, եթե չէ՛ չէ՞...

— Դե, քանի որ ասածս չես ուզում հասկանալ, քեզ երեք օր պահակություն, — ասում եմ:

Դա գնաց մի տեսակ քթի տակ ժպտալով: Ասես ստացածը պատիժ չէր, այլ պարգև: Տարօրինակ տպավորություն արավ վրաս, և ես մտածեցի, թե չլինի դա խախտված մի բան ունի իր մեջ, որ չի հասկանում ի՞նչ է պատիժը, չի հասկանում, որ ճակատում գնդակի հետ խաղալ չի կարելի: Ճակատը իրենց կալը չի, որ ուզած ժամին պարի...

Եվ ինձ թվում էր՝ պատիժն անշուշտ կզգաստացնի նրան, բայց... ընդունեց ծիծաղով, անտարբեր: Այնուհանդերձ՝ ես դարձյալ մնացի իմ կարծիքին, որ միայն պատիժով կարելի է կարգի հրավիրել նրան և, վերջապես, դա իր շահն է, իրեն չի վտանգի...

— Հիմա գուցե դու հարցնես, — դարձավ վիրավոր բարեկամս ինձ, — թե այդ բոլորն ի՞նչ կապ ունի ինձ փրկելու հետ: Բայց մի փոքր համբերություն և կտեսնես, որ ունի:

Այս դեպքից, այսինքն՝ Սերոբին պատժելուց ութ-տասը օր հետո՝ մենք նորից մի նոր կովի բնվեցինք դերմանացիների հետ, մի անտառի մոտ: Կովն սկսվեց կեսօրից և շարունակվեց մինչև մութը: Մի տաք, կատաղի կով, երկու կողմից էլ կրակում էին թնդանոթներից, կրակում էին գնդաղիրներից, ուժակոծում օդից, ինչպես սովորաբար... Դու պատերազմ չես տեսել, հետևաբար դժվար կարող ես պատկերացնել, թե ի՞նչ է կովը — սարսափելին գեղեցկության հետ... Իմ վաշտի տղաները դիրք մտած կրակում են հրացաններից, ես էլ, նույնպես դիրքի մեջ, դեկավարում եմ դրանց... մեկ էլ ուտիս ու ծնոտիս մի սուր, այրող հարված զգացի և հանկարծ տեսա բերանս և ուսս տաքացան՝ բերանս լցվեց արյունով: Միայն հիշում եմ, որ թաշկինակս հանեցի և դրի ծնոտիս. այնուհետև էլ չեմ հիշում ի՞նչ եղավ, կովն ինչո՞վ վերջացավ. մերո՞նք առաջ գնացին, թե թշնամին... Սկզբում տարօրինակ վիճակի մեջ էի. դեմքով զգում էի հողի սառնությունը, զգում էի թևս, որ անհարմար ծալվել-մնացել էր կրծքիս տակ... Իրանից դուրս ոչինչ չէի զգում: Հետո այդ զգացումն էլ չքացավ:

Եվ այնուհետև չեմ կարող ասել, որքան ժամանակ էր անցել, մեկ էլ այն զգացի, որ ինձ հրում են ուժգին և կանչում կամաց:

— Ընկե՛ր հրամանատար, ընկե՛ր հրամանատար...

Կանչում են, և ես չեմ կարողանում որոշել՝ երազի՞ մեջ եմ, թե արթուն. ավելի շուտ՝ թվում է լսում եմ երազում: Բայց հրումներից սթափվեցի վերջապես և նորից զգացի հողի սառնությունը. զգացի և ցուրտ, բայց շկարողացա խոսել, գոնե մի հատիկ բառ ասել:

Իսկ ձայնը շարունակում էր կրկնել:

— Ընկե՛ր հրամանատար, ընկե՛ր Դավթյան:

Զգալով, թե գիտակցելով, որ չեմ կարողանում խոսել՝ տնքացի: Իմ տնքոցից հրումներն ավելացան և կանչող ձայնն աշխուժացավ.

— Դուք վիրավորված եք, ընկեր Դավթյան, վեր կացեք. վեր կացեք, գնանք, — կրկնեց նա:

«Վիրավորված» բառն ավելի ուշքի բերեց ինձ և ես աչքերս բացի.— Ո՞րտեղ եմ...

Մութ գիշեր է. անտառ. ծառերը խշշում են մութի մեջ: Աստղի կտոր անգամ չի երևում երկնքում, իսկ կանչող ձայնը, հիմա զգում եմ, թվում է ծանոթ:

— Ո՞վ է,— հարցնում եմ, ավելի շուտ ահագին ճիգ եմ գործ դնում, որ խոսեմ:

— Ես եմ, ընկեր Դավթյան, Սերոբբ: Վեր կացեք՝ գնանք: Դուք վիրավորված եք:

Նոր հիշեցի, որ այսօ՞ր էր, ե՞րբ էր վիրավորվեցի, այսինքն՝ ուսիս և ծնոտիս սուր ցավեր զգացի և մնացի դիրքիս մնջ ընկած...

— Իսկ մերոնք ո՞ւր են, Սերոբբ,— հարցնում եմ:

— Էն կողմը,— ձեռք դեպի մութն է մեկնում նա,— մի շորս-հինգ կիլոմետր դեմը:

Նրա շարժումից լավ չեմ հասկանում՝ առա՞ջ ենք գնացել, թե ետ. և այդ միտքն ինձ ավելի է սթափեցնում:

— Նահանջե՞լ ենք,— հարցնում եմ:

— Չէ, ընկեր հրամանատար, չէ,— ծոր է տալիս Սերոբբ:— Նահանջել չենք: Կարգադրություն եղավ ետ քաշվել, որ, ասում է, գերմանացիներին ծուղակը գցենք:

«Չորս-հինգ կիլոմետր»... շատ մտքեր են անցնում գլխովս. բայց մտածելու ժամանակ չկա:

— Այդ դեպքում,— ասում եմ,— ինչպե՞ս գնանք: Սերոբբ: Չի՞ լուսանա մինչև մեր տեղ հասնելը: Ճանապարհը գիտե՞ս:

— Գիտեմ, ընկեր Դավթյան, գիտեմ...

— Բայց ես թույլ եմ, արագ չեմ կարող քայլել, Սերոբբ:

— Էդ ոչինչ, ընկեր Դավթյան,— ասում է,— ես քեզ կշալակեմ: Վեր կաց: Ժամանակ է անցնում: Ուշ է:

Ես փորձեցի վեր կենալ և այդ ժամանակ զգացի, որ շինելիս չկա, գլխարկիս չկա, ատրճանակիս չկա. չկար և պայուսակիս, որի մեջ փամփուշտի պաշար ունեի: Հասկացա, որ գերմանացիք, ինձ մեռած համարելով, կողոպտել են վրասագլուխս, հանելով անգամ կոշիկներս:



Աշնան ցուրտ գիշեր էր: սառը, ցուրտ քամի էր անցնում անտառի վրայով, և ծառերը խռչում էին մի տեսակ ցուրտ դողով, որից ես փշաքաղվում էի: Սերոբն ինձ նստեցրեց և սկսեց վերքս կապել: Իսկ երբ ոտքի ելա... և այդ սառը հովը դիպավ երեսիս՝ ինձ դարձյալ վատ զգացի. հազիվ մի տասրքսան քայլ էի արել՝ գլուխս պտտվեց, աչքերս մթնելու պես եղան. նորից կանգ առա և նստեցի: Այնքան արյուն էի կորցրել, որ էլ ուժ չէր մնացել մեջս:

— Դու դնա, Սերոբ,— ասի,— ես ուժ չունեմ քայլելու:

— Ի՛նչ ես ասում, ընկեր հրամանատար: Չես կարող կշալակեմ:

— Այդ արդեն անկարելի է,— ասում եմ,— ինչպես կարող ես շորս-հինգ կիլոմետր մարդ տանել շալակած: Նախ՝ ես թույլ չեմ տա ինձ. երկրորդ՝ դա մարդկային ուժերից վեր բան է. երրորդ՝ մինչև գնանք՝ կլուսանա և գերմանացիները իմ պատճառով քեզ կվնասեն...

Սակայն իմ պատճառաբանությունները չազդեցին Սերոբի վրա:

— Չէ, ընկեր հրամանատար,— ասում է:— Դու հանգիստ կաց. քու ասածներից ոչ մեկն էլ չի լինի: Ես քեզ էնպես կտանեմ, որ գերմանացիները մեզ չեն տեսնի, չի լուսանա, ու ոչ էլ ես կհոգնեմ: Հապա մի կանգնի տեսնեմ...

Որքան էլ թույլ՝ այսուամենայնիվ փորձ եմ անում կանգնելու և... զգում եմ մեկ էլ, որ Սերոբը շալակել ու տանում է ինձ:

— Թո՛ղ,— ասում եմ,— թո՛ղ, այ տղա...

Բայց ո՞ւմ ես ասում:

Ինձ շալակն է առել, ձեռներս բռնել պինդ, ու դնում է հսկայի քայլերով: Գնում է այնպես, կարծես բեռ չեմ նրա համար, այլ թեթև մի ուսապայուսակ:

Իսկ ես այնպես վատ եմ զգում ինձ, այնպես վատ, որ վերքս մոռացել եմ: Առաջին անգամն էր կյանքիս մեջ, որ բեռ էի դառնում մարդու, որ ինձ շալակում էին. թվում էր չին մանդարին եմ, թե հին դարերի բռնակալ, որ ստիպել եմ

մարդուն շալակել ինձ, շնայած նա հետն ունի ամտումատ հրացան և այն բոլոր պարագաները, ինչ ունենում է զինվորը:

Սերոբը, սակայն, այս ամենին անուշադիր՝ քայլում է մեծ-մեծ քայլերով, գնում է դեպի մութը: Իսկ մութի մեջ ոչինչ, ոչ մի բան չի երևում:

Գնում է Սերոբը ու հետն էլ կատակում.

— Աղջիկ փախցնելու պես է, ընկեր Դավթյան, չէ՞...

Ասացի, որ այս Սերոբը ամենածանր գործի, հանձնարարության ծամանակ էլ զվարթությունը չէր կորցնում. կովի, հրածգության պահին էլ սիրում էր զվարճախոսել: Հիմա էլ, երբ ինձ տանում էր շալակած, շարունակ կատակներ էր անում, և ես զգում էի, որ ուզում է տրամադրությունս բարձր պահել, և մյուս կողմից՝ ապացուցել, թե իր համար առանձին բեռ չեմ, իմ ծանրության տակ ինքը չի հոգնում, որ ինձ տանելը, վերջապես, խաղ ու պար է իր համար: Բայց ես շարունակ վատ էի զգում, որ բեռ էի դարձել պարզ, բարի երիտասարդին, որը սակայն ոչ մի բանով զզաւ չէր տալիս իր հոգնածությունը:

— Սերոբ, կանգնենք, գոնե հանգստացիր:

— Ես դեռ չեմ հոգնել, ընկեր Դավթյան... Դու էնքան թեթև ես՝ կարծես մի շաքաթ հաց չես կերել:

Ու շարունակում է կատակել այսպես, որ էլ չկրկնեմ հանգստանալու իմ առաջարկը:

Մենք գնում էինք անտառով, առայժմ մի ճանապարհով, որ հարթ էր. բայց հետո ընկանք ծառերի խառնիխուռն միջավայրը. շոր փայտերը ճարճատում էին Սերոբի ոտների տակ, և նա ստիպված դես ու դեն էր ընկնում ճանապարհ գտնելու: Տեսնում էի մարդը հոգնել է, քրտնել, մարմնի տաքությունն ու խոնավությունը զգում էի հագուստի վրայից: Բարևախառաբար՝ հասել էինք բացատի: Ես խնդրեցի նրան՝ հանգստանալ: Միտքս այն էր, որ մարդուն շտանջեմ իզուր, քանի որ միևնույն է, այդ շորս-հինգ (գուցե և ավելի, չգիտեմ) կիլոմետրը չենք կարող կտրել-անցնել այս դժվարին ճանապարհով: Ավելի լավ է՝ թող Սերոբը գնա-միանա վաշտին, ես էլ, եթե կարող եմ, կգամ:

Համոզեցի մեծ դժվարությամբ, և նա, ինձ ցած դնելով, նստեց հանգստանալու: Ես շինելը գցեցի նրա ուսերին, առ շմբսի. շատ քրտնած էր: Բայց նա հազիվ շունչ առած՝ նորից վեր կացավ:

— Դե, ընկեր Դավթյան, գնանք, կուշանանք:

Ես, նրան մեղքանալով, նորից շնորհակալություն եմ հայտնում, որ շեմ կարող, որ ուժերս սպառված են. թող նա գնա, ես հետո կգամ կամաց-կամաց:

— Ո՞նց թե... էդպես բան չկա, ընկեր Դավթյան: Ես ամբողջ վաշտի առաջ խոսք եմ տվել, որ քեզ պիտի տանեմ: Տղերքը հիմա սպասում են...

Մինչ այդ ես այնպես էի կարծում, թե նա հենց եղել է ինձ մոտ՝ դիրքում, հիմա նոր միայն, նրա ասածից պարզրվում է, որ նա վաշտի հետ ետ էր գնացել շորս-հինգ կիլոմետր և նորից եկել ինձ տանելու:

Այսպես, ի՞նչ արի՛ շեղավ: Չհամաձայնեց թողնել... Ասում էր՝ ավելի շուտ ինքը կմնա, քան ինձ կթողնի: Նորից շինելը, իր ուսերից առնելով, գցեց իմ ուսերին, նորից անսպասելի շալակն առավ ինձ և նորից՝ անտառով առաջ...

Գնում ենք, դարձյալ մութն է, խոնավ ու ցուրտ, աշնանային այն ցուրտը, որ թափանցում է մարդուս սկզորները և տհաճ սարսուռ պատճառում մարմնին:

Չնայած ուսերիս գցված շինելին՝ ես շարունակ դող եմ զգում:

Բայց Սերոբը՝ ոչինչ:

Գնում է ու հետն էլ կատակում:

Չեմ կարող ասել՝ որքան գնացինք այդպես՝ հանկարծ գերմաներեն ձայնարկություն: Թվաց՝ պահակներ են կանչում իրար կամ ազդանշան տալիս միմյանց:

Սերոբը կանգ առավ մի պահ, ականջ դրեց:

— Իրա՛նք են, ընկեր Դավթյան, — ասում է, — սա նրանց գիծն է: Բայց դու մի անհանգստանա: Հենց գնամ որ՝ աչքները շոկած մնա:

— Իսկ մերոնք դեռ հետո՞ւ են, — հարցնում եմ:

— Շատ չէ: Մի կիլոմետր, — ասում է:

Ու նորից գնում է, այս անգամ արդեն զգույշ, աշխատելով ոտնաձայն չհանել, որ գերմանական պահակների կամ հետախույզների ուշադրութունը չհրավիրի մեզ վրա:

Իսկ երբ մի փոքր առաջ գնաց, նա ճանապարհը շարունակեց ուղղակի սողալով...

Թե որքան գնացինք այդպես՝ դարձյալ շեմ կարող ասել նորից գերմաներեն խոսքեր հասան ականջիս և ապա, քիչ հետո, շարժվող թփեր նկատեցի մեր առջև, թփերի ետևը՝ երեք-չորս կերպարանք, որ կամացուկ խոսակցելով, կարծես միմյանց զգուշացնելով, գալիս էին դեպի մեզ:

— Սպասիր, Սերոբ, կաց, գերմանացիները, — շշնջացի ես:

Սերոբը նորից կանգ առավ և ականջ դրեց:

Հսելով գերմանացիների ձայնը, գուցե և տեսնելով նրանց, նա ինձ կարգադրեց պառկել, իսկ ինքը դիրք մտավ և սկսեց կրակել ավտոմատ հրացանից: Մեկ, երկու, երեք...

Գերմանացիները պատասխանեցին իրար ետևից: Բայց, ինչպես պարզվեց, Սերոբը նրանց տեսնում էր, գիտեր նրանց տեղը, իսկ նրանք՝ ոչ: Սա կրակում էր ուղիղ նրանց վրա, իսկ նրանք՝ սրա կրակոցի կողմը: Սա արագ-արագ և շուտ-շուտ տեղը փոխելով, որ թողնում էր մեծ խմբի տպավորութուն, նրանք՝ դանդաղ, նշան կամ մարդ որոնելով...

Այդպես էր երևում նրանց կրակոցների բնույթից, եղանակից... Եվ դա երկար շտեկեց: Մի քանի րոպե էլ՝ և գերմանացիները լռեցին: Պետք էր ենթադրել, որ կա՛մ սպանվեցին, կա՛մ փախան-գնացին՝ իրայինների մեր տեղը հայտնելու:

Համենայն դեպս՝ նրանց կողմից էլ կրակոց չէր լսվում: Լուսինն ամպի տակից նոր դուրս գալով՝ հեռվում երկու սավեր էր ցույց տալիս: Դրանից հետո ես ու Սերոբը ենթադրեցինք, որ դրանք գերմանական պահակախմբի մարդկանցից էին կամ գերման հետախույզներ: Կարծելով, երևի, թըշնամու զորամասի են հանդիպել, գնում էին գուցե մեր տեղն իմացնելու:

Այդ տեսնելով, Սերոբը եկավ թե՛

— Գնանք, ընկեր Դավթյան:

Եվ ուզում էր նորից շալակել: Չհամաձայնեցի:

— Այսքան բերիք, բավական է, — ասում եմ: — Հիմա ես ինքս կերթամ, եթե ոչ ոտով, գոնե սողալով:

Ասում եմ, բայց ինքս էլ համոզված չեմ, թե կարող եմ ուզում եմ միայն, որ նա հանգստանա, շունչ առնի այդքան լարումից հետո:

Բայց Սերոբը՝ բոլորովի՛ն: Հանգստանալու մասին լսել անգամ չի ուզում: Ի՛նչ հանգստանալ, մանավանդ այստեղ, որ ամեն վայրկյան կարող են նորից ֆաշիստական հետախույզներ երևալ կամ դուրսե մի ամբողջ դորամաս:

— Չէ, ընկեր Դավթյան, գնանք. մի կես կիլոմետր էլ գնանք՝ կհասնենք մերոնց...

Ու, ինչպես առաջին անգամը, նորից ուժով շալակեց ինձ ու առաջ: Այս անգամ ոչ թե սողալով, այլ կանդնած: Եվ ես դարձյալ չեմ կարողանում ընդդիմանալ նրան՝ այնքան թույլ եմ: Չգում եմ, սակայն, թե որքան է նա քրտնած հրացան արձակելուց ու փորսող տեղափոխվելուց:

«Խեղճ տղա», — մտածում եմ և դարձյալ վտտ եմ գգում ինձ, որ բեռ եմ դարձել: Մտածում եմ, բայց մեկ էլ գգում եմ՝ աջ ձեռիս վրա տաք կաթիլներ ընկան, բնազդաբար բարձրացնում եմ ձեռս և... տեսնում եմ արյունոտ: Իմ վերքի՛ց է արդյոք: Ոչ: Իմ վերքը ձախ ուսիս է և աջ ձեռիցս բավական հեռու, որը համարյա Սերոբի կրծքին կախված է:

Իսկույն անհանգիստ մի կասկած է զարթնում մեջս:

— Դու վիրավորված ես, Սերոբ, — հարցնում եմ:

— Այո, ընկեր Դավթյան, մի քիչ. բայց ոչինչ: Հիմա կերթանք սանիտարական կայան...

Ես անմիջապես կանգնեցնում եմ նրան:

— Ինչպես «ոչինչ», — ասում եմ: — Բեր տեսնենք ո՛րտեղ է, կապենք...

Հիմա էլ արի տես՝ չի ուզում ասել ո՛րտեղից է վիրավորված... Ես, իհարկե, հասկանում եմ, չի ասում, որ շանհանգրստանամ: Բայց ես շոշափելով գտնում եմ, վերջապես, նրա վերքի տեղը... վիզն է: Կասկում եմ՝ երկուսիս թաշկինակը

իրար միացրած. բայց համոզված չեմ, թե դրանով կարելի է արյան առաջն առնել:

Դրանից հետո էլ նա ուզում էր դարձյալ շալակել ինձ:

Չհամաձայնեցի, իհարկե, և առաջ դնացիներ մի կերպ, երբեմն մի փոքր հանգիստ առնելով...

Մինչ այդ լույսը բացվեց: Շուտով մեր հետախույզները տեսան մեզ և տարան սանիտարական կայանը, ուր երկուսիս վերքն էլ լվացին-կապեցին և ավտոյով փոխադրեցին բուժկայան:

Սերոբի վերքը կապելիս՝ բժիշկը, նկատեցի, դարմանքով ու տարակուսանքով շարժեց գլուխը...

Բարեկամս այստեղ ընդհատելով իր պատմութիւնը՝ խոնավացած աչքերը հանկարծ շրջնց դեպի պատը և լռեց մի երկու րոպե:

— Հետո՞, հետո՞ ինչպես եղավ, — հետաքրքրվեցի ես:

— Հետո... երեք օր հետո Սերոբը մեռավ այդտեղ՝ բարձր տաքութեան մեջ... Վե՞րքն էր արդյոք վտանգավոր, թե գրնդակն էր թունավոր եղել, չիմացա...

Բայց հետաքրքրական է, թե ինչպես էր եկել-գտել ինձ... Ինքս էլ այդ հետո, շատ հետո իմացա: Երբ մեր վաշտը, ետ քաշվելիս, անցնում է բավական տեղ... Սերոբը հարցնում է իմ մասին, փնտրում է ինձ և, ոչ մի տեղ չգտնելով, ընկերներին հաշտնում է, թե պիտի գնամ ընկեր հրամանատարին գտնեմ:

— Ի՞նչպես, — ասում են: — Նրան էլ որտե՞ղ կարող ես գտնել, նա կա՛մ վիրավորվել է, կա՛մ սպանվել: Վերջապես, ասում են, գերմանացիները հիմա բռնել են ճանապարհը...

— Չէ՛, — ասում է Սերոբը, — պիտի գնամ. սիրտս չի դիմանում. եթե մեռած է՝ իմանամ, եթե վիրավոր է՝ բերեմ: Չէ՞ որ նա էլ մեր ունի, մի օր կհարցնի, թե ո՛ր մնաց, ի՛նչ եղավ տղաս... Գոնե տեղն իմանանք:

— Եվ այսպես, — շարունակեց բարեկամս դարձյալ, մի փոքր ընդհատումից հետո, — չլինեք Սերոբը՝ ես այսօր երևի

չէի խոսի՝ քեզ հետ: Աւ հիմա ինքն շարունակ հարց եմ տալիս  
ինձ, թե ի՞նչն էր այդ երիտասարդին մղել այդպիսի վտան-  
գավոր քայլի. արդյոք դեպ ինձ ունեցած սե՛րը... բայց չէ՞ որ  
ես մի առանձին մտերմություն շունեի հետը... թե՞ խիզա-  
խության ոգին, որ կանգ չի առնում ոչ մի վտանգի առաջ:

Ես դժգոհանում եմ ասել ո՛րը... գուցէ երկուսը միասին...  
Համենայն դեպս՝ ես Սերոբին չեմ մտռանա. և կուզեի, որ նրա  
մասին շատերն իմանան...

Ես բարեկամիս խոստացա՝ գրել Սերոբի մասին, և ահա  
կատարում եմ խոստումս...

# ՀԱՅՐԸ

## I

Երևանը քողարկված էր: Այն ահագին տարածութեան վրա, ուր փռված է քաղաքը—նրա կենտրոնում թե ծալրամասերում, նրա յոթը բլուրների վրա — Կոնդում, Նորքում, Սարիթաղում և այլուր — լույսի նշույլ անգամ չէր երևում: Պատերազմի առաջին ամիսներից քաղաքը քողարկվում էր մի այնպիսի խնամքով, որ հեռվից ու վերևից նայողին կարող էր թվալ, թե այդտեղ ո՛չ քնակութունն կա, ո՛չ կյանք: Համատարած քողարկումն այնպիսին էր, որ երբեմն ամպած գիշերները փողոցները քաղաքացիներին թվում էին կիրճեր, տները վիթխարի, անհեթեթ զանգվածներ կամ վեր խոյացած քարածայոներ:

Սակայն շնայած այդ անլույս խավարին՝ Երևանը դիշերներն էլ ապրում էր լի կյանքով: Թեև տների լուսամուտներից լույս չէր երևում և հիմա գրանք փակ էին ցրտի պատճառով, բայց նրանցից գալիս էին ռադիոների ձայներ, խոսուցներ, իսկ փողոցներում երթևեկը անվերջ էր. անցնում էին մարդիկ, կանայք, բանակայիներ, միլիցիոներներ. յուրաքանչյուրն շտապում էր իր տուն, իր գործին. անցնում էին ավտոներ՝ զգուշացնող սուլոցներով և աղոտ կապույտ մի լույս խաղացնելով. անցնում էին տրամվայները՝ նույնպես քողարկված ու կապույտ լույսով, և մութի մեջ զրնգում ամեն ուղղու-



Թյամբ. և նրանց զրնգոցը հնչում էր խրոփատ. թվում էր հեզ-  
նում է ամեն երկչուղ ու թշնամի...

Ահա մի այդպիսի անլույս ևրեկո, ավելի ճիշտը՝ դիշեր-  
վա 12-ն անց, այն պահին, երբ Երևանի փողոցներում նվա-  
զում է անցուդարձը կամ կարվում խաղառ, N գործարանի  
(մենք անունը չենք տալիս ոչ թե ուղղման նկատառումով,  
այլ պարզապես բնթերցողի և գործարանի մարդկանց հե-  
տապնդումից ազատ լինելու համար) դիրեկտորի տեղակալ  
Արեսյանը, բառասունն անց մի տղամարդ, ուրախ վերադառ-  
նում էր տուն:

Չնայած մարտի օդը բավական սառն էր, նույնիսկ այն  
աստիճան, որ անդորդները (եթև էրբեմն հասցիսլում էին այդ  
ժամին) շատապում էին՝ վերարկունների օձիքները բարձրաց-  
րած, ձեռները դրպաններում... Այնքինչ Արեսյանը քայլում  
էր, ասես ցրտին անտարբեր, ինչ-որ անհոգ մի երգ թե եղա-  
նակ մոմուալով, կյանքից գոհ կամ հանկարծ հաջողութուն  
գտած մարդու նման... և ընդհանրապես պիտի ասել՝ Արես-  
յանը գոհ էր թե՛ իր կյանքից և թե՛ աշխատանքից, իսկ այդ  
երեկո նրա տրամադրութունը բարձր էր, քան երբևէ. և դա,  
իհարկե, ուներ իր պատճառը՝ նրանց գործարանը շնորհա-  
կալության գիր էր ստացել կառավարութունից. այդ առթիվ  
այսօր շատերն անձամբ և հեռախոսով շնորհավորել էին դի-  
րեկտորին և թե իրեն, և նա ուրախ էր... Ասենք, նրա ուրա-  
խությունն ուներ և մի այլ պատճառ, բայց դա առաջժամ նրա  
դադանիքն էր...

Այսպես, գնում էր Արեսյանը տուն և գոհունակությամբ  
մտածում, որ տնեցիները — առանձնապես կիներ և ծերունի  
հայրը — նույնպես կուրախանան, եթե լսեն այդ շնորհակա-  
լության մասին... Իս, իհարկե, հասարակ բան չէր. վաղը  
երևի թերթերում կգրեն այդ մասին, և ամենքը կիմանան,  
թե ո՛րքան լավ են աշխատել իրենք... Գործարանի մասին  
գրելով, անշուշտ, կհիշեն և իր անունը...

Մտածելով տնեցիների մասին՝ նա պատկերացնում էր  
միաժամանակ, որ հիմա նրանք բոլորը՝ ծերունի հայրը,  
տղան, աղջիկը և կինն արդեն քնած կլինեն, և օեղանի վրա

ինչպես միշտ, դրված կլինի իր բաժին ընթրիքը՝ ճերմակ անձեռոցիկով ծածկած: Նա թեև ուտելու ցանկություն չուներ (որովհետև արդեն ընթրել էր մի տեղ, որի մասին չէր ուզի իմանան մարդիկ, մանավանդ իրայինները), բայց և այնպես, ըստ սովորության, պատկերացնում էր տան ընթրիքը, որն ասես անխախտ մի տուրք էր կնոջ կողմից և հարգանքի պես մի բան:

«Բայց այսօր շատ ուշ եմ վերադառնում», — ասաց Արեսյանն ինքն իր մեջ մտածելով, թե կինը կարող է դժոխհել, որ, ուշ գալով, անհանդատացնում է քնածներին. չէ՞ որ բոլորն էլ վաղ վարթնում՝ աշխատանքի ևն գնում. երեխաներն ու կինը դպրոց, հայրը՝ դործարան:

Այս մտքերով նա հասավ տուն և, սանդղաճաղը բռնած, բարձրացավ երկրորդ հարկը, ապա մութի մեջ սովոր ձեռքով զուշռությամբ բացեց անգլիական կողպեքը, ոտնամատերի վրա մտավ միջանցքը, կամաց հանեց վերարկուն և ապա, ավելի զգուշ քայլերով, որ քնածները չզգան անգամ իր գալը, մտավ սեղանատուն և... զարմացած կանգ առավ. կինն արթուն, մենակ, շալն ուտերին, նստած էր սեղանի մոտ անսովոր մի ղիրքով՝ երեսը ոչ թե դեպի սեղանը, այլ դեպի պատը, թիկունքը դռանն արած: Նա տխուր էր երևում, իսկ տունը թափթփված էր մի տեսակ և... սեղանի վրա ընթրիք չկար:

Այս ամենը շատ օտարոտի թվաց Արեսյանին, բայց և այնպես, սովորական ձևով «բարի երեկո» ասաց կնոջը՝ դարձյալ զգուշ մի ձայնով, որ կից սենյակում ընած երեխաներն ու հայրը չարթնանան: Սակայն կինը ոչ միայն չպատասխանեց նրան, այլև երեսն անգամ շրջեց, որ տեսնի, թե ո՛վ ներս մտավ:

Այդ ավելի շփոթեց Արեսյանին. ի՞նչ էր նշանակում դա, կինը վի՛շտ ուներ, նեղացա՞ծ էր, թե պատահել էր մի բան — անհասկանալի էր. երևում էր միայն, որ նա մոռալ էր և արտասովոր ձևով շուրթերն իրար սեղմած. բոունքը ծնոտին հենած՝ աչքերը հառել էր մի կեսի ու մնացել անշարժ: Կուրջ էր ոչ միայն նրա կեցվածքը, դեմքը, լուրջ էին թվում և նրա կանոնավոր սանրած թուխ մազերը և ուտերի

սե շալը, լուրջ էր թվում և ամբողջ սեղանատունն իր կահե-  
րով ու զարդերով... Այնուամենայնիվ Արեսյանը հետա-  
քրքրութեամբ մտնեցավ կնոջը և, ձեռք նրա ուսին դնելով,  
հարցրեց հոգատար.

— Մարիկա՞, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես քնել:

Կինն ուար թափ տվեց՝ նրա ձեռքը հեռացնելու, և դար-  
ձյալ շպատասխանեց:

Դա ավելի քան տարօրինակ էր: Արեսյանը վարի շուր-  
թը դրավ ատամների տակ և կողքանց նայեց կնոջը. հաս-  
կացավ արդեն, որ կինը դժգոհ էր իրենից, բայց ինչո՞ւ,  
ի՞նչն էր դրա պատճառը:

— Ի՞նչ է պատահել իսկապես, — հարցրեց Արեսյանը  
այս անգամ կանգնելով կնոջ դիմաց: — Դու մի տեսակ ես:

— Մի տեսա՞կ, — ճիգով, գրեթե քմծիծաղ խոսեց կի-  
նը վերջապես: — Ի՞նչպես կուզեիր որ լինեի:

— Այնպես, ինչպես միշտ: Զվա՛րթ, ուրա՛խ, — ուզեց  
կատակել Արեսյանը, բայց կինն անմիջապես կտրեց նրա  
թափը, ասես սառը շուր լցրեց նրա գլխին, իր պատասխանի  
բառերը հատ-հատ արտասանելով.

— Այո, կարելի է ուրախ լինել՝ մանավանդ քո վար-  
ժունքից հետո:

— Ի՞նչ վարժունք, — ավելի լրջացավ Արեսյանը:

Կինը շպատասխանեց և շուրթերը միայն նորից սեղ-  
մեց իրար:

— Ես չհասկացա, ի՞նչ վարժունքի մասին է քո խոս-  
քը, — հարցրեց Արեսյանը կրկին, առժամ լռությունից հետո:

— Զքմեղ ձևանալու կարիք չկա, — շեշտեց կինն ակամա,  
գրեթե ատամների արանքից, ու գլուխը նորից թեքեց մի կողմ,  
կարծես Արեսյանի երեսը շտեմնելու համար:

Արեսյանն ուները վեր քաշեց:

— Բան չեմ հասկանում, Մարիկա: Կավ կլինեիր պարզ  
խոսելու:

— Պա՞րզ, — երկարեց կինը և, պատասխանելու փո-  
խարեն, խեթ նայեց ամուսնուն: — Ո՞ւր էիր, հետաքրքրա-  
կան է, այսքան ուշ:

— Ո՛ւր: Մի՞թե չգիտես ուր կարող էի լինել: Իհարկե՞  
ծողովում:

— Ժողովո՞ւմ:

— Այո:

— Ո՛ւր,— կտրեց կինը ու ոտի կանգնեց այնպիսի թա-  
փով, որ շալն ընկավ նրա ուտերից:— Այ: Միրուհուդ մտա էիր:

Արեսյանին թվաց աչքերի առաջ մի բան պայթեց:

Նա գուշնը նետեց և աղամա ետ նայեց. այնտեղ՝ կից  
սենյակում քնած էին երեխաները, հայրը:

— Նախ՝ ինչո՞ւ ես գոռում,— ասաց նա սթափվելով,  
— չէ՞ որ քնածներ կան այնտեղ:

Կինը շէր գոռում, բայց Արեսյանին թվում էր, թե նա  
գոռում է և այդ գոռոցը կարող են լսել ոչ միայն իրային-  
ները, այլև հարևանները:

— Գոռա՛լ,— կրկնեց կինը:— Նախ՝ ես չեմ գոռում, բայց  
եթե կուզես՝ այդ մասին գոռալը քիչ է: Պետք է անել ավել-  
լին... Եվ վերջ: Միրուհու մտա զնալը համարել ծողով... չէի  
կարող երևակայել ավելի մեծ խաբեություն:

— Ի՞նչ սիրուհի, չեմ հասկանում,— խոսեց Արեսյա-  
նը:— Դու այդ ասում ես համոզվա՞ծ, Մարիկա:

— Համոզվա՞ծ... հերքի՛ր, որ այդպես չէ:

Արեսյանը շուրթերը ծամածռեց:

— Դու անպատճառ բամբասանք ես լսել:

— Փա՛ստ և ոչ բամբասանք: Գոնե ամաչելիր, որ նրա  
ամուսինը բանակ է գնացել...

— Դու ո՞ւմ մասին ես խոսում, չեմ հասկանում:

— Անմեղություն կեղծելն ավելորդ է: Դու մինչև իսկ  
նրա համար բնակարան ես վարձել:

— Ախ, դու խոսում ես մեր պլանբաժնի աշխատակցու-  
հու մասին: Բայց ի՞նչ կա այստեղ. ես նրան, ա՛յո, որպես  
հիմնարկի աշխատողի, օգնել եմ բնակարան վարձելու, ուրիշ  
ոչինչ...

— Ուրիշ ոչի՞նչ... Ամաչիր և գոնե մի խոսիր, երբ ամեն  
ինչ հայտնի է ինձ:

Արեսչանի դեմքն ասես սառած, և նա շուրթերը նորից սեղմեց իրար:

— Ի՞նչ է հայտնի, — դարձյալ հարցրեց նա:

— Ի՞նչ է հայտնի... Նորի՞ց կրկնեմ. քո կապը ձեր աշխատակցուհու հետ: Ահա՛: Հիմա հասկանալի՞ է... Չէի կարող երևակայել, որ այն ժամանակ, երբ մարդիկ, ամբողջ ժողովուրդը կլանված է պատերազմի հոգսերով, երկիրը թշնամուց փրկելու հոգսով, դու զբաղված ես միայն սիրուհուդ հոգսերով: Ամո՛թ և խայտառակություն, — շեշտեց կինը ցաված ձայնով. բառերն ասես դալիս էին սրտից՝ կուրծքը վիրավորելով:

Արեսչանին նորից թվաց, թե կինը դարձյալ գոռում է:

— Ասի՛ կամաց: Երեխաները քնած են, — ասաց նա շփոթ բարկությամբ: — Ի՞նչ է, դու կարծում ես՝ ես պարտա՞յ եմ, ոչինչ չե՛մ անում պատերազմի համար: Սխալվում ես: Հենց այսօր մեր գործարանը պարգևատրվել է: Կարծեմ՝ ծուլերին չեն պարգևատրում, և այդ աշխատանքը մենք արել ենք բանակի համար...

— Իզո՛ւր խոսքը կտուրը մի գցի, — ընդհատեց կինը: — Եթե գործարանն արել է՝ այդ չի նշանակում դու ես արել և... անմեղ ես:

— Ես ղեկավարներից մեկն եմ:

— Գործին նվիրված մարդը սիրաբանությամբ չէր ըզբաղվի:

— Դարձյա՛լ, — նորից բարկացած գլուխն օրորեց Արեսչանը: — Ուրեմն դու կասկածի տա՞կ ես առնում մեր աշխատանքը: Բայց գաղափար ունե՛ս նրա մասին, իմ աշխատանքի մասին...

— Կարիք չկա ունենալու, — նորից կրկնեց կինը: — Հենց այդ փաստը բավական է, թե ինչպես ես աշխատում, երբ ժամերդ անցնում են սիրուհուդ տանը...

Կշտամբանքով, ծաղրով ասված «սիրուհի» բառը ծակում, ավելի շուտ՝ հարվածում էր Արեսչանին, և նա թե՛ անհարմար էր զգում, թե՛ վիրավորվում էր և թե՛ զայրանում, գլուխն օրորում, շիմանալով ինչ անել:

— Նախ՝ ապացուցիր, որ չեմ՝ աշխատում,— բարկացավ նա, ձեռք սեղանին խփելով:— Դա արդեն քաղաքական մեղադրանք է այս պատասխանատու օրերին, և երկրորդ՝ ապացուցիր, որ կապված եմ նրա հետ:

— Ապացուցե՛լ... դժվար բան չէ. կարող եմ,— այս անգամ զուսպ ու հանգիստ պատասխանեց կինը:— Բայց ավելի լավ է դու ապացուցիր, որ կապված չես, ապացուցիր, որ նրա համար սենյակ չես վարձել և երեկոները նրա մոտ չես լինում:

Արեսյանը գլուխն օրորեց վիրավորված.

— Ուրեմն, եթե մեր աշխատակիցը հրավիրի՝ շփտի գնալ նրա տուն, որ դու չկասկածես, թե նրա հետ կապ ունեմ,— զարմացած դեմք շինեց Արեսյանը:— Երբ մի քանի անգամ հրաժարվում ես՝ մի անգամ էլ պետք է դիջես, վերջապես, և դնաս: Ի՞նչ կա այստեղ դատապարտելի: Չէ՞ որ նրանք էլ մարդ են: Ինչո՞ւ նվաստացնել, արհամարհել...

Կինը շեշտ նայեց ամուսնուն:

— Դու մի օր չես գնացել, այլ ամբողջ մի շաբաթ, ամեն երեկո: Այլ է աշխատակիցը, այլ է սիրունին...

Դարձյալ սիրունի...

Արեսյանի դեմքը գուլն տվեց, գուլն տռավ:

— Կամայ, ասում եմ. մարդիկ կան քնած,— ձեռք մեկնեց նա դեպի կից սենյակը:— Երեխաները կլսեն, հայրիկը կլսի...

— Եթե երեխաներիցդ ամաչում ես՝ շանելի անդ: Հիմա երբ արել ես՝ բոլորին արհամարհելով, թող բոլորն իմանան, թող ամբողջ Երևանը, ամբողջ աշխարհն իմանա, որ դու պատերազմի այս ծանր օրերին, ընկել ես քո հաճույքների ետևից: Ամո՛թ և խայտառակութ՜յուն...

Արեսյանն ուզում էր պատասխանել կնոջը, բայց այդ միջոցին հանկարծ բացվեց կից սենյակի դուռը և այնտեղից դուրս եկավ Արեսյանի հայրը՝ գիշերազգեստի վրա սև վերարկու հագած. նիհար, ոսկրոտ, փոքր-ինչ կորացած մի ծերունի՝ ծնոտի վրա կարճ, սպիտակ մորուս, գլուխը կիսով չափ ճաղատ, ձեռները մեծ ու կոշտ, որոնք վկայում էին նրա ֆիզիկական աշխատավոր լինելը: Չնայած վաթսուն-

հինգ տարուն, նա շատ կենդանի և հետաքրքիր աչքեր ուներ, և շնայած նիհարության ու երեսի թորշոմներին, բակրոտ կազմը, սակայն, ցույց էր տալիս, որ մի ժամանակ եղել է ուժեղ տղամարդ:

Տնային փափուկ հողաթափներով երկու քայլ առաջ գալով՝ նա կանգ առավ և իր ժիր աչքերի տխրամած հայացքով նայեց որդուն ու հարսին. նա ոչ միայն զարմացած էր, այլև շփոթված, վշտացած, գուցե և զայրացած, բայց զբայում էր իրեն:

— Ի՞նչ է պատահել — խոսեց նա վերջապես, փոխնիփոխ հարսին ու որդուն նայելով: — Էդ ինչե՞ր եք ասում, էն էլ էդպես բարձր... սարո՞ւմն եք գտնվում, թե հանդում...

Սերունին խոսում էր ձայնը սեղմած, հապաղումներով, դարձյալ զարմանքով և դարձյալ որդուն ու հարսին նայելով, չգիտես երկուսին էլ զգացնել տալո՞ւ անպատեհությունը, թե նրանցից մեկից կամ մյուսից պատասխան, բացատրություն պահանջելով:

Եվ առաջինը խոսեց որդին, կարծես հոր առջև արդարանալու նպատակով.

— Զգիտեմ, հայրիկ, սա է սկսել: Ինչ-որ կասկածների մեջ է, ինչ-որ բամբասանք է լսել և ահա...

— Բամբասա՞նք, — վիրավորվեց կինը: — Ես կոնդի կնիկ չեմ, որ բամբասանքներով զբաղվեմ: Փաստ չէ՞, որ նրա համար սենյակ ես վարձել:

Այստեղ Արեսյանը տնքաց և անհրաժեշտ համարեց հորը բացատրել, թե ինքը օգնել է իրենց աշխատակցուհուն սենյակ վարձելու, և ահա կինը կասկածում է ինչ-որ կասկերի մասին...

Սերունին ծանր, տարակույսների ու վշտի մեջ էր: Նրա փոքրիկ, ճերմակ միրուքը դողում էր կզակին. թվում էր՝ ցանկանում է ինչ-որ բան ասել, բայց դարձյալ զսպում էր իրեն... Իսկապես չգիտեր ինչ անել և ինչ ասել: Հարսի և որդու խոսակցությունը լսել էր հենց սկզբից, բայց շուտեց դուրս գալ, միջամտել, կարծելով թյուրիմացություն է, հասարակ մի կասկած, որ կպարզեն իսկույն, բայց երբ լուրջ մեղադ-

բանք լսեց, թե որդին սիրուհի ունի՝ մեկն ասեա բոունցքով  
խփեց նրա սրտին, և նա էլ շհամբերեց ու, վերարկուն հագ-  
նելով, ներս մտավ, ինքն էլ շիմանալով, թե ինչ կարող է  
անել:

— Ի՞նչ բան է սա, շեմ հասկանում,— կրկնեց նա շվա-  
րած, գրեթե մեքենայորեն:

Հաշար, որ շատ էր հարդում կնարարին, շուղեց անայա-  
տասխան թողնել նրան և, կարմրելով, մատնացույց արավ  
մարդուն:

— Թող ինքն ասի, հայրիկ... իրեն հարցրու:

Օերունին նայեց որդուն:

Արեսյանը երեսը շրջեց դեպի պատը և ձեռքի մատները  
խաղացրեց նշարդային:

— Ես ասելու բան շունեմ...

Այդ ժամանակ ծերունին դարձավ հարսին:

— Ես իմ ականջներին շեմ հավատում, Մարիկա: Դա ան-  
հավատալի է ինձ համար: Մեր ցեղի մեջ ես այդպիսի բան  
շեմ տեսել... Անհավատալի է:

— Հավատացի՛ր, հայրիկ, հավատացի՛ր — հառաչեց հար-  
սը խորունկ մի թառանչով:— Դու գիտես, որ քեզ հարդում  
եմ և շեմ կարող սուտ խոսել քո առաջ: Մինչև այսօր տեսե՛լ  
ես, որ այս ձևով խոսեմ մեր տանը, քո ներկացույթյամբ: Բայց  
այս անգամ ստիպված եմ, որքան էլ այդ ծանր է: Ներիր,  
հայրիկ, որ վշտացնում եմ քեզ...

Հարսին լսելով՝ ծերունու գլուխը դողում էր, իսկ երբ նա  
վերջացրեց, նստեց առաջին պատահած աթոռին և գլուխն  
առավ ափերի մեջ:

Մի երկվայրկյան այդպես մնալով՝ նա գլուխը բարձրաց-  
րեց նորից:

— Ականջներիս շեմ հավատում... գուցե միայն կասկա՞ծ  
է, Մարիկա:

— Իհարկե, կասկած է,— աշխուժացավ Արեսյանը:— Հի-  
մարի մեկը մի բան է ասել և սա էլ հավատացել է:

Եվ նա նորից կրկնեց, թե օգնել է իրենց աշխատակցու-  
հուն բնակարան վարձելու, ամուսնու բանակ գնալուց հետո,  
մի բան, որ իրենց պարտքն է:



— Պա՛րտք, — դառք խնդաց կիներ: — Նա բնակարանի կարիք շուներ. այդ կարիքն ունեիր ինքդ, որ հեռու լինես քեզ տեսնող, ճանաչող աչքերից... Երբ ինձ ասում էին՝ ամուսինդ ուղեկցում է իրենց այսինչին, ես ասում էի. — յուրաքանչյուր տղամարդ պարտավոր է, իհարկե, մութին, ուշ ժամին ուղեկցել մենակ կնոջ... Բայց ավելորդ է պարզ բանի մասին խոսել... Ինձ ներիր, հայրիկ, — դարձավ նա կեսրարին, — ներիր, որ այսպիսի նշուժի մասին խոսում եմ քեզ մոտ... Երբեք չէի ցանկանա վշտացնել քեզ...

— Ես պետք է ներողութուն խնդրեմ, Մարիկա, որ սա քեզ էդ տեսակ վիշտ է պատճառել... — Ծերունին շփոթվեց, մի վայրկյան նայեց հատակին ու շարունակեց: — Իբրև հեր, իբրև հին մարդ՝ ես ինձ խայտառակված կղզամ, նթե դա ճիշտ լինի: — Նա դարձյալ լռեց, վերարկուի փեշերով ծածկեց բացվող ծնկները և նորից դարձավ որդուն. — Խոսիր, Բագրատ. խոստովանիր կամ հերքիր, որ հանգստանամ:

— Ո՛չ խոստովանելու, ո՛չ էլ հերքելու բան կա, հայրիկ, — ասաց Արեսյանը ուսերը վեր քաշելով: — Կանայք միշտ կասկածամիտ են, իսկ երբ բամբասանք են լսում կամ...

— Ինչո՞ւ մինչև հիմա չէի կասկածում, — ընդհատեց նրան կիներ:

— Երևի առիթ չկար:

— Ոչ թե առիթ, այլ հիմք: Ես ոչ թե խանդում եմ կամ, ինչպես դու ես ասում, կասկածում, այլ հիմքեր ունեմ: Ամենն այնքան պարզ է, որ խոսել անգամ չարժի: Ինձ վշտացնում է այն, որ զբաղվում ես խաբեությամբ: Ինձ չէիր հարգում, երեխաներիդ հարգեիր, որ արդեն շափահաս են գրեթե. ծեր հորդ հարգեիր, որ, տեսնելով աշխատող ձեռքերի պակասը, վերադարձավ գործարան:

— Մարիկա, աղջիկս, կամաց, — վեր կացավ ծերունին ընկճված ու աղերսաձայն: — Երեխաները կիմանան:

— Թող իմանան, հայրիկ, միևնույն է՝ վաղ-ուշ պիտի իմանան, ավելի լավ է իմանան հիմա. թող իմանան, որ... ես ցավում եմ, որ...

Եվ Մարիկան էլ շարողացավ շարունակել, նրա սիրտն

այնքան էր լեցված, որ հուզումը, վրդովմունքը կարծես մի  
ելք էին փնտրում: ու դուրս հոսեցին արցունքների փոխված:

Նրանք խոսում էին երեխաների մասին և շղիտեին, որ  
այդ միջոցին կողքի սենյակում քույր ու եղբայր, խոսակ-  
ցության աղմուկից արգեն զարթնած, ականջ էին դնում  
ծնողների բացատրությանը, որը նրանց համար անսովոր  
էր, մանավանդ անսովոր իր բովանդակությամբ... Եվ ահա,  
այն պահին, երբ Մարիկան հուզումից շկարողացավ շարու-  
նակել ու հեկեկաց, կից սենյակի դուռը նորից բացվեց և  
այնտեղից թափով դուրս եկավ նախ մի պատանի՝ հաղիվ  
17—18 տարեկան, թուխ աչքերի դարմացած ու տխուր հա-  
յացքով, կիսազանգուր մազերը ճակատին իջած, վիզը եր-  
կար, բայց բարեձև դեմքով, ապա մի 14—15 տարեկան աղ-  
ջիկ՝ նույնպես զարմացած, վախեցած ու ամոթխած աչքերով:  
Այն ժամանակ, երբ տղան առաջ եկավ մի երկու քայլ, աղ-  
ջիկը մնաց դռան մեջ, գետին հասնող հաստ վարագույրի  
մոտ, որը գրեթե գրկել ու կիսով չափ ծածկում էր նրա մերկ  
ոտները և անփուլթ հաղնված զգեստները: Նրա խարտչաշ  
մազերը, որ անկարգ խոպոպներով իջնում էին մինչև ուսե-  
րը, թափվել էին այտերին, և նա ամաչում էր նայել ծնողնե-  
րին, պապին. երբ մեկը փորձում էր դառնալ նրա կողմը,  
նա աչքերը խոնարհում էր, կարծելով, թե հիմա իրեն առա-  
ջարկեն պիտի հեռանալ, ու աշխատում էր մնալ աննկատ  
և ավելի ծածկվել վարագույրով: Եղբայրը, սակայն, որ վի-  
րավորված ու վշտացած տեսք ուներ, կանգնել էր անշարժ և  
անխոս-տխուր նայում էր միայն մոտը, շհամարձակվելով աչ-  
քը գցել հոր երեսը, շղիտես ամաչելուց թե նկատողությունից  
վախենալով: Երևում էր, որ նրան ու քրոջը անհանդատացրել  
և իրենց ննջարանից դուրս էր բերել մոր լացը, որ նույնպես  
անսովոր էր նրանց համար: Այդ էր պատճառը, որ երկուսն  
էլ վշտացած ուշադրությամբ նայում էին մոր կողմը:

Երեխաների հետ զարթնել և սեղանատուն էր եկել վանա  
ճերմակ կատուն, որը հիմա, մեջքն ուռցնելով ու ձգվելով,  
լսում էր խոսողներին՝ քնատ աչքերը կկոցելով ու կարծես  
դժգոհ:

— Ահա աղմուկիդ հետևանքը, — ասաց Արեսյանը, — ձեռք դեպի երեխաները մեկնելով: — Այնպես արիք, որ արթնանան և ամեն ինչ իմանան:

— Թող իմանան, որ դու ազնիվ չես, այո. թող իմանան, — ասաց կինը փոքր-ինչ սթափվելով:

Արեսյանը նայեց երեխաներին, նայեց կնոջն ու մեկնեց տաքացավ.

— Եթե այդպես շարունակես՝ ես կհեռանամ:

— Ի՛նչ, ուրեմն սպառնում ես, որ քո հանցանքի մասին շխտեմ, — գլուխը բարձրացրեց կինը: — Կարող ես հեռանալ: Դու հոգով ու մտքով արդեն մեր տանը չես: Գնա՛... երբ քեզ համար չկա ընտանեկան սրբութուն:

— Եվ կերթամ, — գլուխը թափ տվեց Արեսյանը ու քայլեց դեպի դուռը, բայց իսկույն էլ ետ նայեց, կարծես տեսնելու, թե մեկը չի գալիս արդյոք իրեն ետ պահելու. նկատելով, սակայն, շարժվող չկա, նա գնաց ավելի թափով, համոզված, որ հայրը կամ երեխաները կվազեն իր ետևից:

Նա միջանցքումն էլ, վերարկուն հագնելով, մտածում էր, որ կգան հիմա, չեն թողնի հեռանա:

Բայց ոչ ոք, ո՛չ հայրը, ո՛չ զավակները չգնացին նրա ետևից. ոչ մեկը փորձ չարավ նրան կանչելու, պահելու. ամենքը, ընդհակառակը, փակվող դռան շրխկոցից հետո, հավաքվեցին Մարիկայի շուրջը՝ նրան հանգստացնելու, մխիթարելու. աղջիկը, մոր ուսը գրկելով, գլուխը մտեցրեց նրա գլխին, իսկ տղան, մոր կողքին կանգնած, ասում էր միայն.

— Հանգի՛ստ, մամա, հանգի՛ստ...

Տղայի կոկորդը սեղմվում էր, և նա իրեն զսպում էր, որ լաց չլինի: Այնինչ ծեր փականագործը, որդու հեռանալուց շփոթված, միառժամ շիմանալով ինչ անել, ինքն էլ նստեց հարսի կողքին և նրա բարակ ու թույլ ձեռքն առավ իր կոշտ ասիերի մեջ:

— Մարիկա, աղջիկս, մի վշտանա, — խոսեց նա այնպես մեղմ ու սիրալիր, որ խոսքերն ասես ցավեցնում էին սիրտը: — Ես... չգիտեմ ինչ ասեմ... Եթե քեզ...

Նա չկարողացավ շարունակել. ուզում էր ասել «եթե քեզ

դավաճանել է, ինձ վիրավորել է մահու շափ», բայց թուների ներկայութունը դսպեց նրան:

— Հանգստացիր... Ես ամեն ինչ կպարզեմ...

Ու հարսի ձեռք, ինչպես հիվանդ երեխայի ձեռք, իր կոշտ ատիերի մեջ բռնած, ջանում էր սփռվել նրան այնպիսի խոսքերով ու ձայնով, թվում էր իրեն հանցավոր է զգում որդու փոխարեն:

Միտոժամ հարսին այսպես միտիթարելուց հետո՝ նա թուներին առաջարկեց դնալ քնելու:

— Գնացեք, մատաղ, կմքեք... Գնացե՛ք:

Քույր ու եղբայր, անխոս հնազանդությամբ անցան իրենց սենյակը, ուր նրանց հետ գիշերում էր և պապը:

Թուների գնալուց հետո ծերունին հարսին ևս խորհուրդ տվեց՝ հանգստանալ, շատ շպետք է մտածել, գուցե թյուրիմացութուն է, գուցե թշնամու խոսք է...

Ասում, խոսում էր ծերունին, և ոչ միայն հանցավոր էր զգում իրեն որդու փոխարեն, այլև խորտակված, մանավանդ որ որդին թողեց-հեռացավ: Ո՛ւր դնաց այս ցրտին, ինչո՞ւ գնաց. մի՞ թե իսկապես հանցավոր էր, թե նեղացավ,— մտածում էր նա որդու մասին և սպասում, թե հիմա ուր ուր է կրվերադառնալ:

— Դե, Մարիկա. դե, աղջիկս,— նորից դիմեց նա հարսին, որ գնա հանգստանալ:

Եվ երբ, վերջապես, հարսը հառաչանքով ելավ իր ննջարանը գնալու, ծերունին էլ քաշվեց իր սենյակը՝ մի խոր «ախ-ախ»-ով:

Ու երկար ժամանակ տանը ոչ ոք չէր կարողանում քնել: Մարիկան, մեծակ մնալով, իսկույն սթափվեց, և հիմա մտածում էր, թե արդյոք լա՞վ արավ, որ այդ ամենի մասին խոսեց բարձրաձայն, այնպես, որ երեխաներն իսկ իմացան... Նա գտնում էր, որ ինքն իրավացի էր, սակայն այդ ձևով խոսելը որքա՞ն հարմար էր... Կեսրարը թող իմանար, բայց երեխաները գոնե շիմանային...

Մարիկան մտածում էր, թե երեխաները կարող են նեղանալ իրենից, թե ինչո՞ւ այնպիսի խոսքեր ասաց, որ հայրը

վշտացալ ու դուրս գնաց... Գուցե հարկավոր չէր այդպէս  
խոսել...

Որքան էլ վիրավորված ու վշտացած՝ Մարիկան անհաճա  
գրատանում էր միաժամանակ, թե արդյոք ո՛ր գնաց ամու  
սինը այս ուշ գիշերին, այս ցրտին... Եվ ո՛ր կարող է գնալ,  
ո՛ւմ տանը կարող է գիշերել... Գնա հանկարծ մրսի, հիվան  
դանա՛... Ի՞նչ կասեն երեխաները իրեն... Չէ՞ որ նրանք կապ  
ված են հոր հետ... Ի՞նչ կասի կեսրարը...

Իսկ նրա կեսրարը՝ ծեր փականազործը մտածում էր, թե  
արդյոք հարսը չի՞ սխալվում իր կտրուկ մեղադրանքի մեջ...  
Մյուս կողմից տարակուսում էր, որ նա անտեղի բան չէր  
անի. նա դուստ է, հավասարակշռված... Ուրե՞մն... Եվ ծերու  
նին կարծում էր, որ պետք է դեռ պարզել այդ... Սակայն  
նրան մտահոգում էր ավելի որդու հեռանալը. ո՛ր գնաց այս  
ուշ ժամին, այս ցրտին, և ո՛րտեղ պիտի գիշերի. ի՞նչ մտա  
ծեց, որ գնաց և արդյոք ընդմի՞շտ, թե դուրս եկա՞վ միայն  
կնոջը լուցնելու համար և ուր որ է կվերադառնա... Աւ խոր  
հում էր՝ ականջը դռան ձայնին...

Նրա հետ արթուն էին և թոռները, բայց նրանցից և ոչ  
մեկը ձայն, շունչ չէր հանում: Փոքրիկ Յողիկն ահաբեկված  
էր. նա չէր կարողանում հասու լինել, թե ինչ կատարվեց և  
ինչո՞վ կվերջանա այդ ամենը, բայց զգում էր, որ մեծ դժբախ  
տություն եղա՞վ, որ հայրն արդեն գնաց և էլ չի վերադառնա,  
երևի... Բայց մի՞թե իսկապէս չի վերադառնա, մտածում էր  
նա տաղնապով:

Սակայն կատարվածից ու լսածից ամենից ավելի ցնցված  
էր Արեսյանի որդին՝ Ռաֆիկը կամ, ինչպէս երբեմն դպրոցի  
ընկերներն ու տնեցիք էին ասում՝ Ռաֆոն. նա իր հորը հա  
մարում էր հոգատար և օրինակելի հայր, բայց հանկարծ...  
Սիրուհի՛... Ռաֆիկի երեսը տաքանում էր այս խոսքը հի  
շելիս, մանավանդ երբ մտածում էր, որ վաղը-մյուս օրը ա  
մենքը՝ հարեաններ, բարեկամներ, իր ընկերները կիմանան  
այդ... Ու անթիվ մտքեր էին անցնում Ռաֆիկի գլխով՝ մեկը  
մյուսից ծանր ու տխուր, բայց նա առանձնապէս տխրում էր,  
երբ հիշում էր մոր՝ հորն ուղղած խոսքերը. «Ամենքը կա՛մ

կովում են թշնամու դեմ, կա՛մ աշխատում են օգնել ճակատ գնացողներին, իսկ դու գբաղվում ես սիրուհի պահելով»:

Ռաֆոն միշտ հպարտանում էր, թե հայրը աշխատում է, որ իրենց գործարանը շատ մթերք հասցնի ռազմաճակատ, աշխատում է, որ մենք հաղթենք... բայց հանկարծ այդպիսի բան...

Հիշելով մոր խոսքերը՝ Ռաֆիկը հիշում էր և ընկերներին, որոնց շատերի հայրերը, եղբայրները կամ քույրները գնացել էին բանակ և նրանց մեծ մասը հիմա կովում էր թրշնամու դեմ: Հիշում էր Ռաֆիկը մանավանդ իր մոտիկ ընկեր Սուրիկ Սարունցին, իրենց դպրոցի կամերիտ-քարաուղարին, որի հայրը պատերազմի սկզբից կանչվել էր բանակ և այժմ կովում էր Կիևի մոտ... Իսկ իր հա՛յրը...

Մտածելով հոր մասին, Ռաֆիկն ինչ-որ ծանրություն էր զգում, և դրանից աղասովելու համար կարծես շրջվում էր անկողնում, շիմանալով ինչ պիտի անի վաղը-մյուս օրը այդ ամոթից...

Նա մտածում էր երկար և մտքերի մեջ լսում, թե ինչպես տանը, բոլոր սենյակներում այնպիսի ծանր լռություն է, թրվում էր՝ դիշերը հոսում է: Եվ լռությունը նրան կթվար շատ ավելի ծանր, եթե շիներ լուսինը, մարտի կիսալուսինը, որը նոր բարձրացած, պատուհանից նայում էր ներս և վարագույրի ծանյակներ էր փռում հատակին:

Եղավ մի րոպե՝ Ռաֆիկն ուղեց ամեն ինչ մոռանալ ու քնել, բայց չկարողացավ. նորից պաշարեցին նրան նոր մըտքեր, թե ինչպես պետք է ապրեն այսուհետև, ով պետք է հորա տան ծախքերը... Եվ շղիտես ինչո՞ւ, նրա մտքում այդ վայրկյանին դառնում էր միայն քրոջ՝ Յոդիկի ջութակի ուսման վարձը, որ ամեն ամիս հայրը ծրարի մեջ ուղարկում էր նրա մասնավոր ուսուցչին... Իրա հետ միասին մտածում էր, որ այս ամենից հետո, հոր այս վարմունքից հետո, ի՞նչպես պիտի նայի ընկերներին... Մտածում էր ու... քիչ էր մնում արտասվի... Մտածում էր և շարունակ շրջվում անկողնում...

Այն ժամին, երբ Ռաֆիկը ծանր մտածումներից շէր կարողանում քննի ու անվերջ շրջվում էր անկողնում, այդ նույն պահին Արեսյանը շրջում էր փողոցից փողոց և շփտեր ի՞նչ անի, ո՞ւր գնա:

Երբ նա հուզված դուրս եկավ փողոց՝ ուշացած լուսինը հորիզոնից նոր քարձրացել, լուսալորում էր քաղաքը մի ցուրտ լույսով, և այդ լույսի տակ փայլում էին թե՛ տանիքների ձյունը, թե՛ տների լուսնահայաց ապակիները և թե՛ արդեն ամայացած փողոցների տրամվայի ուղիները՝ սառն ու պողպատյա ցուլքերով: Այս ամենից Արեսյանը մի տհաճ զգացում ունեցավ. նա կուղեր ո՛չ լույս լինել փողոցում և ո՛չ լուսին. կուղեր քողարկված քաղաքը լինել առաջվա պես մութի մեջ, որ ոչ ոք չտեսներ իրեն, որովհետև, տնից դուրս գալով, նա շէր կարողանում որոշել անելիքը. նախ՝ մի նրկու անդամ կանգ առավ, ետ նայեց տեսնելու՝ ետևից չի՞ դալիս որդին կամ հայրը: Տեսնելով ոչ ոք չկա՝ մնաց կանգնած, մտածելով, որ վերադառնալն անհարմար է իր սպասնալիցից հետո, և ինքնասիրությունը թույլ չտվեց վերադառնալ. ու նա շարունակեց առաջ գնալ, մտածելով ի՞նչ անի և ո՞ւր գնա:

Իսկապես ի՞նչ պիտի աներ և ո՞ւր գնար հիմա, — մտածում էր նա: Բայց նա ավելի զարմացած էր և մանավանդ շփոթված, որ իր մի ժամ առաջ ունեցած ուրախությունն այսպիսի վախճան ունեցավ: Ո՞վ էր արդյոք իր գաղանիքը հայտնել կնոջը, ի՞նչպես էր իմացվել այդ, ի՞նչ ճանապարհով, այն էլ այդպիսի մանրամասնությամբ, — զարմանում էր Արեսյանը՝ վշտախառն մի դարմանքով... Այո, նա շէր սպասում, երբեք շէր պատկերացնում, թե այսպիսի վախճան կունենար իր քայլը. թվում էր՝ ամեն ինչ կընթանա առաջվա պես, կինը ոչինչ չի իմանա... Բայց ահա ամեն ինչ հայտնի դարձավ ոչ միայն կնոջը, այլև... հորը, երեխաներին...

Ի՞նչ իսայտառակություն...

Այո, հաջիվ երկու ամիս էր ինչ մտերմացել էր այդ կնոջ հետ (որն, ի դեպ, աշխատում էր նրանց վարչութչան գրասենյակում, պլանքաժնում, որի պատճառով էլ նրան անվա-

նում էին պլանքաժնի Ռիմա), երբեմն ուղեկցում էր նրան տուն՝ վախվխելով, որովհետև նրան շարունակ հետապնդում էր այն միտքը, թե մեկը կարող է կասկածել և հետևել իրեն:

Այդ նույն երկչուղը, սակայն, Արեսյանը շուներ իր կնոջից, այս կողմից նա հանգիստ էր. որովհետև կինը, իր դրպրոցով ու դասերով տարված, երբեք չէր կարող մտածել, կասկածել, թե ամուսինը դուրսը կապեր ունի... Կինն այնքան էր գբաղված, որ կասկածելու ժամանակ շուներ: Ու Արեսյանը հանգիստ էր այդ կողմից: Կինը ոչ միայն չէր կասկածում, այլև ամեն անգամ հավատում էր ուշացման համար բերած նրա պատճառներին: Սակայն կար և մի ուրիշ բան. այն, որ եթե կինն իրեն չէր կասկածում՝ Արեսյանը դրա պատճառը համարում էր ոչ այնքան կնոջ գբաղված լինելը, որքան իր տակտը. նա երբեք զգացնել չէր տալիս կնոջը, թե ինքը սառել է գեպի նա, անտարբեր է նրա նկատմամբ կամ նվազեցրել է հարգանքը: Ընդհակառակը, ամուսն էր ամենը, որ կինը չկասկածի: Ե՛վ կինը չէր կասկածում, և Արեսյանը գոհ էր նրանից թե՛ նրա համար, որ չի կասկածում, և թե՛ նրա համար, որ շատ հոգածու էր իր նկատմամբ. խնամք էր տանում իր հագուստներին, ճաշն ու ընթրիքը տալիս էր ժամանակին և լավ: Այնպես որ ամեն երեկո, որքան էլ ուշ վերադառնար, իր բաժին ընթրիքը լինում էր սեղանի վրա՝ ճերմակ անձեռոցիկով ծածկած:

Բայց ահա ո՞րտեղից և ի՞նչպես էր իմացել կինն այդ ամենը... Այսօր նա ճաշել էր տանը. կինն իրեն վերաբերվել էր սովորականի պես, և ոչ մի նշան դժգոհության կամ կասկածի: Երեկոյան, սակայն, հիմնարկում պարզեացրած լուրը լսելով, ուրախությունից գնացել էր Ռիմայի մոտ... Երեկոն նրա հետ անցնելու...

Անցրեց և... ահա քեզ խայտառակություն:

«Գնա, երբ քեզ համար չկա ընտանիքի պատիվ ու սրբություն», հնչում էր նրա ականջում կնոջ խոսքը ազադակի պես... Ու այդ խոսքերն իմացան հայրը, երեխաները... Արեսյանին թվում էր նույնիսկ, թե իմացան նաև հարևանները, իրենց վերևը, ներքևը ապրող մարդիկ:



Միաժամանակ Արեւսյանին թվում էր երբեմն, թե կատարվածը մի ծանր, անհավատալի երազ է և շուտով կանցնի: Բայց երբ նայում էր շուրջը և տեսնում, որ ինքը փողոցումն է՝ սթափվում էր իսկույն և նորից անդրադառնում կատարվածին.— ի՞նչ պիտի մտածեր հայրը, ի՞նչ պիտի մտածեին երեխաները, հարևանները, ծանոթները... Թե ինչպես պիտի ընդունեին այդ բանը երեխաները՝ Ռաֆիկն ու Յողիկը, Արեւսյանը դժվարանում էր պատկերացնել, բայց տանը, թեև ամաչում էր նրանց նայել, այնուամենայնիվ կարողացավ անցողակի նկատել, որ նրանք շշմած էին թառած եղած թռչունների պես: Ավելին, կարծես զաւմացած էին և քարացած...

«Զէ, վա՛տ եղավ, շա՛տ վատ»,— մտածում էր Արեւսյանը, և նրան թվում էր թե ամբողջ կատարվածի մեջ ամենից վատն այն էր, որ երեխաները ներկա եղան իրենց խոսակցութեան ու լսեցին ամեն ինչ...

«Այո, ամե՛ն ինչ... լսեցին ու, երեխ, ատեցին ինձ»,— մտածեց նորից Արեւսյանը, հիշելով, որ երեխաները իր երևոյին անգամ չէին նայում և, ընդհակառակը, ցավով, կաշնկցանքով դիտում էին մորը և հետևում նրա խոսքերին. իսկ երբ ինքը պատրաստվում էր դուրս գալ, նրանցից և ոչ մեկը մի բառ, մի խոսք անգամ չասաց. ո՛չ որդին, ո՛չ աղջիկը մի բառ անգամ չարին իր ետևից, ձայն իսկ չհաննեցին. մեկը գոնե «սրապա» չասաց... Դուրս եկողը կարծես իրենց հայրը չէր, այլ թշնամու, գողի մեկը... Արեւսյանը գիտեր, որ որդին՝ Ռաֆիկը սովորաբար դուսպ էր իր զգացմունքներին արտահայտելու մեջ, բայց աղջիկը՝ Յողիկը, որ ամեն անգամ տնից դուրս գալիս համբուրում էր իրեն՝ վզին փաթկելով, ոչ մի շարժում չարավ ետևից փալու. ցավի ոչ մի արտահայտութեան...

«Վատ եղավ, շա՛տ վատ», կրկնեց Արեւսյանն ինքն իր մեջ, մի տեսակ հառաչելով, որովհետև նա երբեք մտքովը չէր անցկացրել, թե իր կապը կբացվի մի օր... Ճիշտ է, մի քանի ամիս էր կինը, ինքն էլ չէր կարող ասել ինչու, առաջվա պես չէր գրավում իրեն, ձանձրանում էր մանավանդ նրա տեսարանից:

դարոցական գործերին վերաբերող նրա զրույցներից, նրա շարժ ու ձևերից... սակայն այդ երբեք զգացնել չէր տալիս և մանավանդ, երբեք չէր մտածել տնից հեռանալ, ինչպես եղավ հիմա... Ասենք, հիմա էլ նա չէր ուզում տնից հեռանալ, բայց պետք էր գոնե վիրավորված ձեռնալ, որ կինը լսածներին չհավատար, հայրը չհավատար, երեխաները չհավատային...

Սակայն, ինչպես երևում է, բոլորը կարծես հավատացած էին, ուստի և ոչ մեկը չեկավ իր ետևից, մեկը չկանչեց, չհարցրեց, թե ո՛ւր է գնում...

Հիշելով կատարվածը՝ Արեսյանն այնուամենայնիվ կարծում էր, որ երեխաների համակրանքը մոր կողմն էր.— երբ ինքը գնաց դեպի դուռը՝ ծողիկը պոկվեց վարագույրից և վազեց դեպի լացույ մայրը. «մամա»... Իսկ Ռաֆիկը արդեն հոնքերի տակիցն էր նայում իրեն... Դա պատահականութիւն էր արդյոք, թե արհամարհանք:

«Էհ, վատ եղավ, շա՛տ վատ»,— դարձյալ կրկնեց նա, այս անգամ մտածելով, որ վաղը երևի հարեանները, հիմնարկի մարդիկ, աշխատակիցները, ծանոթները՝ բոլորը, բոլորը կհիմանան այս ամենը:

Կիմանա իրենց դիրեկտորը, կիմանա պարտկազմակերպութիւյան քարտուղար Մելքոնը, մշուսները, և իրեն, որպէս թեկնածուի, էլ առաջ չեն քաշի,— մտածում էր նա վշտացած:

«Դոնե հայրս, երեխաներս շիմանային»,—ասաց նա մըտքում արդեն մի ուրիշ փողոց թերվելով, և այստեղ՝ այդ նոր փողոցում նա անդրադարձավ, որ հանկարծ ծանոթներ կարող են հանդիպել... Ու անցավ փողոցի մշուս մայթը, ուր լուսինը երկար ստվերներ էր փռել:

Այդ ստվերը նրան դուր եկավ. և նա երկար գնում էր տների ստվերով, գնում էր մտքերով տարված, շղդալով խոնավ ցուրտը, շիմանալով, որ արդեն ուշ է:

Ու երկար նա ոչ մի անցորդի չէր հանդիպում... Բայց, բավական տեղ գնալուց հետո, հեռվում, փողոցի գրեթե ծայրում նկատեց մի ուշացած անցորդ, որը երևի տուն էր շտա-

պում: Այստեղ միայն մտածեց, որ փողոցում մնալ չի կարող  
և պետք է մի տեղ գնալ և գիշերել...

Սակայն ո՞րտեղ: Վերադառնա՞ր տուն՝ երբեք: Ի՞նչպես  
վերադառնար այն ամենից հետո, երբ հեռացել էր դուռը  
շրխկացնելով...

Վերադառնա՞լ...

Եվ Արևսյանը, մտածելով իր ներկա յիճակի մասին,  
գտնում էր, որ ոչ մի գեպքում չի կարող գնալ տուն, քայց  
և այնպես պետք էր մի տեղ գիշերել: Սակայն ո՞րտեղ... գնար  
մոտիկ հյուրանոցը՝ ծանոթներ կլինեին. կզարմանային, որ  
իր տունը թողած գիշերում է հյուրանոցում. հենց վարիչը,  
ծառայողները ծանոթ էին իրեն: Գնար մյուս հյուրանոցնե-  
րից մեկը՝ նույնպես հարմար չէր: Գնար ծանոթները մոտ՝  
նշանակում էր ինքը տարածի տանը կատարված խայտառա-  
կությունը... Իսկ փողոցում քայլել — դա պակաս անհարմար  
չէր. կհանդիպեր հանկարծ մի ծանոթ և կհետաքրքրվեր, թե  
ինչո՞ւ է շրջում: Արի և բացատրություն տուր, ով սիրտ ուներ  
հիմա փողոցում բացատրություն տալու: Եվ ի՞նչ կարող էր  
ասել... պետք էր մի բան հնարել, կեղծեր... Չէ՛, բանի շուտ  
էր՝ պետք էր մի տեղ գնալ:

«Բայց ո՞ւր, — շարունակ հարցնում էր նա ինքն իրեն: —  
Ո՞ւր գնար, որ տարօրինակ չթվար»...

Ու չէր գտնում հարմար մի տեղ...

Երկար խոհեչուց և շրջելուց հետո, վերջապես, նա լսեց  
գիշերային ժամի երեքը ու հիշեց հանկարծ պլանքաժնի  
Ռիմային, նրա հաճելի սենյակը: Չգնա՞լ արդյոք նրա մոտ:  
Բայց ի՞նչ կասեր այդ կինը. չէ՞ր զարմանա... Մյուս կողմից՝  
իր այս տրամադրությամբ գնար ի՞նչ ասեր նրան:

Ու տատանվում էր՝ գնա՞լ, թե չգնալ: Գնար ինչո՞վ պատ-  
ճառաբաներ իր վերադարձը: Ասե՞ր ինչ եղել է, թե պետք էր  
հնարել որևէ սուտ, հավանական մի պատրվակ... Իսկ եթե  
չգնար, կմնար փողոցում և...

Ու շրջում էր Արևսյանն այդ ստվերոտ մայթում և շա-  
րունակում խորհել... Կուսինը մերթ փայլում էր ամբողջ պայ-  
ծառությամբ, մերթ ծածկվում էր իր ճանապարհին հանդի-

պող ձորձանման, ճերմակ, ծվեն-ծվեն ամպերով. և այն պատ-  
հին, երբ լուսինը չէր լուսավորում փողոցը՝ Արեսյանը փոքր-  
ինչ լավ էր դգում և կարծես հանգստանում էր. իրեն չէին  
տեսնի: Նրա բախտից, սակայն, անցորդներ չէին երևում,  
և նա անվերջ կշռադատում էր, այլևս ոչ թե իր հետ կատար-  
վածը, այլ այսօր, այս ժամին մի տեղ պատասպարվելու խըն-  
դիրը. ու չէր հիշում կյանքում այդպիսի ծանր վիճակ, չէր  
հիշում, որ երբևէ կանգնած լիներ այդպիսի ծանր երկրնա-  
րանքի առջև: Ու որքան էլ մտածում էր, որքան էլ ելք էր  
փնտրում՝ այնուամենայնիվ նրան թվում էր, թե այս գիշեր  
ուրիշ որևէ տեղ չէր կարող գնալ, եթե ոչ այդ Ռիմայի բնա-  
կարանը:

Միակ հարմար տեղը դա էր:

Բայց դնար ի՞նչպես ասեր, թե ինչո՞ւ է եկել, — դարձյալ  
մտածեց նա և, առանց այդ ասելիքը որոշելու, քայլերն ուղ-  
ղեց դեպի այդ կնոջ սուներ:

«Շատ պիտի դարմանա, իհարկե, երբ նորից ինձ տեսնի,  
այն էլ այսքան ուշ», — մտածում էր նա:

«Չէ, չէ», կանգ առավ Արեսյանը մի տասր-քսան քայլից  
հետո, մտածելով, որ դա խելացի բան չէ: Ու գնաց դեպի հյու-  
րանոց, բայց մի քանի քայլից՝ կրկին կանգ առավ, անելիքը  
չիմանալով. և հանկարծ հիշեց իրենց հիմնարկը ու մտածեց.

— Ի՞նչ կլինի, եթե գնա ուղիղ հիմնարկ և գիշերի իր կա-  
րինետում՝ հենց բազմոցի վրա:

Այդ միտքը մեկեն հանեց նրան դժվար կացությունից. դա  
գյուտի պես մի բան եղավ կարծես, և նա ուրախացավ փա-  
կուղուց ելք գտնողի նման, ու քայլերն արագացրեց դեպի  
հիմնարկ, որը գտնվում էր քաղաքի համարյա կենտրոնում:

Սակայն, երբ մոտեցավ շենքին, այստեղ նոր մտքեր ծա-  
գեցին նրա գլխում: Ի՞նչ պիտի ասեր պահակին, թե ինչո՞ւ  
է եկել Գուցե պահակը ոչինչ չհարցնեի էլ, բայց և այնպես  
մի բան պետք էր ասել նրան, պատճառաբանել, թե ինչո՞ւ  
է եկել այսքան ուշ կամ ինչո՞ւ համար:

Եվ ահա, երբ նա թեքվեց անկյունից դեպի հիմնարկը  
գնալու՝ նկատեց, որ ծերունի պահակը, քուրքի մեջ փաթաթ-

ված, ականջավոր գդակը գլուխը հագցրած, գնում-գալիս է շենքի առջև, ոտքերը մայթին խփելով՝ տաքանալու և շքնելու ակներև նայատակով:

— Բարի երեկո, Պողոս բիձա,— ասաց Արեսյանը տակավին մի տասը քայլ հեռվից և մի քիչ բարձր ձայնով, որ նա լավ լսի ականջները ծածկող գլխարկի տակից:

Պահակը կանգ առավ. նա ոչ թե դեմքից կամ կերպարանքից ճանաչեց Արեսյանին, այլ ձայնից, և աչքերը լարեց լավ տեսնելու:

— Ընկեր Արեսյա՞ն,— մտեցավ նա զարմացած ու աչքերը սկեռած:— էդ դո՞ւք եք:

— Ես ևմ, Պողոս բիձա: Եկել եմ մի քիչ աշխատեմ,— շարունակեց Արեսյանը, շապասելով, որ պահակը հարցնի իր գալու պատճառը և միևնույն ժամանակ վատ զգաց, որ ստիպված սուտ է ասում ու քաշվում է պահակից:

Պահակը գիտեր, որ նա երեկոները երբեմն գալիս էր աշխատելու, բայց հիմա զարմացավ:

— Էսքան ո՞ւշ, ընկեր Արեսյան:

— Ուշ է, այո, շատ շկարողացա գալ: Բայց այնպես քան է, որ առավոտը պետք է պատրաստ լինի,— շղիտես ինչու բացատրեց նա:— Այս գիշեր ցո՞ւրտ է, հա՞:

— Այո, ընկեր Արեսյան. քուրքը շլինի՝ կսառչեմ:

— Իսկ ներսը տա՞ք է:

— Բա, իհա՛րկե:

— Այդ լավ է,— մեքենայորեն շարունակեց Արեսյանը:— Պիտի աշխատեմ և գուցե այստեղ էլ քնեմ: Կարելի է, շէ՞: Չե՞մ մրսի:

— Չէ՛, ի՞նչ եք ասում, ներսը տաքուկ է:

Խոսելով՝ Արեսյանը մտավ ներս ու աստիճաններով բարձրացավ իր կաբինետը: Ինչպես հիմնարկի բոլոր սենյակները, այնպես էլ նրա կաբինետը քողարկված էր: Էլեկտրականութչան կոճակը դարձնելով՝ նա սկսեց դնալ-գալ հատակին փոված գորգի վրայով (որը խլացնում էր նրա նյարդային քայլվածքը), ինքն իր հետ խոսելով:

«Այո, շատ վատ եղավ,— կրկնեց նա մտքում, նստե-

լով, վերջապես, իր սեղանի մոտ ու նայելով ապակու տակ դրած՝ հասցեններով, հեռախոսի համարներով թերթերը:—  
Վա՛տ եղավ, և այդ ամենը երեխաների ներկայութեամբ»:  
Միառժամ նա խոսեց ինքն իր մեջ, հետո նորից գնաց-եկավ գորգի վրայով, ապա, զլուխը տխրութեամբ թափահարելով, հագուստներով պառկեց բազմոցին, վերարկուն վրան առնելով:

«էհ, համարենք, թե այսօր էլ վագոնի մեջ ենք», — մտածեց նա և դարձյալ ուղեղի մի անկյունում ծագեց նույն հարցը, թե արդյոք կինը ումի՞ց է իմացել այդ բոլորը կամ ո՞վ է իրեն տեսել Ռիմայի տանը...

Եվ այդ մտքերը շէին թողնում նա քնի. մյուս կողմից՝ իրեն անհարմար էր զգում բազմոցի վրա. զսպանակները անհավասար էին, բարձր ու ցածր, և մեկը դրանցից դեմ էր առնում նրա կողի սակորներին:

Երկար մտքերի ետևից ընկնելով և այս-այն կողմ շրջվելուց հետո, վերջապես, նա քնեց:

Թե որքան քնեց — ասել չէր կարող — մեկ էլ զարթնեց դռան շրխկոցից: Աչքերը բանալով՝ կարիներտի դռան մեջ տեսավ հավաքարար պառավին, որը, նրան պառկած տեսնելով, հտ-հտ գնաց, ասես վախեցած, թե անհարմար զղալով, բայց Արեսյանը կանչեց.

— Արի, արի, ես վեր եմ կենում:

Պառավը շհամարձակվեց առաջ գալ, բայց մնաց կանգնած:

— Գիշերն այստեղ աշխատեցի և մնացի քնելու, անցաթուղթս կորցրել էի՝ էլ տուն չգնացի, — բացատրեց նա և անմիջապես, ինչպես պահակի հետ խոսելիս, այնպես էլ հիմա անախորժ զգաց, որ սուտ է խոսում հավաքարարու՛նու առաջ:

— Վնաս չկա. կմաքրեմ հետո, — ասաց պառավը: — Գուք էստեղ՝ շեմ ուղի փոշի հանել:

— Մաքրիր, մաքրիր, ես կարող եմ դուրս գալ, — և Արեսյանը դուրս եկավ կից սենյակը, ուր գեռ ոչ ոք չէր եկել աշխատողներից, որովհետև տակավին 8<sup>1</sup>/<sub>2</sub> չկար:

Թե՛ այդ միջոցին և թե՛ այն ժամանակ, երբ այդ կինը գործն ավարտեց և նա գնաց ներս, Արեսյանին այնպես էր թվում, թե հավաքարարուհին կարծես մի բան հասկացավ իր այստեղ գիշերելուց: Այդպիսի զգացում ունեցավ նա մի ժամ հետո, երբ գրասենյակի աշխատողները եկան իրար ետեվից. երևի կռահում են կամ արդեն դիտեն, որ գիշերը շեմ քնել... դուցե և ոմանք իմացել են, որ... — մտածում էր նա, և հիշեց հանկարծ պլանբաժնի Ռիմային ու որոշեց նրա աշքին շերևալ. նա իսկույն կհասկանա իր վիճակը՝ այնքան սուր աշք ունի:

Կես ժամ հետո եկավ գործարանի դիրեկտորը (որին ամենքը «ընկեր Վարդան» էին ասում, սակավ գործածելով ազգանունը), մի շարժուն, պինդ, բայց զվարթ հիսուննոց մարդ: Ներս մտնելով՝ նա, առանց բարևի, կանգ առավ ու նայեց Արեսյանին:

— Ինչո՞ւ ես տխուր: Վատ բան հո չի պատահել գործարանում:

Դիրեկտորը գիտեր, որ Արեսյանը այդ ժամին գործարան գնացած եկած է լինում — դրա համար հարցրեց, կարծելով, թե նրա տրամադրությունը կապ ունի գործարանի հետ. բայց երբ Արեսյանը գլուխը շարժեց բացասաբար՝ «ոչինչ» ասելով, դիրեկտորը, որ մտերմիկ ու անմիջական բնավորության տեր էր, ձեռը դրեց իր տեղակալի ուսին:

— Հապա ինչո՞ւ ես հոնքերդ կիտել...

Արեսյանը շիմացավ ի՛նչ ասել և արտաբերեց միայն.

— Առանձնապես ոչինչ:

Բայց իսկույն էլ նրան թվաց, թե դիրեկտորը ինչ-որ մի բան հասկացավ, որովհետև սուր մի հայացք նետելով Արեսյանի երեսին, վրա բերեց իրեն հատուկ զվարթությամբ:

— Ինչե՛. մի տխրի... ընտանիքում, կյանքում ամեն բան կպատահի... էհ, ես գնացի գործարան: Եթե ինձ հարցնեն՝ այնտեղ եմ: Այսօր պիտի հասցնենք ֆրոնտի պատվերը, թե չէ՝ սևերես կմնանք:

Ու արագորեն, ասես գնում էր հրդեհ մարելու, գլխարկը պոկեց կախարանից ու գուրս...

Դիրեկտոր Վարդանը թեև երիտասարդ չէր, բայց զարմանալի եռանդուն մարդ էր՝ շարունակ պլաններով ու արտագրութչան հաշիվներով զբաղված, մի ոտը հիմնարկում, մյուսը՝ գործարանում։ Ավելի շուտ՝ իր ժամերի մեծ մասը նա անցնում էր գործարանում, ուր նայում-հետևում էր ամեն ինչի, խրախուսում ցեխերի վարիչներին և հաճախ կրկնում.

— Այնպես անենք, տղերք, ամոթով չմնանք։

— Այնպես անենք՝ պարզերես դուրս դանք։

Դիրեկտորի այս հատկութչունները ուներ և Արեսյանը. նա էլ, բացի այն, որ շարունակ հեռախոսով կարգադրութչուն էր անում, անձամբ էլ՝ օրը երկու անգամ գնում էր գործարան։ Բայց այսօր, մինչև աշխատանքի վերջը, նա դուրս չեկավ իր կարբինետից։ Ելավ միայն այն ժամանակ, երբ աշխատակիցները, բուրբ գնացել էին իրենց տները։

Հիմնարկից դուրս դալով՝ նա աշխատեց շահնդիպել Ռիմային. դիտեր, որ նա նրբեմն կանգնում է փողոցի անկյունում և սպասում իրեն, այդ պատճառով ինքը գնաց հակառակ ուղղութչամբ և, փոխանակ տուն գնալու, ինչպես անում էր միշտ, գնաց հյուրանոց։ Ժաշելո՞ւ գնաց, թե ծանոթի հանդիպելու։ Ոչ, դնաց... համար վարձելու։

Եվ մի փոքրիկ համար վարձելով՝ նա այդտեղ էլ գիշերը երկար շկարողացավ քնել. նորից մտածում էր անցած դարձածի վրա. նորից դարձանում էր, թե կինն ինչպես է իմացել այդ ամենը, և թե ինչո՞ւ հայրը կամ որդին չեկան իրեն կանչելու... Չեկան երեկ երեկո, իսկ այսօ՞ր... այսօր ինչո՞ւ չերևացին... այսօր, ամբողջ օրը, նրան թվում էր, թե հայրը կամ որդին՝ Ռաֆոն ահա ո՞ւր որ է կգան իր մոտ՝ իմանալու գոնե, թե գիշերն ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց... Բայց ո՞չ այդ օրը, ո՞չ էլ հետևյալ օրը ոչ մեկը չերևաց, և Արեսյանը մնաց հյուրանոցում... Սակայն ամեն անգամ այնտեղից ելնելիս՝ նա ելնում էր այնպես, որ մարդ չկարծի, թե դիշերել է այնտեղ. չէր ուզում ծանոթներ, ընկերներ իմանան, որ ապրում է հյուրանոցում...

Իսկ հյուրանոցում, կարելի է ասել, ապրում էր մի տեսակ գաղտագողի. մութին գալիս էր, շուտ գնում, և առհա-



սարակ աշխատում էր մնալ աննկատելի: Բայց առաջին օրերը՝ թե՛ հիմնարկում, թե՛ հյուրանոցում, նա դարձյալ սպասում էր, թե ահա որդին կամ հայրը կգան ետևից. անցավ սակայն մի քանի օր և ոչ ոք չերևաց... Նա դեռ կատարվածի տպավորության տակ էր և շարունակ զարմանում էր ինքն իր մեջ, թե ինչպես անակնկալ եղավ այդ... Ու մի քանի օր իրեն զգում էր անհարմար վիճակի մեջ, իր հունից դուրս եկած. զարթնում էր միշտ օտարոտի զգացումներով և անմիջապես հիշում կատարվածը, երեխաներին, հորը... Իսկ փողոցում խուսափում էր ծանոթներից, բարեկամներից, թե հանկարծ կարող են հետաքրքրվել, հարցնել, թե ի՞նչ է պատահել... և նա, կեղծ բացատրություն տալու հարկադրանքից ազատ լինելու համար, ներսը ձևանում էր զբաղված, դուրսը՝ մի տեղ շտապող: Թվում էր նրան, թե ամենքը գիտեն արդեն պատահածը և, երևի, դատապարտում են իր վարմունքը, որ թողել է կնոջը, տասնութ տարեկան տղային և տասնհինգ տարեկան աղջկան և... Բայց միևնույն ժամանակ էլ կարիք էր զգում մեկին պատմելու, բացատրելու, թե ինչպես եղավ այդ ամենը. դա կարող էր թերևս թեթևացնել իրեն:

Սակայն նրան ավելի մտահոգում էին դարձյալ երեխաները, մանավանդ նրանց վերաբերմունքը, ամեն առավոտ զարթնելիս՝ հիշում էր նրանց և մտածմունքի մեջ ընկնում: Արեսյանը, պետք է ասել, շատ էր կապված իր երեխաների հետ. բացի այն, որ ամեն երեկո հետաքրքրվում էր նրանց դասերով, հանգստի օրերին անխախտ գնում էր նրանց հետ զբոսանքի, կինո, երբեմն համերգ կամ պարզապես ազատ ժամանակն. անցնում էր, նրանց հետ՝ լսում էր Ռաֆիկի որևէ դասը, Յոզիկի, ջութակի, նվագը... և երեխաներն էլ, ըստ սովորության, առավոտները, դպրոց գնալուց առաջ, միշտ որևէ քանովե դիմում էին նրան. «պապա այս», «պապա այն»... Հիմա չգիտեր ի՞նչ են զգում նրանք, ի՞նչ կարծիք են կադմել կատարվածի մասին. ցավո՞ւմ են, հիասթափվե՞լ են իրենից, թե գուցե արդեն ասում են իրեն...

Եվ այս մտքերը ոչ միայն շարունակ զբաղեցնում էին նրան, այլև քանի գնում դառնում էին կարծես տիրակալ, և

նա չէր կարողանում բացատրել երեխաների այդ սառը վերաբերմունքն իր հանդեպ, այնքան ջերմ կապված էին իր հետ և հանկարծ այդքան սպանիչ սառնությո՞ւն...

Ու որքան էլ մտածում էր Արեսյանը այդ մասին՝ չէր կարողանում իր համար մի ճիշտ կամ հավանական բացատրություն գտնել, ռատի և ցանկանում էր մի անգամ գոնե հանդիպել նրանց և խոսել հետները, իմանալ նրանց տրամադրությունը և, Լթե հարկ լինի, բացատրել, ասել, թե եղածը դատարկ բան է, մայրը պարզապես խանդում է, թե այդպիսի բաներ լինում են, և դա շտեղծ է պատճառ գառնա, որ երեխաները սառեն իրենից, և թե ինքը շուտով կգատուն, երբ մամայի բարկությունն անցնի... Նա կուզեր միաժամանակ հայտնել երեխաներին, թե, շնայած տնից հեռացավ, այնուամենայնիվ, առաջվա պես սիրում է նրանց, միշտ նրանց մասին է մտածում, և եթե կունենան որևէ կարիք՝ թող գան իր մոտ։ Եվ Արեսյանը համոզված էր, որ երեխաները, իր բացատրությունը լսելով, կմոռանան այն գիշերվա տպավորությունը և առաջվա պես սիրով կկապվեն հետը։

Բայց հիմա ի՞նչպես հանդիպեր նրանց և ո՞րտեղ։ Տուն գնալ՝ չէր կարող։ Հանդիպման տեղեր մնում էին դպրոցները և փողոցը։ Դպրոց գնալ նույնպես շարժեր, աշակերտների բազմության մեջ, ռսուցիչների ներկայությամբ խոսել այդպիսի հարցերի մասին... Եվ Արեսյանին թվում էր, որ միակ տեղը, որքան էլ դա անհարմար էր նույնպես, մնում էր փողոցը։ Բայց պետք էր հանդիպել ոչ թե առավոտները, երբ նրանք շտապում են դպրոց, այլ կեսօրին, ժամը 2-ին, երբ հանդիսատե՛րադառնում են տուն։

Այդ որոշումն անելով՝ նա կարծես հանգստացավ։

Եվ ահա որոշումն անելու հետևյալ իսկ օրը, ժամը 2-ի մոտ, նա հիմնարկից դուրս եկավ երեխաներից մեկին կամ մյուսին հանդիպելու։ Բայց անաշուղ։ Շո՞ւտ էին դուրս եկել դպրոցից թե ուշ էին մնացել՝ շահանդիպեց, փողոցում էլ մնալ և երկար սպասել՝ հարմար չէր։ Սակայն երկրորդ օրը, երբ գործով անցնում էր Արովյան փողոցով, տեսավ Ցողիկին...

Մարտի սկզբի սառը, բայց արևոտ օր էր. փողոցում, ինչպես միշտ, մեծ շարժում կար. անցնում էին սրբնթաց մեծ ու փոքր աշտոններ, տանհիով քաղաքացիներ և մեծ մասամբ բանակաչիներ, անցնում էին տրամվայներ, իրենց մշտական պլակատներով ու կոշերով. «Ամեն ինչ ճակատի համար», «Մահ Ֆաշիստներին» և այլ ուղղմական կոշեր... Այն ժամն էր խոկապես, երբ Աբովյանը երիտասարդանում է, երբ իրար ետևից բոլոր դպրոցներից դուրս են գալիս աշակերտները և խմբերով, զրուցյով ու կատակով շտապում են իրենց տները:

Աշակերտուհիների խմբեր տեսնելով՝ Արեսյանն ուրախացավ, որ շուտով կերևա և Յոզիկը. նա լարվեց՝ հայացքն այս-այն կողմ հաժելով, որ շի՛նի հանկարծ անցնի և իրեն շտեմնի կամ ինքը շնկատի նրան: Եվ երբ Յոզիկի գլուխը տեսավ՝ նա ուրախությունից ժպտաց: Աղջիկը, խարտյաշ խոպոպներն ուսերին, ճերմակ բերետով և վանդակավոր վերարկուի կոճակներն արձակ, պատենավոր ջուժակը թևի տակ, աշխուժորեն գալիս էր մայթով, գալիս էր անշուշտ երաժշտական դպրոցից. և մենակ էր... Այս հանդամանքը նույնպես ուրախացրեց Արեսյանին. լիներ ընկերուհիների հետ՝ դժվար կլիներ ազատ և սրտանց խոսել. ու նա ժպտադեմ ընդառաջ գնաց աղջկան: Սակայն մինչև կմոտենար, մնացել էր մի քսան քայլ՝ Յոզիկն արագ թեքվեց հանկարծ և անցավ մյուս մայթը: Դա Արեսյանին տարօրինակ թվաց. շի՛մացավ, դուստրին այդ արավ պատահաբա՞ր, թե խուսափեց իրենից, գուցե և անցնող տրամվայը խանգարեց, որ նա իրեն տեսնի... Բայց այդ կարևոր չէր. պետք էր Յոզիկին տեսնել ու խոսել հետը:

Եվ Արեսյանն արագ անցավ մյուս մայթը, ուր անցել էր Յոզիկը, և կանչեց.

— Յոզի՛կ... Յոզի՛կ...

Նրա ձայնն ընկավ իր ականջը, բայց աղջիկը կարծես չլսեց. նա շարունակում էր քայլել ջուժակը գրկած, նույն փութկոտ ու մանրիկ քայլերով:

— Յոզի՛կ, — կրկնեց Արեսյանն ավելի բարձր, այլևս նրբանկատություն չանելով, ուշ շղարձնելով անցորդներին, որ քայլում էին կողքով: — Յոզի՛կ...

Այս անգամ փոքրիկ աղջիկը կանգ առավ և զարմացած էտ նայեց: Սակայն, հորը նկատելով, դուրսն իջեցրեց ու սպասեց. և հայրը նրա դեմքին շնկատեց առանձին ուրախություն կամ ժպիտ, ինչ լինում էր միշտ առաջներում իրեն հանդիպելիս. և դա նրան հասկանալի թվաց. այն երեկոյից հետո Յողիկը չէր կարող ժպտալ կամ ուրախանալ, այն էլ փողոցում: Այդպես բացատրեց հայրը նրա ամոթխածությունը և, աղջկան մոտենալով, բռնեց նրա ազատ ձեռքն ու պահեց ափի մեջ:

— Յող,— խոսեց նա սովորական կրճատ ձևով և ավելի սիրալիր, քան երբևէ:— Ի՞նչպես էս:

— Ոչինչ,— շշնջաց աղջիկը, դարձյալ դուրսը կախ:

— Ո՞րտեղից էս գալիս,— շարունակեց հայրը տակավին աղջկա ձեռք բռնած:— Դասի՞ց:

Հարցումին հետևեց հաղիվ լսելի «այո»:

— Ի՞նչպես են դնում ջութակիդ դասերը:

— Ոչինչ...

— Պապը ի՞նչպես է,— հարցրեց Արեսյանը, կարծես շիմանալով ինչպես շարունակել հարց ու փորձը:

Նորից լսվեց մի նիհար «ոչինչ»:

Այդ ժամանակ Արեսյանը, տեսնելով երեխան չի բացվում, և փողոցում հարցուփորձելը համարելով անհարմար, առաջարկեց դնալ ներքև:

— Բայց էս... ջութակը ձեռի՞ս...

— Գնանք, ոչինչ:

— Բայց մաման ինձ սպասում է:

— Ի՞նչ կա:

— Զգիտեմ,— խուսափեց Յողիկը ճիշտ պատասխանից:

— Գնանք, հեռու չէ,— պնդեց հայրը բռնազբոս ուրախությամբ:— Գնանք, քեզ համար ուզում եմ բան գնել:

— Բայց կուշանամ... հետո... մաման հիվանդ է, սպասում է:

Ու անսպասելի, ձեռք հոր ափից ազատելով, Յողիկը հեռացավ արագ:

Արեսյանը մնաց աղջկա ետևից նայելով. նայեց մի երկ-

վայրկյան, նայեց տարակուսների մեջ, ապա մտալիվ հովհաննիսյան հանդարտ քայլեց հակառակ ուղղութեամբ:

Ինչո՞ւ այդպէս արավ Յողիկը, ինչո՞ւ շտապեց հեռանալ այդպէս, — հարցնում էր Արեսյանն ինքն իրեն և զգում էր, որ Յողիկը սրտաբաց շէր հետը, այլ մի տեսակ զուսպ, գուցե և աշխատում էր զսպել իրեն, որ ավելորդ բան չասի, և աշխատում էր շուտ հեռանալ... Գուցե մայրն իսկապէս հիվանդ է...

Եթե մայրը հիվանդ է իրոք՝ Յողիկն ուրիշ կերպ շէր կարող լինել:

Բայց ինչո՞ւ է հիվանդ արդցոք:

Եվ Արեսյանն անհանգստացավ, մտածելով, թե շինի կինը հիվանդացել է իր հետ բացատրվելուց հետո, իր վարմունքի հետևանքով՝ վշտից, հուզումից: Ու նրան թվում էր, որ մոր հիվանդութունը նույնպէս կարող է ազդել երեխաների տրամադրութեան վրա. նրանք կարող են հիվանդութեան պատճառը համարել իրեն...

Թերևս Յողիկն այդպէս էլ տրամադրված էր...

Շարունակելով մտածել աղջկա մասին՝ Արեսյանը կըշտամբեց իրեն, որ զրույցը Յողիկի հետ հեռվից շսկսեց. պետք էր հետը քայլել և խոսել հանդարտ և ոչ թե անմիջապէս առաջարկեր՝ գնալ բան գնելու... Ի՞նչ ավելորդ էր. պետք էր հանդիստ հարցումներ և ապա փող առաջարկել տան և իր ծախսերի համար, հետաքրքրվել մոր հիվանդութեամբ, — այն ժամանակ Յողիկը շէր շտապի հեռանալ... Բայց, ոչինչ, այդպէս կվարձի նա սրտու հետ:

Երբ Յողիկը հեռացավ, Արեսյանը հիշեց, որ Ռաֆիկն էլ համարչա այդ ժամին է վերադառնում դպրոցից. լավ շէր լինի արդցոք նրան էլ տեսներ և խոսել. քանի որ է մտածում է հանդիպել՝ շէր աջողում, և հիմա սրանից հարմար ժամանակ չի կարող լինել... Արեսյանը մտածում էր՝ քանի որ դադարների այդպէս բացվեց հանկարծ և կինն իմացավ ամեն ինչ ու տնից համարչա դուրս արավ իրեն, այնպէս անի, որ երեխաների սերը դոնե չկորցնի, սրտնց աճեցնելու և կրթութեան տալու մեջ էր տեսնում իր կյանքի գլխավոր իմաստը:

Սակայն Ռաֆիկը շուտ դուրս կգա՝ արդյոք դպրոցից։ Արեւսյանը նայեց ժամացույցին. 1-ն էր։ Մնում էր մեկ կամ կես ժամ. սպասե՛ր, թե գնար հիմնարկ. Ռաֆիկը կարող էր ուշ գալ, — մտածեց Արեւսյանը և գտավ, թե քանի որ հիմնարկից դուրս է եկել, պետք է սպասել և որդուն ևս տեսնել։

Եվ նա քայլերն ինքնաբեր ուղղեց դեպի օրդու դպրոցը, որը շատ հեռու չէր։ Ավելի լավ էր գնար դպրոցի կողմը, քան սպասեր փողոցում, որովհետև Ռաֆիկը, դպրոցից դուրս գալով, կարող էր ուրիշ ճանապարհով գնալ տուն։

Հասնելով դպրոց՝ նա ստիպված եղավ մի քանի անգամ անցնել-դառնալ կողքի փողոցով, մինչև պարապմունքը կվերջանար դպրոցում և որդին դուրս կգար... Ու այդ երթևեկության միջոցին նա այնքան էր տարված մտքերով, որ շիմացավ, թե որքան ժամանակ անցավ, երբ հանկարծ ժայթքող խուլ աղմուկ լսեց մոտիկ, կարծես մի փակ դուռ բացվեց և բոլոր ձայները մեկեն լցրին բակը։ Նայեց՝ դպրոցի բարձր դասարանների աշակերտներն էին մեծ խմբերով. նա մի փոքր առաջ գնաց ու կանգնեց այնտեղ, որտեղից օրդին պիտի թեքվեր դեպ իրենց տունը տանող փողոցը։

Եվ, իրոք, մի քանի րոպե հետո տեսավ, որ Ռաֆիկը մի խումբ տղաների հետ առանձնացավ աշակերտների մեծ բաղձուխունից և այդ խմբի հետ քայլեց դեպի իրեն։

Չնայած ընդամենը տասը օր էր անցել, ինչ ինքը հեռացել էր տնից և որդուն չէր տեսել, բայց նրան թվաց, թե օրդին շատ է փոխվել. նիհարել էր, լրջացել։ Նրանի՛ց էր արդյոք, որ դասերը շատ էին, թե՛ իր հեռանալն էր ազդել տղայի վրա՝ նա չէր կարող իմանալ, բայց օրդու տեսքը նրան մտահոգեց, և նա մտքում որոշեց նախ հետաքրքրվել, թե ի՞նչպես է առողջութունը, ապա հարցնել, թե ի՞նչպես են դասերը, սլարապմունքները և շունի՛ արդյոք սրեկ կարիք, և ապա կհետաքրքրվեր մոր հիվանդությամբ, թող Ռաֆիկը չկարծի, թե ինքը արհամարհում է մամային...։

Բայց մինչ նա կմտածեր այս ամենը՝ տղաները մտեցան խմբով և Արեւսյանը շիմացավ դարձյալ, ինչպես աղջկան հանդիպելիս, օրդին նկատե՛ց, թե ոչ (նրան թվաց, թե նկատեց) —

դուխն իջեցրեց և աշխատեց հեռանալ, ավելի արագացնելով քայլերը, քան գնում էին ընկերները:

Արեսյանի սիրտը անհունգիստ խաղաց կրծքի տակ և նա, այլևս առանց մտածելու, հարմա՞ր է, թե ոչ, կանչեց որդուն, ինչպես աղջկանն էր կանչել՝ ձայնի մեջ հատուկ քրնքրշություն դրած. «Ռաֆիկ»... Եվ որդին, ճիշտ այնպես, ինչպես Յողիկը, լսե՞ց արդյոք, չլսե՞ց, թե՞ լսելով՝ չլսել ձևացրեց, ետ շնայեց: Ընկերներից մեկ-երկուսը ետ նայեցին և մեկն ասաց Ռաֆիկին.

— Պապադ կանչում է...

Արեսյանն այդ լսեց, բայց որդին նորից կարծես չլսեց, թե՞ դարձյալ չլսել ձևացրեց:

Այդ ժամանակ Արեսյանը կանչեց ավելի բարձր.

— Ռաֆիկ:

Այս անգամ Ռաֆիկը կանգ առավ ու անտարբեր ետ նայեց, բայց փորձ չարավ մոտենալու, վարանելով թե ակամա մնաց տեղում. իսկ Արեսյանին թվաց, թե տհաճություն կար նրա աչքերում, նրա կեցվածքի մեջ, գուցե դա իրեն հանդիպելու առթիվ, բայց և այնպես առաջինն ինքը մոտեցավ Ռաֆիկին և աշխատեց ժպտալ, ուրախ դեմք շինել, սակայն զգաց, որ դա իրեն շաշողվեց: Այնուամենայնիվ ճիգի պես մի բան գործադրեց ու հարցրեց.

— Տո՞ւն ես գնում արդեն:

— Այո, — և տղան, աչքերը գետին խոնարհելով, օպասեց, թե ի՛նչ է ասելու հայրը:

Արեսյանը նայեց նրա դեմքին, նայեց պայուսակին և շարունակեց.

— Դասերդ ի՞նչպես են:

— Ոչինչ, — պատասխանեց Ռաֆիկը՝ առանց հալացքը բարձրացնելու:

— Դժվարություններ չկա՞ն, — հարցրեց նորից Արեսյանը և անմիջապես անդրադարձավ, որ հարցն անպատեհ էր և անտեղի: Սակայն կրկին նայելով որդուն՝ մտածեց, թե էլ ինչ ասի կարևոր ու վրա բերավ. — Ես քեզ հետ ուզում եմ խոսել, Ռաֆու: Հո չե՞ս շատում:

Ռաֆիկը դուխը կախեց և կարծես ավելի լարվեց:

— Քանի օր է քեզ չեմ տեսել, — սկսեց հայրը հոգաւոր ձայնով: — Որեւէ բանի կարիք չունե՞ս:

— Ո՛չ, — եղավ տղայի որոշ պատասխանը:

Եվ նա հայացքը նորից հառեց գետին:

— Այնուամենայնիվ, — ասաց Արեսյանը կարևորութուն շտաշով որդու խոսքին, բայց զգալով, որ խոսակցութիւնը չի կաշում, — այնուամենայնիվ, մաման այնքան չի ստանում, որ ձեզ օգնի: Ես գիտեմ, դու էլ, Տողիկն էլ կարիք կունենար... — և Արեսյանը ծոցագրպանից մի կապոց թղթադրամներ հանելով, մեկնեց որդուն:

— Ա՛ռ: Երբ վերջանա՛ կհիշեցնես...

Բայց Արեսյանի ձեռքը թղթադրամների հետ մնաց օդում:

— Ո՛չ, մաման տալիս է:

Ու, էլ շտաշակով ի՞նչ կասի հայրը, Ռաֆիկը մեկեն շըրջվեց ու արագ գնաց դեպի ընկերները:

Արեսյանը զարմացած նայեց որդու ետևից, կարմրեց և շիմացավ ի՞նչ անել. ավելի ճիշտը՝ մոռացավ թե՛ ասելիքը և թե՛ անելիքը. այնինչ մտադիր էր դեռ հարցումներ անել և իմանալ ի՞նչպես է պատը, մաման ի՞նչով է հիվանդ, և դարձյալ ուրիշ հարցեր... կուզեր, օրինակ, բացատրել, որ ընտանիքներում այդպիսի ընդհարումներ միշտ էլ պատահում են խանդի հողի վրա և դրան չպետք է կարևորութուն տալ... Բայց Ռաֆիկը թողեց-հեռացավ այնպես, ասես դանրա համար անցողակի հանդիպում էր պատահական մարդու հետ, որ փողոց է հարցնում կամ հասցե: Սակայն ամենից տարօրինակը Արեսյանի համար այն էր, որ որդին չվերցրեց առաջարկված դրամը:

— Լակո՛ւտ, — ասաց նա որդու ետևից դուխն օրորելով և միաժամանակ մտածելով, թե, այդ ամենը երևի մայրն է ներշնչել նրան: Նա չէր հասկանում իրոք, թե որդին ի՞նչ մտածեց արդյոք, որ փողը չվերցրեց. շինի կարծում է, թե կարող են ապրել առանց իր օգնութեան:

— Հիմա՛ր, — ասաց նա դարձյալ միայն իրեն լսելի ձայնով և դանդաղորեն քայլեց առաջ:



Դուք կարծում եք, փոքրիկ Տողիկը ճիշտ ասաց, թե մայրը հիվանդ է և սպասում է իրեն: Ոչ. նա այդ ասաց միայն հորից հեռանալու համար, որովհետև սաստիկ նեղվում էր նրա առաջ, որովհետև շփտեր ի՛նչ խոսի և ի՛նչպես խոսի: Մայրը, կամ ինչպես հարևաններն էին ասում՝ տիկին Մարիկան, հիվանդ չէր, բայց փոխվել էր մի տեսակ: Այն երեկոյից հետո դարձել էր զարմանալի լուրջ ու ինքնամոռի. միշտ կենսուրախ ու զվարթ՝ նա հիմա շատ քիչ էր խոսում, և դա տնեցիներին ու շրջապատին թվում էր սարսփնակ: Մակայն նա իր աշխատանքը շղադարեցրեց և ոչ մի օր: Առաջվա պես առավոտները գնում էր դպրոց, կեսօրին վերադառնում և այնուհետև առհասարակ տանն զբաղվում էր կա՛մ աշակերտների տետրերն ուղղելով, կա՛մ նամակներ էր գրում բանակում գտնվող իր այս կամ այն սանին, խրախուսելով նրանց հայրենիքի անունով և միշտ հաղթական վերադարձ ցանկանալով, կա՛մ թե, կարի մեքենայի առջև նստած, սավաններ ու բարձի երեսներ էր կարում հիվանդանոցի համար: Թող զարմանալի շթվա, որ, ուսուցչուհի լինելով, սպիտակեղեն էր կարում... հիվանդանոցի համար: Եվ չպետք է կարծել, թե այդ անում էր եկամուտի համար: Բնա՛վ: Պատերազմի այդ օրերին, ինչպես շատ հիմնարկներ վերցրել էին այս կամ այն զինվորական հիվանդանոցի շեֆությունը, նրանց տասնամյա դպրոցն էլ վերցրել էր № 9 հասպիտալի շեֆությունը, և ուսուցչուհիներն ամեն կերպ աշխատում էին հոգով այնտեղ գտնվող վիրավոր կամ հիվանդ բանակայիներին կարիքը. հաճախ այցելում էին նրանց, տանելով գրքեր, մրդեր, պատահում էր նամակներ էին գրում գրելու անկարող վիրավորների ընտանիքներին, իսկ ուսուցչուհիները հատկապես հիվանդանոցի վարչությունից սպիտակեղեն էին վերցնում տանը կարելու:

Եվ ահա Մարիկան կարում էր իրեն բաժին ընկած սպիտակեղենը: Ու այն, ինչ առաջ անում էր ազատ ժամերին, ընդմիջումներով, հիմա այդ անում էր լարված, կենտրոնա-

ցած: Ու հարսի այդ ինքնամփոփ տրամադրութիւնը ծեր փա-  
կանագործին շատ էր անհանգստացնում:

— Մի՛ տխրի, Մարիկա, մի՛ տխրի, աղջիկս: Թշնամոս  
խոսք կլինի, — ասում էր նա երբեմն՝ մերթ շնորհապատասխան  
որու անհապատարմութեան, մերթ կասկածելով: Սակայն հար-  
սը ոչինչ չէր պատասխանում. ո՛չ առարկում էր, ո՛չ համա-  
ձայնվում, և ծերունին հեռանում էր նրանից՝ ծանր մի հոգոց  
արձակելով, կամ գնում «ախ-ախ» էր անում կողքի սեն-  
յակներում՝ իր բարկութիւնը որդու դեմ, իր վիշտը կատար-  
վածի առթիվ, իր մենակութիւնն արտահայտելով այդ կիսա-  
բառերի ու ձայնարկութիւնների մեջ, շարունակ մտածելով,  
թե եթե հանգուցցալ պառավը ողջ լինէր՝ այս բանը չէր պա-  
տահի, կամ նա այնպես կաներ, որ որդին՝ Բագրատը, տնից  
չհեռանար: Նա լեզու կդաներ թե՛ հարսի, թե՛ որդու հետ խո-  
սելիս: Մյուս կողմից մտածում էր, որ եթե պառավը ողջ լի-  
նէր, կատարվածը մեծ վիշտ կլինէր նրա համար. շա՛տ մեծ...  
Ու նորից հոգոց էր արձակում ծերունին և «ախ-ախ» անում  
ակամա:

Կատարվածը պակաս չէր աղղել և երեխաների վրա. Յո-  
ղիկը, իր տխրութեամբ և ընդհանուրի վշտով համակված, ջու-  
թակի դասերը չէր կրկնում, և այս ոչ ոք չէր նկատում: Իսկ  
Ռաֆիկը ոչ միայն տխուր էր, այլև շփոթված: Նա, որ պատե-  
րազմի առաջին օրերից իր սենյակում կախել էր Սովետական  
Միութեան մեծ, պատի կեսը բռնող կարմիր քարտեզը և ամեն  
օր, դասերից հետո, գրոշավոր բորոցներ էր ամրացնում ռազ-  
մագծերի վրա, տխրելով, որ մեր զորքերը ժամանակավորա-  
պես թողնում են այս կամ այն քաղաքը, ուրախանալով, որ  
մերոնք քշում են թշնամուն գրաված գիրքերից, ու չէր քնում  
մինչև վերջին լուրերը չէր լսում և պապին չէր բացատրում  
դրութիւնը քարտեզի վրա, հիմա սակայն, մի քանի օր էր,  
հոր հեռանալուց հետո, կորցրել էր հետաքրքրութիւնը ոչ  
միայն դեպի քարտեզը, այլև դեպի ամեն ինչ. նրան չէին  
գրավում այլևս ո՛չ կինո, ո՛չ թատրոն, թողեց և շախմատ ու  
Ֆուտբոլ, էլ չեմ ասում ծաղրանկարները, որոնց մշտական  
առարկան քույրն էր՝ Յողիկը — ջութակը նվագելիս, մազերը

չութակի լարերին խառնված... Մի քանի օր նույնիսկ շգնաց  
դինավարժության, ուր դպրոցի բարձր դասարանների աշա-  
կերաները սովորում էին ոչ միայն դենքի տեսակների գործա-  
ծությունը, այլև դիրքեր փորելու, հրկիզող սուժեր հանգը-  
նելու և հակազազ գործածելու եղանակը... այդ վարժություն-  
ներից նա տուն դառնում էր, ճիշտ է, հոգնած, բայց միշտ  
զվարթ արամադրությամբ, երբևմն հակադադը գլուխն անց-  
րած՝ քրոջն ու մորը վախեցնելու կամ զվարճացնելու ցանկու-  
թյամբ:

Այս ամենը նա թողեց միանգամից, ու մի քանի օր դրպ-  
րոց շգնաց, այլ, պայուսակը ձեռին, տնից դուրս գալով,  
դպրոցի փոխարեն, կողմնակի փողոցներով (կողմնակի, որ  
ընկերների շհանդիպի) առաջին օրը գնաց Զանգուի ձորը,  
երկրորդ օրը՝ արամվայով բարձրացավ Նորք. երկու տեղն  
էլ թափառեց մինչև կեսօր, ապա վերադարձավ իբրև թե դրպ-  
րոցից, և տնեցիներից ոչ ոք, իհարկե, չիմացավ այդ: Եր-  
րորդ օրն արավ նույնը: Այդ թափառումների ժամանակ նրան  
գրադիցնում էին ամեն տեսակ մտքեր, մերթ մտածում էր  
տան ծախսերը թեթևացնելու համար դուրս դալ դպրոցից և  
մտնել ծառայության, բայց իսկույն էլ թողնում էր այդ միտ-  
քը, հիշելով, որ մայրը այդ թույլ չի տա—նա այնպես նա-  
խանձախնդիր է, որ ինքն, ու Յողիկը ստանան ոչ միայն միջ-  
նակարդ, այլև բարձրագույն կրթություն: Կամ մտածում էր,  
թե լավ չէ՞ր լինի արդյոք՝ թողնել դպրոցը, հեռանալ Երե-  
վանից և գնալ մի այլ քաղաք, հոր արածի ամոթը ամեն բո-  
պե շղդալու համար... Եղավ մինչև իսկ մի պահ, երբ Ռա-  
ֆիկը մտածեց դնալ ծեծել այն կնոջը, որ գայթակղել էր հո-  
րը, սակայն, ինքն իր մեջ կշռադատելով, գտավ, որ դա ավելի  
վատ կլիներ և ավելի ամոթալի: Այդ կինն ինչո՞վ է մե-  
ղավոր... Մեղավորը միայն իր հայրն է... Իր հայրը... Սա-  
կայն ինչ կարող է անել ինքը հորը. հանդիմանել, նախա-  
տել չէր կարող նրա քայլի համար... բայց մի՞թե կարելի էր  
թողնել այսպես... այն էլ՝ պատերազմի այս օրերին, երբ  
մարդիկ հայրենիքի համար զոհվում են սազմաճակատներում,  
նա սիրունի է պահում...

Եվ այս մտքերը, հոր այս վարմունքն այնպես էին ճնշում նրան, որ Ռաֆիկը, այդ ամոթից ազատվելու համար, դարձյալ գտնում էր, թե պետք էր մի բան անել, բայց թե ի՞նչ... որքան էլ մտածում էր՝ չէր գտնում ոչինչ։

Սակայն երբեմն այնքան էր տարվում այդ մտքերով, այնպես խորն էր զգում հոր վարմունքի ամոթը, որ քիչ էր մնում լաց լինի, մանավանդ երբ տեսնում էր ոչինչ անել չի կարող այդ ամոթից ազատվելու համար... Ու իր անզորությունը տեսնելով՝ մտածում էր, թե առայժմ պետք է այնպես անել, որ մայրիկը շատ չվշտանա... Իսկ երբ թափառումներից վերադառնում էր տուն, վերցնում էր մի գիրք, նստում մի անկյուն ու չէր կտրվում նրանից. թվում էր հափշտակված է այնքան, որ չի կարող ընդհատել, բայց ուշադիր նայողը կրտեսներ, որ նա թերթերը դարձնում է խմբով կամ շուտ-շուտ, նայվածքն էջերի վրայից սահեցնելով։ Թվում էր ինչ-որ ծանր խոհեր են զբաղեցնում նրան, ուզում է դարձյալ ինչ-որ վեճի ընդունել, բայց տատանվում էր։ Ծիշտն ասած, նորից մտածում էր՝ դպրոց դնա՞, թե քաղաքի որևէ մասը՝ թափառելու։

Բայց ահա մի օր, դա շորրորդ թե՛ հինգերորդ օրն էր, նորքից դառնալիս, իրենց տնից ոչ հեռու, նրա առաջն ելավ իր դասընկեր, իրենց գասարանի կոմերիտամիության քարտուղար Սուրիկ Սարունյը, կոճղի պես պինդ, սևամազ գլուխը բաց մի տղա և հարցրեց զարմացած.

— Ռաֆիկ։ Ո՞ւր ես, այ տղա։ Ինչո՞ւ դպրոց չես գալիս, — և էլ պատասխանի չսպասելով՝ շարունակեց արագ-արագ, թուխ, եռանդուն աչքերով զննելով ընկերոջը.

— Ես էլ կարծում էի, հիվանդ ես։ Քիչ էր մնում գայի տուն։ Ի՞նչ է պատահել։ Ո՞րտեղից ես գալիս այդպես՝ պայուսակով, բանով։

Ռաֆիկն իրեն հանցանքի մեջ բռնվածի պես զգաց։

— Ոչինչ, — ասաց նա, պայուսակը բնազդաբար թևի տակ սեղմելով։

— Ի՞նչպես թե ոչինչ։ Ի՞նչ է պատահել, որ ո՛չ դասի ես գալիս, ո՛չ ֆիզվարժություն, — շարունակեց տղան մի տեսակ հովանավորողի հեղինակավոր ձայնով և հարապատի սրտա-

ցավութեամբ:— Ի՞նչ կա. ճիշտն ասա, դու աչքիս մի տեսակ  
ես երևում: Երեկ ընկեր Տիգրանյանը հարցնում էր՝ «Ո՞ւր է  
Ռաֆիկը»... և ահա այսօր սխալի գայի քեզ մոտ, լավ էր հան-  
դիպեցի...

Հսելով հայոց լեզվի իր սիրելի ուսուցչի անունը, Ռաֆիկն  
ավելի անհարմար զգաց իրեն և շիմացավ ինչպես արդարաց-  
ներ իր բացակայութիւնը: Ասեր՝ հիվանդ է եղել՝ չէր կարող  
փողոցում լինելն արդեն հերքում էր այն: Ասեր՝ տանը գործ  
ունենր՝ ի՞նչ գործ կարող է խանգարել դպրոց գնալուն և, մյուս  
կողմից, ո՞րքան հարմար է խաբել մի ընկերոջ, որ այնքան  
մտերիմ էր իրեն, ուստի և ասաց.

— Գիտես, այնպես էր, որ չէի կարող գալ:

— Ի՞նչպես: Պա՛րզ ասա՝ հասկանամ: Մանր հիվա՞նդ  
ունեիր, ի՞նչ:

— Ոչ, ուրիշ բան կար:

— Չեմ հասկանում,— նեղացավ Սուրիկը ընկերոջ ծած-  
կամտութեան վրա:

Եվ Ռաֆիկը, որ Սուրիկին մտերիմ լինելուց բացի, ոչ մի  
գաղտնիք համարչա չէր պահում նրանից, մտածելով, որ նա  
հոր հեռանալը գուցե գիտի արդեն, իսկ եթե չգիտի՝ կարող  
է իմանալ այսօր կամ էգուց, պատմեց տանը պատահածը.  
այսինքն՝ առանց թաքցնելու պատմեց, որ հայրը կապ ունի  
ինչ-որ կնոջ հետ և հեռացել է տնից, և ահա ինքը... պար-  
զապես տրամադրութիւն շուներ գալու:

Սուրիկը բաց գլուխն օրորեց՝ ատամները սեղմած:

— Այդ վատ է, իհարկե, շա՛տ վատ: Չէի կարող երևա-  
կացել, որ այդպիսի բան է պատահել,— ասաց նա ցավա-  
կից ձայնով:— Բայց արժե՞ դրա համար վշտանալ և դրպ-  
րոցը թողնել: Դրանով, սիրելիս, չես օգնի ո՛չ քեզ, ո՛չ մո-  
րըդ, բայց ետ կմնաս դասերից: Չէ՛, Ռաֆո ջան, թող այդ  
տրամադրութիւնդ և վաղը եկ դպրոց:

Ռաֆիկը տանը կատարվածը պատմելով՝ թեթևացավ  
կարծես, բայց երբ Սուրիկը ցավակցեց իրեն, զգացվեց և ա-  
վելի անկեղծ եղավ:

— Գիտե՞ս, ճիշտն ասած, ամաչում եմ:

— Ամաշո՞ւմ... հը՛մ,— քթով փնշացրեց այդ կարճ, եռանդոտ աշքերով տղան:— Ի՞նչ ինչո՞ւ ես ամաշում, թող հայրդ ամաշի, որ այդպես անպատիվ, ամոթալի բան է արել: Ամաշո՞ւմ... Ի՛ն՛, գնանք:

Եվ նա Ռաֆիկին ուղեկցեց մինչև տուն՝ մերթ նրան խրախուսելով, որ դա մեծ վիշտ չդարձնի իր համար, որ դա կոմերիտականին վայել բան չէ, մերթ պատմելով, թե ո՛ր առարկայից ի՛նչ են անցել, կամ նոր դասը ո՛րն է, կամ ֆիզվարժությունից ի՛նչ են սովորել:

— Իսկ մրցման շե՛ք գնացել,— հետաքրքրվեց Ռաֆիկը, մոռանալով հորը:

— Էգուց պիտի գնանք: Անպատճա՛ռ արի:

Հասնելով տուն՝ նրանք փողոցում հրաժեշտ տվին իրար և Սուրիկը նորից հիշեցրեց, որ վաղը շմոռանա գալ:

— Քո անունը բացակա չեմ դնի, իմացի՛ր:

Ռաֆիկը խոստացավ, բայց երբ մտավ տուն՝ նորից քաշվեց իր անկյունը և, մի գիրք ձեռն առնելով, երկար խորհում էր ընկերոջ խոսքերի վրա. ինչո՞ւ իսկապես դպրոց չի գնում, եղածը, ճիշտ է, ամոթալի բան է, բայց ի՛նչ կարիք կա այդքան ընկճվելու, դպրոցը թողնելու: Ահա մայրը, շնայած հայրն անմիջապես նրան է վիրավորել իր քայլով, նա չի թողնում դպրոցը, դասերը, չի դադարեցնում կարը հիվանդանոցի համար. ահա պապը, որքան էլ տրխրում, ծանր է զգում, բայց իր ժամին կիսամուշտակը հագնում, ականջակալներով գլխարկը դնում է և շտապում գործարան: Վերջապես, Յոզիկը. ոչ մի օր չթողեց դասերը... Իսկ ինչո՞ւ է ինքն այսպես. ի՞նչ կարող է անել մտածելով կամ տխրելով:

«Թող նա ինքն ամաշի», կրկնեց նա ընկերոջ խոսքերը հոր հասցեին և հետևյալ օրը ինքն էլ գնաց դպրոց, մյուս օրը՝ հրացանն ուսին մասնակցեց մանևրներին, նույն երեկոյան էլ պահակ կանգնեց իրենց շենքի առաջ... հոր փոխարեն: Ինչպես յուրաքանչյուր շենքի շափահաս բնակիչ, այնպես էլ Ռաֆիկը և հայրը շաբաթը մի անգամ, գիշերը երկու ժամ պահակություն էին անում՝ տունը թշնամու հրը:

կիզող ումբերից պաշտպանելու, և դրա համար պետք էր արթուն մնալ և շրջել շնքի առաջ՝ մի բան լինելու դեպքում իմացնելու: Ռաֆիկն, ըստ սովորության, գնում-գալիս էր տան առաջ, բայց նկատում էր, որ ուրիշներն այդ շէին անում. ընդհակառակը, վատենում էին իրար և կանգնում հանդիսա դրուցում: Ուրիշ դեպքում երբեմն ինքն էլ մտնենում-մասնակցում էր կամ ունկնդրում մեծերի զրույցները, հիմա, սակայն, խուսափում էր, որ ստիպված չլինի բացատրութչուն տալ, թե ուր է հայրը: Նա այդ ժամերին մենակ շրջում էր ու մտածում դարձյալ հոր վարմունքի մասին, իր անելիքի մասին...

Ռաֆիկն ընկերոջը՝ Սուրիկին, ասաց, թե ինչո՞ւ էր ամաշում դպրոց գնալ, բայց նա դրանով շատաց ամբողջ ճշմարտութչունը. շատաց այն, ինչ իրոք մտահոգում էր նրան, այն, թե ուզում է մի այնպիսի բան անել, որ հոր արածը մոռացնել տա: Բայց զգաց, որ ինքը այդ բանը դժվար կարող էր բացատրել ընկերոջը, և լռեց: Սակայն, ինչպես առաջ, այնպես էլ հիմա, դպրոցում թե պահակութչյան ու ֆիզվարժութչյան ժամերին նրան զբաղեցնում էր այդ նույն միտքը, թե ի՞նչով կարող է հոր բերած արատը մաքրել իրենց վրայից և մոռացնել տալ նրա վարմունքը: Երբ այդ միտքը զարթնում էր մեջը՝ նա ընդհատում էր ընթերցումը տանը կամ անուշադիր էր թողնում ուսուցչի դասը դպրոցում և տարվում էր ծանր, տակավին անլուծելի հարցով. ի՞նչ կարելի էր անել իսկապես այդ ամոթից ազատվելու համար... Ու դարձյալ այնքան էր մտածում՝ քիչ էր մնում լաց լինի. կոկորդը սեղմվում էր և գլուխը կախում էր, որ ընկերները և ուսուցիչը չտեսնեն իր տխրութչյունը: Բայց, պետք է ասել, այդ պահերը երկար չէին տևում. նորից խորասուզվում էր դասերի մեջ և ժամերով զբաղվում այնպիսի ջանասիրութչյամբ՝ կարծես աշխատում էր մոռանալ մի բան կամ մրցում էր մեկի հետ:

Այժմ Ռաֆիկը բոլորովին փոխել էր սովորութչները. այլևս չէր գնում խաղի, զբոսանքի: Այժմ նրան համակել էր օտարոտի մի զգացմունք հոր դեմ.— ինքն էլ չէր կարող ասել՝ նրան մոռանալո՞ւ, նրան արհամարհելո՞ւ, թե նրանից վրեժ-

խնդիր լինելու... Միայն մտածում էր, թե քանի որ հայրն աշոպես բան է արել և իրենց թողեց-զնաց՝ ինքն էլ նրա կարիքը չի գլուխ հարող է անել սակայն, միայն լավ սովորել և այնպես լավ ավարտել, որ հայրը չկարծի, թե մինչև հիմա իր շնորհիվ էր լավ սովորում: Նույնը Ռաֆիկը ներշնչում էր քրոջը:

Ցողիկը, որ ջուլթակը նվագում էր մեծ մասամբ այն պահերին, երբ եղբայրը վերջացնում էր պարապմունքը, շեշտակալով խանդարել նրան, վերջերս մի օր հարցրեց, թե նա ինչո՞ւ չի գնում գրասենյու կամ ֆուտբոլ խաղալու:

Ռաֆիկը հասկացավ նրա հարցի իմաստը և պատասխանեց.

— Կարող ես նվագել, ինձ չես խանդարում:

— Ես այդ չեմ ասում, Ռաֆո, դու հիմա շատ ես պարապում:

— Շա՞տ: Կավ կլինի դու էլ շատ պարապես, Ցողիկ: Նվագիր՝ որքան կարող ես: Ես քեզ չեմ խանդարի:

Ու կամենալով, ասես, նրան էլ ներշնչել գերազանց սովորելու միտքը՝ ավելացրեց.

— Մենք պետք է այնպես լավ սովորենք, Ցողիկ, որ նա չկարծի, թե ինքն էր մեզ սովորեցնում:

— Նա՞՛ր՝ ո՞վ, — տարակույսով հետաքրքրվեց Ցողիկը և ինքն էլ պատասխանեց. — պապա՞ն:

Ռաֆիկը գլխով արավ.

— Այո:

Դասերից ազատ ժամերին Ռաֆիկը երբեմն աշխատում էր օգնել մորը կամ, ավելի շուտ, տեսնելով պապի ընկճված տխուր տեսքը, ծածուկ հառաչանքները՝ կարեկցանքի պես մի բան էր զարթնում նրա սրտում և կուզեր մխիթարել պապին, ցրել նրա տխրությունը, ինչպես անում էր մի տարի առաջ, երբ տատը մեռավ, և պապը մնաց տխուր ու մեռալի: Չիմանալով ինչպես վանել կամ մեղմել նրա վիշտը՝ Ռաֆիկը երբեմն ուղիղն միացնում էր և ասում. — «Լսենք, պապի, տեսնենք ի՞նչ են ասում»... Այդ պատերազմից մի



քանի ամիս առաջ էր: Այժմ էլ, հին սովորութեամբ, անում էր նույնը:

— Էտենք, պապի, տեսնենք ի՞նչ են ասում պատերազմից: Նա ինքն էլ ուզում էր իմանալ պատերազմի վերջին լուրերը:

Եվ նրանք լսում էին միաստամ, ապա խոսում պատերազմից:

Պապը, ինչպես միշտ, կործանում էր ցանկանում «զապան դերմանացիներին», իսկ երբ անցնում էին նրանց ավերիչ ուժերին ու տանկերին՝ Ռաֆիկը մտածում էր, թե մերոնք ունեն այնպիսի գերհզոր հրանոթներ, որ Ֆաշիստներին կքշեն մեկեն և դրաված քաղաքները ետ կառնեն ավելի արագ: Բայց ավելի երազում էր ինքը կարողանար հանկարծ հնարել այնպիսի մի հզոր զենք, որ միանգամից ոչնչացնեի գերման բանակները: Եվ դա, նրա կարծիքով, հիանալի բան կլինեի թե՛ երկրի համար, թե՛ իր համար... ինքը կշահեր նրանով, որ այդ գյուտը մոռացնել կտար հոր արարքը... Ինքն էլ չէր ամաչի դրա համար... Վերջին լուրերը լսելուց հետո նա, ինչպես միշտ, գրոշավոր քորոցները տեղափոխում էր, մտածելով շարունակ իր անելիք գյուտի մասին:

Եվ ահա մի օր էլ, երբ նա դբադված էր այդ աշխատանքով, Յողիկը մեծ զգուշութեամբ մտածեցավ եղբորը և կամաց, շատ կամաց, այնպես, որ մայրը չլի երեի, դադտնիք հաղորդողի նման շուրջը նայելով, հայտնեց, թե պապային տեսել է:

Ռաֆիկը նախ զարմացած, ապա կարծես բարկացած՝ քորջը նայեց և հարցրեց դժգոհ.

— Ո՞րտեղ:

— Փողոցում:

Ու Յողիկը պատմեց՝ ի՞նչպես էր տեսել, ի՞նչ էր խոսել և թե ամաչելուց ինչպես չէր կարողացել երկար խոսել:

Ռաֆիկը հոնքերի տակից նայեց քորջը, լսեց մի երկու վայրկյան և ապա տնքաց:

— Իսկ հետո քեզ բան տվե՞ց:

— Բա՞ն, — տարակուսեց Յողիկը: — Ի՞նչ պիտի տար որք  
Ոչի՞նչ էլ շտվեց:

Ռաֆիկը լռեց նորից մի վայրկյան, ապա հետաքրքրու-  
վեց.

— Իսկ իմ մասին բան հարցրե՞ց:

— Չէ: Մենք երկար շխտեցինք:

— Իսկ եթե հարցնեիր՝ ի՞նչ պիտի ասեիր:

— Ի՞նչ: Չգիտեմ, — և Յողիկն ուսերը թոթվեց մանկան  
պարզությամբ: — Ասենք, կարող էի ասել՝ «Լավ է, սովորում  
է». բայց շհարցրեց, որովհետև երկար շխտեցինք, — ավելաց-  
րեց Յողիկը շգիտես հավաստելու ինչ-որ, թե արդարանալու  
համար: — Իսկ եթե քեզ պատահի՝ չե՞ս խոսի, — հարցրեց  
հանկարծ Յողիկն իր հերթին:

— Ե՞ս, — գարմացավ Ռաֆիկը և ձեռքը թափ տվեց: — Ի՞նչ  
խոսեմ... Ես խոսելու բան չունեմ, բայց դու մամային շասես,  
թե հանդիպել ես նրան, — մի երկվայրկյան լռելուց հետո զգու-  
շացրեց նա քրոջը: — Չասե՛ս...

— Չէ, իհարկե, չեմ ասի, — խոստացավ Յողիկը տարա-  
կույսի մեջ, լավ շհասկանալով, թե ինչո՞ւ համար է եղբոր  
այդ ղզուշացումը: Բայց մի փոքր լռելով՝ նա հանկարծ դար-  
ձավ եղբորը. — Իսկ ինչո՞ւ, Ռաֆիկ, սլապան այդպես արավ.  
Թողեց ու գնաց:

Ռաֆիկն այս անդամ էլ ձեռք թափ տվեց մեծի պես:

— Ի՞նչ այդ թող, Յողիկ: Ի՞նչ այդ շես հասկանա: Եվ  
մամային էլ այդպիսի բան շհարցնես: Իմացա՞ր:

Յողիկը մտածմունքի մեջ ընկավ. նա մորն, իհարկե,  
չէր հայտնի այդ մասին, բայց չէր հասկանում, թե ինչո՞ւմն  
էր իր հարցի անպատեհությունը, որ Ռաֆիկը ձեռք թափ տը-  
վեց այդպես: Իսկ Ռաֆիկը, մինչ այդ հիշելով իր հանդիպու-  
մը հոր հետ, որ եղել էր այդ օրը, մռայլվեց և նորից դար-  
ձավ քրոջը.

— Յողիկ, եթե նորից հանդիպես նրան (նա շուղեց ա-  
սել պապային) և նա քեզ փող առաջարկի՝ շվերցնես:

Նախքան խոսելը՝ Յողիկն աչքերը հասեց եղբոր երեսը:  
Եղբոր ոչ միայն խոսքերը, այլև խոսելու եղանակը Յո-

դիկին թվացին արտակարգ խորհրդավոր, և նա ուզեց այդ պարզել:

— Իհարկե, շեմ վերցնի: Բայց ինչո՞ւ. եթե տա՛ ի՞նչպես հրաժարվեմ...

— Մի՛ վերցրու, վերջացավ գնաց:

— Բայց ինչո՞ւ, — կրկնեց Յոզիկը:

— Ինչո՞ւ, — զարմացավ Ռաֆիկը քրոջ վրա: — Մի՞թե շեմ հասկանում, որ եթե վերցնես՝ նշանակում է մամային շեմ հարգում:

— Ինչպես թե շեմ հարգում, — նեղացավ Յոզիկը: — Երբ տեսնում եմ նրան տխուր՝ քիչ է մնում լաց լինեմ... «Չեմ հարգո՞ւմ», — կրկնեց նա գրեթե լացակումած:

— Ես այդ շեմ ասում, — հանգստացրեց Ռաֆիկը քրոջը: — Ես գիտեմ, որ դու և՛ հարգում, և՛ սիրում ես մամային: Բայց ասում եմ՝ եթե նրանից փող վերցնես և այդ մաման իմանա՛ լավ չի: Հասկացա՞ր...

Յոզիկը նորից մտածմունքի մեջ ընկավ և քիչ հետո հարցրեց.

— Իսկ պապան, Ռաֆիկ, ե՞րբ պիտի վերադառնա:

— Չեմ հասկանում, ի՞նչ ես ասում, — աչքերը կկոցեց Ռաֆիկը: — Ի՞նչ վերադառնալ: Ես արդեն գնաց, էլի:

— Գնա՞ց: Բոլորովի՞ն:

— Իհարկե:

Յոզիկը կանդ առած աչքերով նայեց եղբորը:

— Ի՞նչպես, ուրեմն էլ չի՞ գա, — զարմացավ Յոզիկը:

— Իսկ դու ուզո՞ւմ ես գա, — հարցրեց Ռաֆիկը անըստ պասելի բարկացկոտ ու արհամարհոտ ձայնով, որից Յոզիկը միայն ուներ վեր քաշեց.

— Չգիտեմ...

Ու կրկուն էլ լռեցին:

— Ռաֆո, — քիչ հետո զգուշությամբ հարցրեց Յոզիկը:

— Պապան... վա՛տ մարդ է:

— Վա՛տ, — երկարեց Ռաֆոն: — Եթե վատ չլինեիր՝ մամային այդպես կվիրավորե՞ր:

Նորից լռեցին՝ եղբայրը հուզված, քույրը տխուր մտքե-  
րի մեջ:

— Ուրեմն պապը դրա համար է շարունակ տնքում,—  
փոքր անց խոսեց Յոզիկը:— Գիտես, նա ավելի շատ է դարձ  
պնում, քան մաման: Տնքում է, հառաչում, մեկ-մեկ էլ, նկա-  
տե՞լ ես, խոսում է ինքն իրեն:

— Այո,— հաստատեց Ռաֆիկը:— Գիշերները համարյա  
չի քնում:

— Բայց երբ տեսնում է մամային՝ կարծես փոխվում  
է,— նկատեց քույրը,— և միշտ սիրտ է տալիս նրան:

— Այո, եթե պապը շիներ, մաման, երեի, շատ կտըխ-  
րեր... Հա՛վ է, որ պապը ողջ է. եթե նա էլ տատի պես մե-  
ռած լիներ...

Պապն, իրոք, ոչ միայն հարսին էր մխիթարում, այլև  
օգնում էր նրան տնային գործերում, այլև շատ հաճախ  
հետևում էր, որ երեխաները ժամանակին գնան դպրոց,  
«դաս սերտեն», ու գոհ էր լինում, երբ Ռաֆիկը քիչ էր դուրս  
գալիս տնից, առաջվա պես շուտ-շուտ կինո, թատրոն չէր  
գնում և մանավանդ Ֆուտբոլ չէր խաղում, ինչ որ ծերունին  
տանել չէր կարողանում, համարելով դա անզրիական հիմա-  
րուխտ: Իսկ Յոզիկի նվագը խրախուսում էր. թեև տրամա-  
դրուխտներ նվագի չէր: Գիտեր, որ դա հարսի սրտովն էր՝ դրա  
համար... Ասե՛նք՝ փականագործն ինքն էլ գոհ էր, որ Յոզիկը  
մի քան ավելի է սովորում: Թեև երաժշտուխտներ կնոջ համար  
ապրուստ ապահովող մասնագիտուխտն, գործ չէր համա-  
րում, բայց ուզում էր, որ Յոզիկը չկարվեր սկսածից, մա-  
նավանդ որ լսել էր, թե ուսուցիչները հավանում են և «լավ  
կարծիքի են»:

«Էհ, երեխաներ են,— ասում էր ինքն իրեն,— թող սրբա-  
ներն ուղած քանը սովորեն, մի օր պետք կգա»:

Ծեր փականագործի համար անպետք արհեստ, աշխա-  
տանք չկար: Ամեն քան կարող էր կյանքում պետք գալ. մար-  
դը, նրա կարծիքով, որքան շատ քան իմանա՝ այնքան  
լավ: Եվ ինքը, լինելով փականագործ, տանը անում էր ինչ  
կարող էր. առավոտը, երբ ամենքը քնած էին լինում, կաշե

պայուսակը ձեռքին՝ գնում էր շուկա, կատարում էր անհրա-  
ժեշտ գնումները և, տուն բերելով, շատ բան, մինչև գոր-  
ծարան գնալը, ինքն էր մաքրում-պատրաստում, որ հարսը,  
դպրոցից գալով, «նեղութուն չբաշխ», բացի եփելուց: Երբեմն  
էլ, երբ ազատ էր լինում, ասենք՝ կիրակի օրերը, ինքն էր  
եփում այս կամ այն կերակուրը, որ Մարիկան հանգստանա-  
տեղացի, առավոտները, օրվա պարենը բերելուց հետո, նա  
գնում էր գործարան, ուր աշխատում էր միայն շոշա ծամ,  
երբեմն, իր ցանկությամբ, ավելի, կատարելով փականագոր-  
ծական սովորական, ոչ ծանր աշխատանքներ, շրջապատված  
հին բանվորներով և նոր պատանի աշակերտներով, որոնց  
սովորեցնում էր երկաթի ու մեքենաների հետ վարվելու  
կերպը:

Սյուսեհտե, տուն վերադառնալիս, հետը բերում էր հա-  
ճախ որևէ նոր մթերք և, փոքր-ինչ հանգստանալուց հետո,  
օդնում հարսին ճաշի սեղանը պատրաստելու իսկ ճաշից  
հետո, երբ երեխաները գնում էին, նրա ասելով, «դառ սեր-  
տելու», նա առժամ մնում էր սեղանի մոտ և հոգոցներ ար-  
ձակում, երբեմն այնպես ախրագին, որ Մարիկան ստիպ-  
ված էր լինում ինքը մխիթարել նրան.

— Շատ մի մտածի, հայրիկ, — ասում էր նա ինքնավրս-  
տահ, բայց տրտում ձայնով: — Կապրենք մեր աշխատանքով:  
Շուտով Ռաֆուն կմեծանա և ամեն բան լավ կլինի: Իսկ ոչ  
միայն քո որդու հայրն ես, այլև՝ իմ...

— Ես քեզնից շնորհակալ եմ, Մարիկա, — իսկույն վրա  
էր բերում ծերունին զգացված: — Բայց էսպես շպիտի լի-  
ներ, է՛...

— Եղավ, ինչ կարող ենք անել, հայրիկ, — ուները վեր  
էր քաշում Մարիկան: — Պատահում է:

— Ախր ես շտեսնեի դոնե...

Ու ծերունին տնքալով գլուխը կախում էր կրծքին:  
Իսկ ընդհանրապես առանձնանում էր և ժամերով լռում,  
երբ մանավանդ այցելուներ էին գալիս՝ հարսի եղբայրները  
կամ քույրերը, այսպիսի դեպքերում նա ոչ միայն ամաշում,  
այլև ասես իրեն մեղավոր էր զգում որդու արարքի համար:

նրան թվում էր, որ մարդիկ պիտի մտածեն, թե բավական չէ  
 որդին այդպես վարվեց, ինքն էլ բեռ է մնում հարսի վրա...  
 Ու հոգոցներ էր արձակում ավելի հաճախ և նորից տարվում  
 մտածումներով: Շատ բան էր մտածում նա, բայց առայժմ  
 ոչինչ չէր ասում: Զգացվում էր միայն, որ ինչ-որ ծանր,  
 գաղտնի մտքերի ետևից է ընկած: Բայց նրա այդ մտքերն,  
 իրոք, մի հարցի շուրջն էին դառնում: Թե՛ գործարանում՝  
 աշխատանքի ժամանակ, թե՛ տանը և թե՛ անգամ հարսի ու  
 թոռների հետ խոսելիս, չէր մոռանում կատարվածը և մտա-  
 ծում էր, թե ինչպես անի, որ հարսն ու տղան հաշտվեն նորից  
 և ընտանիքում վերականգնի նախկին վիճակը: Մերթ մտա-  
 ծում էր, թե գուցե Բագրատն ինքը գա ներողութուն խնդրի,  
 եթե մի բան կա, իսկ եթե չկա՝ համարձակ ասի, թե այդպիսի  
 բան չկա: Մերթ էլ, կարծում էր, թե Մարիկան լուծի ազդե-  
 ցության տակ տուքացավ, շուտով գուցե սթափվի և... հաշտ-  
 վեն նորից: Բայց տեսնելով օրեր են անցնում և ոչինչ չի  
 փոխվում՝ նա տխրում էր ավելի ու տարվում էր իր մըտ-  
 քերով, ու այդ մտածումների ժամանակ շարունակ հիշում էր  
 մոտ մի տարի առաջ մեռած իր պառավին և ցավում, որ նա  
 ողջ չէ. եթե նա ողջ լիներ, բանն այսպես չէր լինի. նա ավելի  
 համարձակ կխոսեր հարսի հետ (ինքը քաշվում էր այդ նուրբ  
 խնդրի շուրջը խոսք բանալ), իսկ տղան թերևս զգուշանար  
 և շհեռանար տնից կամ շաներ այդպիսի ամոթաբեր քայլ:  
 Ասենք, նա իր պառավին հիշում էր ամեն անգամ, երբ նեղն  
 էր ընկնում, երբ որևէ տեղը ցավում էր կամ երբ խորհրդի  
 կարիք էր զգում: Իսկ հիմա, վերջին օրերը, հիշում էր հա-  
 ճախ, որովհետև ինքն իսկապես անվճռականության մեջ էր  
 և խորհրդի կարիք էր զգում, քանի օր էր մտածում էր գնալ  
 որդու հետ խոսել և համոզել, որ վերադառնա, բայց չգիտեր  
 ինչպես կվերաբերվեր հարսը. կընդունե՞ր արդյոք: Ու տա-  
 տանվում էր. չէր իմանում՝ նախ հարսի՞ հետ խոսեր այդ մա-  
 սին, թե՞ որդու մոտ գնար: Համենայն դեպս՝ պետք էր մի բան  
 անել. և պետք է աներ ինքը՝ հայրը. նրան թվում էր՝ ինքը չէր  
 կարող անտարբեր լինել. գուցե մեջտեղը ոչինչ չկա, գուցե  
 միայն թշնամու խոսք է, ինչո՞ւ խեղճ տղան այնտեղ տանջվի,

հարսն այստեղ: Իսկ եթե մի բան էլ կա՝ պետք է այնպես  
անել, որ հաշտվեն ու ներեն իրար:

Եվ ծերունու այս տատանումը տևեց շաբաթից ավելի և  
մի օր, վերջապես, նա որոշեց գնալ որդու մոտ:

Ու գնաց:

Մի շաբաթ օր, գործարանից վերադառնալիս, իր կաշվե  
կիսամուշտակը հաղին և առհասարակ գործարանային իր  
հաղուստներով, մտավ որդու հիմնարկը, ուր երբեք չէր եղել:  
Հենց նախասենյակում տեսավ, որ հավաքարարուհին, պարզ  
արսահագուստով մի տարեց կին, լաթը ձեռին սրբում էր  
լուսամուտի փոշին, և խնդրեց.

— Եթե կարելի է, քույրս, Բագրատ Արեսյանին կանչի դա:

— Ինչո՞ւ, — զարմացավ հավաքարար կինը: — Կարող նս  
գնալ մոտը, ախպեր ջան: Գնա՛ մոտը:

— Չէ, մատաղ: Ասա դա: Ասա հերդ կանչում է:

Հավաքարար կինն ավելի զարմացավ.

— Հե՞րը: Դու ընկեր Արեսյանի հե՞րն ես, — ասաց նա,  
չհավատալով կարծես, որ հասարակ մուշտակ հագած այդ  
մարդը իրենց դիրեկտորի տեղակալի հայրը լինի: Ու, էլ շրս-  
պասելով ծերունու պատասխանին, կինն արագ գնաց և, եր-  
կու վայրկյան շանցած, դուրս եկավ Արեսյանը՝ գլխաբաց,  
միայն պիջակով, այլայլումից կարմրած ու զարմացած:

— Հայրի՛կ, ի՞նչ կա, — հարցրեց նա ինչ-որ լավ բան  
չսպասելով. հիշեց Յողիկի խոսքերը, որ կինը հիվանդ էր,  
ու մտածեց, որ թերևս բան էր պատահել և հայրը եկել էր  
իրեն կանչելու:

Բայց հայրը, պատասխանի փոխարեն, առաջարկեց.

— Գնանք դուրս, բան ունեմ ասելու:

Ու ծերունին առաջ ընկավ. դուրս եկան միջանցքից և  
նա սկսեց զգուշորեն իջնել աստիճաններով, ձեռները կաշվե  
կիսամուշտակի գրպանները դրած:

Եվ Արեսյանը, գլխաբաց, առանց վերարկուի, հնազանդ  
հետևեց հորը, ինչպես կաներ տղա ժամանակ:

— Բայց ի՞նչ կա, հայրիկ, — նորից հետաքրքրվեց նա  
սանդուղքի վրա:

— Գնանք՝ կասեմ:

Երբ նրանք իջան շենքի բակը՝ ծերունին, խոսելու փոխարեն, նախ զննաբար շուրջը նայեց, ապա տնքաց սրտախոր մի հառաչով:

— Բա էս բան էր, Բագրատ, որ դու արիր: Ինչո՞ւ ես ուզում ինձ կենդանի թաղել, հը՞...:

— Հայրիկ, նա խանդում է, հավատացիր, շափազանցնում է,— ուզեց կարճ կտրել Արեսյանը, բայց հայրը նրան ընդհատեց անմիջապես:

— Էդ թող, ամո՛թ է: Բա էսպես օրերին էդպես բան: Մարդ էլ իրա ընտանիքը կթողնի կերթա՞... — աչտեղ ծերունին հուզումից շունչ առավ և շարունակեց: — Ի՞նչ է եղել՝ շեմ իմանում: Հիմի պետք է հաշտվեք, երեխեքը մեղք են: Իսկի՞ մտածում ես ինչ կասեն խալխը: Իմ ծեր օրերին էս էր պակաս: Կավ է մերդ սաղ շի, թե չէ խեղճի սիրտը կճաքեր: Սա ի՞նչ բան էր, որ դու արիր: Մեր գերդաստանում ո՞վ էր տեսել էսպես բան: Հը՞... Առանց դես ու դենի՝ ճաշին վեր կաց ու արի տուն: Ամո՛թ է:

— Ախր, հայրիկ...

— Էլ ի՞նչ հայրիկ, երբ ես մեռած եմ ու թաղած շեմ: Ես ամոթից գետին եմ մտնում, հասկանո՞ւմ ես: Չէ, էսպես շի ըլնի. ճաշին արի ու հաշտվի:

— Իսկ նա կհաշտվի՞ որ,— կասկածով հարցրեց Արեսյանը, մտածելով, թե հայրը գուցե եկել է կնոջ համաձայնութչամբ: — Նա այնպես է պատկերացնում, թե ես... Չգիտեմ ինչ... — Եվ Արեսյանը շուրջը նայեց տեսնելու իրենց ականջող շկա՞ արդյոք, ու համոզվելով, որ մարդ շկա՞ շարունակեց, ձայնն ավելի իջեցնելով. — Չտեսա՞ր, նա ինձ դուրս արավ համարյա...

— Էդ ոչինչ: Կին է, նեղացած էր, կպատահի: Դու արի ներողութչուն խնդրի, սիրտն առ:

— Ներողութչո՞ւմ,— գլուխն իջեցրեց Արեսյանը վարանքով:

— Հա, ի՞նչ կա որ: Ներողութչունը մեծ բան է:

— Ներողութչուն խնդրեմ, կասի ուրեմն մեղավոր եմ:



— Բա ո՞նց պիտի ըլնի: Դու ներողութեան շինդրես, նա շահաշովի. դրա վերջն ո՞ւր կերթա: Ուզում ես բոլորովին խայտառակվե՞նք:

Արեսյանը դեմ չէր տուն վերադառնալուն, բայց ուզում էր չքմեղ ձեանալ հոր առաջ. սակայն ներողութեան խնդրել՝ նշանակում էր հանձն առնել, հաստատել հանցանքը, ու համառում էր. կուզեր որ կինն ինքը համաձայնէր կանչել իրեն և հաշտվեր:

— Ես դեմ չեմ, հայրիկ, — ասաց նա, — բայց նա այնքան խիստ է, որ իմ ներողութեանն էլ չի ընդունի, թեև...

Նա ուզում էր ասել «ներողութեան խնդրելու բան չկա», բայց լռեց:

— Կընդունի՛, կընդունի՛, — գլխով արավ ծերունին, — ևս կխոսեմ՝ միայն թե դու արի:

— Խոսիր:

— Ուրեմն կգա՞ս, — և ծերունին, գրեթե աղաչական, նայեց որդուն:

— Ծրբ համաձայնութեան առնես, իհարկե:

Եվ ծեր փականագործն ուրախ-ուրախ վերադարձավ տուն: Նրան թվում էր, թե գործի դժվար մասն արված է. եթե որդուն համոզեց, հարսին էլ կհամոզի անշուշտ: Ուստի և, տուն մտնելուն պես, կաշվե կիսամուշտակը հանելով՝ հաղթանակ տարածի աես. շտապեց հարսի սենյակը. ժամը հարմար էր. երեխաները դպրոցից դեռ չէին եկել, իսկ Մարիկան մենակ տեսրակներ էր ուղղում: Ծերունին թեթև քայլերով մոտեցավ նրան և կամաց, շատ կամաց, այնպես, որ մեկը կարող էր ասես իրեն լսել, հարցրեց.

— Մարիկա, ես ուզում եմ քեզ հետ խոսեմ, ժամանակ ունե՞ս:

— Խնդրեմ, հայրիկ, — և Մարիկան առջևի տեսրակները հրեց մի կողմ ու հայացքը սևեռեց կեսրարի երեսը, կամենալով կարծես նախագուշակել, թե ի՞նչ է ասելու արդյոք:

Հարսի այդ պատրաստակամութեանից ծերունու կնճիռները բացվեցին և նա ուրախ առաջին պատահած աթոռին նրստելով ու պինդ, համարյա շժալվող մատներով ձեռները ծընկ-

ներին հենելով, անմիջապես, անանց նախաբանի գործի ան-  
ցավ, հաջողութեանը վստահ մարդու տրամադրութեամբ:

— Ես, Մարիկա, երկար մտածելուց հետո ուզում եմ քո  
խորհուրդը հարցնեմ. լավ չէ՞ր լինի մի օր գնացի Բագրատի  
մոտ և հանդիմանեի, նախատեի ու... եթե դու դեմ չես՝ ևս  
կանչեի, բերեի տուն... — Ծերունին լռեց մի պահ և բարու-  
թյամբ ու ակնկալութեամբ լի աչքերը հառեց հարսի երեսը: —  
Ախր էսպես չի լինի, մատաղ, դու էլ ես մեղք, երեխաներն  
էլ... էսպես ո՞նց կլինի: Ի՞նչ կասես:

Մարիկան երկար թարթիչներով աչքերը մի պահ խոնար-  
հեց, ապա նորից հառեց կեսրարի խորշոմած, կնճռապատ  
դեմքին, որի վրա կարճ, ճերմակ մաղերն ասես կծղել-չորա-  
ցել էին, և մեղմ, այնքան մեղմ, որ լսողը շնեղանա, ասաց  
հարցումի ձևով.

— Կարիք կա՞, հայրիկ, որ քեզ նեղութիւն պատճառես —  
եվ ինքն էլ պատասխանեց: — Ես կարծում եմ՝ չարժի: Ես,  
իհարկե, պնահատում եմ քո աղնիով զգացմունքները, բայց  
չէ՞ որ ինքը թողեց-գնաց, հայրիկ: Հիմա ես ի՞նչ կարող եմ  
անել: Վատ քայլն արել է ինքը, հեռացել է ինքը — ես ի՞նչ  
անեմ... Մի՞թե կուզեիր, որ ես ստորանայի: Չէ՞ որ նա կարող  
է կարծել, թե ես եմ խնդրում, որ վերադառնա...

Մարիկան լռեց մի պահ և ապա շարունակեց ավելի հան-  
գիստ.

— Մի՞թե ես չեմ կարող տուն պահել, երեխա պահել և  
կրթել:

— Դժվար է, Մարիկա, դժվար է, աղջիկս: Այ գիշեր-  
ցերեկ ես անում, կհոգնես և, վերջապես...

— Ոչ, հայրիկ, ինչո՞ւ եմ հոգնում: Այ հազարավոր տղա-  
մարդիկ գնացել են բանակ՝ մի՞թե նրանց կանայք չեն աշ-  
խատում: Աշխատում են և տոսն պահում: Նույնը անում եմ  
և կանեմ ես: Աշխատում ես և դու, հայրիկ: Մի՞թե երկուսով  
չենք կարող մի երկու երեխա պահել:

— Բանը, Մարիկա, երկու երեխա պահելը չի ախր, — խեղ-  
ճացավ մեկեն ծերունին: — Ես ու դու էդ կարող ենք: Հարցը

մեր գերդաստանի պատվի մասին է: Էնպես անենք, որ էս  
ամոթը վերանա մեզնից. եթե մի երկունս իմացել են, հա-  
զարը շիմանա. իմ միտքն էս է... — Եվ ծերունին աղաչական  
նայեց հարսին: — Ուրեմն ի՞նչ կասես, գնա՞մ, թե չգնամ...  
Մխալվել է, ասենք, գլուխը քարովն է տվել, երեսը պատո-  
վը — բա էսպես մնա՞: Մեր տան, գերդաստանի անունը խաչ-  
տառակե՞նք: Ախր քեզ համար է: լավ չի, իրա համար էլ...

— Ճիշտ ես ասում, հայրիկ: Ես նույնպես մտածում եմ  
այն անպատվության մասին, որ հասցրեց նա իր քայլով ինձ,  
քեզ և ընդհանրապես... Ի՞նչ պիտի զգան երեխաները՝ այս  
ինձ ավելի է տանջում: Ես չէի ուզի, որ այս քանն իմանային  
նրանք և... կտրվեին իրենց հորից...

Լսում էր ծերունին հարսին և լռում շվար. նրան թվում  
էր, թե ինքը ևս մեղավոր է հարսի առաջ. չէ՞ որ նրան վիրա-  
վորանք հասցնողը իր որդին է:

— Լավ, ասենք էդպես: Բա էսպես մնա ի՞նչ կասեն  
խաչիսը: Մարդիկ պատերազմ են գնում, զոհվում — սրանք  
էստեղ իրար հետ չեն կարում ասրել:

Մարիկան գծվար կացության մեջ էր զգում իրեն, մի  
կողմից՝ չէր ուզում կարուկ մերժումով վիրավորել ծերունու  
զգացմունքները, մյուս կողմից՝ ավելորդ էր համարում նրա  
հարուցած հարցը, ուստի և մեղմաբար, կեսրարին շվիրավո-  
րելու համար, նկատեց.

— Զարժի, հայրիկ... ավելի լավ է՝ զբաղվենք մեր գոր-  
ծով...

Երբ Մարիկան երբեմն անդրադառնում էր իր վարմուն-  
քին, այն՝ որ լսած օրն իսկ ամուսնու երեսովը տվեց նրա  
հանցանքը, գտնում էր, որ ինքը ճիշտ է վարվել, չէր կարե-  
լի այդպիսի մի բան իմանալ և լռել, ասրել կեղծ վիճակով...  
Այնժամ նրան վրդովում էր, որ ամուսինը խաբել է իրեն և  
ուզում է նորից խաբել, ու քանի օր այդ վրդովմունքը չէր  
անցնում... Սակայն հիմա նա ամենի մասին խոսում էր հան-  
գիստ. ասես հաշտվել էր իր վիճակի հետ և չէր ուզում նո-  
րից հուզել սիրտը. աշխատում էր կարծես մոռանալ և չհի-  
շել ոչինչ:

Հարսի այդ փափուկ մերժումից հետո՝ ծեր փականագործն այլևս բան չխոսեց, նույնիսկ՝ փորձ անգամ չարավ. այժմ նա իրեն ավելի անմխիթար էր զգում, քան մինչև խոսելը: Այն, ինչ նրան թվում էր, թե գիշերները երկար խորհելով, հազիվ գտել էր ելքը (կարծելով եղածը թշուրիմացություն է, սուտ լուրերի արդյունք), հիմա սակայն էլ ելք, անելիք չէր մնում կարծես:

Եվ նա, ինչպես զգույշ մտել էր հարսի սենյակը, այնպես էլ զգույշ, բայց ծանր քայլերով դուրս եկավ այնտեղից: Ու այդ սրվանից ավելի անձնատուր եղավ իր խորհրին և դարձավ ավելի լուակյաց ու տխուր: Հիմա, թվում էր, ավելի է ամաչում հարսից, որ այդպիսի տղա է դաստիարակել, թվում էր՝ ամաչում է և թոռներից, որ որդին թողել է նրանց անտեր, և դարձյալ խորհում էր անվերջ, թե էլ ինչ կարելի է անել, որ տանը, ընտանիքում վերահաստատվի առաջվան դրությունը:

Ծերունին կարծում էր, որ հարսն ազնիվ է, իրավացի է, բայց այնուամենայնիվ այսպես թողնել, այսպես շարունակել չէր կարելի, պետք էր մի բան անել, և նրան թվում էր, թե հարսը համառում է իզուր:

Ու մի բանի օր ծեր փականագործն այդ մտքերի հետ էր, և մի օր էլ նա գնաց հարսի մեծ եղբոր հետ խորհրդակցելու, որ սա գոնե համոզի քրոջը՝ որդուն ետ բերելու, մանավանդ որ նա տրամադիր էր գալու և սպասում էր կնոջ համաձայնության:

— Չեմ կարծում, թե բան դուրս գա, բայց կխոսեմ, խնամի, — համաձայնեց նա, և նույն օրը եկավ քրոջ հետ խոսելու:

Նրանք առանձնացան Մարիկայի ննջարանում, և եղբայրըն սկսեց առանց առաջարանի, ասաց, ինչ ծերունին ցանկացել էր, իր կողմից նույնպես ավելացրեց, թե լավ կլինի հաշտվել. սխալ է կատարվել, թշուրիմացություն է, թե մեղանշել է՝ պետք է ներել. երևի նա էլ տանջվում է իր արածից:

Մարիկան, որ կեսրարի առաջարկը լսել էր առանց հու-

զումի և նրա հետ խոսել էր առանց վրդովմունքի նշան ցույց տալու, և զրոր խոսքերից վիրավորվեց։

— Ինչո՞ւ ես ուղում ինձ ստորացնել, Հաբեթ, — ասաց նա ծանրաշեշտ, հոնքերն իրար բերելով։ — Կարծում ես առանց նրան կմեռնե՞մ... Ոչ, ևրկու երեխա են, նրանց ապագան իմ կյանքի նպատակն է։ Կաշխատեմ՝ կապրենք։ Ավելորդ է։ Երբ մի քանի օր առաջ կեսրարս խոսեց այդ մասին, ևս նրան շատի ավելին՝ ծերունուն շվշտացնելու համար, քայքայեց կասեմ, Հաբեթ, որ դա իմ կողմից կլինի ոչ միայն ներում, այլև ստորացում։ Նրա արածը կրկնակի վիրավորական է և... ինձ այնքան չի վշտացնում, որ նա դավաճանել է ինձ, այլ այն, որ սիրուհով է դրադվում այն օրերին, երբ մարդիկ արչուն են թափում երկիրը պաշտպանելու... Ահա՛ վատը։ Ի՞նչ կասեն մարդիկ։ Ես ամաչում եմ նրա փոխարեն։ Ամաչում եմ փողոցում, դպրոցում, ամաչում եմ ամեն տեղ, ասես հանցանք գործած։ Թվում է՝ ես եմ մեղավոր, որ իմ ամուսինը կատարել է այդ քայլը։ Հասկանո՞ւմ ես։ Չէ, Հաբեթ, ես էլ իմ արժանապատվությունն ունեմ...

— Այո, մամա, դու պարտավոր ես պահել քո արժանապատվությունը, — կից սենյակից հանկարծ ներս մտավ Ռաֆիկը հուզված։ — Երբ նա այս օրերին...

Եվ Ռաֆիկը, չգիտես հուզումից թե հարմար խոսք չգրտնելով, լռեց կարմրած, այլայլված։

— Այ, տեսնում ես, Հաբեթ, երեխան էլ հասկանում է, որ...

— Քայքայապես անհարմար է։

— Ի՞նչն է անհարմար։

— Մի կողմից՝ ամոթ է, մյուս կողմից՝ դժվար կլինի ապրել...

— Քաղցած շենք մեռնի։ Կաշխատենք և կապրենք։

— Իհարկե, — նորից միջամտեց Ռաֆիկը, — ես էլ կաշխատեմ։ Այս բոլորից հետո... երբ նա պատերազմի այս օրերին... Չէ որ...

— Ռաֆո, քեզ խոսք չի հասնի, — հանդիմանեց քեռին։ —

Դու կարող ես լսել, բայց լռել: Կամ, ավելի լավ է, քո դասերին կաց...

— Ինչո՞ւ, քեռի, չէ՞ որ...

Ռաֆիկն ուղում էր ինչ-որ բան ասել, բայց քեռին դարձյալ ընդհատեց նրան:

— Դու չես հասկանում, տղաս: Թող: Սա քեզ համար բարդ խնդիր է: Եվ, վերջապես, դու իրավունք չունես ծնողներիդ գործին խառնվելու:

Ռաֆիկը շառագունեց ու լռեց հուզված և սայա, որպեսզի ավելորդ բան չասի, ինչպես թափով մտել էր ներս, այնպես էլ դուրս եկավ ապակեպատ պատշգամբ մի տևաքով, որը վկայում էր, թե նա ներքին խռովքի մեջ է կամ վիրավորված. նա գտնում էր, որ ինքն իրավունք ունի միջամտելու և քեռին իզուր նկատողութուն արավ իրեն: Քեռու խոսքերը նրան այնքան էլ ճիշտ չէին թվում, թե չեն կարող սպրեկ առանց նրան, թե կյանքը քանի գնա կդժվարանա, երեխաների պահանջները կմեծանան... Ռաֆիկը կարծում էր, որ քեռին սխալվում է. սպրուստն այդքան դժվար չի լինի, ինչպես նա է կարծում. կդիմանան մի քիչ էլ մինչև ինքն ավարտի դպրոցը, հետո կարող է աշխատել մի տեղ, ասենք պիտներական կամ կոմերիտմիության կազմակերպության մեջ: Կարող է, վերջապես, գրասենյակի աշխատանք կատարել որևէ հիմնարկ մտնելով, և, մի խոսքով, այնպես անել, որ մոր աշխատանքը թեթևացնի...

Այս մտածումների մեջ էր Ռաֆիկը, երբ բակի կողմի աստիճաններով պատշգամ մտավ Յողիկը՝ պատշանով ջուրակը թևի տակ. նա գալիս էր երաժշտական դպրոցից:

— Ռաֆիկ, գիտե՞ս ինչ,— դեռ աստիճաններից ձայն տվեց նա:— Շուտով լինելու է մեր տարեկան համերգը, և ես պիտի մասնակցեմ:

Եվ մինչ Ռաֆիկը կսթափվեր իր ծանր մտքերից՝ քրոջ ուրախութունը հասկանալու և մի բան ասելու, Յողիկը նույն աշխուժով նետվեց կողքի սենյակը և նույնը հայտարարեց մորը.

— Մամա, շուտով լինելու է մեր դպրոցի աշակերտների տարեկան համերգը, և ես պիտի մասնակցեմ:

— Ե՛րբ,— հետաքրքրվեց մայրը, ընդհատելով զրույցը եղբոր հետ:

— Ասում են՝ շուտով: Տասը աշակերտ է մասնակցելու,— շարունակեց Յողիկը՝ ուրախությունից ճառագայթելով:

— Դե ուրեմն լավ պիտի պատրաստվել,— կարողացավ ասել միայն մայրը:

— Իհարկե, հապա առանց պատրաստությա՞ն,— և Յողիկը նորից դուրս նետվեց, փնտրելով կարծես ուրիշ մի մարդ, որ նրան ևս հայտնի իր ուրախությունն էր:

— Ուրեմն այդպես,— ասաց եղբայրը տեղից վեր կենալով:— Ես դեռ ամեն ինչ վերջացած չեմ համարում: Մտածիր, Մարիկա, մենք էլի կխոսենք:

Մարիկան ոչինչ չպատասխանեց: Իսկ ծերունի փականագործը, որ այդ ժամանակ կողքի սենյակում դռան ետև նստած, սրտի-հեքով, անհամբեր հետևում էր զրույցի արդյունքին, լսելով Մարիկայի պատասխանները և ապա խոսակցության վերջը՝ շատ վշտացավ, այնքան վշտացավ, որ չկարողացավ զսպել իր տխրությունը և ակամա «ախ-ախ»-ով մտանեց իր ներկայությունը դռան ետևում: «Ուրեմն այս էլ շահողվեց», մտածեց նա, շիմանալով, թե հիմա ի՛նչ պատասխան կարող է տանել որդուն, թե էլ ինչ կարելի է անել այսուհետև, որ հարան ու տղան հաշտվեն:

Իսկ Մարիկան, այդ ամենից հետո, նորից տարվեց իր սովորական աշխատանքով. դասեր, տետրեր, այցելություններ հիվանդանոցին, սպիտակեղեն հիվանդանոցի համար: Այժմ նա աշխատում էր ավելի լարված, որովհետև մոտենում էին տարեվերջի քննությունները: Այդ ամենը քիչ էր կարծես, նա ձեռնամուխ եղավ մի նոր աշխատանքի. սկսեց երեկոները նոր զգեստներ կարել Յողիկի համար, որ նա հին հագուստներով շմանակցի դպրոցի տարեկան համերգին, այլ ավելի վայելուչ հագնված, քան նախորդ տարիները, որ շասեն, թե հայրը հեռացել է և մայրը չի կարողացել լավ հագցնել աղջկան: Ուստի և Մարիկան այդ հագուստները կա-

րում էր հատուկ սիրով ու եռանդով, և այդ պատրաստութիւնները լեցնում էին նրա սիրտը:

Պետք է ասել, որ նույնպիսի, և ավելի տենդոտ պատրաստութեան մեջ էր ինքը Յողիկը: Այժմ նա ավելի շատ էր նվազում, քան երբևէ, որովհետև այս տարվա համերգին լինելու էին շատ հյուրեր, և դա լինելու էր մի տեսակ ստուգում, և, դրանից անկախ, նա մտածում էր այնպես նվազել, որ իր հաջողութիւնն ուրախացնի մորը:

Այդպես էր ներշնչում նրան եղբայրը՝ Ռաֆիկը:

— Դե, Յողիկ, քեզ տեսնեմ, այնպես պիտի նվազես, որ ամոթով չմնանք, այնպես, որ մայրիկն իր վիշտը մոռանա, հա,— գրեթե ամեն օր ասում էր նա:— Հասկացա՞ր:

Եվ Յողիկը լարվում էր, առավոտից բարձիկը դնում էր ծնոտի տակ, ջութակը դեմ անում դրան ու կտնառցը տանում-բերում լարերի վրայով, և նվագը մերթ մեղմ ու ծորուն, մերթ եռանդուն ու աշխույժ էլևէջներով լցնում էր շորս սենյակից բաղկացած բնակարանը: Յողիկն զգում էր, որ մրցութիւնը լինելու էր խիստ, ուրեմն պետք է այնքան լավ նվագել, որ ինքն առաջիններից մեկը լիներ գոնե, որ մաման ուրախանար իսկապես և մոռանար իր վիշտը: Առաջ, տարեկան այդ համերգներին, լինում էր և հայրը, որ միշտ ընծաներ էր տալիս իրեն: Հիմա նա երևի չի գա, մտածում էր երբեմն Յողիկը և շարունակում իր նվագը:

Եվ քանի մտտենում էր համերգի ժամանակը՝ նա այնքան ավելի էր լարվում ու անհանդատանում:

Նրա հետ և ամբողջ ընտանիքը:

#### IV

Շատ շանցավ՝ եկավ և համերգի օրը:

Մայիսյան անդորր երեկո էր, բուրումնավետ և գարնան թարմութեամբ լի մի երեկո, որպիսին լինում է Երևանում: Եվ շնայած քաղաքը զարձյալ քողարկված էր, երեկոյի այդ հմայքը, սակայն, փողոցներն էր հանել ահագին բազմու-



թյուններ, որ անվերջ դառնում էին ազմկալի մի ժխորով։  
Դրան միանում էր և բարձրախոսների ձայնը, որոնց ունկըն-  
դրում էին ռազմի լուրերին հեռուող խմբերը։

Եվ շնայած դրսի այդ մութին ու խավարին՝ ֆիլհարմո-  
նիայի դրսից բողարկված սրահը ողորկված էր առատ յուշ-  
սով, որոնք թափվում էին առաստաղի բազմաստեղ ջահերից  
և պատերի շուշանաձև լամպափնջերից։ Սրահն ու ֆուլեն  
կամաց-կամաց լեցվում էին հանդիսականներով, որ ան-  
վերջ շարանով գալիս էին գալնանային խայտաբղետ հա-  
զուստներով, ոմանք շտապում էին գրավել տեղները, ոմանք  
մնում էին ֆոջեում՝ ծանոթների հանդիպելու կամ խոսակցե-  
լու, ամենքը, սակայն, ստանալիք բավականուխյան ու հա-  
ճույքի տոնական տրամադրությամբ։

Չնայած պատերաշմին՝ քաղաքում հաճախ լինում էին  
ոչ միայն թատերական ներկայացումներ, այլև համերգներ,  
որոնք միշտ գրավում էին մեծ բազմություններ։ Թվում էր,  
հասարակութունն, այդպիսով, ապրելու կամքը և արվեստի  
իր սերը հակադրում է պատերազմին։

Գնալով եկողների թիվն ավելանում էր... Շուտով դրանց  
մեջ երևաց և Արեսյանը, ձեռին ճերմակ թղթում փաթա-  
թած մի բան, որը սակայն նա կարծես աշխատում էր թաք-  
ցրնել կամ աննկատ դարձնել։ Նա ևս տոնական տեսք  
ունենր. մաքուր ածիլվել էր և գլխի մազերը, որոնց մեջ հատ ու  
կենտ արծաթ թելեր էին երևում, սանրել էր զարմանալի  
խնամքով։ Սակայն նրա դեմքի վրա և նայվածքի մեջ կար  
մի օտարոտի հետարբերություն ու մտահոգություն։ Հենց այս  
առավոտ թերթի հայտարարությունների բաժնում կարդացել  
էր, թե այսօր լինելու է երաժշտական դպրոցի աշակերտների  
տարեկան համերգը։ Մասնակիցների թվում հիշված էր,  
իհարկե, և Յոզիկ Արեսյանի անունը, որ պիտի կատարեր  
Չայկովսկու «Կանցոնետտա»-ն։ Կարդացել էր Արեսյանը և  
ուրախացել. Յոզիկը պիտի նվագի... Վաղուց նա թե՛ որ-  
դուն, թե՛ աղջկան չէր հանդիպել։ Մի երկու անգամ հեռվից  
պատահաբար տեսել էր, բայց չէր կարողացել հասնել և խո-  
սել... Հետո, արդեն երրորդ անգամ հանդիպելով, սկսել էր,

խոսել, բայց Յողիկը, շփտես ինչո՞ւ, լաց էր եղել անսպասելի. և հայրը, անհարմար համարելով այդ փողոցում, նրան ճամփել էր տուն: «Փողոցում լաց չեն լինի. գնա՛, հանգրտացիր»... Եվ դրանից եզրակացրել էր, որ Յողիկը սիրում է իրեն և ինքն իզուր, թյուրիմացաբար, կարծել է, թե նա ու եղբայրը խուսափում են իրենից: Այնուհետև որքան էլ որոշել էր նորից հանդիպել երեխաներին — չէր աջողվել, կա՛մ ժամանակ չէր ունեցել, կա՛մ, դուրս գալով ուշացել էր գրարոցների արձակման ժամից: Հիմա, սակայն, կարծում էր՝ կրտեսնի ոչ միայն աղջկան, այլև որդուն, որ միշտ ներկա է լինում նման համերգների: Պետք է ասել՝ որ Արեսյանը այնուամենայնիվ վշտացած էր, որ տղան ու աղջիկը մինչև այսօր գոնե մի անգամ չէին եկել իր մոտ, թեկուզ ծախսի դրամ ուզելու, ինչպես գալիս էին երբեմն՝ նախքան տնից հեռանալը... Մինչև այդ, մինչև տնից հեռանալը, նա երբեք չէր մտածել, թե այսպես բան կլինի: Գիտեր, որ ուրիշները բաժանվելով՝ կարողանում են տեսնել իրենց երեխաներին, երբ ցանկանում են և կամ իրենց երեխաներն են գալիս իրենց տես... Բայց ինքը բնավ չէր կարծել, թե երեխաները մի օր կկտրվեն իրենից... Եվ Արեսյանը հիմա այդ ամենը վերագրում էր կնոջ ինքնասիրությանը... Այո, ինչպես հաշտվելու համաձայնութուն չէր տվել հորը (այդ նա կռահում էր այն բանից, որ հայրն այլևս չեկավ իր մոտ), այնպես էլ, երևի, երեխաներին է արգելում հորը հանդիպել... Հյուրանոցում նա մի կերպ հարմարվել էր, կարգավորել էր և սնվելու դործը, սակայն երբ ազատ ժամերին, համարի առանձնության մեջ հիշում էր, որ տղան ու աղջիկը կարող են դժգոհ լինել իրենից կամ շցանկանալ հանդիպել իրեն — նա տխրում էր, մինչև իսկ մռայլվում, և ամեն ինչ նրան թվում էր անարժեք. կյանքը, աշխարհը մի տեսակ դատարկ, անխորհուրդ ու անհրապույր: Սովոր լինելով երեխաներին, որ տուն գալիս անմիջապես շրջապատում էին իրեն զանազան հարցումներով, հետաքրքրվում էին այս կամ այն բանով — Արեսյանը հիմա զգում էր, թե կտրվել է շատ բանից, այն ամենից, ինչ առաջ լցնում ու ջերմացնում էր իր սիրտը և

հպարտութիւն պատճառով իրեն: Այժմ, սակայն, իրեն ըզգում էր մենակ, և թվում էր՝ խզվել են իր կապերը կյանքի հետ... մինչդեռ՝ նա միշտ կարծել էր, թե տղան ու աղջիկը շարունակ լինելու են իր ամենամեծ ուրախութիւնը և կապը աշխարհի հետ:

Սակայն ամեն անգամ—դա հյուրանոցում լինելը թե դուրսը—Ռաֆոյի վարմունքը (փող շվերցնելը) հիշելիս՝ տհաճ մի բան էր զգում և անբացատրելի մի զգացում մթագնում էր նրան:

«Իմ տղան մերժեց իմ օգնութիւնը, իմ առաջարկած փողը,— երբեմն մտածում էր և հարցնում ինքն իրեն:— Ինչո՞ւ...»:

Եվ այդ ինչո՞ւ—ի ճիշտ պատասխանը չէր գտնում: Արդո՞ք միայն կինն էր, որ դավակներին արգելում էր հանդիպել, կապ պահել իր հետ, թե՛ կար և ուրիշ մի պատճառ, որ առայժմ հայտնի չէր իրեն: Նա դժվարանում էր հասկանալ, բայց հիմա հուշս ուներ, որ դա կպարզվի այստեղ՝ համերգի ժամանակ: Մինչև իսկ կարծում էր, թե դա թյուրիմացութիւն է իր կողմից. իզուր կարծել է, թե երեխաները խորշում են իրենից, թերևս այդպիսի բան չկա. գուցե իրեն թվացել է միայն...

Մտածում էր Արեսչանը ֆոյեում շրջելով: Բայց իսկապէս նա եկել էր ոչ միայն նրա համար, որ երեխաների վերաբերմունքը պարզի, այլ պարզապէս համերգը աղջկա մայրնակցութեամբ հետաքրքրում էր նրան. վաղուց նա դատար նվագը չէր լսել և մի տեսակ կարոտ էր զգում. մյուս կողմից՝ ուզում էր տեսնել նրա առաջադիմութիւնը... Այդ էր պատճառը, որ նա հայրական հպարտութեան ուրախ զգացումներով շտապել էր ֆիլհարմոնիա, հետը բերելով նախապէս գնած ու թղթով պատած ծաղկեփունջը:

Երբ նա փաթաթած իր նվերը ձեռին մտավ ֆոյե՝ այնտեղ արդեն բավական մարդ կար. մի քանի ծանոթներ շրջում էին անհող, մի քանիսը գրուցում էին խմբված: Արեսչանին թվաց, թե ամենքը զարմացան իր և իր ձեռքի փաթեթի վրա, և նա սկզբում շիմացավ ո՛ր կողմը գնար, ինչպէս

պահեր ծաղկեփունջը, որ առանձին ուշադրութիւն չգրավեր  
կամ ի՞նչ պատասխաներ, եթե մեկը հարցներ ի՞նչ է բերել...  
Հարմա՞ր կլիներ ասել, թե ծաղկեփունջ է բերել հարազատ  
աղջկան նվիրելու, երբ այստեղ կային ելուցթ ունեցող այլ  
երեխաների ծնողներ, որ ոչինչ չէին բերել... նա ինքն էլ  
սովորաբար ոչինչ չէր բերում այդ համերգներին, բայց այ-  
սօր չէր կարող գալ դատարկ ձեռքերով:

Այս մտքերը թերևս երկար զբաղեցնեին նրան, եթե  
բարեկամներից մեկը՝ կարճ ու կլոր մի տղամարդ, շմտեմար  
և շհետաքրքրվեր, թե ծողիկն էլ պիտի նվագի՞:

— Իհարկեւ Անունը կար հայտարարութեան մեջ: Չկար-  
դացի՞ր:

— Հա, հա: Կա՞վ է: Շա՛տ ուրախ եմ: Առաջագիմութիւն  
ունի՞:

— Այ, հիմա կտեսնենք, — պատասխանեց Արեսյանը  
անորոշ և մտածեց, որ մարդը, ինչպես երևում է, տակալին  
չգիտի իր հեռանալը, ուստի երբ բարեկամը խոսեց պատե-  
րազմից՝ նա թեթևացած շունչ քաշեց:

— Այնուամենայնիվ պատերազմի այս ծանր օրերին  
մենք կարողանում ենք համերգներ տալ, կուլտուրայի խըն-  
դիրներով զբաղվել, — ասում էր մարդը: — Սա ցույց է տա-  
լիս, որ մենք վատահ ենք մեր ուժերի վրա:

Մինչ նրանք խոսում էին՝ հանդիսականների հոսանքը  
գնալով մեծանում էր, և մի կարճ միջոցում ֆոյեն ու սրահը  
լցվեցին մարդկանցով, կանանցով, պատանիներով, որոնք  
բոլորն էլ գարնան թեթև հագուստներով գրավում էին տեղ-  
ները՝ տոնական տրամադրութեամբ, ժպիտներով: Կային այդ-  
տեղ և զինվորականներ՝ սպաներ ու բանակայիններ, որ հի-  
շեցնում էին պատերազմը: Եթե շիկնեին դրանք՝ երբեք չէր  
կարելի կարծել, թե դուրսը, հեռուներում ահեղ պատերազմ  
է, երկիրը հերոսաբար մարտնչում է թշնամու դեմ. — այնքան  
խաղաղ էր ներսը:

Բազմութեան մեջ Արեսյանը նկատեց շատ ծանոթների  
ու բարեկամների, ինչպես կնոջ եղբայրներին՝ Հարեթին ու

Արուսիկն, որ խոսով էին իրենից՝ քրոջից բաժանվելու համար. նրանք իրեն տեսնելով՝ երեսները շրջեցին անմիջապես:

Արեսյանը մտածեց, որ դրանք եկել էին, անշուշտ, Յողիկի խնդրանքով կամ գուցե քրոջը մխիթարած լինելու համար...

Այնուհետև նա նկատեց և կնոջը՝ Մարիկային, որ կոկ հագնված, առաջին շարքում նստած՝ ուրախադեմ նայում էր բեմ: Արեսյանին թվում էր, թե կինն աչնպես ընկճված ու տխուր կլինի, որ անգամ այսօրվա համերգին չի գա... Սակայն եկել էր. և նույնիսկ ժպտում էր... Ուրեմն իր հեռանալը այնքան էլ չէր ազդել նրան: Թերևս ձևացնում է, թե՞ ավելի ուրախ է...

Կնոջից հետո Արեսյանը նկատեց որդուն՝ Ռաֆիկին, տոնօրյա նոր կոստյումը հագած, մազերը կիսով շափ մի կողմի վրա սանրած, որոնք գանգուր տեսք ունեին և աչնպեսի սև փայլ, որ թվում էին յուզով օծած: Այդ տեսնելով՝ Արեսյանը մտածեց, որ Ռաֆիկն այդպես հագնվել է անպատճառ մոր հորդորով. մայրը սիրում էր, որ Ռաֆուն թատրոն և համերգ դնա ոչ թե դպրոցական հազուստներով, այլ կոստյումով:

Որդու տեսքը, սակայն, Արեսյանին և՛ ուրախացրեց, և՛ մտածամունքի մեջ դրեց. ուրախացավ, որ այդ լավ արտաքինով, գեղեցիկ տղան իր որդին է, բացց տխրեց, որ նա, այդտեղ լինելով, իրեն չի մոտեցել...

«Մի՞ թե իսկապես չէր նկատել, որ մոտենար», մտածեց Արեսյանը տարակուսելով, որ ինքը բազմության մեջ նկատեց նրան, իսկ նա...

Եվ Արեսյանը ենթադրեց, որ Ռաֆիկը հավանորեն իրեն չէր նկատել, այլապես կմոտենար. թե՞ գուցե մայրը չի թողել, — կասկածեց նորից:

Բացի հարազատներից՝ Արեսյանը ճանաչեց նաև աղջրկա ընկերուհիներին, որ երբեմն գալիս էին իրենց տուն, նրանց դպրոցի դիրեկտոր Ապրեսյանին, ուսուցիչներին, որոնցից մեկ-երկուսը բարևեցին իրեն:

— Եկել եք Յողիկի՞ն լսելու, — ասին նրանք մտերմաբար:

— Այո, — եղավ Արեսյանի պատասխանը:

Բայց երկար խոսելու ժամանակ չէր, պետք էր տեղ գրավել. զանգը տվին երկրորդ անգամ, և հանդիսականների մեծ մասն արդեն սրահումն էր: Արեսյանը ևս ներս մտավ, բայց այստեղ նրան զբաղեցրեց տեղի հարցը... Սկզբում, դեռ ներքև տոմս գնելու միջոցին, նա շատ աչքի չընկնելու համար, ուղեց տոմս գնել ետին շարքերի համար, բայց վերցրեց միջին շարքերում նստելու... Հիմա, սակայն, նկատելով, որ ինքն ընկնում է կնոջից ու սղախից շատ ետ, անհարմար զգաց, թե ի՛նչ կմտածեն մարդիկ իրեն այդտեղ տեսնելով, էրբ ընտանիքն առաջին շարքումն է...

Մինչ նա այս մտածումներով կրոներ իր տեղը, թղթի մեջ պահած ծաղկեփունջը ծնկների վրա տեղավորելով, համերգն սկսվեց:

Նախ եղավ պաշտոնական մաս. դպրոցի պիրեկտորը՝ սև սյուրթուկ հագած մի նիհար ու երկար կրիտասարդ, բացատրեց տարեկան համերգի նշանակությունը. դպրոցի սաները այսօր, շնայած պատերազմին, ցուցադրում են իրենց շնորհքն ու կարողությունը հասարակության առաջ, թե ի՛նչ ճանապարհ են անցել մի տարվա մեջ և ի՛նչ արդյունքի են հասել... Այնուհետև բեմ ելավ մի գանգրամաղ պատանի ու նվագեց ջութակի վրա Բեթհովենի «Մենուետ»-ը... Արեսյանին այդ նվագը դուր չեկավ, թեև հասարակությունը ծափահարեց ոգևորված: Տղան շատ կոպիտ շարժումներ ուներ և մտտ դեմք, նվագն էլ, թվում էր, իր նման թանձր հնչյուններով:

«Ինչո՞ւ սրան առաջ են թողել, մի՞թե սա Յոզիկից լավ է նվագում», — մտածեց Արեսյանը, ենթադրելով, թե հիմա, երևի, Յոզիկը կգա:

Բայց դարձյալ բեմ ելավ մի ուրիշը, այս անգամ մի կարճ ու խարտյաշ աղջիկ. նա, հասարակությանը գլուխ տալով, նստեց դաշնամուրի առջև ու... նվագեց պարմանալի ճարտար ձևով, ճարպկորին մատները մի տեղից մյուսը թոցնելով...

Արեսյանը նայում էր նրան, բայց գրեթե չէր լսում. ծաղկեփունջը ծնկներին՝ նա անձկությամբ, անհամբեր սպասում

էր, թե երբ պետք է Տողիկը բեմ դուրս գա: Սակայն երբորդը, շորորդը նույնպէս ուրիշները եղան. մեկը երգեց ժողովրդական հին մի երգ, մյուսը նվագեց թավջութակ, որը նվագողից խոշոր էր այնչափ, որ նա կռանալիս, թվում էր, ուզում է թաքնվել նրա կտիւ:

«Ինչո՞ւ է ուշանում Տողիկը», — սրտնեղում էր Արեսյանը, սպասելով, թե դրանից հետո դոնէ աղջիկը կգա և ցավում էր, որ ծրագիրը չէր աւել, իսկ հարևաններից խնդրել՝ անհարմար էր:

Վերջապէս, հինգերորդից թե վերցերորդից հետո, երևաց Տողիկը, ինչպէս միշտ, կարճ կտրած խարտյաշ մազերն ուտերին, ջութակը ձեռին և զվարթ, նոր մի շրջադգեստ հագած, որը, վերին մասում և դռակատեղը թեթև փոթեր կաղմած, թեթևորեն գրկում էր նրա մարմինը և ծփուն ծալքերով իջնում մինչև ծնկները: Երբ բեմի ղեկավարը պջուպիտորը նոտայով դրեց նրա առջև՝ Արեսյանի սիրտն ասես կրթքին դիպավ, և նրա առաջին մտածումը եղավ, թե ո՞րքան լավ կլինի, որ աղջիկը շախալվի և նվագի այնպէս, որ ամենքը հիանան և ծափարեն ավելի, քան ծափահարեցին մյուսներին: Իսկ երբ Տողիկն սկսեց իր նվագը՝ Արեսյանի ոչ միայն սիրտը, այլև ողջ էութիւնը լցվեց անհանգիստ ուրախութեամբ ու երկյուղով:

Տողիկը լավ էր նվագում, ահագին առաջադիմել էր, բայց հանկարծ... շախալվեր, շշփոթվեր, մտածում էր Արեսյանը և ժպտում ակամա. հաճախ շուրջն էր նայում, ասես մարդկանց ուշադրութիւնը հրավիրելու, որ լավ նայեն, որ շախալվեն իրենց գնահատութեան մեջ. ու ջղայնանում էր, որ կողքի տղամարդ հարևանը շարունակ ոլորում է ձեռքի ծրագիրը. և այդ նրան ստիպում էր ավելի լարվել. — այդ պահին աղջկա ամեն ինչը դուր էր գալիս նրան՝ թե՛ հագուստները, թե՛ խարտյաշ մազերի անփուլթ սանրվածքը և թե՛ ձեռի նուրբ, ճկուն շարժումը, որով կտնտոցը մեղմ ու զգույշ տանում-բերում էր լարերի վրա... Եվ Արեսյանին թրվում էր, որ հանգիստականները նույնպէս, բացի ծրագիրը ոլորող հարևանից, շունչները պահած, չեն ուզում բաց թող-

նել և ոչ մի հնչյուն: Մյուս կողքի հարևանը, որ մի կին էր, լարված էր թվում բոլորից ավելի. նա մինչև խակ լուսնետը մի երկու անգամ դրեց աչքերին և նայեց ուշադիր:

Արեսյանն ուզեց ասել, որ դա իր դուստրն է, բայց զբայեց իրեն, սպասելով նվազի վերջին, թե ինչպիսի ընդունելության կարժանանա Յողիկը. նրան հետաքրքրում էր մասնավորապես աջ կողմի հարևանուհին, որը, ըստ երեւոյթին, երաժշտությունը լավ էր հասկանում, որովհետև ամեն մի նվազի վերջում իր կարծիքն էր հայտնում կողքի մարդուն՝ նուրբ մասնագետի հեղինակությամբ. — «Տեխնիկա ունի, բայց լսողությունը թույլ է», կամ՝ «Լսողություն ունի, բայց մատների վարժություն՝ ոչ»:

Այժմ Արեսյանը, ամբողջովին լսողություն դարձած, հետևում էր աղջկա նվազին և սպասում, թե ի՞նչ կասի հարևանուհին Յողիկի մասին:

Եվ ահա, երբ Յողիկը նվազն ավարտեց, ծափերի որոտի հետ լսվեց մի քանի բիս, նրա հարևանուհին էլ «բռավո» ասաց կամաց և, նույնպես ծափելով, դարձավ կողքի տղամարդուն.

— Սքանչելի՛ էր, այո...

Արեսյանը լսեց հարևանուհու փոփեստը և նորից ուզեց ասել, որ դա իր դուստրն է, բայց դարձյալ զսպեց իրեն, մտածելով, թե նա կարող է զարմանալ, որ ինքը ծաղկեփունջ է բերել աղջկա համար. մյուս կողմից՝ Յողիկի հաջողությունից, կրկնվող ծափերից ու բիս-երից հայրն այնքան ուրախ և հպարտ էր զգում իրեն, որ չկարողացավ խոսել, և ինքն էլ ծափահարեց հասարակության հետ. ապա, երբ ծափերը դադարեցին՝ նվազելու միջոց տալու, և Յողիկը կրկնեց շիկնելով, Արեսյանը մտածեց, թե այդտեղ գտնվող ծանոթները հիմա կդատապարտեն իրեն, որ այդպես աղջիկ ունի և թողել է անտեր, անխնամ...

Մինչ այդ բիս նվազն ավելի ծափեր հարուցեց. լսվեցին նաև բռավոներ, և սրահի այդ ողևորության մեջ Յողիկը, իր նոր հագուստի մեջ ավելի բարեձև ու շառագունած, գլուխը



շնորհակալութեան համար նրբորեն իջեցնելով, ջութակը ձեռին անցավ վարադուլրի ետև:

Արեսյանը ցնծում էր. ծաղկեփունջը դողում էր նրա ծնկներին, նրան թվում էր, որ այդ ծափերը վերաբերվում են և իրեն, թվում էր, որ ծանոթներն արգեն նայում են իրեն, ուստի և, առանց սպասելու, թե ինչ կլինի հետո, նա ելավ տեղից և, ծաղկեփունջը բռնելով, ուզեց շտապել Յողիկին համբուրելու... Բայց մինչև նա մի երկու քայլ կաներ՝ հայտարարվեց համերգի առաջին բաժնի վերջ: Հանդիսականները պոկվեցին աթոռներից և խուռներամ գնացին դեպի դռները:

Արեսյանը, մի կերպ ֆոյե դուրս գալով, այս անգամ ծաղկեփունջը բարձր բռնած, շտապեց Յողիկի մոտ:

Երբ բեմի ետևի սենյակի դուռը բաց արավ՝ ներս մտնելու, այնտեղ արգեն բավական մարդ կար. բացի համերգին մասնակցող աշակերտներից, նիհար դիրեկտորից և ուսուցիչներից՝ ներս էին մտել և հանդիսականներ:

Արեսյանը հայացքով որոնեց աղջկան և տեսավ նրան շնորհավորողներով շրջապատված: Դրանց մեջ նա նկատեց թե՛ կնոջը, թե՛ որդուն՝ Ռաֆիկին, թե՛ սրա ընկեր Սարունցին և թե՛ աղջկա քեռիներին: Մի խոսքով՝ Յողիկին բոլորել էր նրա ընկեր աշակերտների և հարազատների մեծ օղակը. և Արեսյանը այնուամենայնիվ մոռանալով, որ կնոջ հետ գժտված է, որ նրա եղբայրներն իրեն չեն բարևում, ինքնավստահ մոռեցավ խմբին՝ ծաղկեփունջը աղջկան տալու և նրան ջերմորեն գրկելու ցանկութեամբ, ու դեռ հեռվից ցնծուն ձայնով կանչեց.

— Յողի՛կ...

Մակայն կատարվեց Արեսյանի համար անսպասելի մի բան. Յողիկը շրջապատողների ուսերի վրայից նայեց ձայնի կողմը և, հորը տեսնելով, ուրախ աչքերը մեկեն խոնարհեց գետին ու շրջվեց, ասես նրան շտեմնելու համար: Արեսյանը նկատեց, որ նույնն արին համարյա Յողիկին շրջապատող մերձավորները՝ չգիտես իրեն շտեմնելու, թե շտեմնել ձևանալու համար:

Արեսյանի սիրտը կարծես ճճլեցին. նա մեկեն տաքացալ, ծաղկեփունջն ընկալ ձեռքից. և նա անմիջապես դուրս եկալ ոչ միայն այդ սենյակից, այլև համերգի շենքից:

Եվ մի քանի օր շարունակ նա վատ արամադրութեան մեջ էր, ավելի շուտ գտնվում էր համերգում կատարվածի տպավորութեան տակ. այն, որ ինքը խնդագին ուրախութեամբ, վարդափունջը ձեռքին գնաց Յողիկին տեսնելու և այն, որ իր գրկին ու ծնկների վրա մեծացած աղջիկը իրեն նկատելով՝ աչքերը խոնարհեց իրեն շտեմնելու համար, ոչ միայն դարձաչրեց ու վշտացրեց, այլև կարծես հարվածի պես ցնցեց նրան: Ի՞նչ էր ցանկանում ինքն այդ պահին — միայն մի բան — սրտանց համբուրել իր Յողիկին՝ լավ նվագի համար, որ ուրախութեամբ ու հպարտութեամբ լցրեց իր հաչրական սիրտը, և ապա նվիրել վարդերի, մաշիսյան թարմ վարդերի փունջը, որ նա շմտածի, թե հաչրը, թեև հեռացել է տնից, ուրեմն և անտարբեր է դեպ իրեն, դեպ իր նվագը, դեպ իր հաջողութունը:

Այո, ինքն այդ արավ ուրախութեան ու ցնծութեան մեջ, բայց ի՞նչպես ընդունեց այդ փոքրիկ աղջիկը իր ուրախութունը — արհամարհանքով... Լսեց իրեն, նայեց իրեն, բայց աչքերը, մինչ այդ ժպտուն աչքերը, խոնարհեց, որ իրեն՝ հորը շտեմնի... Եթե շրջապատողները՝ կինը և կնոջ եղբայրները, այսինքն՝ Յողիկի քեռիները, իր ձայնը չլսելու տվին և իրեն նայել չուզեցին, դա հասկանալի էր. սակայն Յողիկը մի՞թե իր ուրախութեան, իր հաջողութեան մեջ ավելի սրտաբաց շփեց է լինելու ինչո՞ւ այդ փոքրիկ աղջիկն այդքան տհաճութունն զգաց իր ձայնից, իր ներկայութունից. մի՞թե ինքն անախորժ էր նրան, մի՞թե նա չէր ուզում տեսնել իրեն... Թունավորե՞լ է արդյոք մեկը նրան իր դեմ, թե ինքն է նեղացել, որ հաչրը թողեց իրենց և... հեռացալ:

Արեսյանը դժվարանում էր պարզել այդ, դժվարանում էր հասու լինել Յողիկի վարմունքի պատճառներին, բայց արդեն ծանրապես վիրավորված էր զգում իրեն. ավելին՝ արհամարհված, այն էլ հասարակութեան, թեև փոքրաթիվ, բայց հասարակութեան առջ: Ի՞նչ պիտի ասեին տեսնող

օտարները. — հայրն ուզեց շնորհավորել աղջկա հաջողու-  
թյունը, վարդերի փունջ նվիրել, բայց աղջիկը չընդունեց...  
Ինչո՞ւ... և կիմանային «որովհետև»-ը. իսկ հարազատնե-  
րը՝ կինը, նրա եղբայրները, որոնք արդեն շէին բարևում  
իրեն, գոհ կմնային անշուշտ, որ Յողիկն այդպես արհա-  
մարհոտ վերաբերմունք ունեցավ... Սակայն ինքը որպիսի՝  
սիրով գնեց ծաղկեփունջը և ի՞նչպես միամտաբար կարծում  
էր, թե աղջիկը ո՛րքան կուրախանա, որ հայրն իրեն շի մո-  
ռացել և սիրում է առաջվան պես... Արեսյանը կարծում էր,  
որ այդ ամենից հետո Յողիկը ոչ միայն սիրով, այլև կարո-  
տով կփարվի իրեն և շնորհակալություն կհայտնի այդ լավ,  
այդ թարմ վարդերի համար... Նա մինչև իսկ ենթադրում էր,  
թե կինը և նրա եղբայրները կմեղմանան, և դա կլիներ իրոք  
մի լավ առիթ հաշտության: Սակայն... Արեսյանն իրեն ըզ-  
գում էր հիմա մի տեսակ ընդարմացած. նա չէր հասկանում  
կատարվածը. Յողիկն այդպես վերաբերվեց հարազատների՝  
մոր և քեռիների ներկայութունի՞ց ճնշվելով, թե ինքնաբեր-  
արավ ահամա՞, թե իր անկեղծ կամքը թելադրեց նրան աչքն-  
րը խոնարհել հորը շնայելու համար: Նա հիշում էր, որ երբ  
Յողիկը նայեց իրեն՝ ճառագայթող ժպիտը կարծես սառավ  
նրա դեմքին, և նա աչքերը խոնարհեց մեկեն, գլուխը թեթևո-  
րեն մի կողմ շրջելով: Արեսյանն այդ նկատելուն պես՝ քրախնք  
զգաց ճակատին. թվաց՝ սառը ջուր լցրին սրտին, և նա ընկըր-  
կեց, ասես ինչ-որ մի ծանր հարվածից:

Ինչպես երևում է, մարդկային հարաբերության մեջ լը-  
սությունն ավելի է հուղում մարդկանց, քան խոսքը, թեկուզ  
ծանր խոսքը:

Համերգում կատարվածը հիշելով՝ Արեսյանը հաճախ  
մտածում էր և որդու մասին. հիշում էր, որ նա էլ շնայեց  
իր կողմը ոչ միայն սրահում, այլև ֆոյեում եղած միջոցին,  
այլև քրոջ մոտ... Ուրեմն նա էլ շարունակում էր իր... Արես-  
յանը չգիտեր ինչ անուն տա այդ վերաբերմունքին: Նա  
հասկանալի էր համարում, որ կինը կարող է դժգոհ լինել  
իրենից, նույնիսկ արհամարհել իրեն, բայց որդին ու աղ-  
ջիկը՝... Ինչո՞ւ... Ինքը չի վիրավորել նրանց. ընդհակառա-

կը, եղել է միշտ ուշադիր, սիրել է միշտ, հիմա էլ սիրում է, կուզեր անգամ փայփայել, ինչպես մանուկ ժամանակները. բայց... նրանք հեռու են պահում իրենց և լռում... Որդին՝ Ռաֆոն, նրա ամենամեծ ուրախությունն էր եղել ոչ միայն որպես առջնեկ, այլև որպես սիրելի էակ, և նրա հոգսը հաճելի հոգս էր իր համար... Երբ նա մեծացավ, գնաց դպրոց — ավելացան այդ հաճելի ապրումները, հուշերը... նրա ապագան... Նույն ուրախությունն ունեցավ աղջկա նրկատմամբ...

Բայց հիմա այդ ամենը կարծես չկա... Ու քանի օր Արեսյանը չէր մոռանում աղջկան տեսնելու պահը, չէր մոռանում, թե ինչպես դուրգուրանքով ու սիրով գնած վարդափունջըն ընկավ ձեռքից, և ինքը մենակ հեռացավ համերգի սրահից: Ոչ միայն չէր մոռանում, այլև, ամեն հիշելիս, մռայլվում էր ու մի՞նում: Դրանից առաջ էլ նա տխուր էր լինում կնոջ հետ ունեցած գրուցից հետո, և երբ հիմնարկի ընկերները՝ դիրեկտոր Վարդանը և մյուսները, նկատելով նրա այդ տրամադրությունը, հետաքրքրվում էին, թե ի՞նչ է պատահել, Արեսյանը միշտ պատասխանում էր. — «Ոչինչ, հիմար մի քան», կամ՝ «Անսպասելի գլխացավ է»... Կարճ էր կրտրում և ձևանում գբաղված կամ շտապում մի տեղ:

Հիմա էլ, համերգից հետո, մի քանի օր և ավելի, Արեսյանի տրամադրությունը ոչ միայն չէր բացվում, չէր էլ փոխվում կարծես. նա մտախոհ ու մռայլ անկողին էր մտնում և առավոտները մտահոգ ու տխուր հյուրանոցից ելնում հիմնարկ գնալու, աշխատելով դարձյալ շահեղիպել, շխոսել ծանոթների հետ...

Խուսափում էր մարդկանցից, բայց միաժամանակ և կարիք էր զգում մեկին պատմել պատահածը՝ կնոջ հետ ունեցած ընդհարումը... և որքան էլ մտածում էր, թե ո՞ւմ կարող է պատմել, տեսնում էր, որ չկա այդպիսի մեկը, բացի Ռիմայից: Սակայն գտնում էր դարձյալ անհարմար... Ու խուսափում էր: Եվ խուսափելով հանդերձ՝ երբեմն ուզում էր տեսնել նրան, խոսել հետը. բայց առայժմ չէր ցանկանում հանդիպել, որ նա շտեմնի իր հոգեկան վիճակը...

Սակայն հնարավոր էր աշխատել միևնույն հիմնարկում, մտնել ու դուրս գալ միևնույն դռնից, իջնել ու բարձրանալ միևնույն սանդուղով, անցնել միևնույն միջանցքով և շարաթիկերով շհանդիպել իրար...

Որքան էլ սակայն Արևսյանն զգուշանում էր, բայց նրանք հանդիպեցին անակնկալ... սանդուղի աստիճանների վրա և երկուսն էլ, անխոս, հուզված կանգ առան դեմ առ դեմ: Այդ Ռիման երիտասարդ կին էր՝ կաթնագույն դեմքով ու սև խոպոպներով, որոնք հասնում էին մինչև ուսերը: Չգիտես բնակա՞ն էին, թե ինքն էր գանգրացնում հատուկ խնամքով: Ինչպես էլ լինե՞ր՝ դրանք առանձին հմայք էին տալիս նրան, և հանդիպողն ակամա դիտում էր նրան հետաքրքիր: Այդպես էլ Արևսյանը, ամեն անգամ միջանցքով անցնելիս, չէր կարողանում չնայել ապակեպատի միջից՝ իսկ Ռիման, նրան նկատելով, ժպտում էր՝ խոպոպները շրտկելով և մի նազանքով, որը նրան դարձնում էր ավելի հետաքրքրական ու գրավիչ: Այս անգամ շժպտաց ո՛չ այդ կինը, ո՛չ Արևսյանը: Եվ որովհետև Ռիման, հուզումից թե ինչից, հետո էր՝ առաջինը խոսեց Արևսյանը:

— Ի՞նչ կա, Ռիմա... այլայլված ես:

— Ե՛ս: Այո, — խոսեց Ռիման ավելի հուզվելով ու կարմրելով: — Բայց ինչո՞ւ եք այդպես նայում ինձ: Մի՞թե ես ձեզ... ի՞նչ է եղել... Խնդրում եմ ասեք, որ ես շտանջվեմ իզուր...

Արևսյանը, որ ուզում էր դարձյալ շտապող ձևանալ ու անցնել, բայց նկատելով, որ այդ կինը խոսում է շատ սրբտաբաց, անկեղծութուն տրամադրող և համարյա աղաչական ձայնով, էլ շուզեց լռել, մանավանդ որ վաղուց մտածում էր իրեն հուզող դեպքը պատմել մեկին՝ սիրտը թեթեվացնելու, հատկապես Ռիմային բացատրել իր վատ տրամադրության պատճառը: Բայց որովհետև դանդաղում էր՝ Ռիման հարցրեց անհամբեր.

— Չլինի՞ նեղացել եք ինձնից...

— Ոչ. ինչո՞ւ, — սկսեց Արևսյանը, շիմանալով, ինչպես շարունակել իսկապես. բայց, ինչպես այդ պատահում է

շատ զգուշ մարդկանց, նա մեկեն վրա բերեց, թե կինն իմացել է իրենց մտերմության մասին... — Եվ մոտ մի ամիս է ահա ես...

Ու նորից կանգ առաւ նա, որ Ռիմայի հետ խոսում էր միշտ հատուկ աշխույժով, հիմա կարծես դժվարանում էր արտաբերել ասելիքը, և Ռիման այդ նկատում էր, ավելի շուտ բնազդով զգում էր, որ ծանր մի բան է կատարվել նրա հետ, ու, աչքի տակով նրան նաչելով, հարցրեց հանկարծ.

— Նա ձեզ շատ վիրավորեց:

Արեսյանը լուռ էր:

— Նա ինձ ճանաչո՞ւմ է, — հետաքրքրվեց Ռիման:

— Նա... Ո՞վ, — ցրված հարցրեց Արեսյանը:

— Տիկինը:

Պատասխանի փոխարեն Արեսյանը ձեռք թափ տվեց:

— Զգիտեմ... Յապն այն է, որ այդ բացատրությունը եղավ երեխաների ներկայութեամբ:

— Այդպե՞ս...

Եվ Ռիման լռեց ու քայլեց վեր, իսկ Արեսյանը, որքան էլ ուզում էր խոսել, երբ արդեն հնարավոր էր խոսել, իջավ դաժ:

Ու այնուհետև պլանբաժնի Ռիման էլ չէր ձգտում նրա հետ խոսելու, ինքը՝ Արեսյանն էլ ոչինչ չէր ասում, բայց ամեն անգամ նրան տեսնելիս՝ հիշում էր կնոջ հանդիմանությունը երեխաների ներկայութեամբ... Այդ ամենը նա մոռանում էր միայն աշխատանքի մեջ, մանավանդ գործարան այցելած միջոցին, երբ անցնում էր մի բաժանմունքից մյուսը, երբ խոսում էր ցեխերի վարիչների հետ, երբ ծանոթանում էր արտադրանքին, մի խոսքով, երբ տարվում էր գործարանի հոգսով, ինչպես ավելացնել ու լավացնել արտադրանքը և տալ ժամանակին:

— Գիտեք, այնպես պիտի անենք, որ ես շմնանք, պատվով դուրս գանք... Զմոռանանք, որ զորքի համար է. վատ բանը չենք կարող ուղարկել ճակատ:

Ու այդ ժամերին նա հաճախ մտածում էր, թե ինչպես է իրենց գործարանի մթերքը գնում ճակատ, ինչպես է ըն-

դունվում. Միաժամանակ մտածում էր, որ պատերազմը  
դնալով ավելի լայն ծավալ է ընդունում ու նոր զորահավաք-  
ներ է պահանջում. մտածում էր, որ մի օր էլ երևի շուտով  
այդ զորահավաքը կհասնի նաև իրեն:

Ճշմարիտն ասած՝ ամեն անգամ, երբ Արեսյանը կար-  
դում կամ լսում էր մեր զորքերը թշնամու հետ մեծ ընդհա-  
րում ունեցան, ետ քաշվեցին կամ առաջ գնացին, նա միշտ  
մտածում էր նոր զորահավաքների մասին. այո, իրեն էլ  
կարող են կանչել մի օր, և նույնքան անակնկալ ու անսպաս,  
ինչպես անակնկալ եղավ պատերազմը: Բայց նրան թվում էր,  
որ այդ զորահավաքն իր վրա երևի չի տարածվի, որպես ան-  
փոխարինելի աշխատողի: Սակայն զորահավաքի միտքը մը-  
նում էր նրա սրտի մի անկյունում և երբեմն միայն դպացնել  
էր տալիս իրեն:

Երբ մի օր էլ, շնայած տակավին իր տարիքի զորահա-  
վաք չկար և չէր կարելի ասել, թե երբ կլինի, Արեսյանը  
մտածում էր այդ մասին — ներս մտավ իր աշխատակիցնե-  
րից մեկը, որ ապրում էր իր տան հարևանությամբ, և հայտ-  
նեց, թե նրա որդին՝ Ռաֆիկը գնում է բանակ...

Արեսյանը նախ զարմացավ. ինքը մտածում էր, թե իրեն  
կկանչեն բանակ, հանկարծ որդուն են կանչել. նա չէր ու-  
զում հավատալ դրան. բայց երբ հիշեց, որ Ռաֆոն տասնութ  
տարու մեջ է, անհանգստացավ.

— Կանչե՞լ են, թե գնում է:

— Ինձ ասին՝ գնում է:

— Դա հաստա՞տ է:

— Իհարկե, ընկեր Արեսյան: Կատակ հո չեմ անում: Ձե-  
րոնք պատրաստություն են տեսնում:

— Նա տասնամյակը դեռ չի ավարտել ախր:

— Այդ ոչինչ... Կան տղաներ՝ 9-րդ դասարանից կամա-  
վոր են գնում:

Արեսյանն է՛լ շարունակությունը շլտեց, շուգեց լսել. ցրի-  
չին անմիջապես ուղարկեց տուն իմանալու՝ ճի՞շտ է արդյոք:  
Եվ ցրիչը մի տասը-տասնհինգ բոպեից վերադարձավ, թե

ճիշտ է, իր աշքով տեսավ, որ տնեցիները Ռաֆիկի հետ գնացին կայարան:

— Կայարան,— զարմացավ Արեսյանը:— Իսկ գնացքը ե՞րբ է գնում:

— Այդ շգիտեմ, ընկեր Արեսյան: Եթե գնացին՝ ուրեմն մի ժամից, կես ժամից կերթա:

Արեսյանն անմիջապես, առանց ժամանակ կորցնելու և առանց երկար մտածելու, հիմնարկից վերցրեց մի զգալի գումար, դրեց ծոցագրպանը և... հիմնարկի ավտոն մի քանի վայրկյանից արդեն նրան տանում էր կայարան, ու Արեսյանը, շոֆերի կողքին նստած, մտածում էր, թե ինչպես անակրնկալ եղավ այդ, ինչո՞ւ իրեն չեն հայտնել, ինչո՞ւ հենց Ռաֆիկն ինքը չեկավ ասելու... Եթե շուտ իմանար այդպիսի բան կա՞ մի բան կաներ...

Եվ Արեսյանը մի միտք դեռ չավարտած՝ անցնում էր մյուսին. ուրեմն՝ եթե գնում է որդին, պետք է նրան ծախսի մի գումար տալ, որ կարոտություն չքաշի: «Այն ժամանակ մի գումար տվի՝ հիմարը շվերցրեց, գույե և ինքնասիրություն բանեցրեց, բայց հիմա կվերցնի, իհարկե, կվերցնի... Հեռու ճանապարհ է գնում»,— մտածում էր Արեսյանը, նայելով մերթ առջևը տարածվող երկար փողոցին, մերթ շոֆերին, որը, թվում էր, հասկանում է իր անհանգստությունը և դրա համար մեքենան քշում է սովորականից արագ:

«Այնուամենայնիվ պետք է սիրտ տալ երեխային»,— շունչանկում էր մտածել Արեսյանը և զարմանում ինքն իր մեջ, թե ի՞նչ էր սպասում և ի՞նչ եղավ... Միշտ սպասում էր, թե կկանչեն ահա իր տարիքի պահեստիներին... Հանկարծ...

Մտածում էր Արեսյանը և շարունակ նայում առաջ, թե ե՞րբ պիտի հասնի վերջապես կայարան, և շի՞ ուշացել արդյոք:

Ահա և կայարանը... Արտակարգ եռուզեռ, իրարանցում. խմբերով երիտասարդներ, նրանց հետ և տարիքավոր մարդիկ, կանայք՝ կապոցներ առած, գրկած, ոմանք, առանց կապոցների ու ճամպրուկների, շտապում են ներս ու այնտեղից դուրս գալիս կառամատույցը... Իսկ կառամատույցում



խոնված է ահագին բազմութիւն: տակաւին գինվորական  
զգեստներ շահած նորակոշիկներին շրջապատել են ծնող-  
ներ, բարեկամներ, քնկերներ. խորհուրդ են տալիս ինչպէս  
պահեն իրենց, որ չմրսեն. պատվիրում են՝ տեղ հասնելուն  
պէս նամակ գրել, որևէ կարիքի դեպքում իմացնել... Շատե-  
րի ձեռին կան կապողներ, որ բերել են նվեր կամ ճանապար-  
հի պաշար գնացողների համար... Եվ կառախումքը պատրաստ  
սպասում է մեկնողներին... Ոմանք արդեն բարձրացել, բայց  
լուսամուտներից խոսում են ներքևում կանգնածների հետ.  
Ոմանք, մնաս բարով ասելով, երիտասարդական զվարթ թե-  
թևությամբ ելնում են վագոն: Ոմանց ծնողները խրատներ են  
տալիս. ոմանք հանգստացնում են ծնողներին, բարեկամնե-  
րին... Ու ամբողջ կայարանը բռնել է խոսակցող ձայների  
ժխորը:

Հուլիսյան կեսօրվա արևն այդտեղ շուայլ լույսերով ողո-  
ղել էր ամեն ինչ՝ շենքերը, վագոնները, մարդկանց: Այնքան  
առատ էր լույսը և այնքան մեծ բազմութիւն կար, որ Արես-  
յանը կուզեր երեկո լինել կամ գիշեր, որպեսզի շտեմներին  
իրեն:

Նա, բազմութիւնը գրեթե ճեղքելով, որոնող, թափառուն  
հայացքը աջ ու ձախ դարձնելով, անցավ առաջ, անցավ խում-  
բից խումբ, ամեն տեղ որդուն տեսնելու հույսով: Բայց Ռա-  
ֆիկը տակաւին չէր երևում, և դա դարմացնում էր նրան. մի-  
թե դեռ չեն եկել...

Վերջապէս, բավական տեղ անցնելով և շատ խմբերի  
նայելուց հետո, Արեսյանը նկատեց հտնկարծ ծերունի հոր  
հնաձև շլյապան, ապա կնոջ ճերմակ բերետը... Այս պարա-  
զան նրա թափը կտարեց կարծես. շփտես ինչու, նա հանդի-  
պումը որդու հետ պատկերացրել էր մեն-մենակ, բայց հան-  
կարծ ահա նրա մոտ են ծեր հայրը, կինը և... ավելի ուշա-  
դիր նայելով՝ նա տեսավ այդտեղ են նաև Յողիկը ու որդու  
քեռիները, սրանց կանայք, և դարձյալ ինչ-որ այլ կանայք,  
հավանորեն կնոջ քնկերուհիները... Այստեղ էր և Ռաֆիկի ըն-  
կեր Սուրեն Սարունցը: Այս բոլորը շրջապատել էին Ռաֆի-  
կին և խոսում էին ինչ-որ:

Արեւսյանը, դրանց նաչելով, շիմացավ ինչպես մոտենա  
ւ խոսիւ ճիշտ նման դրություն էր, ինչ համերգին... Նա հի-  
շեց այդ և մտածեց, որ այն անգամվա պես թողնել-դնալ չէ-  
կարող և պետք է մոտենալ անպայման: Բայց ի՞նչպես...  
Տնից հեռանալու օրից նա դեռ ոչ մի անգամ չէր հանդիպել  
ո՛չ կնոջը, ո՛չ մյուսներին... Ի՞նչպես աներ, անհարմար չէ՞ր  
մոտենար... Բայց ի՞նչ կա. պահն այնպիսին է, որ կարե-  
լի է մոտենալ առանց այլևայլի ու խոսել... Թե՞ Ռաֆիկին  
կանչի մի կողմ ու խոսի... Ի՜նչ էլ նրան թվաց անհարմար...

Մի քանի րոպե տատամսելուց հետո, վերջապես նա, մտա-  
ծելով, որ գնացքը կարող է մեկնել շուտով, համարձակություն  
առավ և մոտեցավ իրայինների խմբին այնքան, որ ձայնը  
լսվի և կանչեց.

— Ռաֆիկ:

Ռաֆիկը, որ տակավին գինվորական հագուստ չունելը,  
իր պիջակով էր և սովորականի պես դիտարաց, նայեց բե-  
ռիների սւետի վրայից և նրանց հայացքները հանդիպեցին:  
Ու Արեւսյանն այս անգամ ձեռքով, անխոս, ինչպես դավադիր  
մեկը, որ հրավիրում է համախոսին, կանչեց որդուն: Մի  
վայրկյան Արեւսյանին թվաց, թե Ռաֆիկը տատանվեց՝ թող-  
նի՞ հարազատներին, գնա՞ հոր մոտ, թե ոչ, բայց մայրը կար-  
ծես գլխի ինչ-որ շարժում արավ, հասկացնելով կարծես, թե  
կարող է դնալ, և Ռաֆիկը եկավ հոր մոտ, լուրջ ու հետա-  
քրքիր դեմքով: Եվ Արեւսյանն ամաչեց իր կասկածի համար,  
թե որդին չի գա... Սակայն, տարօրինակ բան, երբ որդին  
մոտեցավ, նա անմիջապես շիմացավ ի՛նչ ասել. մոռացավ  
կարծես ասելիքը... Ապա բռնեց որդու փոքր ձեռքը և այն իր  
մեծ ափում պահելով, ու դրանով ասես զգալ տալով իր սերը,  
իր անհանգստությունը՝ ասաց վերջապես.

— Ես այնքան ուշ իմացա, Ռաֆո ջան, որ հաղիվ հասա...

Հետո մտածելով, թե էլ ինչ ասի, որ հարմար լինի, հար-  
ցրեց.

— Ինչո՞ւ ինձ չէիր հաշտնում, որ քո թիվը կանչում են...  
Որքան գիտեմ՝ դեռ չեն կանչել, չէ՞:

— Ոչ, — գլուխը շարժեց Ռաֆիկը:

— Հապա ինչո՞ւ ես գնում:

— Նս կամավոր եմ գնում:

— Կամավո՞ր...

— Իսկ ինչո՞ւ ինձ չէիր հայտնում:

— Ինչո՞ւ համար, — հարցին հարցով պատասխանեց Ռաֆոն:

— Գուցե մի բան մտածեինք: Դու փոքր ես ախր...

— Փո՞քր, — քմծիծաղ ժպտաց Ռաֆոն:

— Այո, լավ կլինե՞ր՝ դեռ մնայիր, — շարունակեց Արեսյանը:

— Ինչո՞ւ համար, — այս անգամ ուները վեր քաշեց Ռաֆոն, և նրա դեմքը փոխվեց ու լրջացավ մեկեն: Այդ պահին Արեսյանին թվաց, թե առջևը կանգնած է ոչ թե որդին, իր տասնութ տարեկան Ռաֆոն, այլ ավելի տարիքով մեկը. ոչ թե այն Ռաֆոն, որին երեկ-մյուս օրը խաղացնում էր ծնկների վրա կամ, ձեռից բռնած, տանում էր պաղպաղակ ուտեցնելու, այլ մի ուրիշ տղա, որի թե ձայնն է փոխվել մի երկու ամսվա մեջ, թե խոսելու ձևը:

— Գնացողներն իմ հասակի տղաներ չե՞ն, — շարունակեց նա մի վաչրկյան լռելուց հետո և նորից հապաղեց մի պահ, ասես մտքում խոսքեր օրոնելով, և ավելացրեց ավելի փոխված ձայնով: — Այսպես ժամանակ ի՞նչպես կարելի է տանը նստել...

Խոսքը չավարտելով՝ Ռաֆոն կանգ առավ հանկարծ. նրա ձայնը կոկորդում խեղդվեց կարծես, և աչքերում արցունք շողաց... Արեսյանին թվաց, թե որդին ուզում է ինչ-որ նոր, ուժեղ մի խոսք ասել... բայց նույն վաչրկյանին ձեռը թափ տվեց և, արագ շրջվելով, գնաց դեպի խմբված հարազատները: Մոտենալով նրանց՝ Ռաֆոն, հապճեպ մնաս բարև ասելով ու համբուրվելով, նետվեց դեպի կառախումբը:

Արեսյանը, վարանքի մեջ, անշարժ կանգնած, մի օտարոտի դգացումով նայեց որդու ետևից և, տեսնելով նրա հախուռն ու ջերմ մնաս-բարևներն ու համբույրները, նոր միայն անդրադարձավ, որ Ռաֆիկն իրեն մնաս-բարև անգամ չասաց: Նա համբուրվեց մոր հետ, պապի հետ, քրոջ հետ,

քեռիների ու մեկ-մեկ ընկերների հետ... բայց իր կողմն ան-  
գամ չնայեց... Այնինչ նա կարծում էր, թե Ռաֆոն դեռ կվե-  
րադանա իր մոտ, դեռ կխոսեն և ինքը կարող է ծոցազր-  
պանի գումարը տալ նրան...

Բայց Ռաֆոն էլ չեկավ. անգամ ետ չնայեց:

Ինչո՞ւ... Արեսյանը շիմացավ ասես ինչպես եղավ այդ  
Ռաֆոն խոսքը կիսատ թողեց ու հեռացավ. արցունքները  
խանդարեցի՞ն, թե պարղապես շուգեց խոսել ու ձեռք թափ  
տվեց վշտացած... Չուգեց մնաս-բարև ասել, խոսել, բայց  
աշքերում արցունք երևաց...

Ու մինչ Արեսյանը մտածում էր մենակ կանգնած՝ հրն-  
չեց երկրորդ զանգը և գնացքը շարժվեց: Բազմությունն իրար  
անցավ, ձեռքեր, թաշկինակներ ու գլխարկներ բարձրացան  
մնաս-բարևի, հրաժեշտի և բարի ճանապարհի համար: Կրս-  
վեցին կանչեր, հարազատներից ոմանք տալիս էին իրենց  
մեկնողի անունը, ասում էին բարեմաղթության խոսքեր, որոնց  
երիտասարդ, նորակոչիկ ուղևորները վազոնների լուսա-  
մուտներից պատասխանում էին գլուխների ու ձեռքերի շար-  
ժումով: Մյուսների նման ձեռքը օդում ճոճում էր նաև Ռաֆոն՝  
մոր, քրոջ, պապի և մյուսների կողմը նայելով:

Արեսյանն սպասում էր, թե ահա Ռաֆոն կնայի և իր  
կողմը ու մնաս-բարև կասի գեթ ձեռքի շարժումով...

Բայց Ռաֆիկը ոչ միայն այդ շարավ, այլև մի անգամ իսկ,  
թեկուզ կես-ակնարկով չնայեց իր կողմը... ու այդ կարծես  
ամենքը տեսան:

Այո, չնայեց և... մնաս-բարև չասաց:

Եվ Արեսյանն այնուհետև շիմացավ, թե ինչպես ավտո  
նստեց ու մեքենայորեն, առանց իրեն հաշիվ տալու, թե ո՞ւր  
է գնում և ինչո՞ւ, վերադարձավ հիմնարկ: Այն ժամն էր  
արդեն, երբ հիմնարկի աշխատանքները ավարտվում են և  
աշխատողները սկսում են ցրվել... Արեսյանն այդ մասին  
չէր էլ մտածում, որովհետև ամբողջ ճանապարհին անախորժ  
մի համ էր զգում բերանում և մտածում էր դարձյալ որդու  
մասին, որ ահա գնաց բանակ և, ով է իմանում, ո՞ղջ կվե-

բազաննա, թե ոչ... Նա շկամեցավ անգամ մնառ բարև ասել իրեն... բայց աչքերում արցունք երևաց...

Եվ այդ արցունքները ճնշում էին Արեսյանին...

Երբ նա ավտոչից իջավ և մտավ հիմնարկ, աշխատակիցներից ոմանք դուրս էին գալիս արդեն, ոմանք էլ, տակավին սեղանների մոտ, պատրաստվում էին դուրս գնալու։ Միջանցքում նա հանդիպեց Ռիմային, որը նույնպես, խոպուպավոր մազերը հարդարելով, պատրաստվում էր դուրս ելնելու, բայց, Արեսյանին տեսնելով, կանգ առավ հետաքրքրված.

— Ճի՞շտ է, իսկապես, որ ձեր որդին գնաց բանակ:

— Այո,— եղավ Արեսյանի շոր պատասխանը:

— Բայց մի՞թե նրա տարիքը հասել էր:

— Ես էլ կարծում էի չի հասել, բայց ահա գնում է կամավոր:

— Կամավոր:

— Այո,— այս անգամ գոհունակությամբ վրա բերավ Արեսյանը:

— Իսկ չէ՞ր կարելի՞ համոզել, որ... մնա այստեղ ծառայի,— հետաքրքրվեց Ռիման:

— Համոզե՞լ,— երկարեց Արեսյանը:— Նա այնպիսի տղա է, որ երբեք չէր ուզի ազատվել այս օրերին: Ես, պետք է ասեմ, գոհ եմ նրանից:

Ռիման զարմացած նայեց նրան ու լռեց:

Իսկ Արեսյանն անցավ իր առանձնասենյակը և, ձեռները մեջքին, երկար երթևեկում էր այնտեղ: Որդու բանակ գնալը հիմա ոչ այնքան ցավ էր պատճառում նրան, որքան վիրավորանք. նա իրեն զգում էր մի տեսակ նվաստացած. մեկն ասես հանդիմանել էր նրան կամ ապտակել... դարձյալ դառը համ էր զգում բերանում և մտքերը, մեկը մյուսից ծանր ու անախորժ, խոնվում էին նրա գլխում: Նա մտածում էր... Ասեմք, շատ բան էր մտածում Արեսյանը, սակայն նրա մտքերի գլխավոր առանցքը դարձյալ որդին էր... Մտածում էր, թե ահա Ռաֆոն, որ հազիվ տասնութ տարեկան է, գնաց մյուսների հետ հայրենիքը պաշտպանելու և... բո-

լորի հետ համբուրվեց, ամենքին հրաժեշտ տվեց, իսկ իրեն՝  
և ոչ մի...

«Զուգեց անդամ մնաս-բարև ասել, բայց ինչո՞ւ համար  
էին արցունքները», — մտածում էր Արեսյանը գորգի վրա  
գնալ-գալով, և որդու արցունքները դարձյալ ճնշում էին նրան  
ու մնում անբացատրելի:

Արեսյանն ինքն էլ չէր կարող ասել, թե որքան քայլեց  
այդպես, երբ հանկարծ լսեց հեռախոսի զանգը: Նա մեծ տհա-  
ճությամբ, որ խանգարեցին իր մենությունն ու մտքերը, վերց-  
րեց հեռախոսի փողը: — Հիմնարկի պարտկազմակերպության  
քարտուղար Մելքոնն էր: Խնդրում էր «մի երկու րոպեով»  
անցնել իր մոտ:

«Դա ի՞նչ գործ ունի ինձ հետ», — մտածեց Արեսյանը,  
հիշելով, որ ուրիշ անդամ, գործ ունենալիս, այդ Մելքոնն  
ինքն էր գալիս մոտը, հիմա կանչում է. ի՞նչ պիտի լինի:

Ու գնաց հետաքրքրված:

Այդ Մելքոնը մի լուրջ, իր առանձնասենյակում շարու-  
նակ գրադված երիտասարդ էր: Երբ Արեսյանը ներս մտավ՝  
նա ինչ-որ թղթեր էր նայում: Արեսյանին տեսնելով՝ հրավի-  
րեց նստել, և անմիջապես գործի անցավ.

— Ճի՞շտ է, ընկեր Արեսյան, որ դուք բաժանվել եք ձեր  
ընտանիքից, — հարցրեց նա առանց այլևայլի:

Արեսյանը զարմացավ այդ հարցումից, բայց պատաս-  
խանեց.

— Առայժմ ոչ, բայց...

Մելքոնը կարծես շլտեց նրան:

— Պատճառն ի՞նչ է, եթե կարելի է իմանալ:

«Արան ո՞վ է ասել, և ինչո՞ւ է հետաքրքրվում իմ մաս-  
նավոր, ինտիմ կյանքով», — մտածեց Արեսյանը և պատաս-  
խանեց.

— Ընտանեկան անախորժությունը...

— Միայն ընտանեկան անախորժություն՞ն... Իսկ այդ ան-  
ախորժության պատճառն ի՞նչ է:

«Նա երևի քան է լսել: Մի՞թե Մարիկան է ասել... Հազի՞վ

թե», — մտմտաց Արեսյանը, հապաղելով պատասխանել անմիջապես:

Եվ քարտուղարն, այդ նկատելով, շարունակեց.

— Ընկեր Արեսյան, թող ձեզ տարօրինակ չթվա: Երբ մեր ընկերներից մեկի անհատական կամ ընտանեկան կյանքում պատահում է որևէ դժբախտութիւն, դա միայն նրա գործը չէ, դա պետք է զբաղեցնի բոլորիս, որպէսզի միասին աշխատենք վերացնել այդ անախորժութիւնը... Դրա համար էլ հարցնում եմ պատճառը:

— Պատճա՞ռը... կանանց համար սովորական բան՝ կասկա՛ծ, խա՛նդ...

— Եթե կարելի է՝ ավելի պարզ:

«Ի՞նչ է կպել», — մտածեց Արեսյանը և կրկնեց.

— Այդ է: Կինս խանդում է, թե ես ապրում եմ ուրիշի հետ: Կասկածում է:

— Ինչո՞ւ կասկած, — շարունակեց քարտուղարը: — Մեզ հայտնի է, որ դուք լուրջ կապ ունեք մեկի հետ...

Արեսյանը գունատվեց և շուրջը նայեց, կարծես տեսնելու, թե մեկը չլսե՞ց այդ խոսքերը, իսկ քարտուղարը շարունակեց անողոք դատավորի պես.

— Եվ դուք կարծում եք, թե այդ կապը ծածուկ էլ մնո՞ւմ է: Չկա, իհարկե, գաղտնիք, որ լույս չընկնի: Մենք, ընկեր Արեսյան, պետք է ասեմ, գոհ ենք ձեր աշխատանքից: Դուք, այո, աշխատում եք նվիրված: Բայց, ի՞նչ եք կարծում, այդ կապը կարո՞ղ է ձեզ պատիով բերել... Այն ժամանակ, երբ պատերազմի ճակատներում մեր ղինվորներն իրենց մարմնով գնդացրի բերան են փակում...

Որքան խոսեցին՝ դժվար է ասել, միայն այդ խոսակցութիւններից հետո, Արեսյանն այնտեղից դուրս եկավ այլայլված ու ավելի մոռաց...

Եվ մյուս օրը նա հիմնարկ շէկավ... Չերեաց և երկրորդ օրը: Իսկ երրորդ օրը լուր տարածվեց, թե Արեսյանը մեկնել է ճակատ:

Մանթիներ, բարեկամներ, այդ իմանալով, նրա քայլը համարում էին անհասկանալի, նույնիսկ տարօրինակ: Շատ զարմացավ մանավանդ պլանբաժնի Ռիման, երբ լսեց, որ Արեսյանը գնացել է իր կամքով:

— Չէ՞ որ նրա տարիքը դեռ չէին կանչել, — ասում էին մարդիկ և մտածում, թե ի՞նչն արդյոք ստիպեց նրան այդպես վարվել. չէ՞ որ նա անփոխարինելի աշխատող էր հիմնարկում, հետևաբար և զինվորական ծառայությունից ազատված:

Այս բանը մեծ տարակուսանք պատճառեց և Արեսյանի ընտանիքին: Ո՛չ տիկին Մարիկան, ո՛չ ծեր փականագործը և ո՛չ Յոզիկը բացատրել չէին կարողանում, թե ի՞նչը դրդեց նրան այդպես վարվելու. Ռաֆոյի կամավոր գնալը, ի՞նչուրիշ մի բան... Նրանք մտածում էին ջոկ-ջոկ և կարծես անհարմար էին զգում միմյանց հարցնել այդ մասին: Յոզիկն այնքան հուղված էր կատարվածից, որ մի նրկու անգամ, մորից ծածուկ, գնաց ռազմական կոմիսարիատ՝ իմանալու, թե ո՞ր ճակատն է գնացել հայրը և կարելի՞ է նրա հասցեն իմանալ:

Նրան ասացին, որ, այո, Արեսյան Ռազրատը, իր խընդրանքով, գնացել է ճակատ, բայց հասցեն չտվին:

— Այդ հետո ինքը կգրի ձեզ, — ժպտալով ասաց զինվորական գործավարը:

Այդ օրվանից Յոզիկն է՛լ հանգիստ չունեք. շարունակ սպասում էր նամակի և ամեն օր նայում էր օրաթերթը՝ հարմասին մի բան գտնելու հույսով: Եղբոր կողմից հանգիստ էր. Ռաֆոն նամակներ էր գրում և միշտ խոստանում էր «էլի գրել». բայց հորից՝ ոչ մի լուր:

\* \* \*

Անցավ մոտ երկու տարի: Արեսյանի ընտանիքում (այդ մեծ փոփոխությունից հետո) ոչինչ չէր փոխվել համարյա, եթե նկատի չառնենք այն, որ տիկին Մարիկան նիհարել էր մի փոքր և թուխ մազերի մեջ երևացել էին որոշակի փայ-



լող արծաթ թելեր, իսկ նրա կեսրարը՝ ծեր փականագործը, ավելի էր ճերմակել և մի քիչ կորացել: Նրանք երկուսն էլ աշխատում էին, ինչպես առաջ, մեկը՝ դպրոցում, մյուսը՝ գործարանում:

Մերուկը դարձյալ օրական շորս ծամ էր գնում աշխատանքի, շմոռանալով մթերքներ գնելու իր պարտականությունը, իսկ Մարիկան, առաջվա պես, թե՛ դպրոցում էր աշխատում, թե՛ տանը, և դարձյալ շուտ-շուտ գնում էր հոսպիտալ՝ կարելու բաներ բերում, կամ գրքեր էր տանում վիրավորներին, կամ նամակներ գրում նրանց համար. երբեմն էլ, կարևոր տոներին, երբ դպրոցը նվերներ էր ուղարկում բանակին, ինքն էլ մասնակցում էր նվերներ գնելուն և ծանրոցներ պատրաստելուն:

Վերջերս, սակայն, նա ավելի հանդիստ էր, քան առաջ, որովհետև Ռաֆիկը մի ամիս էր ինչ վերագարծել էր ճակատից: Վերագարծել էր, ճիշտ է, ձախ ոտը բեկորից վնասված, որն ստիպում էր նրան առաջժմ ման գալ հենակով, բայց Մարիկան ուրախ էր, որ նա ավելի լուրջ վնասվածք կամ ծանր վերք չէր ստացել: Սակայն Ռաֆիկը բավականին փոխվել էր. սրտաքուստ, ամենից առաջ՝ շկային նրա նախկին թուխ, փայլուն դանդուրները, որոնք չիրիկական նուրբ տեսք էին տալիս նրան. մազերը տակից խուզված էին, և այդ պատճառով նրա գլուխը հիմա ավելի փոքր էր երևում, բայց ինքն ավելի հասուն. շկար առաջվան մանկական-պատանեկան պարզ հայացքը. դրան փոխարինել էր փորձված ու խոհուն մի նայվածք, որը սակայն մորը կամ քրոջը նայելիս, քրնքշանում էր: Այժմ նա առաջվան անհամբեր, շուտ հուզվող Ռաֆիկը չէր կարծես. թվում էր դարձել էր ավելի խոհուն ու կշռադատող: Իսկ աշակերտական փոքրիկ, նուրբ ձեռքերը չգիտես հրացանի գործածությունի՞ց, թե ֆիզիկական աշխատանքից, մեծացել էին, խոշորացել և, թվում էր, ավելի պլնդացել: Դա, գուցե, նրանից էր, որ պաշտպանական գույնի ժակետի թևքերն ամուր կոճկում էր դաստակների վրա: Ե՛վ բնդհանրապես մեծացել էր, և՛ ավելի առնական կերպարանք ստացել այս երկու տարվա մեջ:

Եվ դա Մարիկային ուրախացնում էր, բայց նրան ուրախացնում էր մանավանդ այն, որ որդու տրամադրութիւնն ընկած չէր և նրա սերը դեպի գիրքն ու ուսումը ոչ միայն չէր մարել պատերազմում, ինչպես լինում է երբեմն: Վիրավորվելուց հետո Ռաֆիկը, տեսնելով բանակի համար պիտանի չէ, որոշել էր պատրաստվել համալսարան մտնելու, և այդ նպատակով իրեն շրջապատել էր բազմաթիվ գրքերով ու ձեռնարկներով, որ անհրաժեշտ էին քննութեան համար: Նա թեև գիտեր, որ բանակից վերադարձողներին ընդունում են առանց քննութեան, այնուամենայնիվ ցանկանում էր դնալ պատրաստ... Ու կարգում էր շարունակ... Եվ առհասարակ կարդար անվերջ, գրքից դուրս չկտրվեր, եթե մայրը երբեմն շատեր,

— Հերի՛ք է, Ռաֆո, կհոգնես, մի քիչ էլ դուրս եկ պատրշղամ, քեզ արևին տուր:

Եվ Ռաֆիկը երբեմն լսում էր մորը ու հենակով դուրս դալիս ասպակեպատ, սակայն արդեն բաց լուսամուտով պատրշղամը: Այնտեղ գորգածածկ թախտին նստելով՝ նայում էր Երևանը եղերող ծառապատ լանջերին, ուր նորահաս ծառերը, դարնան արևից ջերմացած, օրեցօր հասունացնում էին իրենց բողբոջներն ու տերևները և մուգ, ակնապարար կանաչով կենդանացնում դորշ բլուրները: Երբեմն, այդ պահերին, նրանց Վանա թավամագ ճերմակ կատուն, արևելյան նազանքներով, դալիս ննջում էր նրա կողքին, փափուկ գորգի վրա, և Ռաֆիկը, հին սովորութեամբ, խաղում էր կատվի հետ, մատները նրա մազերի մեջ խրելով, թաթիկները ձգելով: Երբեմն քույրը՝ Յողիկն էր դալիս նստում մոտը և զրուցում դեպից-դենից: Պատմում էր, թե ի՛նչ է կատարվել քաղաքում նրա գնալուց հետո, կամ թե ի՛նչ նոր եղանակներ է սովորել ինքը վերջին երկու տարում, որտեղ է նվագել և ով ի՛նչ կարծիք է հայտնել իր նվագի մասին: Ասում էր, օրինակ, որ մի շարք անգամներ նվագել է հոսպիտալներում՝ վիրավորների համար, և սրանցից շատերը շնորհակալութիւն են հայտնել իրեն — ա՛յնքան հավանել են:

— Մի քանիսը նույնիսկ արտասվեցին, — ասում էր նա ոչ առանց հպարտանքի:

— Իսկ դա ի՞նչ եղանակ է, — հետաքրքրվում էր Ռաֆիկը:

— Կուզե՞ս նվագեմ, — առաջարկում էր Յողիկը պատրաստակամ և անմիջապես, անցնելով սենյակ, նվագում էր այնտեղ, ամաչելով այդ անել պատշգամբում, հարևանների առաջ:

Ռաֆիկն ուշադիր, գոհունակ լսում էր քրոջը և կատակում.

— Կեցցես, Յողիկ. կարդին առաջադիմել ես: Ամեն բան կատարյալ է, իսկ կավալների կողմից ի՞նչպես ես:

Քույրը ժպտում էր և հանաքով խփում եղբորը:

Նրանք խոսում, զրուցում էին ամեն ինչի մասին, բայց երբեք իրենց հոր մասին: Յողիկը դիտեր, որ եղբայրն իմացել է հոր ճակատ գնալը, բայց չէր ասում ոչինչ: Երբեմն Յողիկն ուզում էր խոսք բանալ և ասել, որ ոչ մի լուր, տեղեկություն չունեն հայրիկից, սակայն, հիշելով Ռաֆիկի խիստ խոսքերը երկու տարի առաջ, լռում էր:

Եվ ահա մի անգամ, կես օրից հետո, կրթ Յողիկը նվագում էր ջութակը, և այս անգամ ոչ միայն Ռաֆիկը, այլև մայրն ու պապը լսում էին նրան, բերին մի հեռագիր: Յողիկն ընդունելով՝ տվեց այն եղբորը կարդալու:

Ռաֆիկը կարդաց և լռեց այլայլված, ավելի շուտ՝ կեսզարմացած, կես-մտախոհ:

— Ի՞նչ է, ո՞ւմից է — հետաքրքրվեցին մայրն ու քույրը միասին:

— Պապայից, — դա՛նդաղ պատասխանեց Ռաֆիկը:

— Բազրատի՞ց, — բացուկանչեց պապը ձեռները դեպի հեռագիրը պարզելով:

— Պապայի՞ց, — կանգնած տեղը վեր թռավ Յողիկը ռետինե գնդակի պես: — Ի՞նչ է գրում: Տուր տեսնեմ...

Եվ հեռագիրը համարյա եղբոր ձեռից խլելով՝ ինքը կարդաց արագ-արագ ու, էլ Ռաֆիկին ժամանակ շտալով մի բան ասելու, վրա տվեց շնչակտուր, հուզված և գրեթե պայծառացած:

— Գրում է, թե վիրավորվել է, երկու ամիս է հիվանդանոցումն է: Շուտով դուրս է գալու, խնդրում է հայտնել, թե կարո՞ղ է վերադառնալ... Ա՛յ, այսպես էլ գրում է:

Եվ Յողիկը բարձրաձայն կարդաց վերջին նախադասությունը.

«Խնդրում եմ հայտնել՝ կարո՞ղ եմ վերադառնալ տուն»...

Հոսիթյուն իջավ սենյակում: Ցուրաքանչյուրը նայում էր, մի կետի և սպասում, թե ո՞վ կխոսի առաջինը, ի՞նչ վճիռ կարձակվի:

— Ի՞նչ գրենք, մամա, — առաջինը խոսեց Յողիկը բեկված ձայնով և իսկույն էլ դարձավ եղբորը: — Գրենք չէ՞, Ռաֆո... վիրավորվել է, երկու ամիս հիվանդանոցում է եղել... Ի՞նչ գրենք...

— Այդ մաման պիտի ասի, — ասաց Ռաֆոն նորից մտախոհ:

Պապը, որ ուրախությունից լուել և կարծես չէր կարողանում խոսել, այդ խոսքի վրա աղաչանքի ժպիտով նայեց հարսին, իսկ Մարիկան, ասես հանկարծակիի եկած, դեռ լուում էր մտածումների մեջ:

Հռեց նա մի, երկու վաչրկյան և ապա ասաց հանդարտ, բառերը հատ-հատ արտաբերելով.

— Ես... ես դեմ չեմ... հեռագրեցեք...

Յողիկն է՛լ ժամանակ շտվեց մայրը շարունակի. անմիջապես թափով փարվեց նրան, համբուրելով նրա երեսը, մազերը, կուրծքը:

Իսկ պապը՝ ծեր փականագործը, ելավ տեղից կորացած ու դողդոջ և, թաշկինակն աչքերին տանելով, ասաց ուրախության արցունքնեղի միջից.

— Իսկ ես... ես կարող եմ հիմա... Մեր ընտանիքի պատիվը փրկվեց...